

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՈՒԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

ՔՆՆՈՒԹԻԻՆ  
ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆԻ (ԽՐԻՄԻ)  
ԲԱՐԲԱՌԻ

ԵՐԵՒԱՆ

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

2021

ՀՏԴ 81'28  
ԳՄԴ 81.51-02  
Ա 501

Հրատարակուում է ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները  
ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ:

*Պատասխանատու խմբագիր՝  
բանասիրական գիտությունների թեկնածու  
Արտակ Վարդանեան*

Աճառեան Հրաչեայ Հակոբի  
Ա 501 **Քննություն Նոր-Նախիջեանի (Խրիմի) բարբառի / Հ.**  
**Աճառեան.**– Եր.: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան  
լեզուի ինստիտուտ, 2021.– 266 էջ:

Գիրքը աշխատութեան երկրորդ հրատարակութիւնն է՝ ան-  
հրաժեշտ ծանօթագրութիւններով և մեկնաբանութիւններով:

ՀՏԴ 81'28  
ԳՄԴ 81.51-02

ISBN 978-9939-9277-4-9

© ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչութիւն, 2021

## Խմբագրի կողմից

Մեծանուն հայերէնագետ Հրաչեայ Աճառեանի բարբառագիտական հիմնարար աշխատանքները նրա գիտական հսկայածաւալ ժառանգութեան պատկառելի մասն են կազմում: Դրանց թուին են պատկանում նաև սահմանափակ տպաքանակով 1920-30-ական թուականներին ապակետիպ եղանակով հրատարակուած աշխատանքները՝ «Քննութիւն Նոր-Ջուղայի բարբառի», «Քննութիւն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի», «Քննութիւն Ագուլիսի բարբառի», «Քննութիւն Մարաղայի բարբառի» և այլն:

Ինչ խօսք, արժէքաւոր այդ աշխատութիւնների նոր հրատարակութիւնը հայ բարբառագիտութեան համար կարևոր նշանակութիւն կարող է ունենալ. յիշեալ բարբառների նկարագրութիւնը, դրանց վերաբերեալ լեզուաբանի դիտարկումները և բերած նիւթը, հասանելի դառնալով մասնագիտական աւելի լայն շրջանակների, իրենց նպաստը կրերեն բարբառային հայոց լեզուի տարբեր հարցերի նորովի մեկնաբանութեանը:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտը նախաձեռնել է Հրաչեայ Աճառեանի յիշեալ աշխատանքների վերահրատարակումը: 1925 թուականին Երևանում յիսուն օրինակով լոյս տեսած «Քննութիւն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի» աշխատանքը<sup>1</sup> վերահրատարակուում է ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրութիւնները ֆինանսաւորող համահայկական հիմնադրամի աջակցութեամբ:

Աշխատութիւնը Նոր-Նախիջևանի կամ Ղրիմի բարբառի ամբողջական և միակ ուսումնասիրութիւնն է: Այս բարբառով նախապէս խօսել են Ղրիմի հայերը, ապա նաև նրանց սերունդները,

---

<sup>1</sup> Հրաչեայ Աճառեանը պատմական իրավիճակի և ժամանակի թելադրանքով այս աշխատանքը նուիրել է հայ խոհրդային կուսակցական և պետական գործիչ, ծնունդով նորնախիջևանցի Սարգիս Լուկաշինին (Սրապիոնեան): Գրքի ապակետիպ տարբերակի վրա աշխատել են Վարդգէս Միքայէլեանը, Աշոտ Տօնիկեանը, Վաղարշակ Եղիազարեանը, Արտաւազդ Բաբայեանը, Աղասի Զիթչեանը, Նուարդ Գալումեանը (ծանօթ. խմբ.):

որ գաղթել են Ռուսաստանի հարաւ և հիմնել Նոր Նախիջևան քաղաքը՝ յարակից հինգ գիւղերով, ապա տարածուել նաև մօտաւոր ու հեռաւոր այլ քաղաքներ: Նոր Նախիջևանի բարբառը պատկանում է Կը ճիւղի բարբառների թուին և ներկայանում է իբրև բարբառային հայերէնի իւրօրինակ ու հետաքրքրական մի դրսևորում: Այս բարբառի հնչիւնաքերականական և բառապաշարային հատկանիշները հայերէնի շատ իրողութիւնների վերաբերեալ լեզուական կարևոր փաստեր ու տեղեկութիւններ են մատուցում, որոնք էական են ինչպէս հայ բարբառագիտութեան, այնպէս էլ հայոց լեզուի պատմութեան համար: Յաւօք, այդ բարբառին նուիրուած արժէքաւոր այս ուսումնասիրութիւնը հիմնականում դուրս է մնացել գիտական շրջանառութիւնից:

Հ. Աճառեանի բարբառագիտական մեծարժէք ուսումնասիրութիւնների շարքը համալրող այս աշխատութիւնը ժամանակին հրապարակուել է հեղինակի ձեռագրով. այն գրուած է աւանդական ուղղագրութեամբ և ընդգրկում է 463 էջ: Ինչպէս լեզուաբանի բարբառագիտական միւս մենագրութիւնները, այս ուսումնասիրութիւնը ևս ունի առաջաբան, վիճակագրութիւն ու մատենագրութիւն, ընդհանուր տեղեկութիւններ, հնչիւնական ու քերականական համակարգերի հանգամանալի քննութիւն, նմուշներ բարբառով, գրաբար – բարբառ բառարան:

Աշխատութիւնը վերահրատարակման պատրաստելիս կարևորուել է աճառեանական տեքստի անխաթարութեան պահպանումը: Անփոփոխ են թողնուել հեղինակային ուղղագրութիւնը, կէտադրութիւնը, ոճաբանութիւնը, եզրութաբանութիւնը:

Թէև ժամանակի ընթացքում փոխուել է մէկ դարի վաղեմութիւն ունեցող եզրութաբանութիւնը, այնուամենայնիւ կարծում ենք՝ դա չի խանգարի մատուցուող նիւթի ճիշտ ընկալմանը (օրինակ՝ ձայնախօսութիւն–**հնչիւնաբանութիւն**, թրթռուն–**ձայնեղ**, ռնգական–**ռնգային**, պայթուցիկ–**պայթական**, ճշական–**պայթաշփական**, բայի աներևոյթ – **բայի անորոշ ձև**, միջակ անուն – **հարցական և յարաբերական դերանուն** և այլն): Նոյնութեամբ պահպանել ենք նաև միևնույն բառի տառադարձման տարբեր ձևերը (ինչպէս, օրինակ՝ ծիծեռնակ> **ձըձեռնիգ**, **ձձեռնիգ**, հրէշտակ>**հրշտագ**, **հրըշտագ**):

Հնարաւորինս միասնականացուել են ակնյայտ երկձևութիւնները (օրինակ՝ Պոլիս-Պօլիս, Թօպտի-Թոփտի, ծան.-ծանօթ., Չլ.-Չ., քաղ-քղ., պրսկ.-պրս. և այլն), վերացուել են հազուադէպ հանդիպող վրիպակները: Հեղինակի կողմից ընդգծուած բարբառային բառերը նպատակայարմար է համարուել նշել շեղատառերով: Վերակազմուել է համառօտագրութիւնների ցանկը, քանի որ հեղինակային ցանկը խիստ սեղմ էր: Անհրաժեշտութեան դէպքում տողատակերում տրուել են ծանօթագրութիւններ:

Արտակ Վարդանեան

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Նոր-Նախիջևանի բարբառին քննության նուիրում երեք յօդում կայ միայն. առաջինն է՝ «Խրիմու հայոց լեզուն», տ. Պատմ. Խրիմու, Յ. Տեր-Աբրահամեան, Թեոդոսիա, 1865, էջ 106-116.՝ երկրորդն է՝ Ե. Շահագիզի անցողակի նկատողութիւնները «Նոր-Նախիջևանը և նոր-նախիջևանցիք» աշխատութեան մէջ, իսկ երրորդը՝ իմ «Հայերէն բարբառագիտութեան» 20-րդ գլուխն է, Խրիմի բարբառ վերնագրով, էջ 263-9, ուր ուրուագծուած է նոյն բարբառի ընդհանուր նկարագիրը:

Այս երեք գրուածքներն էլ ունին համառօտ բովանդակութիւն. մանրամասն քննութիւն չկար դեռ այս բարբառի մասին:

Այս նպատակին նուիրում է ներկայ աշխատութիւնը, որ պատրաստել եմ Նոր-Նախիջևանում՝ 11 տարուայ պանդխտութիւնիցս յետոյ, երբ տեղական բարբառին ըստ կարելւոյն ծանօթացած էի: Բուն ժողովրդի մէջ կատարած իմ դիտողութիւններից դուրս՝ մեծապէս օգտուել եմ Սերովբէ Չաթալպաշեանից, Աբրահամ Ջամինեանից և Գեորգ Ջալաշեանից. առաջին երկուսը բնիկ քաղաքացի, վերջինը Չալթր գիւղից, ուսանող լեզուաբանութեան, աշակերտ Meillet հայագետի. երեքն էլ ուսուցիչ, իրենց բարբառին էլ շատ հմուտ: Ս. Չաթալպաշեանի հետ կազմիլ եմ բարբառի բոլոր բնիկ հայ բառերի բառարանը, որ իբրև հիմք ծառայեց ինձ ներկայ աշխատութեան ձայնաբանական մասը՝ կազմելու: Գ. Ջալաշեանը՝ աչքից անց կացնելով նոյն բառարանը՝ նշաւակեց այս բոլոր մասնաւոր տարբերութիւնները՝ որ ներկայացնում է գիւղական բարբառը: Վերջապէս՝ ամբողջ աշխատութիւնը կազմիլ պատրաստելուց յետոյ՝ Գ. Ջալաշեանը ծայրից ծայր կարդաց բարբառային ձևերի մէջ նկատած սխալները մատնանշելու և ուղղելու համար: Իրեն եմ պարտական նոյնպէս բազմաթիւ կարևոր նկատողութիւններ բարբառի քերականական բաժնում, յատկապէս՝ դժուար նկատելի և կորստեան մօտեցած հին լեզուաբանական երևոյթների մասին:

Այս բարբառի վրայ գրուած ուսումնասիրութիւնները թէև շատ սակաւաթիւ են, բայց այդ նոյն բարբառով գրուած բնագրերը

ստուար թիւ են կազմում, ինչպէս երևում է ներքևում գրուած մատենագիտութիւնից: Այս գրուածքների ամբողջութիւնը հասնում է մօտաւորապէս 3000 երեսի (Պատկանեանի հատորների դիրքով): Այս գրուածքները թէև զուտ գիտական ուղղագրութեամբ չեն, բայց գրուած են բաւական ճշտութեամբ և կարող են իբրև նմոյշ ծառայել նրանց համար՝ որ ուզում են ծանօթանալ բարբառին գործնականապէս:

Ուսումնասիրութիւնս գրել-պատրաստելուց յետոյ՝ պարտք համարեցի ծանօթանալ նաև յիշեալ գրութեանց, և այդ բոլորը *տեղի վրայ* ուշի ուշով կարդալով՝ քաղեցի և ուսումնասիրութեանս մէջ ներմուծեցի բոլոր այն լեզուաբանական երևոյթները՝ որոնք մինչև այն ժամանակ սպրդել էին աչքիցս, նախապէս նրանց մասին տեղացի հասարակ ժողովրդի և գիտակ անձերի մօտ հետազօտութիւններ և ստուգումներ կատարելուց յետոյ:

Կանոնների բացատրութեան ժամանակ՝ երբեմն օրինակներս քաղած եմ յիշեալ գրութիւններից, եթէ նրանք նկատել եմ յարմարաւոր: Բայց սրանից պէտք չէ հետևցնել թէ ուսումնասիրութիւնս պատրաստել եմ նոյն գրութեանց վրայից, որովհետև, ինչպէս ասացի, այդ բոլորը տեղի վրայ նախապէս և կատարելապէս ստուգել և գիտական ուղղագրութեան եմ վերածել: Այս պատճառաւ բոլորովին աւելորդ եմ համարել այդպիսի օրինակների մօտ վկայութեանց էջերը դնել ամէն անգամ: Առանձին ուշադրութիւն եմ դարձրել Պատկանեանի գործերի վրայ, որոնք ոչ միայն հարազատ ժողովրդական ռճով և գիտական ուղիղ տառադարձութեամբ են գրուած, այլ և սա՛ առաւելութիւնն ունին, որ ներկայացնում են Նախիջևանի նախորդ սերունդի լեզուն, որի ի՛նչ ինչ կէտերը հիմայ հնացած կամ կորած են: Պարտք եմ համարած այսպիսի ձևերը առանձին խնամքով հաւաքելու և ի վեր հանելու այս աշխատութեան մէջ:

Հետևելով լեզուաբանութեան նոր պահանջներին, ուսումնասիրութեանս ձայնաբանական մասում, օրէնքի բովանդակ ուժը իմանալու համար, նրանցից իւրաքանչիւրի դէմ գրել եմ ըստ կարելոյն բոլոր այն օրինակները, որ հպատակում են նոյն օրէնքին, բացի այն պարագաներից, երբ օրէնքը ընդհանուր և բացարձակ է:

Այսպիսի պարագաներում գրուած է «և այլն» բառը: Մէջ բերուած բոլոր օրինակներն էլ կա՛մ ընդհանուր են ամբողջ բարբառին և կամ պատկանում են քաղաքի բարբառին: Իսկ երբ մի լեզուաբանական երևոյթ կամ օրինակ յատուկ է միայն մի մասնաւոր շրջանի, այդ շրջանը յիշուած է առանձնապէս:

Լեզուաբանական գրուածքներում անշուշտ ամենակարևոր կէտը համեմատութիւնն է: Ամէն մի լեզուաբանական երևոյթ իր կատարեալ բացատրութիւնը կգտնէ ա՛յն ժամանակ, երբ համեմատուած լինի ուրիշ բարբառների նման երևոյթների հետ: Սակայն ես այստեղ որքան կարելի է խուսափել եմ այդ համեմատութիւններից, ո՛չ թէ սկզբունքին իբրև հակառակ, այլ որովհետև կարծում եմ թէ աւելի լաւ է առայժմ կատարել այսպիսի պարզ ուսումնասիրութիւններ, և երբ լրանայ հայ բարբառների մասնաւոր քննութեանց շարքը, ա՛յն ժամանակ դիմել մէկ ընդհանուր ուսումնասիրութեան՝ կատարեալ համեմատական դրութեամբ: Ես այստեղ դնում եմ միայն ա՛յն համեմատութիւնները՝ որոնք նուազ սովորական երևոյթներ են և կարող են ոմանց համար առանձին դժուարութիւն ներկայացնել:

1917 օգոստ.

**Հ. Աճառեան**



## ՄՈՒՏՔ

### 1. Վիճակագրություն

Նոր-Նախիջևանի բարբառը նախապես խօսուում էր միայն Խրիմում և 1779 թուի գաղթականությունը տարածուեց նաև այս շրջանում: Հայերը հիմնեցին Նոր-Նախիջևան քաղաքը և շրջակայ 5 գիւղերը: Այս շրջանի մեջ հաստատուելուց և բազմանալուց յետոյ՝ հայերը սկսան գաղթել նաև մօտակայ զանազան քաղաքները՝ ինչպէս Ռոստով, Նովոչերկասկ (Քիրման), Տագանրոգ (Թայդան), Ազով, Եյսկ, Դնեպր, Նոդայսկ, Մայկոպ, Ստաւրոպոլ, Եկատերինոդար, Եկատերինոսլաւ և աւելի հեռու՝ Ռուսաստանի ներքին քաղաքները, որոնց հայ բնակչութեան մի ստուար տոկոսը նոր-նախիջևանցի է:

Նոր-Նախիջևանի կամ Խրիմի բարբառը խօսող հայ ժողովրդի վիճակագրութիւնը և նրա բնակած քաղաքների ցուցակը հետևեալն է.

#### Ա.- ԽՐԻՄԻ ՇՐՋԱՆ.

Միմֆերոպոլ	2889
Թէոդոսիայ	2235
Կերչ	1115
Հին Խրիմ	410
Ղարասու-Բազար	678
Արմեանսկ	428
Եւպատորիա	428
Եալթա	3000
Սևաստոպոլ	500
<b>Գումար՝</b>	<b>11,683</b>

#### Բ.- ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՇՐՋԱՆ.

Նոր-Նախիջևան քղ.	8839
Ռոստով	2191
Ս. Խաչ	269
Չալթըր	6330

Թոփտի	5984
Փոքր-Սալա	1592
Մեծ-Սալա	3350
Նիսվիթա	1325
Սամբեկ	432

Գումար՝ **30,342**

**Գ.- ՇՐՋԱԿԱ ՔԱՂԱՔՆԵՐ.**

Նովոչերկասկ (Քիրման)	315
Տագանրոգ	354
Ալեքսանդր-Կրուչնսկ	113
Կամենսկայա	88
Ազով	68
Նոդայսկ	86
Դնեպր	33
Մելիտոպոլ	341
Բերդեանսկ	97

Գումար՝ **1495**

Համագումար՝ **43,520**

*Ծանոթ.*– Թաթարերեն լեզուով sala<sup>2</sup> նշանակում է «գիւղ», որով Մեծ-Սալա «մեծ գիւղ», Փոքր-Սալա «փոքր գիւղ»:

Բնակչութեան այս թուի վրայ մի կողմից պետք է անելացնել Ռուսաստանի ներքին քաղաքների նոր-նախիջնանցի հայոց թիւը և միւս կողմից այդ թուից պետք է հանել կովկասահայ և տաճկահայ գաղթականների թիւը: Առաջիններից մի ստուար մաս գտնուում է Ռոստովում, իսկ երկրորդները գտնուում են գլխաւորաբար Խրիմում, յատկապէս Եալթա և Սևաստոպոլ, որոնք գրեթէ ամենամեծ մասամբ տաճկահայ գաղթականներից են բաղկացած: Այսպէսով

---

<sup>2</sup> Թյուրքական լեզուներից մէջբերող արաբատառ գրութեամբ բառերը փոխարինուել են լատինատառով, իսկ լատինատառ գրութեանը զուգահեռ մէջբերողները՝ հանվել (ծանոթ. խմբ.):

այս բարբառը խօսող ժողովրդի թիւը 40.000-ից մի քիչ պակաս կլինի, որի  $\frac{3}{4}$ -ը Նոր-Նախիջևանի շրջանում և յատկապէս կէսը Նոր-Նախիջևանի գիւղերում, ուր կազմում է գուտ և անխառն բնակչութեամբ հայ ժողովուրդ:

## 2. Ընդհանուր նկարագիր

Նոր-Նախիջևանի կամ Խրիմի բարբառը՝ ըստ իմ «Հայ բարբառագիտութեան» մէջ դրուած դասաւորութեան, պատկանում է հայ բարբառների Կը ճիւղին, ուր բռնում է 20-րդ տեղը: Առանձնապէս մօտենում է Կը ճիւղի արևմտեան բաժնի բարբառներին, ինչպէս Եւդոկիոյ, Պօլսի, Ռոտոսթոյի և Աւստրօ-Հունգարիոյ բարբառներին: Հնչական տեսակէտով նոյնանում է Պօլսի բարբառի հետ, քերականական տեսակէտով շատ նման է Ռոտոսթոյի և Աւստրօ-Հունգարիոյ բարբառներին: Վերջինիս հետ նոյնանում է յատկապէս դասական թուականների կազմութեան և բայերի խոնարհման մէջ: Բայց Նոր-Նախիջևանի բարբառը հեռանում է այս բոլորից և միանում է Կարնոյ բարբառին՝ հարցականի կազմութեան մէջ՝ որ դրականին նման է: Սրանով Նոր-Նախիջևանի բարբառը բռնում է Կը և Ում ճիւղերի միջին տեղը:

Ինչպէս ամէն բարբառ, նոյնպէս և Նոր-Նախիջևանի բարբառը թէն մէկ ընդհանուր ամբողջութիւն է կազմում, բայց ունի իր մէջ տեղ տեղ մանր տարբերութիւններ: Այսպիսի մանր տարբերութիւններ ներկայացնում է ոչ միայն Խրիմը՝ համեմատելով Նոր-Նախիջևանի հետ, կամ Նոր-Նախիջևանը՝ համեմատելով շրջակայ գիւղերի հետ, այլ նոյն իսկ քաղաքը՝ համեմատելով իր զանազան թաղերի հետ: Այս թաղերը՝ գաղթականութեան նոր ժամանակ թերևս միատարր լինէին, բայց հիմայ տեղափոխութեամբ իրար խառնուած լինելով՝ քաղաքի զանազան մասերում կարող ենք գտնել զանազան ձևեր, նոյն իսկ միևնոյն ծագումն ունեցող երկու ընտանիքներում կարելի է տարբերութիւններ գտնել: Օրնակի համար՝ քաղաքում ոմանք գործ են ածում *էրնէզ* «երանի», ուրիշներ *էյնէզ* ձևը. ոմանք ունին *հունհունուզ* «մտատանջութիւն», ուրիշներ *հումհումունգ*. ոմանք գործ են ածում *միքուք* «մօրուք», ուրիշներ

*միւրիւք*. ոմանք կանոնաւորապէս ունին *մէրօնք, ձէրօնք, մէրօնց, ձէրօնց...*, *ուրիշներ մէրունք, ձէրունք, մէրունց, ձէրունց* ևն: Չեմ ուզում երկարել օրինակների թիւը, որովհետև ուսումնասիրութեանս ընթացքում արդէն պիտի տեսնենք: Բայց չեմ ուզում մոռանալ յատկապէս *լինդ*, յգ. *լնդերք* բառը՝ որի դէմ 6 ձև եմ գտել այս բարբառում և յատկապէս հինգը քաղաքում. այսպէս՝ *լընդէտք, լըդէնք, լընդռէնք, նընդռէնք, ընդռէնք* և Չալթրում՝ *լըդռռէնք*: Այս բոլորը սակայն մատնանշում է այն հանգամանքը՝ որ գաղթականութիւնը եղել է տարբեր վայրերից: Խրիմի թերակղզին թէև ունէր մէկ ընդհանուր բարբառ, բայց իր զանազան քաղաքները ներկայացնում էին անշուշտ զանազան մանր տարբերութիւններ՝ խրիմցիք գաղթելով իրենց զանազան քաղաքներից և հաստատուելով Նոր-Նախիջևանի շրջանում, շարունակեցին պահել իրենց լեզուական տարբերութիւնները. բայց ընդհանուր հասարակաց կեանքում այդ տարբերութիւնները իրար տեղի տալով՝ հետզհետէ վերածուեցան մէկ ձևի. և նրանք՝ որ դեռ տարբեր են հիմայ, ներկայացնում են ամենից ըմբոստ ձևերը, որոնք վաղ թէ ուշ նոյնպէս մէկի պիտի վերածուին:

Նոր-Նախիջևանի հայ ժողովուրդի ներկայացրած մէկ ընդհանուր յատկութիւնն էլ արագ և աղմկալի խօսակցութիւնն է, որ յատուկ է ո՛չ միայն քաղաքին, այլ և գիւղերին. և այս յատկութեան արդիւնքն է բառերի անսովոր և անկանոն սղումները. ինչ.

թօփցի < թօփտիցի «Թոփտի գիւղացի».

նիսթացի < նիսվիթացի «Նիսվիթա գիւղացի».

խնամի-մա < խնամի մամա.

մէձա < մեծ մամա «տատ».

Թօրօս-ա < Թորոս աղա.

Դերբա < Տէր պապա «քահանայ».

գուցունում < կուցուցունում «կցուցնիմ».

բէրնէրուն վրա < բերաններուն վրայ.

հարիսուն < հարիւր յիսուն.

հարդասը < հարիւր տասը.

հաջի՛ մա < հաջի մամա.

հօրքո՛ւրջա < հօրաքոյր ջիջա. ևն ևն:

### 3. Մատենագրություն

(Նոր-Նախիջևանի կամ Խրիմի բարբառով գրուած գրքերի և  
յօդուածների ցանկը)

Ա. Ա.– Նամակ առ խմբագրիչն. Դաստիարակ. 1873, էջ 84:  
Այվազեան Գ. եպս.– Խրիմու Հայոց լեզուովը շարադրուած առակ-  
ներ. Ռոստով 1875:

Արուսիւն.– Թղթակցութիւն Ախմէշիթից. Մեղու Հայաստանի  
1877, № 28:

Անիսօնինց Կախերիսօ.– Ճամալին փռաթաքօլները. Նոր-  
Նախիջևան 1806:

Անիսօնինց Կախերիսօ.– Նամակ խմբագրութեան. Նոր-Դար  
1905, №22:

Բախչիսարայեցեան Էմ.– Տապռավոյլցի. Ձիթենի ժողովածու,  
էջ 454-8:

Գալստեան Յ.– Հաճի Մաթոս (վէպ). Դաստիարակ, 1879,  
էջ 15-16 և 79-82:

Գաղութ շաբաթաթերթ, Նոր-Նախիջևան 1914-16:

Գասպար.– Թղթակցութիւն Քէֆէից. Մեղու Հյստ. 1877, №42:

Գրիչ շաբաթաթերթ, Նոր-Նախիջևան 1912-4:

Երկու խրիմեցոց մէջ 1863-ին եղած խօսակցութիւն մը.  
Ծիածան 1865, էջ 122-3:

Թէնէքէճի Էրէմ.– Ռազնի չեշիդ շախաներ. Խաթաբալա 1908,  
№ 18:

Թումանեանց Յ.– Մելքօն աղային սթօռիան. Բաքու 1903:

Թօփալեան Ա.– Թղթակցութիւն Ախմէշիթից, Մեղու Հայաստ.  
1877, № 32:

Լոյս շաբաթաթերթ. Նոր-Նախիջևան 1910-14:

Խատամեան.– Նոր-Նախիջևանի պատկերներ. Նոր-Նախի-  
ջևան 1915:

Խատիր.– Իմ փէշքէշս. Նոր-Նախիջևան 1915:

Խըճի-աղա.– Գրիգոր Կախափա. Ռոստով 1878:

Հա ու չէ. Դաստիարակ 1873, էջ 67-68:

Ճանկով Մամուկ.– Թղթակցութիւն. Մեղու Հյստ. 1880, №5:

Մարտիրոս աղա.– Թղթակցութիւն Հին Խրիմից. Մեղու Հյստ. 1877, № 19 և 1880, № 39:

Մեր Ձայնը (կիսաշաբաթաթերթ), Նոր-Նախիջ. 1907-9:

Մուկերուն փրիկավորը (առակ խրիմեցոց լեզուով).  
Դաստիարակ 1873, էջ 15-16:

Նոր Կեանք (շաբաթաթերթ). Նոր-Նախիջեան 1906-7:

Նաւասարդեան Տ.– Հայ ժող. հեքիաթներ. հտ. Է, 1891:

Չ. Խ.– Թղթակցութիւն. Մեղու Հյստ. 1877, №40:

Չաթալպաշեան Ա.– Պաղնիքի պօխճա (թրգմ. Սունդուկեանից). անտիպ:

Չալխուշին Կոիշը.– Չոփուկին Կոիշը. տե՛ս Մտքեր, խոհեր, դէմքեր, էջ 273-5:

Պատկանեան Ռ.– Ընտիր երկասիրութիւնները. հտ. I, II Պետերբ. 1893, հտ. III Ռոստով 1904: Սրանց մէջ չեն մտած՝

- Sermo, Գործ ամսաթերթ, 1917, №5, էջ 82-4:
- Շատերէն մէկը. Նոր-Նախիջեան 1905:
- Օձի խածած. Հանդ. Գրակ. Ա. էջ 323-342:
- Սատանայի ոջիլ, Հանդ. Գր. Բ. էջ 33-54:
- Խոստովանք. Հանդ. Գր. Ա. էջ 312-3:
- Հայլի. Հանդ. Գր. Ա. 318:
- Տայմաքվայ պաներ, Հանդ. Գր. Բ. էջ 1-35:
- Ժողովածոյի օտարազգի բառերի՝ նոր-նախիջեանցոց լեզուի մէջ մտած. Պետերբ. 1870:
- Փախալ-խանութ. Արձագանք, 1889, էջ 289-292:
- Թիքիճի Մելքօնին պատմածը (անտիպ պոռնոգր.):
- Փափաղան, Ծկլայ մանկավարժ, Արձագանք, 1885, էջ 116-117:
- Լոպիայի բուս և խնձորի ծառ. Արձագանք, 1885, էջ 84:
- Ծկլային փալիթիքան, անդ՝ էջ 93:
- Շաղաթան, անդ՝ էջ 158-160:
- Շաշխըն հեղինակին, անդ՝ էջ 212:
- Ստակ, Նոր-Դար 1884, № 3:
- Պամլուլիոս, քովետիա 3 գործ. Ռոստով 1881:

Паткановъ К.– Матеріалы для изученія арм. наречій. Պետերբ.

1875:

Պչխի.- Քու քեֆիտ համար. Խաթաբալա 1908, № 32:

Պօսժուռի Մելքոն.- Մանր գրուածքներ. Խաթաբալա 1910, NN° 6, 8, 21, 31, 38; 1908, NN° 3, 20, 53, 1909, NN° 8, 20, 21, 42, 46, 49-51:

Սիվրիսինէկ.- Թղթակցութիւն. Մեղու Հյստ. 1877, № 43:

Սոխուրեան Ստ.- Մանր գրուածքներ. Խաթաբալա 1915, NN° 12, 20, 33:

Սուրխաթեան.- Մեր մարերն ու աղջիկները (Ղրիմի բարբառով). Պետերբ. 1905:

- Մելքօն աղային վերջաբանութիւնը. Պետերբ. 1904:

Տահա Կըլայ.- Մանր գրուածքներ, Խաթաբալա 1908, № 7, 13:

Տեղեկութիւն Խրիմու Հայոց վրայ (նմոյշով). Բազմ. 1844, էջ 173-6, արտատպ. Ազգասէր Կալկաթայ, 1846, էջ 70-78 և Տէր-Աբրահամեան, Պատմ. Խրիմու. Թեոդոսիա 1865, էջ 106-116:

Տէր-Աբրահամեան Յ.- Ժլատ (կատակերգ.). Ռոստով 873:

Տիգրանեան Գ.- Առածք, ասացուածք և զրոյցք Նոր-Նախիջևանի. Ռոստով 1891:

Քարպուջ Խամէթբար.- Թղթակցութիւն Ստաւրապօլից. Մեղու Հյստ. 1880, № 97:

Քեմէչեճեան Ղ.- Նախշականցիները Մոսքովի «Զիժովսկիյ փատվոռի» ին մէջը. Լումայ 1904, № 1, էջ 172-182:

(Ընդ ամենը 3000 էջ գրականութիւն):

-----

## Ա Մ Ա Մ Ձայնախօսություն

1. Նոր-Նախիջևանի բարբառի ձայնական դրությունը պարունակում է ընդ ամենը 38 ձայն, հետևեալ ձևով.

Ձայնաւորներ՝ 8 հատ.

ա, ր, է, ի

օ, ու, էօ, իւ.

Երկբարբառ չկայ.

Բաղաձայններ՝ 30 հատ.

բ, ք, փ,

գ, գ', ք,

դ, դ', թ,

ձ, ձ', ց,

ջ, ջ', չ,

զ, ժ, ա, շ,

յ, ո, ր, լ, մ, ն, վ, ֆ,

հ, դ, խ:

2. Ձայնաւորների հնչման մէջ առանձին նկատելու բան չկայ. հայ բարբառների սովորական հնչումը պահում են. *էօ* և *իւ* ձայները շատ քիչ են գործածուում. գտնուում են միայն մի քանի թուրքական փոխառութեանց և մի քանի հատ էլ բնիկ հայ բառերի մէջ: Թուրքերէնի մէջ կան շատ բառեր՝ որոնք պարունակում են *էօ*, *իւ* ձայները, բայց դրանք Նոր-Նախիջևանի բարբառին անցած ժամանակ նոյն ձայները վերածում են *է*, *օ*, *ի*, *ու*. այսպէս՝ *էօ* դառնում *է*, *օ*, իսկ *իւ* դառնում է *ի*, *ու*: Օր. թրք. *öröke*>*օռօք* «իլ», *öfke*>*օքա* «վրէժ, ոխ», *börek*>*բօրէք*, *peket* «խմորեղէն», *gönde*>*գօվդա* «իրան», *kömür*>*քօմուր*, *peşin* «ածուխ», *gözlük*>*գէզլիք* (Նոր-Նախիջևան), *qoqluq* (Չալթր, Թոփտի) «ակնոց», *böjek*>*բօջիգ* «ճճի, միջատ» ևն ևն: Սակայն անփոփոխ են պահում *միւլիւզ*, «սնանկ», *լիւլէ*



«ծխամորճ», *սիւլիւք* «տգրուկ», *լիւզէն* «սանձ», *թիւթիւն* «ծխախոտ»: Երբ համեմատենք հին լեզուն, այս օրինակները կշատանան. այսպէս Պատկանեանի մօտ կայ *էօքսիւզ* «որբ» (հտ. բ. էջ 277), *սիւզիւթ* «ուռի» (բ. 323), *քիւմէս* «հաւանոց» (բ. 325), *սիւրիւ* «խումբ» (բ. 331), *քէօսիւր* «ածուխ» (բ. 334), *քիւրիւմ քիւրիւմ* «ուր մուր (ծխի համար)» (բ. 356), *քիւֆիւր* «հայեոյանք» (բ. 376) ևն, որոնք հիմայ *է, օ, ի, ու* ձայներով են: Երկուսի միջև տատանում են *սիւրէթ* «պատկեր», *դիւնյա* «աշխարհ», *փիւսքիւլ* «ծոպ», *գիւզ* «աշուն», *իւմէդ* «յոյս», *իւթիւ* «արդուկ», *միւրէքէփ* «թանաք», *գիւջէն* «ժանտաքիս», *ջիւնաքէթ* «անալիտան», որոնք այսօր գործ են ածում թէ՛ *իւ* և թէ՛ *ու*, *ի* ձայներով:

Այսպիսի տատանում ցոյց են տալիս նաև բուն հայերէն մօրութեան *միրութ, միրիւք, յիսուն>սուն, սիւն*, լեզու *>լուզու, լիւզիւ*, ուլունք *>հիլուն, հիւլիւն* բառերը, որոնք գործածական են կրկին ձևերով: Այս մասին աւելի մանրամասն տե՛ս § 59:

Այս բոլորից հետևում է որ *իւ*, *էօ* ձայները հին լեզուում շատ սովորական էին, բայց հետզհետեւ ջնջուեցան. *էօ* ձայնը բոլորովին վերացաւ, իսկ *իւ* իր գոյութիւնը պահում է դեռ հինգ բառի մէջ (*միւլիզ, լիւլէ, սիւլիւք, լիւզէն, թիւթիւն*). սրանց մէջ նկատելի է որ *իւ* ձայնաւորը գտնւում է մեծ մասամբ *լ*-ի մօտ (առաջ կամ յետոյ). բայց երևոյթը ընդհանուր չէ, որովհետև ունինք նաև *քիւքիւ* «սոխակ», *փուսգուլ* կամ *փիւզգիլ* «ծոպ», որոնց մէջ թրք. *ü* թէև *լ*-ի մօտ, փոխուած է սակայն *ի* կամ *ու*: Ուրեմն *իւ* ձայնի պահպանութեան ամենից զօրաւոր յենարանն է լ ձայնը: Նկատենք նաև թէ ռուսերէն լեզուն էլ գուրկ է *էօ*, *իւ* ձայնաւորներից և այս բանը նպաստաւոր հանգամանք է յիշեալ ձայնաւորների կորստեան համար Նոր-Նախիջևանի բարբառում:

*Ծանօթ.*— «Իմ Թուրքերէնէ փոխառեալ բառեր»-ի մէջ Նոր-Նախիջևանի ձևերը մեծ մասամբ նշանակուած են հին ձևով. այս կէտը պէտք է նկատի առնեն նրանք՝ որ ուզում են ուսումնասիրել նոյն բարբառի թուրքական փոխառութիւնները: Պէտք չէ մոռանալ յատկապէս Խրիմի թաթարների արտասանութիւնը, որ այս պարագային ամենակարևոր դերն է խաղացած:

3. Պայթուցիկ բաղաձայնների հնչման տեսակետով Նոր-Նախիջևանի բարբառը բաժանում է երկու տիպարի: Առաջին տիպարը ներկայացնում են Չալթը և Թոփտի դրացի գիւղերը, իսկ երկրորդ տիպարը՝ Նոր-Նախիջևան, Ռոստով քաղաքները և Մեծ ու Փոքր Սալա և Նիավիթա գիւղերը: Շրջակայ քաղաքների գաղթականները ամենամեծ մասամբ Նոր-Նախիջևան քաղաքից լինելով՝ պատկանում են երկրորդ տիպարին: Նոյնը կարելի է ասել նաև Ս. Խաչ և Սամբեկ գիւղերի համար:

Երկուսի տարբերությունը հետևեալն է:

Ա տիպարը ներկայացնում է Կը ճիւղի արևմտեան մասի, այն է Սեբաստիոյ, Ակնի, Խարբերդ-Երզնկայի բարբառների ձայնական դրութիւնը: Կատարելապէս զանազանում է հայերէնի պայթական բաղաձայնների երեք աստիճանները (բ, պ, փ, - գ, կ, ք - դ, տ, թ - ձ, ծ, ց - ջ, ճ, չ): Թրթռուն *բ, գ, դ, ձ, ջ* ձայները հնչում են լիօրէն, կատարելապէս թրթռուն հնչումով, արտաբերութեան սկզբից մինչև պայթումը թրթռումների մի երկար շարք ունենալով: Թրթռուն շընչեղ բաղաձայնների շարքը պարզ կերպով զանազանում է իսկական թրթռուններից. բայց սրանց մէջ հազազը աւելի տկար լինելով քան Կարին, Մուշ, Ալաշկերտ ևն, այս բաղաձայնները աւելի մօտ են *փ, ք, թ, ց, չ* շնչեղ խուլերին, հետևապէս և համապատասխան են ֆրանսական *p, k, t* ձայներին: Շնչեղ խուլերը (*փ, ք, թ, ց, չ*) իրենց սովորական հնչումը պահում են և ուրիշ բարբառներից որևէ զանազանութիւն չեն ներկայացնում բնաւ:

4. *Ծանօթ.*— Մենք այս աշխատութեան ձայնախօսական բաժնում թէև այս բաղաձայնները նշանակեցինք *բ', գ', դ', ձ', ջ'* ձևով, բայց ձայնաբանական բաժնում դրինք միշտ *պ, կ, տ, ծ, ճ'* մասամբ տպագրութեան դիրութեան համար և մասամբ որովհետև նոյն ձայները բռնում են երկուսի մէջտեղը: Իսկապէս եթէ համեմատենք մի կողմից կարնեցոց շնչեղ թրթռունները, կովկասահայոց խուլերը, ֆրանսական խուլերը և միւս կողմից Նոր-Նախիջևանի շնչեղ թրթռունների խումբը, կտեսնենք որ այս վերջինը *ո՛չ* մէկի հետ ճշտիւ նոյն չէ: Առաջինի հետ նոյն է ուժով, բայց շունչը

պակաս է. կովկասահայոց խուլերից պակաս է ուժով, բայց աւելի է շնչով. ֆրանսական խուլերի հետ նոյն է ուժով, բայց շնչով աւելի է: Ուրիշ խօսքով ուժով նոյն է Կարնոյ շնչեղ թրթռունների և ֆրանսական խուլերի հետ, բայց շնչով մեկից պակաս, միւսից աւելի է:

5. Երկրորդ տիպարը ներկայացնում է ճիշտ Պօլսի բարբառի ձայնական դրութիւնը. բաղաձայնների երկու աստիճան միայն կայ. թրթռուն և շնչեղ խուլ: Շնչեղ թրթռուն բաղաձայնները ջրնջուած են և սրա փոխարէն բուն թրթռուններն էլ իրենց հնչումը փոխելով՝ թրթռունների թիւը պակասեցրած և մօտեցած են ֆրանսիական խուլերին: Այս փոփոխութիւնը սակայն դեռ վերջնականապէս հաստատուած չէ, և Նոր-Նախիջևանի հնչումը տատանում է թրթռունի և խուլի միջև, ճիշտ ինչպէս Պօլսում: Ձայնական նրբութեանց վարժ ականջը շարունակ կարող է նկատել, թէ ինչպէս՝ օր. *բան* բառը մէկ անգամ *բան*, յաջորդ անգամ գրեթէ *պան* հնչումն է ստանում միևնոյն անձի խօսակցութեան մէջ, խուլ հրնչումը երևան է գալիս յատկապէս *խ*, *ս*, *շ* ձայներից յետոյ. *ինչ. թուխտ, աշկէրդ, հաստ* են:

Խօսողները սակայն, ինչպէս Պօլսում, նոյնպէս և այստեղ, իրենք գիտակից չեն թրթռունի և խուլի այս խադերին, նոյն իսկ խուլ բաղաձայններից յետոյ յառաջացած փոփոխութեան, և միշտ այնպէս են ըմբռնում թէ իրենց արտաբերած երկու զանազան հնչումները միատեսակ թրթռուն են: Սրա համար է՝ որ ռուսերէնի *п*, *к*, *т*, խուլերը արտասանելու կամ գրաւոր տառադարձելու համար՝ քաղաքացիք գործ են ածում *փ*, *ք*, *թ* շնչեղ խուլերը, իսկ գիւղացիք նախընտրում են *բ*, *գ*, *դ* շնչեղ թրթռունները՝ որ իրօք աւելի մերձաւոր հնչում ունին:

6. Մնացեալ բաղաձայնների մէջ նկատելի է միայն *ր* ձայնը՝ որ Նոր-Նախիջևանի բարբառում շատ կակուղ արտասանութիւն ունի՝ անգլիական *r*-ին նման. այնպէս որ կարելի էր մի առանձին տառով նշանակել: Բայց այս բանը աւելորդ համարեցինք, որովհետև *ր* ձայնի այսպիսի թոյլ հնչումը յատուկ է միայն նորագոյն ռուսախօս սերունդին:

Նոր, բայց ռուսախօս սերունդին է յատուկ նոյնպէս *h, η, /u* ձայների այլափոխեալ արտասանութիւնը (*h* աւելի թաւացած, *η* և */u* աւելի փափկացած). ինչ որ արդիւնք է ռուս լեզուի ազդեցութեան: Նոյն ազդեցութեամբ է ձևացած նաև *է, է* և *ռ, օ* ձայնաւորների երկբարբառային յօ, ւօ արտասանութիւնը՝ որ նոյնպէս յատուկ է միայն ռուսախօս հայոց և ըստ այսմ մեր ներկայ աշխատութեան մէջ նկատի առնուած չէ:

## Բ ՄԱՍ Ձայնաբանություն

### Ա. Ձայնաւորների փոփոխութիւնը

#### Ա

7. Հին հայերէնի *ա* ձայնաւորը Նոր-Նախիջևանի բարբառի մէջ ամէն դիրքում մնում է սովորաբար *ա*. օր.

Բառասկզբում՝

ալիւր>*ալուր*, աղիք>*աղէք*, ասեղ>*ասէղ*, արև>*արէվ* են:

Բառամիջում՝

բարակ>*բարագ*, դանակ>*դանագ*, կարագ>*գարաք*, հարսն>*հարս* են:

Բառավերջում՝

գնա՝>*գնա՛*, ասա՝>*ասա՛*, նա>*նա՛*, հապա՝>*հաբա՛* են:

8. Բազմավանկ բառերի մէջ բառամիջի *ա* ձայնաւորը սովորաբար ընկնում կամ դառնում է *ը*. ընկնում է երկու բաղաձայնի միջև, դառնում է *ը՝* մի քանի բաղաձայնների խճողման դէպքում. այսպէս են՝ ագանել>*հաքնէլ*, ամաչել>*ամըշնալ*, անալի>*անլի*, ալնի, անապակ>*ամբագ*, անկանել>*ըյնէլ*, անցանել>*անցնէլ*, աշակերտ>*աշկէրդ*, ապարանջան>*աբըռջան*, առաջեալ>*առչէվ*, արածել>*արձէլ*, արձակել>*արցըզէլ (քէլ)*, ածկրել (Չ), բաժանել>*բաժնէլ*, բադանիք>*բադնիք*, բանալիք>*բալիք*, բուսանել>*փսնէլ*, գանգատուիլ>*գանգըդվէլ*, գտանել>*գըդնէլ*, դադարել>*թաթռէլ*, ելանել>*էլլէլ*, եղբարք=աղբարտիք>*ախարտիք*, \*երանեակ>*էրնէգ*, *էյնէգ*, երկաթեայ>*էրգըթէլ*, զարկանել>\*զարկնէլ>*գարնէլ*, թաթախել>*թաթխէլ*, *թախտէլ*, թալանալ>*թալնալ* «յոգնութիւնից ուժասպառ լինել», թեզանիք>*թէզնիք*, իջանել>*ինչնէլ*, *ընչնէլ*, խածանել>*խազնէլ*, կամակար>*գամգար* «ծանրաշարժ, յամր», կատաղել>*գաղղէլ*, կարկատել>*գարգըղէլ*, կնքահայր>*գընգըհար*, (կնքամայր>*գընքամար* այս փոփոխութիւնը չի կըրած), \*կոճակել>*գօջգէլ*, հակառակել>*հագըռգէլ*, համարել>*համրէլ*, հառաչել>*հառչէլ*, հասանել>*հասնէլ*, օր հասա-

բակ>*հորսագ, հորսուգու*, հասկանալ>*հասկնալ*, հարսանիք>*հարսնիք*, հարցանել>*հարցընել*, հաւանիլ>*հաւինել*, հաւասար>*հաւսար*, հաւասարեցուցանել>*հաւսըրցընել*, հեծանել>*հէձնել, հէզնել*, հիւանդանալ>*հիւլըն(դ)նալ*, հպարտանալ>*հաբըրնալ*, հեռաւոր> *հեռւօր*, «հեռու ճամբից եկող բարեկամ», ճանաչել>*ջաշնալ*, ճանապարհ>*ջամփա*, ճերմականալ>*ջէրմըզնալ*, մատանի>*մադնի*, մարգարիտ>*մարքըրիդ*, մեղադրել>*մէխթրել*, մեռանիլ>*մէռնել*, մտանել>*մըդնել*, մոռանալ>*մօռնալ*, յուղարկել>*խըզել*, յստակել>*ըստըզել*, յօրանջել>*օրընջըրդալ*, չարչարկել>*չարչըզել*, պագանել>*բաքնել*, պակասել>*բագսել*, պապակիլ>*բաբգել*, պապանձիլ>*բաբընձել*, պառակել>*բառգել*, պաքսամատ>*բաքսըմադ*, բասմադ (երկուսն էլ Չալթրում, որի դէմ քաղաքն ունի *բէսմէթ* § 35), ջրաղացպան>*ջաղացպան*>*ճախճըբան* (Չ.), սատակել>*սադգել*, սարսատել>*սարսըդէլ* «մի քիչ չորանալ, թացութիւնն անցնիլ», վաստակել>*վաստըզել*, վարժապետ>*վաժբէդ*, տապակել>*դաբգել*, տեսանել>*դէսնել*, փաթաթել>*փաթթել*, քառասուն>*քառսուն* և մինչև անգամ ռուս. սամաւար>*սամվար*:

9. Այս կարգին են պատկանում *-անալ* վերջաւորութեամբ բայերը, որոնք մեծ թիւ են կազմում աշխարհաբարում. օր. բարձրանալ>*բացըրնալ*, գողանալ>*գօղնալ*, հիւանդանալ>*հիւլըննալ*, ճերմականալ>*ջէրմըզնալ*, հաստանալ>*հաստընալ*, հասկանալ>*հասկընալ* ևն:

10. Ուրիշ բարբառներում՝ երկրորդ վանկի մէջ *ա* ունեցող բառերը հոլովման ժամանակ այս ձայնաւորը միջին դառնալով՝ ջնջում կամ վերածում են *ը*. հմմտ. Պօլսի բարբառի *ճակտի, բերնի, քաղքի* ևն ձևերը: Նոր-Նախիջևանի բարբառում այս երկայթը թէև կայ, բայց շատ հազուադիւս է. ինչ. *բէրնի* (բայց նաև *բէրանի*), *վըջգին* «վիճակին, համբարձման տօնին»:

11. Միջավանկի *ա* ձայնաւորը այս ձևով *ը* վերածուելուց յետոյ, երբ յաջորդ կամ նախորդ վանկում *ու* պատահի, սրա ազդեցութեամբ դառնում է *ու*. այսպէս են՝ արտասուք>*արտըսուք*>*արդուսունք*, օր հասարակ>*հօրսագ*, որից մակբայաբար \**հօրսագու*>\**հօրսըզու*>*հօրսուգու*, ցուցանել>*ցուցընել*>*ցուցունել*, գւո. շուլալել>\**շուլըլել*>*շուլուլել*, օտարցնել>*օդըրցունել*>*օդուրցունել* «օտար

մարդ կարծելով վախենալ» (հմմտ. § 27): Ուրիշ օրինակ և բացառություն չկայ: Քառասուն>*քառսուն* բառը այս օրենքին ենթարկուած չէ, որովհետև *ա* ձայնաւորը պարզապէս ընկած է և ոչ թէ վերածուած ը: Սակայն այս բոլորի մէջ պէտք է նկատել որ ո՛չ թէ *ա* ձայնն է՝ որ դառնում է *ու*, այլ *ը*, ինչ որ սովորական երևոյթ է այլուր այս բարբառի մէջ (հմմտ. § 26):

12. Կան մի խումբ բառեր՝ որոնց մէջ միջավանկի *ա* ձայնաւորը կորած չէ. սրանցից ոմանք իբրև ուսումնական և կրօնական բառեր՝ ազատ են մնացած այս ձևափոխութիւնից, միւսները յայտնի չէ ինչո՛ւ: Առաջին կարգին են պատկանում՝ անարատ>*անարադ*, ամբարտաւան>*ամկարդաւան*, աւազան>*աւազան*, աւետարան>*աւէդարան*, գանձանակ>*քանձանագ*, գաւազան>*քաւազան* (վարդապետի), դատաստան>*դադաստան*, դատաւոր>*թադաւոր*, թագաւոր>*թաքաւոր*, ժառանգել>*ժառանքել*, խայտառակ>*խայդառագ*, խոստանալ>*խօստանալ*, կառավարել>*գառաւարել*, կատարել>*գադարել*, կերպարանք>*գերբարանք*, կեղծաւոր>*գէդձաւոր*, կիւրակէ>*գիրագի*, հակառակ>*հագառագ* (բայց կայ *հագըռոցել*), հարազատ>*հարագադ*, հարկաւոր>*հարգաւոր*, մարգարէ>*մարքարէ*, մխիթարել>*մխիթարէլ*, յիշատակ>*հիշադագ*, նաւակատիք>*նաւագադիգ*, շարական>*շարագան*, պաղատիլ>*բադադէլ*, պատասխան>*բադասխան*, պատարագ>*բադարաք*, սաղաւարտ>*սադաւարթ*, սատանայ>*սադանա*, սարկաւազ>*սարգաւաք*, սարսափելի>*սարսափէլի*, վախճանիլ>*վադջանէլ*, վօդջանէլ, վարագոյր>*վարաքուր* (տաճարի), վարդապետ>*վարթաբէդ*, վարժատուն>*վարժադուն*, տաղաւար>*դադաւար*, քահանայ>*քահանա*:

13. Երկրորդ կարգին են պատկանում՝ ազատել>*ազադէլ*, ադաչել>*ադաչէլ*, աշխատիլ>*աշխադէլ*, աւազակ>*աւազագ*, բախտաւոր>*բախտաւոր*, բամբասել>*բամբասէլ*, գիրանալ>*գէրանալ*, գիւղացի>*գէդացի*, դիմանալ>*դիմանալ*, երանի>*էրանի* (սակայն կանոնաւոր է \*երանեակ>*էրնէգ*, *էյնէգ*), թուլանալ>*թուլանալ*, իմանալ>*իմանալ*, լուանալ>*լվանալ*, խափանել>*խափանէլ*, ծոգատիկ>*գոագադիգ*, կադանդել>*գադանդէլ*, կերակուր>*գէրագուր*, կնքամայր>*գնքամար*, կործանիլ>*գորձանվէլ*, ծերանալ>*ձէրանալ*, հասարակ>*հասարագ*, հաւատալ>*հաւադալ*, սանահայր>*սանահար*, սանա-

մայր>սանամար, սասանել>սասանել: Սրանցից մի քանիսը կարող են համարուել գրական փոխառութիւն, որով կանցնեն առաջին կարգին, բայց միւսները անշուշտ բնիկ ժողովրդական բառեր են, քանի որ ուրիշ հոմանիշ չունին և ձայնափոխեալ ձևով արդէն կենդանի են ուրիշ բարբառներում. ինչ. աշխատիլ (*բիշա՛դէլ*), դիմանալ (*դիմնալ*), թուլանալ, (*թուլնալ*), լուանալ (*վլալ*), հաւատալ (*հաւտալ*, *աւտալ*, *հվա՛տալ*): Այս պարագային յիշեալ բառերի բացառիկ դիրքը Նոր-Նախիջևանի բարբառում՝ կարօտ է բացատրութեան:

14. Նկատելի է սակայն՝ որ այս կարգի բառերից ոմանք տատանուում են երկու ձևերի միջև. այսպէս են օր. վարժապետ>*վաժարէդ*, *վաժբէդ*, հաւասար>*հաւասար*, *հաւսար*: «Կնքահայր» բառը քաղաքը գործ է ածում *գնգահար* ձևով, իսկ Չ. *գնգրհար*: Պէտք է ենթադրել որ առաջինները գրականի ազդեցութեան տակ են, երկրորդները բնիկ ժողովրդական:

15. Բացի վերոյիշեալ կանոնաւոր և ընդհանուր ձայնափոխութիւններից՝ ա ձայնաւորը ենթարկւում է նաև մի քանի մասնաւոր ձայնափոխութեանց. այսպէս՝

**ա>ը.**– կադանդ>*գադընդ*, կարենալ>*զըրնալ* (հների մէջ դեռ կենդանի է *գարնալ* ձևը). (Պօլսի բարբառումն էլ նոյն ձևով ունինք՝ *գադընդ*, *զըրնալ*). հանճարել>*հնջարել* «հնարել», լափել>*լփէլ*, ճապաղուիլ>*ջըբդվիլ* «սփռուիլ» (Թ.), որից *արունջըբաղ* «արինաճապաղ».– անկանիլ բայը նախ դարձել է *անկնէլ*, յետոյ *ընկնէլ* կամ *ինկնէլ*, որից Ննխ. *ըյնէլ* կամ *իյնէլ*.– վերջապէս կայ *քահանայ* բառը՝ որ Չալթրում տուած է *կհանա*, այլուր միշտ *քահանա*:

**ա>ի.**– այսպէս է միայն ծիծեռնակ>*ձըձէռնիք*: Բայց այս բանը անշուշտ ձայնաբանական պատճառներից յառաջացած չէ, այլ քիչ գործածական *-ակ* մասնիկը փոխանակելով աւելի գործածական *-իկ* ձևով:

**ա>է.**– գետնաշարժ>*գէդնէժաժ*, որ և *գէդնաշաժ*, վարդավառ>*վարթէվօր*, պանիր>*բէնիր* (այս բառը ո՛չ թէ բնական ձայնափոխութիւն է, այլ խաչաձևման օրէնքով յառաջացած է թրք. *փէնիր* (penir) ձևի ազդեցութեամբ. ճիշտ ինչպէս որ նոյն օրէնքով նոյն թրք. բառից ձևացած է. Պլ. *փանիր* և Չալթրի տիպարումն էլ *պանիր*՝ պ ձայ-



նով և ո՛չ թէ բ. (հմմտ. § 217). դարիվեր>*դերվեր*, դարիվայր>*դերվար* (սրանցից առաջինում *վեր* բառի *ե* ձայնն է՝ որ նմանութեամբ անցել է առաջին վանկին և սրանից էլ անցել է *դարվար* ձևին. Պօլստում ունինք *դարվեր*, *դարվար*):

**ա>օ.**— գտնում ենք միայն վախճանել>*վօղջանել* բառում՝ որ իբր երկրորդ ձև գոյութիւն ունի *վաղջանել* ձևին կից և վարդավառ>*վարթելօր* բառում՝ որ ինչպէս այլուր, նոյնպէս և այստեղ կազմուած է *վարդևոր* ձևի միջոցով:

## Ե

16. Ե ձայնը բառասկզբում՝ միավանկ բառերի մէջ դառնում է *յէ*, բազմավանկ բառերի մէջ՝ *է*, օր.

Միավանկների սկիզբը՝ եզն>*յէգ*, ես>*յէս*, երբ>*յէփ*, եփ>*յէփ*. հմմտ. նաև *յւղ* բառը § 90 և *յետ* § 192:

Բազմավանկների սկիզբը՝ ելանել>*էլլէլ*, եղայ>*էղա*, եռալ>*գէռալ*, երազ>*էրաձ*, երանի>*էրանի*, \*երանեակ>*էրնէգ*, *էյնէգ*, երդումն >*էշթում*, երես>*էրէս*, երեսուն>*էոսուն*, երերալ>*էրէրալ*, երևիլ>*էրէվնալ*, երէկ>*էրէգ*, երթալ>*էշթալ*, երինջ>*էրինջ*, երկաթ>*էրգաթ*, երկայն>*էրգան*, երկինք>*էրգինք*, երկու>*էրգու*, երնել>*էյնէլ*, եփել>*էփէլ* ևն:

Բացառութիւն է եպիսկոպոս>*յէքիսգօքօս*՝ որ իբր կրօնական բառ՝ պահել է գրական արտասանութիւնը:

Նկատելի երևոյթ է որ հոլովման ժամանակ՝ երբ միավանկ բառերը բազմավանկի վերածուին՝ ձայնական օրէնքներին չեն հպատակում և նմանողութեան օրէնքով իրենց նախնական ձևը պահում են. օր. եզն>*յէգ*, սեռ. *յէգի* «եզան», երբ>*յէփ*, սեռ. *յէփվան*: Բայերի մէջ կայ երկու բառ՝ որ նախաձայն *ե* ունին. այն է եփել>*էփէլ* և ելանել>*էլլէլ*. առաջինը արմատական եփ>*յէփ* և բայական *էփէլ* ձևով կանոնաւոր է. երկրորդը բայական *էլլէլ* և եզ. հրամ. ե *լ*>*յէլ* ձևով նոյնպէս կանոնաւոր է (բազմավանկի մէջ *է*, միավանկի մէջ *յէ*). սակայն յգ. հրամ. *էլէք*>*յէլէք* ձևը կազմուած է նմանողութեամբ և օրէնքին չի հպատակում:

17. Մասնաւոր պարագաներ.

*Ելակ* «վայրի մորի» բառի մեջ նախաձայն *ե* ներկայանում է երկու ձևով՝ *է, հէ*. այսպես՝ *էլաք* Չալթր, *հէլաք* Թոփտի, Մեծ-Սալա. բայց սրանք պետք չէ համեմատել գրական *ելակ* ձևի հետ, որովհետև զուտ թաթարական փոխառություն են. հմմտ. Կազանի, կիրգիզ և Տորոլսկի թաթարերեն *yilak*, որ ընդհանուր անուն է ելակի, մորի, արքայամորիի և նման պտուղների. սրանց համապատասխանում է թրք. *jilak*, տձկ. *čilek*, ռմկ. չիլենզ «ելակ» (տե՛ս Будаговъ, Справ. слов. 2, 362):

Եղունգ>*օղունք* բառի մեջ նախաձայն *ե* ազդուելով յաջորդ *ղ*-ից, անշուշտ նախ դարձել է *ը* և յետոյ ազդուելով յաջորդ վանկի *ու* ձայնաւորից՝ դարձել է *օ*. այլուր կայ *ուղունգ*. հմմտ. § 26:

Եղբայր>*ախպար* ձևի մեջ, որ յատուկ է նաև Կը ճիւղի շատ բարբառների (Ում ճիւղումն էլ *ախպէր*), *ա* ձայնը նոր ձայնափոխութեամբ չէ՛ յառաջացած, այլ անշուշտ կար նաև հին հայերէնում՝ ուր *ղ, ր* ձայներից առաջ դրուած *ե* յաւելուածը կարող է փոխանակուել նաև *ա*-ով. ինչ. *եղագ*=*աղագ*, *երասանակ*=*առասան*, *երագ*=*արագ* ևն:

*Երեկոյ* բառի դէմ ունինք *իրգուն*, որ գալիս է *իրիրգուն* և այս էլ *երիրգուն* ձևից, ուր նախաձայն *ե*՝ միջին ձայնաւորի ազդեցութեամբ եղել է *ի* (§ 35):

*Երէք* բառը Նոր-Նախիջևանի բարբառում դառնում է *իրէք, րէք, ժէք*. վերջինիս վրայ տես § 33 և 259:

18. Բառամիջի *ե* դառնում է *է*. օր. մեղու>*մէղու*, շերեփ>*շէրէփ*, ներքս>*նէս*, երես>*էրէս*, բարեկենդան>*բարգէնանք*, որտե՞ղ>*վըղէ յս*, սիսեոն>*սըսէռ*, վեց>*վէց*, ասեղն>*ասէղն* ևն:

19. Մի քանի բառ կայ միայն՝ որ շեղում են օրէնքից.

**ե>օ.**– ցերեկ>*ցօրէզ* (նոյնպէս Պլ. և այլուր), ուղեղ>*օղօղ* «ոսկորի ծուծ», խելօք>*խօլօք* (ազդուելով երկրորդ վանկից):

**ե>ա.**– սրա համար իբր օրինակ ունինք միայն *ուզանալ* ձևը՝ որ գործ է ածուում Չալթրում՝ փոխանակ *ուզենալ* աւելի սովորական ձևին. բայց սա *ե*-ի ձայնափոխութեամբ չէ առաջացած, այլ *-ենալ* բայական մասնիկը փոխանակելով *-անալ* մասնիկով: Խրիմի մէջ նոյն ձևով կայ *ուզանալ* «ուզենալ», *ունանալ* «ունենալ»:

**ե>ը-** այս ձայնափոխութեան համար նախ երկու օրինակ կայ. այն է պճեղ>բջըղ և հրեշտակ>հրըշտագ. առաջինը Նոր-Նախիջևանում ունի կանոնաւոր բջէղ ձևը և միայն գիւղերում եղել է բջըղ. -եղ յանգող ուրիշ բառերի մէջ (ինչ. ասեղ, ուրտեղ, տեղ, նեղ) այսպիսի ձայնափոխութիւն չկայ. որից հետևում է թէ գիւղական բջըղ ձևը ծագում է պըճիղ բառից և ո՛չ պճեղ ձևից (հմմտ. § 37): Երկրորդը հին հրիշտակ, հրշտակ ձևի շարունակութիւնն է, որ գրաբարի հրեշտակ ձևի մօտ միաժամանակ կար՝ իրանեանից փոխառութեամբ: Երկուսի մէջ էլ ուրեմն ե>ը ձայնափոխութիւնը մի՛միայն ըստ երևոյթի է:

*Լեզուանի* բառը դարձած է *լըզվանի*. այստեղ ձայնափոխութիւնը անկանոն է, որովհետև ուրիշ բառերի մէջ ե ձայնը գ-ից առաջ մնում է անփոփոխ. ինչ. գերեզման>գէրէզման, թեզանիք>թէզ-նիք, ուստի պէտք է կարծել թէ մայր ձևն է ո՛չ թէ *լեզուանի*, այլ \**լիզուանի*. հմմտ. § 26:

Ե ձայնաւորը խ+բաղաձայնի մօտ սղուելով՝ լինում է ը. այսպէս են ճեղք>ճէխք>ջըխք, սեղմել>սըխմէլ (հմմտ. § 178), խեղդել>խըխթէլ, խըխտէլ. առանց յաջորդ բաղաձայնի, ինչպէս նաև դ-ի մօտ նոյն ձայնափոխութիւնը տեղի չի ունենալ. ինչ. ուրտեղ>վղէլս, խեղճ>խէղջ: Կանոնին հակառակ են մեղք>մէխք և մեղադրել>մէխթրէլ, մէխտրէլ:

**ե>ի-** այս ձայնափոխութեան իբր օրինակ ունինք ճենճ>ջինջ (որ յատուկ է միայն քաղաքի բարբառին) և մեք>միինկ (գործածական է Չալթր և Թոփտի գիւղերում. այլուր՝ սովորական *մէնք* ձևը), հրեշտակ>հրիշտագ (գործ է ածւում Չալթրում. այստեղ *ի* ձայնը, ինչպէս ասացինք, հին հյ. գւո. *հրիշտակ* ձևի շարունակութիւնն է, ինչպէս որ քաղաքն էլ ունի *հրշտագ* ձևը, որ նոյնպէս մի գւո. ձևի շարունակութիւնն է), լեզու>լիզու (գործածական է Չալթրի մի մասում, այլուր միշտ *լուզու*), որ շարունակութիւնն է հին հյ. գւո. *լիզու* ձևին: Չալթրում կայ նաև հրմ. *պի՛ր* «բէր»:

**ե>ու-** այս ձայնափոխութեան համար ունինք միայն մի օրինակ, այն է լեզու>լուզու, ուր սակայն ե>ու ո՛չ թէ կանոնաւոր ձայնափոխութեան արդիւնք է, այլ յառաջացած յաջորդ ու-ի նմանութեամբ (տե՛ս § 26):

20. Քառավանկ բառերում երկրորդ վանկի *ե* ձայնաւորը կորչում կամ վերածւում է *ը*. այսպէս են՝ բարեկենդան>*բարգէնդանք*, *բարգէնանք* և որբւայրի>*որֆարի*, *օֆարի* (անցնելով \**օրբւարի* ձևից): Գրական փոխառութիւն է աւետարան>*ավէդարան*: Ե ձայնը պարունակող ուրիշ քառավանկ բառ չկայ բարբառում:

21. Եռավանկ բառերի մէջ երկրորդ վանկի *ե* ձայնը ընկնում է. ինչ. աւելել>*ավլլէլ*, աւերել>*ավըլէլ*, երեսուն>*էռսուն*, համբերել>*համփըրէլ*, հայելի>*հայլի*, վայելել>*վայլէլ*. նոյնպէս -*ենալ* վերջաւորութեամբ բայերի մէջ երկալ=երկնալ>*էրվընալ*, գիտենալ>*գիղնալ*, կարենալ>*գարնալ*, գրնալ, պարծենալ>*բարձընալ*: Սրանց հակառակ միջին *ե* պահել են արեգակ>*արէգագ*, բարեկամ>*բարէգամ*, գարշելի>*գարշէլի*, գերեզման>*քէրէզման*, դեկտեմբեր>*թէգդէմփէր*, երերալ>*էրէրալ*, ծիծեռնակ>*ձիձէռնիգ*, հոկտեմբեր>*հօգդէմփէր*, նոյեմբեր>*նոյէմփէր*, սեպտեմբեր>*սէգդէմփէր*, նաև բայերից՝ *ուզենալ*, *սօրվէնալ*, *ունէնալ*, *գամէնալ*, ինչպէս և *էրէվնալ*<երկնալ (*էրվընալ* ձևի մօտ):

*Երեկոյ* բառի դէմ գործածուած *իրգուն* ձևը գալիս է *էրիգուն* ձևից և հետևաբար ներկայացնում է է>*ի* ձայնափոխութիւնը, յետոյ միջին *ի* ընկած (§§ 17, 35):

Է

22. Է ձայնը բառասկզբում քիչ է պատահում. եղած սակաւաթիւ բառերն էլ մեծ մասամբ ջնջուած են նոր բարբառներում. Նոր-Նախիջևանի բարբառի մէջ դրանցից մնացել է միայն *էշ* բառը. սակայն այն էլ յաճախ ջնջուելով փոխանակւում է թրք. *էշաք*, *էշէք* բառով:

23. Բառամիջի և բառավերջի *է* առանց բացառութեան դարձած է *է*. օր. ամէն>*ամէն*, մէջ>*մէջ*, պէս>*բէս*, օրէնք>*օրէնք* «դատատան, դատարան», կէս>*գէս*, մարգարէ>*մարքարէ*, բացառական հոլովի ծայրին՝ *հացէ*, *ջուրէ*, *դունէ* են:

24. Ամեն դիրքի մեջ էլ մնում է *ը*. Բառասկզբի համար եղած օրինակներն են՝ *ընգէր* «նորածինի փառք» (այլուր, ինչպէս և Չ. *ընգէրք*, գրբ. *ընկէր* բառից), *ընգուգ* <ընկոյգ, *հընդռէլ* <ընտրել, որից *հընդորցու* «ընտրելի, ընտիր»:

Բառամիջի համար իբր օրինակ կարող ենք յիշել այն բոլոր բառերը՝ որոնց մեջ կրկնակ բաղաձայնների միութեամբ յառաջացած է *ը* ձայնը. ինչ. *ջըրհօր* <ջրհոր, *հըրըշտագ* <հրէշտակ ևն: Գրաբարում բառավերջի *ը* չկայ. բայց նոր բարբառները յառաջ են բերել այն՝ յօդի միջոցով, այսպէս և Նոր-Նախիջևանի բարբառում. ինչ. *ջուրը*, *հացը* ևն:

25. Բառասկզբի *ը* ձայնը լ-ից առաջ ընկնում է. սրան իբր օրինակ ունինք ինել>*ըլալ*, որ Նոր-Նախիջևանի բարբառում կայ նաև *լալ* ձևով: Թերևս այստեղ պատկանի նաև *նմանիլ*՝ որ Նոր-Նախիջևանի բարբառում դարձել է *լմանէլ*, թերևս անցնելով *ըլմանիլ* ձևից, ինչպէս գտնում ենք Պօլսի բարբառում: Նոր-Նախիջևանի բարբառի մեջ բայի սահմանականի ձևերն են՝ *գըլմանի*, *գըլմանէլի* և *գըլըմանի*, *գը լըմանէլի*:

26. Բառասկզբի և բառամեջի *ը* ձայնը ազդուելով յաջորդ վանկի ձայնաւորից՝ կարող է փոխել իր երանգը. այսպէս՝

*Ու* ձայնաւորից առաջ գտնուած բառամիջի *ը* դառնում է *ու*. ինչ. թթու>*թուրթու*, թրթուր>*թուրթուր*, մրջիւն>մրջուն>*մուռչում*, մսուր>*մուսուրք*, հնհնուր>*հունհունուգ*, կոճակ>*գուռջուգ*, կսկում>*գուսգում*, կրուկ>*գուրունգ*, կնունք>*գունունք*, գրուցել>*գուրուցէլ*, կծու>*գուձու*, կկուղ>*գուգուղ*, պռունգ>*բուռունգ*, պտուկ (ծծի)>*բուդուղ*, Աստուծոյ>Աստրծու>*Աստուձու*, ճճի>ճճու>*ջուջու*, խխում>*խուխում* «շատ թաց», զմուռ>*ձումուռ*, փշրուկապուր>*փուշուրուգաբուր*, սնտուկ>*սունդուգ*, մտանեմ>*մուդնում*, կգտնեմ=կգտնում>*գու գուդնում*, կը ցուցնեն>*քուցուցունուն*, խմցնեն>*խուցունում*, այսպէս նաև. բոլոր անցողականները, որոնց վրայ տե՛ս § 381, հմմտ. դարձեալ § 11 յիշուած բառերը:

Այստեղ է պատկանում նաև լեզու>*լուզու* բառը: Սրա հին անփոփոխ ձևն է *լիզու*՝ որ պահուած է դեռ Չալթր գիւղի մի թաղում. այս ձևի մեջ *ի* ձայնաւորը յաջորդ *զ*-ի մօտ ջնջուելով (§ 33)՝

դարձաւ *\*լզու*, ուր յետոյ *ը* յաջորդ վանկից ազդուելով եղաւ *ու*, որով և յառաջացաւ *լուզու* նորագոյն ձևը՝ որ ընսհանուր է Նոր-Նախիջևանի բարբառում:

Այստեղ է պատկանում նաև *ընկոյզ* բառը՝ որ ունի թե՛ *ընզուզ* և թե՛ աւելի կանոնաւոր *ունզուզ* ձևը: Այս բառը սակայն գիւղերում (Զալթր, Թոփտի) եղած է *ոնզուզ*, որից երևում է թե՛ նախաձայն *ը*՝ յաջորդ վանկի *ու* ձայնաւորից ազդուելով դառնում է *ո*: Սրա համար ուրիշ օրինակ չկայ. բայց կերևայ թե՛ նոյն երևոյթն է ներկայացնում նաև *եղունգ* որ նախ եղել է *ըղունգ* և յետոյ նոյնպիսի ձայնափոխութեամբ դարձել է *օղունգ*՝ թե՛ գիւղերում և թե՛ քաղաքում. հմմտ. § 17:

Բառավերջի *ը*՝ նախորդ վանկերի *ու* ձայնաւորից չի ազդուում և մնում է անփոփոխ. ինչ. *ութը, ջուրը*:

27. Օ ձայնից առաջ գտնուած *ը* ձայնը տատանւում է երեք դրութեան մէջ. կա՛մ մնում է անփոփոխ, կա՛մ նմանողութեամբ դառնում է *օ* և կամ վերածւում է *ու*. այսպէս ունինք՝

շնորհք>*շնօրք*.

սղոց>*սղօց*.

ցնորիլ>*ցնօրվէլ*.

պղտոր>*բղդօր*.

*\*կնքաքօղ>զնքօղ, Զ. զընգօղ*.

գլուխ>գլօխ>*գօլօխ, գուլօխ*.

խնձոր>*խնձօր, խունձօր*.

սխտոր>*սխտօր, սուխտօր*.

խմոր>*խմօր, խումօր* (Պատկ. Բ. 364).

կտոր>*գղօր>գուղօր*.

տղայոց>*տղոց>դղօց, դուղօց*.

դժոխք>*թժօխք, թուժօխք* (Պատկ. Բ. 316).

ջրհոր>*ջրհօր, ջուրհօր*.

տրորել>*դրօրէլ, դօրօրէլ*.

խռովիլ>*խօռօվէլ*.

գլորել>*գօլօրվէլ, գուլօրվէլ*.

Ճպրոտ բառը՝ բացի կանոնաւոր ջրոտ ձկնից՝ ստացել է նաև ջուրոտ ձկնը, որ սակայն ո՛չ թէ վերի ձայնափոխութեամբ է, այլ ուղղակի կազմուած ճիպո՝ննիս. ջուրոտ արմատից՝ առանց սղման:

Նոյնը պէտք է ասել թերևս նաև ջրհոր բառի երկրորդ ջուրօր ձկնի համար:

Օ ձայնից յետոյ եկող ը կարճ ձայնը դարձել է *օ*՝ միայն ոսկր>օսկօր և գւռ. օղորցունէլ «օտար մարդ կարծելով վախենալ (մանուկների համար ասուած)» բառերի մէջ. վերջինը գալիս է օտարացուցանել>օտըրցնէլ ձկնից, որ Նոր-Նախիջևանի բարբառում դարձել է օղորցունէլ կամ օղուրցունէլ: Ուրիշ բառերի մէջ ը մնում է անփոփոխ. ինչ. նօսր>նօ՛ւրր, փոքր>փօ՛քրր:

Ջնջոց>ջինջօց բառը ժողովրդական ստուգաբանութեամբ ճենճ>ջինջ բառից կարծուելով՝ (ջնջոցը իբրև ճենճի լաթ, ինչպէս է և թրք. yaylaq) այսպէս է ձևափոխուած. այնպէս որ ը>ի ձայնափոխութիւնը երևութական է: Բայց կանոնաւոր է բառի հին ձևը՝ ջունջօց, ինչպէս գտնում ենք Պատկ. Բ. 291:

28. Ի ձայնաւորից առաջ գտնուած ը՝ սովորաբար մնում է անփոփոխ. եղած օրինակներն են կնիկ>գնիկ, կծիկ>գձիկ, կրիչ>գթիչք «կաթ կթելու աման», խլինք>խլինք, խծիպ>խձիք, խրթին>խտրթին, խնդիրք>խնթիրք, կսկիծ>գսկիձ, գրտինք>քրտինք, քրիստոնէայ>քրիստօնյա, մարգարիտ>մարգըրիտ>մարքըրիդ: Բայց ունինք նաև ի ձայնափոխութեամբ մի քանի օրինակ, որոնք են՝ անկանիւմ>ըյնիւմ>իյնիւմ, փնթի>փնթի կամ փինթի, ցնդի>ցնթի կամ ցինթի, կնիկմարդ>գինիմաշթ, ջրի>ջիրի. այս օրէնքի համեմատ սիրեւ բայից՝ կը սիրեւ>քիսիրիւմ, կը սիրէի>քիսիրէյի են: Վերջապէս կայ բրինձ>բիրինձ բառը, որ սակայն կարող է թրք. pirinջ հոմանիշից յառաջացած լինել՝ խաչաձևման օրէնքով:

Աղանի>աղվընիք>աղվէնիք ձկնի մէջ ը դարձել է *է*՝ յաջորդ վանկի ի-ի ազդեցութեամբ:

29. Ա ձայնաւորից առաջ գտնուած ը կամ նրանից յետոյ եկած կիսաձայն ը՝ մնում է անփոփոխ. ինչ. կրակ>գրագ, քսան>քսան, բարձր>բացրռ, աստղ>ասթըրիս, սանտր>սանդրռ, ժանգ>ժանգրռ, ծանր>ձանդրռ են: Բայց միննոյն ժամանակ՝ առանց որոշ կանոնի ունինք՝

ը>հ– նշխարք>նիշխարք, դրացի>դիրացին, դգալ>թիքալ, դժուար>դիժար. բայց կան նաև նշխարք, թքալ, գիւղերն էլ ունին տկալ, տիկալ: (Ճրագ=չիրախ բառը այստեղ գործ չունի, որովհետև թուրք-թաթարական հոմանիշից նոր փոխառութեամբ յառաջացած մի ձև է):

ը>աւ– հպարտ>հաքարթ, հպարտանալ>հաքըրնալ:

ը>ու.– մկրատ>մուգրադ:

30. Է ձայնից առաջ գտնուած ը ձայնը միշտ անփոփոխ է. ինչ. կշիռ>գըշէռք, պճեղ>բջէղ, բացառութիւն չկայ:

## Ի

31. Բառասկզբում սովորաբար մնում է ի. ինչ. իլ>իլիգ, իմա–նալ>իմանալ, իմաց>իմաց, ինն>ինը, ինչ>ինչ, ինքն>ինքը, իմ>իմիս, իջանել>ինչնէլ, բայց նաև ընչնէլ, ուր ի դարձած է ը:

32. Բառամիջի ի սովորաբար մնում է անփոփոխ. ինչ. գինի >գինի, գիտեն>գիտիմ, վիգ>վիգ, պանիր>բէնիր, պատիճ>բաղինջ «կանաչ լոբի», շապիկ>շաքիք և այլն:

33. Զ, ս, ժ, շ, ճ և ծ ձայներից առաջ, ինչպէս բառասկզբի, նոյնպէս և նախա վանկի ի ձայնաւորը ընկնում է: Այս անկումը ձևաւորում է երկու տեսակ. բառասկզբում ի ձայնաւորը կա՛մ բոլորովին անհետ կորչում է կամ նրա տեղ դրւում է մի տկար նախա–ձայն ը և կամ վերջապէս շշականը յենմամբ է արտասանւում. ինչ. իշխան>՞շխան «ջոջ, հարուստ», իշխել>՞շխել «գրաւել, տէր դառնալ», երեք>իրէք>\*իժէք>ժէք, իւրեանք>իրէնք>\*իժէնք>ժէնք, իւրեանց>իրէնց>\*իժէնց>ժէնց (գրեթէ արտասանւում են ժժէք, ժժէնք, ժժէնց): Իսկ նախա վանկում՝ ուր իր անկումով երկու բաղաձայն իրար են հանդիպում, մէջտեղը մտնում է ը ձայնաւորը. ինչ. սիսեռն>սըսէռ, լիգել>լըգէլ, լեգու=լիգու>\*լգու (որից էլ լուգու, տե՛ս §§ 19, 26), գիշեր>քշէր, վիճակ>վըջազ «Համբարձման տօնը», ծիծեռնակ>ձըձէռնիզ (բայց նաև ձիձէռնիզ), ծիծաղ>ձըձաղ «ուրախ, շէն (մարդ)» (այս բառի համար հմմտ. նաև Արմատական բառարանս, ծաղր բառի տակ): Միւս վանկերում այս ձայնափոխութիւնը տեղի չի ունենում. ինչ. անիծ>անիձ (բայց ըստ Պատկ. Բ. 283 անէձ)



խիստ>*խիստ*, անիծել>*անիձէլ*, (Պլ. *անըձէլ*), անիսուն>*անիսուն*, խորիսխ>*խորիս*, եպիսկոպոս>*յէփիսգօփօս*, խաւիծ>*խաւիձ* են:

Շչականից առաջ *ի* ձայնաւորի անկման օրէնքը զօրում է նոյն իսկ թրքական փոխառութեանց մէջ. հմմտ. *ըտէ*<թրք. *işte* «ահա» (իբր թարմատար շատ սովորական գործածութիւն ունի Նոր-Նախիջևանի բարբառում), *ըմարք* «աչքով ականարկ» <թրք. *işmar*, *շէմիշ քլալ* «ծուլանալ, ալարիլ» <թրք. *üşenmiş*, *ըթահ*, *ըթաֆ* «ախորժակ» <թրք. *iştah*:

*Վիշապ* բառը, ինչպէս այլուր, նոյնպէս և այստեղ *ուշաք* ձևն ունի. բայց հմմտ. § 241:

Ուրիշ հետաքրքրական օրինակներ տես § 343 և 346 ցուցական դերանունների շարքում:

34. *Յի*- նախալանկով սկսող բառերի մէջ, երբ *յ* բաղաձայնը կորչելով *ի* ձայնաւորը մնայ շչականի մօտ, դարձեալ *ի* ընկնում է՝ իր փոխարէն երբեմն մի տկար յենարան պահելով. այսպէս՝ *յիշատակ*>*շաղագ*, *յիշել*>*ըշէլ*, *յիշելք*>*շէլք* «պատարագչի հաւաքած դրամը», յիսուն>*իսուն*, *սուն* (Ննիս.), *սիւն* (Չալթր): Սրանց մօտ գրական արտասանութեամբ կամ բաղաձայնի միայն անկումով գործածական են դեռ *յիշատակ*>*հիշաղագ*, յիսուն>*հիսուն*, *յիշել*>*իշէլ*, *Յիսուս*>*Հիսուս*:

35. Բազմալանկ բառերում միջին *ի* ընկնում է. սրա համար իբրև օրինակ ունինք՝ *հանդըբէլ*>*հանդըբէլ*, դարիվեր>*տէրվէր* (Չալթր), դարիվայր>*տէրվար* (Չալթր), երեկոյ>երիգուն>*իրգուն*, օրինակ>*օրնագ*, օրինաւոր>*օրնավօր*, կաթողիկոս>*գաթօղգօս*, եղել է>*էղիլ է*>*էղըլ է* (§ 380), ներսի դի>*նէսթի*, չգիտեմ>*չիգիդիմ*>*չիդիմ* (բայց անփոփոխ է *գիդիմ*): Թերևս նաև *էրմաշթ*, *գինմաշթ*՝ որոնք կարող են գալ *էրիմաշթ*<երիկ մարդ, *գինիմաշթ*<կնիկմարդ ձևերից, որոնք նոյնպէս գործածական են այս բարբառում:

Առանձնապէս հետաքրքրական է փոխառեալ թրք. *beksimet* «պաքսիմատ» բառը՝ որ *ի* ձայնի կորուստով դարձել է *բէսմէթ* (Չալթրի *բաքսըմադ*, *բասմադ* ձևի համար տե՛ս § 8):

Շատ հետաքրքրական են նոյնպէս *նիսթացի* «Նիսվիթա գիւղացի» և *թօփ<sup>ս</sup>ցի* «Թոփտի գիւղի բնակիչ» բառերը՝ որոնք միջին *ի*-ի

անկումով յառաջացած են *նիսվիթացի, թօփտիցի* ձևերից՝ անցնելով *\*նիսվթցի, \*թօփտցի* միջին ձևերից:

Ուրիշ օրինակներ տե՛ս ցուցական դերանունների շարքում՝ § 343 է և Ը:

Այս բոլորին հակառակ՝ միջին *ի* անկորուստ պահել են Ե-պիսկոպոս>*յէփսգօբօս*՝ որ գրական փոխառութիւն է, և անխոն>*ա-նիսօն*՝ որ անշուշտ թուրքերէնից է փոխառեալ:

Կանոնին հակառակ է անիծել>*անիճէլ*, որի դէմ սպասելի էր *անըճէլ*, ինչպէս գտնում ենք իրօք Պօլսի բարբառում:

Կարելի է յիշել նաև թրք. *-իքէն* մասնիկով ձևացած դերբայները, որոնք տալիս են հին բարբառում՝ *ասսաճնիքէնս, նայսաճնիքէնդ, մէռսաճնիքէնը* ևն, իսկ նոր բարբառում՝ *ի* ձայնի գեղջումով՝ *ասսաճքէնս, նայսաճքէնդ, մէռսաճքէնը* «ասսաժ ժամանակս, նայսաժ ժամանակդ, մեռաժ ժամանակը» ևն (§ 396):

Ի ձայնաւորի անկումը գտնում ենք նաև ապառնիում, ուր *պիտի* մասնիկը միանալով յաջորդ բայի հետ և իբր մէկ բառ համարուելով՝ միջին *ի*-երի մի խումբ է ձևացրած. այս պարագային գտնում ենք հաւասարապէս *բիդի* և *բիդ*. ինչ. *բիդի բէրիս, բիդ բէրիս* ևն:

36. Վերջավանկի *ի* ձայնաւորը սովորաբար անփոփոխ կըմնայ. ինչ. կօշիկ>*գօշիգ*, կնիկ>*գընիգ*, գետին>*գէդին* ևն: Բայց՝

37. Ղ բաղաձայնից առաջ դառնում է *ը*. ինչ. ջիդ>*ջըդ*, պճիդ>*բջըդ* «կճղակ» (այս բառը քաղաքում ունի *բջէդ* ձևը, որ գալիս է հին *պճէդ* բառից. իսկ գիւղական *բջըդ* ձևը պէտք է ծագած լինի *պճիդ* ձևից (§ 19): Ուրիշ օրինակ և բացառութիւն չկայ:

38. Ռ+բաղաձայնից առաջ՝ *ի* դառնում է *է*՝ կշիռ>*գշէռք* (Ննխ.), *քշէռք* (Չալթր) բառի մէջ. բայց անփոփոխ են մնացած սիրտ>*սիրդ*, խնդիրք>*խնթիրք*, կարմիր>*գարմիր*, որովհետև սրանց մէջ *ռ* ձայնի տեղ ունինք *ք*, իսկ վերջինում նաև *ռ*-ին բաղաձայն չի յաջորդում:

Բացառաբար լիրք>*լէրի* թէև ունի *ր*, բայց կրել է նոյն ձայնափոխութիւնը:

39. Ղ և *ռ* բաղաձայններից յետոյ և *ք, գ* բաղաձայններից առաջ գտնուած *ի* ձայնը դառնում է *է*. այսպէս են՝ աղիք>*աղէք*, առիք>*առէք* «առաստաղ», ծաղիկ>*ձաղէգ* «մոխիր». ուրիշ բաղաձայններից

յետոյ թէն *p*, *q* ձայներից առաջ գտնուած լինի, կամ *η*, և *u* բաղա-  
ձայններից յետոյ՝ բայց ո՛չ *p*, *q* ձայներից առաջ՝ նոյն ձայնափոխու-  
թիւնը տեղի չի ունենալ. ինչ. բաղանիք>*բաղնիք*, բանալիք>*բալիք*,  
շապիկ>*շաքիք*, վարտիք>*վարդիք*, հարսանիք>*հարսնիք*, ձիգ>*ձիք*.  
դեղին>*դէղին*, կաղին>*գաղին*, ծոթրին>*ցէթրին* ևն: Հմմտ. նաև § 91:

Այս օրէնքը ցոյց է տալիս՝ որ Պօլսի բարբառով *ձաղէգ*  
«ծաղիկ» բառի է ձայնը՝ որ նախապէս թրք. *çiçek* բառից խաչա-  
ձևմամբ յառաջացած էի կարծում (տե՛ս MSL 10,324), այսպէս չէ, այլ  
յառաջացած է բնական ձայնափոխութեամբ, Նոր-Նախիջևանի  
բարբառում թրք. բառը *չիչագ* ձևն ունենալով՝ չէր կարող սրանից  
խաչաձևմամբ *ձաղէգ* ձևը յառաջանալ:

40. *Ճիպո* բառը դարձել է *ջուբո*, ուր ունինք ի>*ու* ձայնափո-  
խութիւնը, որ այլուր չի տեսնուում. նոյն բառից կազմուած *ջուբոտ*  
ածականը պահում է արմատական *ու* ձայնը, թէն կայ և *ջըբոտ*  
(§ 27):

Պատկանեանի մօտ գտնում ենք գործածուած՝ ուրիշ>*ուրուշ*  
(հմմտ. Պատկ. Բ. էջ 279, 293, 410, 411, 412), որ այժմ չկայ. ներկայ  
սերունդը գիտէ միայն *ուրիշ* ձևը:

41. *Լինել* բառը Նոր-Նախիջևանի բարբառում տալիս է *ըլալ*,  
*լալ*, որ Պօլսի բարբառի *ըլլալ* ձևին ամենամերձաւորն է: *Լինել*  
բառը անշուշտ տուել է նախ *ըլնել*, յետոյ *ըլնալ*, *ըլլալ* և սրանից էլ  
*ըլալ* կամ *լալ* (§ 204):

42. Բառավերջի *ի* սովորաբար մնում է անփոփոխ. ինչ. աղի>  
*աղի*, անալի>*անլի*, ալնի, որբնայրի>*օրֆարի*, բարի>*բարի* «ինչք,  
ապրանք», գարի>*գարի*, գինի>*գինի*, գօտի>*գօղի*, աղաւնի>*աղվէնիք*  
ևն:

43. *Հէռի* և *Ճճի* բառերն են միայն՝ որ ինչպէս ուրիշ բար-  
բառներում, այնպէս և այստեղ տալիս են *հէռու*, *ջուջու* (§ 26):

44. Միավանկ բառերի ծայրը գտնուած *ի*՝ Թոփտի գիւղում  
դառնում է *իյ*, Նիսլիթա՝ *իւ*. իսկ միւս բոլոր տեղերը անփոփոխ է  
մնում. այսպէս են թի>*թիյ*, *թի*, և ձի>*ձիյ*, *ձի*, սեռ. *թիյի*, *ձիյի*, յօդով  
*թիյը*, *ձիյը*, *թինը*, *ձինը* (§ 322):

45. Մբ>*մը* անորոշ յօդի մէջ բառավերջի *բ* վերածուած է *ը*.  
սրանից է կազմուած *մէկ կտոր մի*>*մէդօ՛մը*. բայց նաև բոլորովին

ջնջուած՝ *մէքաւ*<մէկ հատ մի, *բամալ*<պահ մի այլ («քիչ առաջ» նշանակութեամբ գործածական), *օր մալ*<օր մի այլ, միևնոյնը նաև տեսնում ենք *մի՛* արգելականի մէջ. ինչ. *մէ՛րթալ*, *մէ՛շտաք* «մի՛ երթաք», *մը՛ լսի*, *մը՛ լսիք* են:

Ծանօթ.— Ի>*իւ* ձայնափոխութեան վրայ տե՛ս § 59:

## Ո

46. Միավանկ բառերի սկիզբը *n* ձայնը դառնում է *վօ*. եղած օրինակներն են՝ ով>*վօվ*, որ>*վօր*, որդ>*վօրթ*, ոռ>*վօռ*, ողջ>*վօխչ*, ոսպ>*վօսպ*, ոտք>*վօթք*:

*Որթ* «կովի ձագ, հորթ» բառը քաղաքում կորած է՝ փոխանակուելով թրք. *բուզով* (տճկ. *buzayə*) ձևով, իսկ գիւղերում գործածուած *ֆօրտ*, *ֆօշտ* ձևը ծագում է *հորթ* ձևից (§ 288):

*Ոյս* «վրէժ, քէն» բառը դարձած է *օյս*, անշուշտ *օ՛յս* բացազանչութեան հետ միացուելով. հմմտ. *օյսը հանից* «վրէժն առաւ» բացատրութիւնը:

47. Բազմավանկ բառերի սկիզբը *n* դառնում է *օ*. եղած օրինակներն են՝ ոլորել>*օլորրէլ*, ոլոք>*օլօք*, ողբալ>*օխփալ*, ողորմել>*օղօրմէլ*, ոչխար>*օչխար*, ոջիլ>*օջիլ*, ոռնալ>*օռնալ*, ոսկի>*օսկի*, ոսկր>*օսկօռ*, որբնայրի>*օրֆարի*, որդի>*օրթի*, ործկալ>*օրձգալ* կամ *օձգալ*:

*Օրբնայրի* բառի սովորական ձևն է *օրֆարի*, բայց տեղ տեղ կայ նաև երփեվարի ձևը (հմմտ. Պատկ. Ա. 301, Գ. 88, 199, 212, Խըճի աղա՝ էջ 19, 33, 39). սրա մէջ նախաձայն *օ՛* յաջորդ վանկի *է*-ից ազդուելով՝ դարձել է *է*:

*Ողջոյն* բառը՝ իբրև կրօնական բառ՝ հակառակ այս կանոնին՝ գրական արտասանութեան համեմատ դարձել է *վօխշում* (Ննիւ.), *վօխճուն* (Զալթր):

*Ոլոռն* բառը ձայնաւորների փոփոխութեամբ դարձել է *Զալթր ուլէռ*, իսկ քաղաքը և միւս գիւղերը՝ բաղաձայնների տեղափոխութեամբ՝ *ուլէռ*, ուր վերջիվերջոյ *n* նախաձայնը դարձել է *ու*, ինչպէս և երկրորդ վանկի մէջ է:

48. Բառի մեջ՝ շեշտի տակ կամ առաջին վանկում մնում է *օ*. ինչ. սալոր>*սալօր*, հող>*ֆօղ*, խաղող>*հալօղ*, կորեակ>*գօրեգ*, գորեան>*գօրեն*, գործել>*գօրձել* «հիսել», աթոռ>*աթօռք* են:

49. Ծով>*ձուվ* և մոշայ>*մուշայ* (*mušay*) «մի տեսակ խոտ՝ որ անասուններն արածում են» բառերի մեջ *ո* դարձել է *ու*. սրանք կարելի չէ ձայնական օրենքի տակ դնել, որովհետև իրենց համադիր ուրիշ բառերում *ո* մնում է սովորական կանոնով *օ*. ինչ. գովեշ>*գովեշ*, մով>*մօվ*, մոլոշ>*մօլօշ*, խոշոր>*խօշօր* (*ո* ձայնը *վ* և *շ* բաղաձայններից առաջ՝ շեշտեալ կամ անշեշտ): Ցատկապես կասկածում եմ *մուշայ* բառի վրայ՝ որ թե՛ ձևով և թե՛ նշանակությամբ տարբեր է *մոշայից*. հյ. *մոշայ* բառը պիտի տար անշուշտ \**մօշա* կամ \**մուշա*, բայց այստեղ կայ շատ անսովոր *-այ* (*ay*) վերջաւորութիւնը. հյ. *մոշայ* նշանակում է մի տեսակ թուփ, մինչդեռ *մուշայ* հասարակ խոտ է. այս տարբերութիւններից հետևցնում եմ որ *մուշայ* թաթարական մի բառ է և գործ չունի մեր *մոշայ* ձևի հետ:

50. Ծորթին>*ձէթոնին* և ոլոռն>*ուլէռ*, ուռէլ (§ 47) բառերում *ո* դարձել է *է*. սրանք առանձնապես այլաձևուած բառեր են և սովորական ձայնական օրենքների տակ չեն մտնում, որովհետև իրենց համադիր ուրիշ բառերի մեջ *ո* կանոնաւոր է. ինչ. խորել>*խօթէլ*, կոթ>*գօթ*, փոթ>*փօթ* «ծալք», աթոռ>*աթօռք*, թոռումել>*թօումէլ*, թոռն>*թօռ*, մոռանալ>*մօռնալ* (*ո* ձայնը *թ* և *ռ* բաղաձայններից առաջ):

51. Բազմավանկ բառերի միջին *ո* ձայնը ընկնում է, այսպես են՝ ոլորել>*օլղըրէլ*, սովորիլ>*սօրվէլ*, *սօրվէնալ*, խոստովանիլ>*խօստըվանէլ*, խորովել>*կօր*. *խօրվիլ*, թոռումել>*թօումէլ*, ժողովել>*ժօղվէլ* (որից *ժողողանք* կամ *ժողըղանք* «հաւաքում, ժողով»), շնորհաւոր>*շնալօր*, բորբոսիլ>*փօրփըսնէլ*, որոճալ>*գօռջալ* (Թոփտի), Սողոմոն>*Սօղմօն*:

Իբրև գրական՝ այս կանոնին չեն ենթարկուած՝ անճոռնի>*անջօռնի*, եպիսկոպոս>*յէքիսգօբօս*, ժողովուրդ>*ժօղօվուրթ*, կաթողիկոս>*գաթօղգօս*, քրիստոնեայ>*քրիստօնյա*:

Բացառութիւն են մոլորիլ>*մօլօրվէլ*, յորդորել>*օրթօրէլ*, «ածիլ, գեղով» (*ջուրի պէս օրթօրիս* ոճի մեջ), *օրթօրցնէլ* «փոքր բանը մեծացնել, լուն ուղտ շինել», նորոգել>*նօրօթէլ*, ողորմիլ>*օղօրմէլ*:

Ետևոռանց «յետս յետս» գաւառական բառի մէջ միջին *n* ազդունելով յաջորդ վանկի *ա*-ից՝ դարձել է *ա* և տուել է *էղէվառանց*:

## ՈՒ

52. Բառի սկիզբը սովորաբար մնում է *ու*. ինչ. ութ>*ութը*, ուրախ>*ուրախ*, ուրար>*ուրար*, ունիմ>*ունիմ*, ուրիշ>*ուրիշ*, ուրուր>*ուրուր*, ուրբաթ>*ուրփաթ* (Չալթր՝ *ուրպատ*), ուտել>*ուդէլ*, ուռիլ>*ուռէլ*, ունդ>*հունդ*, ումպ>*ումբ*, ուխտ>*ուխտ*:

53. Ղ>*խ* բաղաձայնից առաջ՝ անշեշտ *ու* վերածունելով ընկնում է. այսպէս՝ ուղարկել>\*ուղրկել>ղրկել>*խրգէլ*, ուղղորդ>ուղորդ>ղորդ>*խօշթ*. Բայց ուղեղ բառի մէջ՝ *ու* դառնալով *օ*՝ եղած է օղօղ «ոսկրի ծուծ»:

54. Ս բաղաձայնից առաջ բառասկզբի *ու* ընկնում է. սրա համար ունինք միայն մի օրինակ, այն է *սուլօվէն* «կամաց», որ կազմուած է թրք. *ուսուլ* բառից՝ հայերէն վերջաւորութեամբ. *ուս*-նախաձայնը պարունակող ուրիշ բառ չկայ բարբառիս մէջ, բայց կանոնին հաստատութեան իբր ապացոյց են ծառայում միջին *ու* ձայնաւորի դիրքը *ս* բաղաձայնից առաջ (§ 63) և բառասկզբի *ի* ձայնաւորի դիրքը առհասարակ շչականներից առաջ (§ 33):

55. Ը ձայնից առաջ *ու* ձայնը անցնելով *վու* ձևից՝ դարձած է *վը*. ինչ. ո՞ւր է>*վրէ՞*, ուրտեղ>*վդէխ*, ուրագ>*վրաք*. կայ նաև ուրեմն>*վրէմն*. Բայց սրանց հակառակ ունինք *ուրախ*, *ուրար*, *ուրուր*, *ուրփաթ*:

Պատկանեանի մօտ այս պարագային մի քանի տեղ գտնում ենք *ու*, *վու*, *վի*, որոնք ներկայացնում են հին ձևերը. այսպէս են՝ ուրտեղ>*ուդէխ* Բ. էջ 276, *վուդէխ* Բ. էջ 282, *վիդէխ* Գ. 17, 19, Matep. 43, 44, 73, ուր է>*վի ը* է Գ. 93, Matep. 43 և 44:

56. Ու>*ի*, *ի* ձայնափոխութեան համար տե՛ս § 59:

57. Բառամիջին՝ շեշտի տակ կամ առաջին վանկում *ու* մնում է անփոփոխ. ինչ. առաւօտուն>*առադուն*, ապուխտ>*աքուխտ*, ձուկն>*ձուգ*, տուն>*դուն*, քուն>*քուն* ևն:

58. *Խանութ* բառը գործ է ածւում կրկին ձևով՝ *խանութ* և *խանթ*. առաջինը կանոնաւոր է, երկրորդի մէջ *ու* ընկել է բացառաբար. այսպէս՝ յօդով *խանթը*, յգ. *խանթէրը*, գրծ. *խանթէրով* ևն:

59. Երկավանկ բառերում՝ երբ առաջին վանկի ձայնաւորն է *յ*, իսկ երկրորդ վանկի ձայնաւորն է *ու*, երկու ձայնաւորներն էլ կարող են մնալ անփոփոխ, բայց կարող է նաև առաջինի աղդեցութեամբ երկրորդը վերածուիլ *յու* և յետոյ՝ սրա ազդեցութեամբ էլ առաջինը դառնալ *յու*. այսպէս են՝

մօրութեամբ=*միրութեամբ* (երկուսն էլ գործածական են).

յիսուն>*իսուն*>*սուն* (Ննիւ.), *սիւն* (Չալթր). հմմտ. § 34:

*փիթուն* (թրք.)>*փիթին* «բոլոր, ամբողջ» (երկուսն էլ գործածական):

լեզու=*լիզու*>*լիզիւ* (Պատկ. Բ. 279). հին գւռ. *լիզու* ձևիցն է, որ պահուած է դեռ Չալթրի մի թաղում. բայց այժմ սովորական ձևն է *լուզու*, որի վրայ տես § 26:

ուլուն(ք)=*հիլուն*>*հիլին* (երկու ձևերն էլ գործածական). այս բառում *ու* իսկապէս նախաձայն է և անկանոն ձայնափոխութեամբ դարձել է *ի* (հմմտ. § 56). բայց յետոյ աւելանալով *հ* շունչը՝ բառը մտել է վերոյիշեալների շարքը:

Բացառութիւն է միայն երեկոյ>*իրգուն*, որ սպասելի \**իրգին* կամ \**իրգին* ձևը չունի, թերևս որովհետև *ի* նախաձայն է: -Յիսուս>*Հիսուս* հետևելով *Քրիստոս* բառին՝ *ու* դարձրել է *ո* և հետևաբար այլ ևս այս ձայնափոխութեան ենթակայ չէ:

Բարբառում նման դիրքով ուրիշ երկավանկ բառ չկայ:

60. Վերի կանոնի հակադարձը ուղիղ չէ. ուրիշ խօսքով այն երկավանկ բառերի մէջ՝ որոնց առաջին վանկի ձայնաւորն է *ու*, իսկ երկրորդ վանկի ձայնաւորը *ի*, որևէ ձայնական փոփոխութիւն չի կատարուիլ. այսպէս՝ լուսին>*լուսին*, կուգ>*գուզիգ* «սապատող», *խուլինջ*>*խուլինջ* «հիւանդութիւնը»: Նման դիրքով ուրիշ բառ չկայ բարբառում:

61. Դ, *յու* բաղաձայններով յանգող բառերի մէջ՝ սրանց նախորդող *ու* ձայնաւորը դառնում է *ո*. այսպէս են՝ գլուխ>*գոլօխ*, կակուղ>*գագող*, կանուխ>*գանօխ*, կնգուղ>*գընգող* «կնքելու մանկան վրայ ձգուած սաւանը» (եթէ \**կնքաքող* բառից չէ. հմմտ. § 27).- հակառակ է միայն պտուկ (ծծի)>*բուդուդ* բառը:

Օգտնում ենք նաև ժողովուրդ>*ժողովորտ*, փշուր>*փշօր* ձևերի մէջ, երկուսն էլ Չալթրի արտասանութեամբ. առաջինը՝ որ կայ նաև

ժողովուրդն ձևով, յառաջացած է անշուշտ առաջին երկու վանկերի  
օ ձայնի ազդեցութեամբ:

Լուրիա>լօրյա, յօրյա բառը թուրքերէնից փոխառեալ լինելով՝  
ու ձայնի դէմ ունի օ:

62. Բազմավանկ բառերի միջին ու ձայնը ընկնում կամ վե-  
րածում է ը. այսպէս են՝ աղուհաց>ախացք, ախասք «Մեծ պահք»  
(անցնելով \*աղհացք ձևից), Աստուծոյ>Ասծու, առուտուր>առդուր,  
աւուրական>աւրագան «ամենօրեայ», համբուրել>համփըրէլ,  
թուականների մէջ՝ տասնումէկ>դասնըմէկ, տասնովէկ>դասնըվէկ  
են, անշուշտ նաև սեռ. իրգըվան, որ գալիս է \*իրգու(ն)վան «երեկոյ-  
եան» ձևից: Խրիմի մէջ կայ բիղնանաս<պիտ'ունենաս ձևը:

Այս փոփոխութիւնից ազատ է մնացել պատուհաս գրական  
բառը՝ որ պահուած է միայն Աստուծու բաղդուհաս ասացուածում:

Այստեղ գործ չունին այն բառերը՝ որոնց մէջ ու ձայնը ձայնա-  
կան օրէնքներով յառաջացել է ը ձևից. ինչ. գրուցել>գուրուցէլ,  
հիննուք>հունհունուք և այլն:

63. Ս բաղաձայնից առաջ բառամիջի ու ջնջուած է բուսանիլ>  
փսնէլ, Լուսաւորիչ>Լսաւօրիչ բառերում: Ս բաղաձայնից առաջ ու  
ձայնը պարունակող ուրիշ բառ չկայ Նոր-Նախիջևանի բարբառում,  
բացի լուսին>լուսին և լուսնկայ>լուսնինգա «լուսին եղած գիշեր»  
բառերից, որոնք բացառութիւն են կազմում:

Այս օրէնքը համեմատում է ի ձայնաւորի շչականներից ա-  
ռաջ անկման օրէնքի հետ (§ 33). բայց կայ այն տարբերութիւնը՝ որ  
ի ընկնում է ամէն շչականից առաջ (գ, ս, ժ, շ, ճ և ծ), իսկ ու միայն ս  
բաղաձայնից առաջ՝ բառասկիզբը (§ 54) կամ բառամէջը. ուրիշ  
շչականների մօտ մնում է անփոփոխ. ինչ. շուշան>շուշան, մուշ-  
տակ>մուշտագ, մուշայ>մուշայ (§ 49), խուզել>խուզէլ, կուզ>գուզ-  
լիզ, ուզել>ուզէնայ: Շչականի մօտ ու ձայնաւորը պարունակող ու-  
րիշ բառ չկայ բարբառում:

64. Բառի վերջում ու մնում է միշտ անփոփոխ. ինչ. մեղու>  
մէղու, բու>բուհու, դու>դուն, երկու>էրգու, կատու>գադու, թթու>  
թութու, լեզու>լուզու, լու>լու, կծու>գուծու, հերու>հէրու ևն:

Երկու բառը միանալով հաստ բառի հետ՝ արագ արտասա-  
նութեան մէջ տալիս է էրգվադ, ուր հ ջնջուած, իսկ ու դարձած է վ:



## Եզրակացություն

65. Ձայնատրների փոփոխության իբրև ընդհանուր եզրակացություն՝ կարող ենք դնել հետևեալ օրէնքները.

ա) Առ հասարակ բոլոր ձայնատրները միավանկ և երկավանկ բառերում մնում են անփոփոխ, իսկ բազմավանկ բառերի միջին վանկի ձայնատրը սղւում է:

*Օտնօթ.*– Քառավանկ բառերում առհասարակ միայն մէկ ձայնատր է սղւում. այդ ձայնատրի սղումից յետոյ՝ թէև ստացւում է մի եռավանկ բառ, սակայն այդ եռավանկ բառի մէջ այլ ևս սղման օրէնքը չի շարունակւում. թէ ոչ լեզուի բոլոր բառերը երկավանկի վերածուած պիտի լինէին: Այսպէս օր. *բարեկենդան, \*առաջինեակ, ատուրական, որբնայրի* բառերը երկրորդ վանկի սղմամբ տալիս են *բարգէնանք, առչինեգ, ավրագան, օրֆարի* եռավանկ բառերը: Եւ թէև ըստ օրինի եռավանկ բառերի միջին ձայնատրը կորչում է, բայց այս օրէնքը այլ ևս չի գործում սրանց վրայ: Այսպէս նաև *առաւօտուն* բառը՝ երկրորդ վանկի սղմամբ լինում է *առա(վ)դուն*. բայց սղումը այլ ևս չի շարունակւում և բառը՝ թէև եռավանկ, բայց այս ձևի տակ էլ մնում է և չի տալիս *առտուն*, ինչպէս ունին ուրիշ բարբառներ:

Այս երևոյթը նկատւում է ա՛յն քառավանկ բառերի վրայ, որոնց մէջ ձայնատրները զանազան են. իսկ յաջորդական *ու*-երը կորչում են. ինչ. ապարանջան>*աբոջան*:

բ) *Ե* և *ռ* ձայնատրները միավանկ բառերի սկիզբը շեշտի տակ ընկնելով թաւանդում և տալիս են *յէ, Վօ*. իսկ բազմավանկների սկիզբը՝ շեշտից հետո մնացած լինելով՝ այս փոփոխութիւնից ազատ են մնում:

գ) *Ե, ի, ու* ձայնատրները *իւ, դ* բաղաձայններից առաջ վերածւում են *ը*. իսկ *ի* ձայնատրը (մասամբ նաև *ու*) շշողներից առաջ ընկնում է՝ թէ՛ բառասկզբում և թէ՛ նախավանկում:

դ) Ձայնատրները սովորաբար իրար վրայ չեն ազդում. միայն *ը* ձայնատրը մօտի վանկերի *ի, ու, օ* ձայնատրներից ազդուելով՝ շատ անգամ նրանց կերպարանքն է ստանում:

## Բ.

### Երկբարբառների փոփոխությունը

#### ԱՅ

66. Այ երկբարբառը բառասկզբում միավանկ բառերի մեջ դառնում է *ա*. ինչ. այդ>*ադ*, այլ>*ալ*, այծ>*աձ*, այն>*ան*, այս>*աս*.— Բազմավանկի բառերի սկզբում դառնում է *է*. ինչ. այր-իկ>*էրիկ*, այր մարդ>*էրիմաշթ*, այրել>*էրէլ*.— Դժբախտաբար այս բոլոր բառերն էլ բաց վանկի մեջ են և *այ* երկբարբառը գտնուում է *ը* բաղաձայնից առաջ. որով օրենքի ընդհանրականությունը կարող է կասկածելի լինել: Որպեսզի չմտածուեր թե սա մի մասնաւոր պարագայ է, պետք էր ունենալ գոնե մեկ օրինակ փակ վանկի մեջ և ուրիշ բաղաձայնի մօտ: Բայց Նոր-Նախիջևանի բարբառը սրանցից դուրս ուրիշ օրինակ չունի:

67. Բառի մեջ թե՛ շեշտի տակ և թե՛ առանց շեշտի՝ միշտ դառնում է *ա*. ինչ. որբնայրի>*օրֆարի*, գայլ>*գալ*, եղբայր>*ախպար*, երկայն>*էրգան*, լայն>*լան*, կայծակ>*գաձագ*, ծայր>*ձար*, կայծ>*գաձ*, հայր>*հար*, ձայն>*ձան*, ձայթել>*ջաթէլ*, մայր>*մար*, ի վայր>*վար*, տայգր>*դաքր*, փայտ>*փադ*, քայլել>*քալէլ*:

68. Իբր գրական՝ անփոփոխ պահուած է *այ*՝ խայտառակ>*խայդառագ*, պայծառ>*բայձառ*, փայլել>*փայլէլ* բառերի մեջ:

69. Չայնաւորի մօտ, նոյն իսկ եթէ այդ ձայնաւորը կորած լինի, իբրև ո՛չ երկբարբառ, այլ իբրև ձայնաւորից ու բաղաձայնից բաղկացած ձայնախումբ՝ մնում է անփոփոխ. այսպէս են՝ դայեակ>*դայէգ*, հայելի>*հայլի*, մայիս>*մայիս*, նայել>*նայէլ*, վայելել>*վայլէլ*, հայենակ>*հայնագ* «հայերէն»:

70. Հակառակ այս կանոնին, ինչպէս ուրիշ հայ բարբառներում, նոյնպէս և այստեղ, բոլորովին ջնջուած է հրամայեցէք, հրամայէ՛>*հրամէցէք*, *համէցէք*, *համէ՛* ձևերի մեջ, որոնք սակայն ո՛չ թէ կանոնին բացառութիւն են կազմում, այլ իբրև քաղաքավարական չափազանց գործածական ձևեր՝ արագաբանութեան օրենքով ենթարկուած են այս կրճատման:

71. Վայթել>*վօթէլ* «թափել, հեղուկ» բառի մեջ *այ* երկբարբառի դէմ գտնուում ենք *օ*, որի բացատրութիւնը անյայտ է:

72. Միայնակ բառը դարձել է *մէյնագ* (Չալթրում ասում են նաև *փէյնագ*, *փայնագ*), ուր *իա* եղել է *է* և *յի* հետ միասին՝ դարձել է *էյ*:

73. Կովկասի բարբառներից փոխառեալ պետք է լինի *ժէռ-քար* սակաւագիւտ ձևը՝ որի մէջ *այ>է* ձայնափոխութիւնը սովորական է Ում Ճիւղի բարբառներին: Այսպէս է նաև *հէր<հայր* բառի մի՛միայն *հէրն անհձաձ* «հայրն անիծած» բացատրութեան մէջ, որ զարմանալի կերպով գոյութիւն ունի նաև Պօլսի բարբառում՝ *հէ՛րը գանհձէմ* և աւելի սովորական *խէ՛րը գանհձէմ* ձևով: Երկուսի մէջ էլ *հէր*, *խէր* փոխառութիւն են ուրիշ բարբառներից. իսկ բուն *հայր* բառը երկու բարբառներումն էլ ունի սովորական *հար* ձևը:

74. Բառավերջի *այ* միավանկ բառերի ծայրին մնում է *այ*, իսկ բազմավանկների ծայրին՝ *ա*. առաջինի համար իբր օրինակ ունինք միայն *հայ>հայ*, վայ>*վայ*, երկրորդի համար յիշենք կարևորներից մի քանիսը. ծառայ>*ձառա* (նշանակում է նաև «սուս»), ի վերայ>*վրա*, փեսայ>*փէսա*, տղայ>*ղղա* ևն:– Մոշայ բառի մասին հմմտ. § 49:

## ԱԻ

75. Թէ՛ բառի սկզբում և թէ բառի միջում լինում է *օ*. ինչ. աւարթ>*ամօթ*, յաւնք>*օնգ* (Չալթր), աւր>*օր*, աւձ>*օգ*, կաւշիկ>*գօշիգ*, արաւո>*արօղ* «կանաչ խոտ», յաւրանջել>*գօրինջգալ* ևն:

76. *Աղաւնի* բառի դէմ ունինք *աղվէնինք* կամ *աղունինք* (Չ.). բայց այս բառը ուրիշ բարբառների մէջ էլ սպասուած \**աղօնի* ձևը տուած չէ, և ըստ Հիւբշմանի պետք է կարծել թէ հնապէս հնչում էր *աղաւընի*, որով *աւ* երկբարբառ չէր այստեղ, այլ ձայնատրից ու բաղաձայնից բաղկացած մի ձայնախումբ բարբառիս ներկայացրած կրկին ձևերից առաջինում՝ որ սովորականն է, միջին *ա* ջրնջուած է և *ը* դարձել է *է* (§ 28), իսկ երկրորդում *աւ* դարձել է *ու*, որի վրայ տէ՛ս § 79:

77. Առաւաւտուն>*առավդուն*, *առադուն* ձևի մէջ *աւ* երկբարբառը բոլորովին ջնջուած է: Ուրիշ բազմավանկ բառ չունինք *աւ* երկբարբառով, որպէսզի ստուգեինք թէ անկումը ընդհանուր ձայնական օրէ՞նք է, թէ արագաբանութեան արդիւնք:

78. Մարութ>միրութ (որից միրիւք § 59) բառի մէջ *աւ* երկ-  
բարբառի դէմ գտնուում ենք *ի, իւ*. բայց այս բառը հին գաւառական  
ձևից էր և ո՛չ թէ նոր ձայնափոխութեամբ յառաջացած:

79. *Աւ* դարձած է *ու*՝ յօնք>*ունք* բառի մէջ՝ որի դէմ Չալթր ունի  
*օնք*, և աղանի>*աղունիք* բառի մէջ՝ որ գործածական է Չալթրում՝  
*աղվէնիք* աւելի տարածուած ձևի մօտ (§ 76):

80. *Ութօրէնք* գաւառական բառի մէջ միջին վանկի թոյլ *օ*  
ձայնը ազդուելով յաջորդ *է*-ից՝ վերածուել է *է* և ասուում է *ութէրէնք*:

81. Բառավերջի *աւ* իբր ո՛չ երկբարբառ դառնում է միշտ *աւ*՝  
ինչ. ցաւ>*ցաւ*, հաւ>*հաւ*, կտր. ագաւ>*հաքաւ* ևն:

## ԵԱ

82. Բառասկզբում գոյութիւն չունի. բառի միջում և վերջում  
դառնում է *է*. ինչ. սեամ>*շէմ*, իւրեան>*իրէն*, ժէն, իւրեանք>*իրէնք*,  
*ժէնք*, դայեակ>*դայէգ*, \*առաջինեագ>*առչինէգ*, լեարդ>*լէրթ*, կորեակ  
>*գօրէգ*, վառեակ>*վառէգ*, ցորեան>*ցօրէն*, սիրեա>*սիրէ*, համարեա>  
*համրէ* ևն ևն:

-*ութիւն* վերջացող բառերի սեռականի մէջ միայն գտնուում ենք  
եա>*աւ*. ինչ. *իւկվութեան*, *մէձութեան*:

Անցեալ դերբայների մէջ *եա* դառնում է *ի*. Ինչ. կերեալ  
եմ>*գէրիլ իմ*, բերեալ եմ>*բէրիլ իմ* ևն (§ 397):

83. Գրական լեզուից փոխառեալ կեանք>*ցյանք* և տեղեակ>  
*դէղյագ* բառերի մէջ ունի *յա* արտասանութիւնը:

## ԵԱԻ

84. Միջին *եաւ* գտնուում ենք միայն *եաւթն* բառի մէջ՝ որ դառ-  
նում է *օխտը*. սրա մասին Meillet այն կարծիքն ունի որ *ւ* դարձել է  
նախ *վ*, յետոյ *ֆ*, որ և տուել է *իւ*: Բառավերջում *եաւ* երկբարբառ չէ  
և ըստ օրինի տալիս է *էվ* ինչ. սեաւ>*սէվ*, առաջեաւ>*առչէվ*:

## ԵԻ

85. Հին հայերէնի *եւ* երկբարբառը վաղուց արդէն դարձել էր  
*իւ*, որ Նոր-Նախիջևանի բարբառում տուել է *ու*. ինչ. ալնր>ալիւր>  
*ալուր*: Միայն մնում են ո՛չ-երկբարբառային *եւ* պարունակող մի

խումբ բառեր՝ որոնք տալիս են *էվ* ինչ. արև>*արեվ*, դև>*դեվ*, երե-  
վիլ>*երեվնալ*, թեթև>*թեթեվ*, թև>*թեվ*, հևալ>*հեվալ*, մինչև>*մինչեվ*,  
յետև>*եդեվ*:

### ԻԱ, ԻԱՅ

86. Այս երկբարբառները պարունակող մի մի բառ միայն ու-  
նինք. շեշտի տակ լուրիա>*լորյա*, *յորյա* և անշեշտ *միայնակ*>*մէյնագ*.  
վերջինը Չալթրում եղել է նաև *փէյնագ*, *փայնագ* (§ 72):

### ԻԻ

87. Բառի սկզբում դառնում է *ի*. սրա համար իբր օրինակ ու-  
նինք միայն իւր>*իր* (գործ է ածուում միայն «Աստուածային *իր* օրը»  
դարձուածի մէջ), իւրեան>*իրէն*, *ժէն*, իւրեանք>*իրէնք*, *ժէնք*, իւրե-  
անց>*իրէնց*, *ժէնց*: Այս երեքի մէջ *իւ* երկբարբառը *ի* ձայնաւորին  
հասնելուց յետոյ՝ նոր ձայնափոխութեամբ ջնջուել է՝ յաջորդ *ժ*-ի  
պատճառաւ (§ 33):

88. Բառի մէջ շեշտի տակ *իւ* դառնում է *ու*. ինչ.  
արին>*արուն*, խիւ>*խուս*, հարիւր>*հարուր*, ձիւթ>*ձուլթ*,  
սիւն>*սուն*, ձիւն>*ձուն*, (կայ միայն «ձուն-ձմեռ, ձունը գլխիս»  
դարձուածներում), մրջիւն> *մուռչում*: Հմմտ. նաև § 85:

Իբրև բացառութիւն ունինք *-ութիւն* վերջացող բառերը, որոնք  
տալիս են *-ութին* (ինչ. *խեվութին*, *մէձուլթին*, սեռ. *-թինի*, ինչ. *խե-  
վութինի*, *մէձուլթինի*) և նիւթ>*նիֆթ*, որի մէջ *իւ* երկբարբառը իբրև  
բաղաձայնաւոր վանկ՝ դարձել է *իֆ*:

89. Բառի մէջ՝ անշեշտ լինելու պարագայի համար միայն մէկ  
օրինակ ունինք. այն է հիւսել>*ֆըսէլ*, որի մէջ *իւ* կորել է յաջորդ *ս*  
շչականի պատճառաւ: Բայց որովհետև այս պարագային թէ՛ *ի* և թէ՛  
*ու* կարող են կորչել (հմմտ. §§ 33, 63), ուստի յայտնի չէ թէ *իւ*  
երկբարբառը այստեղ նախապէս վերածուած է *ի*՝ թէ՛ *ու*: Անշեշտ *իւ*  
պարունակող ուրիշ բառ չգտնուելով՝ Նոր-Նախիջևանի բարբա-  
ռում, կարելի չէ այս կետը ստուգել. բայց որովհետև Պօլսի բարբա-  
ռում *հիւսել* դառնում է *հուսէլ*. ուստի կարող ենք նոյնը այստեղ  
ընդունել:

90. Ղ ձայնից առաջ թե՛ բառասկզբում և թե՛ բառի մեջ *յի* դառնում է *է*. ինչ. գիւղ>*գէղ*, գիւղացի>*գէղացի*, իւղ>*յէղ* (իբրև միավանկ ստանալով *յ* յաւելուածը. հմմտ. § 16). բացառութիւն է միայն *ճիւղ>ջուղ*, *ջուիք* (փոխանակ *ջէղ*, ինչպէս ունինք ուրիշ բարբառներում), որի մօտ գտնում ենք նաև *ջրղ* ձևը. ինչ. *սւլէլի ջրղ* «աւելի շիւղը»:

91. Բառավերջում *յի* երկբարբառ չէ և համարւում է ձայնաւորից ու բաղաձայնից կազմուած մի ձայնախումբ. այս պարագային՝ միավանկ բառերի ծայրին դառնում է *իւլ*, բազմավանկների ծայրին՝ *էւլ*. ինչ. *ճիւլ>ջիւլ*, կոիւ>*գռէւլ*, պատիւ>*բաղէւլ* «կնունքի հացկերոյթ»: Գրական փոխառութիւն է ազնիւ>*ագնիւլ* և հետևաբար չէ հպատակած այս օրէնքին:

*Իւ* յանգող ուրիշ բառ գոյութիւն չունի Նոր-Նախիջևանի բարբառում:

### ՈՅ

92. Բառի թե՛ սկիզբը և թե՛ մեջը լինում է *ու*. ինչ. ոյժ>*ուժ*, անոյշ>*անուշ*, բոյն>*բուն*, գոյն>*գուն*, երեկոյն>*իրգուն*, ընկոյզ>*ունգուզ*, լոյս>*լուս*, խոյլ>*խուլ*, կապոյտ>*գաբուդ*, ողկոյզ>*գուզ*, կոյր>*գուր*, շոյտ>*շուդ*, վարագոյր>*վարաբուր*, քոյր>*քուր*:

Գրականից փոխառեալ է կոյս>*գույս*, որով *ոյ* պահում է գրական *ույ* հնչումը:

Բառավերջում *ոյ* պատահում է սեռական հոլովի մեջ և տալիս է նոյնպէս *ու*. ինչ. Աստուծոյ>*Ասձու*, մարդոյ>*մաշթու*:

### ՈԻԱ

93. Առհասարակ դառնում է *ւի*. ինչ. Աստուած>*Ասվաձ*, լուանալ>*լվանալ*, յունուար>*հունվար*, շուարիլ>*շվարէլ*, շատրուան>*շաղըռվան*, ձուածեղ>*ձվածէլէլ*:

Այս ձայնափոխութեան հասնելուց յետոյ՝ *վի* դարձել է *մի*՝ կէտուակէս>*կէսվակէս*>*գէսմագէս* բառում. բայց այս բանը յառաջացել է ո՛չ թէ ձայնաբանական օրէնքներով, այլ թուրքերէնի ազդեցութեամբ, ուր մի խումբ բարդ բառերի մեջ գտնում ենք *մի* միջամասնիկը. ինչ. *խառմախառըղ* «բոլորովին խառնակ» *դուրմադաղին* «բոլորովին դրուած», *հափմահագիր* «բոլորովին պատրաստ»

(Պատկ. Բ. 284), *ձըփմաձըփ* «լիովի» (Լոյս 1910, № 2, էջ 10 ա), *զըռմազըռ* «բոլորովին լցուած»:

94. Տարբեր ձայնափոխութեան են ենթարկուած դժուար>*ղիժար*, *դժար* և չուան>*չուլան*, որոնց մէջ ունինք ուա>*ա* կամ *ուլա*:

### ***Եզրակացութիւն***

95. Հին հայերէնի բոլոր երկբարբառները Նոր-Նախիջևանի բարբառում վերածուած են կա՛մ պարզ ձայնաւորի և կամ մի ձայնաւորից և մի բաղաձայնից բաղկացած խմբերի. այսպէս են նոյն իսկ գրականից փոխառեալ մի քանի բառերը. այնպէս որ Նոր-Նախիջևանի բարբառը ի սպառ զուրկ է երկբարբառներից:

## Գ.

### Բաղաձայնների փոփոխությունը

#### Բ

96. Բառասկզբի *բ* ձայնը՝ քաղաքի, Մեծ ու Փոքր Սալա և Նիս-վիթա գիւղերի մէջ սովորաբար դառնում է *բ*, իսկ Չալթրի և Թոփ-տիի մէջ մեղմ *բ'* կամ *պ*. ինչ. բերան>*բէրան*, *պէրան*, բարի>*բարի*, *պարի* «ապրանք, ինչք», բոյն>*բուն*, *պուն*, բոնել>*բոնէլ*, *պոնէլ*, բրինձ>*բիրինձ*, *պիրինձ* են:

97. Թուրքերէնի ազդեցութեամբ *բախտ*, *բախտավոր*, *բախշէլ* բառերը երկու տիպարներումն էլ պահում են *բ* ձայնը. այս բանը թէև քաղաքի խմբի մէջ կանոնաւոր է (պատահմամբ), բայց Չալթր-Թոփտի շրջանի համար ուղիղ չէ. որովհետև ըստ ձայնական օրէնքների սպասելի էր *բ'* կամ *պ* ձայնը:

98. Կայ մի քանի բառ՝ որոնց մէջ բառասկզբի *բ* դարձել է *փ*. այսպէս են՝ բուրվառ>*փուռվառ*, բուսանիլ>*փսնէլ*, բղխել>*փխալ*, բորբոսնել>*փորփրսնէլ*, բուք>փուք «ձիւն», բրդել>*փրթէլ*: Սրանցից առաջինը գրականից փոխառեալ լինելով՝ ենթարկուած է այս ձայնափոխութեան. յաջորդ չորսը ազդուած են խուլ *ս*, *խ*, *ք* ձայներից և վերածուած նրանց աստիճանին: Սրանցից *բորբոսնէլ* արդէն հին ձևով հնչում էր *բորբքսնէլ*, ինչպէս ունի Պատկ. Գ. 58 կամ նաև Նոր-կեանք 1906, 164 ա (սպումած է *պորպոսնէլ*, որ պետք է կարդալ *բորբոսնէլ*): Վերջինը՝ *բրդէլ*, նմանեցրած է իմաստով մերձաւոր *փրթիլ*, *փրցունէլ* բառերին և նրանց ազդեցութեամբ ստացած իր անկանոն *փ* ձայնը: Չալթրում առաջին երեք բառերը միևնոյն ձևն ունին. *բորբոսնէլ* բառը ջնջուած է. (քաղաքումն էլ շատեր չգիտեն և նրա տեղ գործ են ածում թրք. *քիֆլէմիշ ըլալ* ձևը). իսկ վերջին երկուսը ունենալով *պուկ*, *պշտէլ* ձևերը, ձայնական օրէնքներին համապատասխան են:

Այստեղ է պատկանում նաև *բշտէլ* «ուռիլ» բառը, որ գործածական է թէ՛ *բշտէլ* և թէ՛ *փշտէլ* ձևով. առաջինը կանոնաւոր է, երկրորդը շ-ի պատճառաւ յառաջացած: Չալթր ունենալով *պշտէլ* ձևը, կանոնաւոր է:



Անկանոն է նաև բանջար>*փանջար* «մի տեսակ վայրի բոյս՝ որից ապուր և խմորեղեն են պատրաստում»։ գործածական է քաղաքում. Չալթր չունի այս բառը և գործ է ածում ռուս. *лук* (лук) ձևը<sup>3</sup>։

99. Չալթրին են պատկանում նաև *բրհորեղ*<բոհրել, *բուհու*<բու, որոնց նախաձայնը (փի. *у*) կանոնի հակառակ է։ Սրանցից *բուհու* թերևս իբր բնաձայն՝ հասել է այս անկանոնություն։

100. Բառամիջում *բ* դառնում է *փ*. եղած օրինակներն են՝ խաբել>*խափել*, շաբաթ>*շափաթ* «եօթնեակ», *շափաթոր* «շաբաթ օրը», համբերել>*համփրրել*։

Լուրիա>*լօրյա*, *յօրյա* բառի մեջ *բ* անփոփոխ է պահում՝ թերևս յունարենի կամ թուրքերենի ազդեցությամբ. Չալթրում այս բառը չկայ և նրա տեղ գործածում է *պազլա*<բակլայ։

101. Ղ>*խ* ձայնի մոտ թաւանալով՝ լինում է *փ* կամ *պ*. ինչ. ողբալ>*օխփալ* (Չ. օխպալ), եղբայր>*ախպար*։

102. Մ ռնգականից յետոյ սովորաբար մնում է *բ*. ինչ. ամբար>*ամբար*, բամբակ>*բամբազ*, բամբասել>*բամբասել*, գմբեթ>*գմբեթ* (փոխառեալ թուրքերենից)։ Բացառությւն է միայն համբերել>*համփրրել*, ուր *բ* հետևել է ընդհանուր կանոնին։

Գրականից փոխառեալ ձևերի մեջ լինում է *փ*. ինչ. ամբարտաւան>*ամփարդավան*, համբուրել>*համփրրել* (խաչ կամ աւետարան), սեպտեմբեր>*սեզդէմփէր*, հոկտեմբեր>*հօզդէմփէր*, նոյեմբեր>*նույէմփէր*, նունէմփէր, դեկտեմբեր>*թէզդէմփէր*։

103. Բ ձայնից յետոյ դառնում է *փ*. այսպէս են՝ արբենալ>*հարփել*, բորբոսնել>*փօրփրսնել* (կայ նաև *բ*-ով. հմմտ. § 98), երբ>*լէփ*, լիրբ>*լէրփ*, ուրբաթ>*ուրփաթ*, սուրբ>*սուրփ*, *սուփ*, սրբել>*սրփել*։

*Որբնայրի* բառի մեջ նախապէս է ընկած և յետոյ *բ*>*փ* միանալով տուած են *ֆ*. այսպէս՝ *որբնայրի*>*որբւարի*>*օրփվարի*>*օրֆարի*։

104. Այս բոլորի դէմ Չալթր շատ անգամ հանում է հիմնական կանոնին համապատասխան ձևեր. այսպէս են՝ շաբաթ>*շապադ* «եօթնեակ», *շապատօր* «շաբաթ օրը», ուրբաթ>*ուրպատ*, ամսա-

<sup>3</sup> Թելուկ (թալ, թաղթ) բանջարն է (ծանօթ. խմբ)։

նուններ՝ *սեզդեմպեր, հոզդեմպեր, նույեմպեր, տեզդեմպեր*, լիրբ>*լերպ*, որոնց բոլորի մեջ *բ>պ*:

105. Բառավերջի համար Նոր-Նախիջևանի բարբառը մեկ անկախ օրինակ միայն ունի, այն է գուրբ>*քուփ* «բաղնիսի աւազան», որից երևում է որ բառավերջի *բ* դառնում է *փ*։ Չալթրում ունինք *կուպ*։- *Բիբ* բառը գրական փոխառություն է. ուստի մնացել է անփոփոխ։- երբ>*յեփ*, սուրբ>*սուրփ* բառերի մեջ *բ* գտնւում է *ր* ձայնից յետոյ, որով և սրանք անցնում են § 103 կանոնին:

*Ազում* «տօնական օր» < ակումբ բառի մեջ *բ* ջնջուած է:

#### Գ

106. Բառասկզբի *գ* քաղաքի շրջանում մնում է *գ*, Չալթրի շրջանում դառնում է մեղմ *գ՛* կամ *կ*։ այսպէս՝ գայլ>*գալ, կալ*, գինի>*գինի, կինի*, գիւղ>*գէղ, կէղ*, գոյն>*գուն, կուն*, գիր>*գիր, կիր* «նամակ» են:

107. Թուրքերէնի ազդեցութեամբ *գազ* «արշին» և *գմբէթ* բառերը երկու տիպարումն էլ (քաղաքը *գազ, գմբէթ*, Չալթր *գազ, գումբէթ*) պահում են իրենց *գ* ձայնը: Այս բանը թէև քաղաքի շրջանի համար կանոնաւոր է (պատահմամբ), բայց միւս շրջանի համար անկանոն է, որովհետև ըստ ձայնական օրէնքների՝ սխասելի էր *կ* ձայնը: Թուրքերէնի ազդեցութեամբ է նաև Չալթրի մեջ *գումբէթ* ձևի *ու* ձայնաւորը՝ որ հին հայերէնի, ինչպէս և քաղաքի ձևի մեջ պալասում է:

108. Կայ մի քանի բառ՝ որոնց մեջ նախաձայն *գ* դարձել է *ք*։ այսպէս են՝ գանձանակ>*քանձանագ*, գաւազան>*քալազան*, գերեզման>*քերէզման*, գէշ>*քէշ*, գիշեր>*քշէր*, գուրբ>*քուփ* (Չալթր *կուպ*), գիրբ>*քիրք*, գործ>*քորձ*: Սրանցից առաջին երեքը գրական փոխառություն են. երկրորդ երեքը ազդուած են խուլ *շ* և *փ* ձայներից և նրանց աստիճանին վերածուած. իսկ վերջին երկու ձևերը գործածական են նաև *գիրք, գորձ* ձևերով. առաջինները գրական արտասանութեամբ, վերջինները բուն ժողովրդական կանոնաւոր ձևով: Չալթրում՝ բացի գիշեր>*քշէր* բառից՝ միւսները բոլոր ունին *կ* նախաձայնը, որով համաձայն են ընդհանուր օրէնքին:

109. Չալթրին պատկանում են նաև *զլօր* «կլոր, բոլորածև, գնդածև», *զլօրէլ* «զլտորել», *զաղդօղ* «զաղտուկ», *գուլ* «բութ», որոնց

նախաձայն *գ*՝ որ կանոնին հակառակ է (փխ. *կ*), յառաջացել է թերևս յաջորդ *լ*, *ղ* կակուղ ձայների պատճառաւ:

110. Բառի մէջ *գ* սովորաբար դառնում է *ք*. եղած օրինակներն են՝ ագահ>*աքաֆ* (Չալթր և Թոփտի), ագանել, ագայ>*հաքնէլ*, *հաքա*, արեգակ>*արէքագ*, կուգամ>*քուքամ*, դգալ>*թքալ*, *թիքալ*, թագաւոր>*թաքաւօր*, ծագիլ>*ձաքէլ*, հոգի>*հօքի*, ձգել>*ցքէլ*, ճգնաւոր>*ջքնաւօր*, մգլել>*մքլէլ*, յոգնիլ>*հօքնէլ*, նորոգել>*նօրօքէլ*, պագանել>*քաքնէլ*, սգաւոր>*սքաւօր*, վարագոյր>*վարաքուր*, տայգր>*դաքր*, օգտել>*օքդէլ*, հինգշաբթի>*հինքշափթի*:

111. Ն ռնգականից յետոյ սովորաբար մնում է *գ*. այսպէս են՝ գանգատ>*գանգադ*, գանգատիլ>*գանգովէլ*, եղունգ>*օղունգ*, թանգ>*թանգ*, ժանգ>*ժանգո*, ժառանգ>*ժառանգ*, ժառանգել>*ժառանգէլ*, հինգ>*հինգ*, կանգ առնել>*գանգ առնէլ*:

Իբր գրականից փոխառեալ այս փոփոխութեան չեն ենթարկուած՝ անգամ>*անքամ* և հանգիստ>*հանքիստ* բառերը. իսկ ժառանգել ունի թէ՛ *ժառանգէլ* և թէ՛ *ժառանքէլ* ձևը, որոնցից առաջինը կանոնաւոր է, երկրորդը գրական ձևով:

Փոնգտալ>փըռնքդալ բառի մէջ *գ* թէև *ն*-ից յետոյ, բայց դարձել է *ք*, թերևս նախորդ *փ*-ի ազդեցութեամբ:

Վերջապէս *կանգ առնէլ* ձևի դէմ՝ որ գործածական է քաղաքի շրջանում, Չալթր ունի անկմամբ *գան առնէլ*:

Անկում կայ նաև չգիտեմ>*չիդիմ* ձևի մէջ, որ աւելի արագաբանութեան արդիւնք է:

Ռնգականի մօտ պատահող *նգ* խմբի վրայ տե՛ս նաև § 119:

112. Ը ձայնից յետոյ *գ* դառնում է *ք*. ինչ. կարգուիլ>*գարքըվէլ*, մարգարէ>*մարքարէ*, մարգարիտ>*մարքրիդ*, կարգ>*գարք*:

113. Այս բոլորի դէմ Չալթր շատ անգամ հանում է ընդհանուր կանոնին համապատասխան ձևեր. այսպէս՝ գագաթ>*կակատ* «վեզի գլուխը», կուգամ>*կուկամ*, դգալ>*տկալ*, գուգուիլ>*գըկվէլ*, թագաւոր>*տակաւօր*, կարգուիլ>*կարկըվէլ*, հանգիստ>*հանկիստ*, ձգել>*ծկէլ*, մարգարէ>*մարկարէ*, մարգարիտ>*մարկրիդ*, յոգնիլ>*օկնէլ*, օգտել>*օկտէլ*:

114. Բառավերջում *գ* դառնում է *ք*. այսպէս՝ ազգ>*աւք*, գոգ>*գօք*, թագ>*թաք*, կարագ>*կարաք*, ձիգ>*ձիք*, նիգ>*նիք*՝ «փորկապու-

թիւն, ֆր. épreinte», ուրագ>վրաք, պատարագ>բաղարաք, սարկա-  
ւագ> սարգավարք, սուգ>գուք, անհոգ>անֆօք, փափագ>փափաք:  
Սրանց հետ առհասարակ նոյն է նաև Չալթր, բայց բացառաբար  
ունի փափագ>փափագ, ինչպէս նաև ձագ>ծակ:

## Դ

115. Բառասկզբի *դ* քաղաքի շրջանում մնում է *դ*, իսկ Չալթր-  
Թոփտի շրջանում դառնում է մեղմ *դ'* կամ *տ*. ինչ. դանակ>դանագ,  
տանագ, դառնալ>դառնալ, տառնալ, դուռն>դուռ, տուռ, դու>դուն,  
տուն, դմակ>դրմագ, տմագ, դեղին>դէղին, տէղին են:

116. Մի քանի բառերում նախաձայն *դ* դարձել է *թ*. այսպէս  
են՝ դաս>թաս, դատաւոր>թաղաւօր, դէկտեմբեր>թէգդէմիէր,  
դժոխք>թժօխք, դադարել>թաթռէլ, դգալ>թքալ, թիքալ, դունչ>թունչ,  
դերձան>թէրցան: Սրանցից առաջին չորսը գրական փոխառութիւն  
են և դրա համար ունին արևմտեան գրական լեզուի հնչումը: Յա-  
ջորդ երեքը ազդուած են յաջորդական խուլ *թ*, *ք*, *չ* ձայներից և  
նրանց աստիճանին վերածուած, իսկ վերջինը՝ *թէրցան*, որ աւելի  
սովորական է *դէրցան* ձևով, թերևս ազդուած է *թէլ* բառից. ուրիշ  
բարբառներում յաճախ գործածուում է միասին *թել-դերձան* ձևը:

Չալթրում այս բառերը, բացի դաս>թաս ձևից, բոլորն էլ *տ* նա-  
խաձայնով են, որով և ընդհանուր կանոնին համապատասխան են:  
Նկատելի են մանաւանդ *տկալ* «դգալ» և *տատռէլ* «դադարել» բա-  
ռերը, որոնց մէջ *դ* չէ դարձած *թ*, այլ *տ*, քանի որ միջին *գ*, *դ* ձայներն  
էլ դարձած չեն *ք*, *թ*, այլ եղել են *կ*, *տ*:- *Պունչ* բառը ունի թէ՛ *տունճ*  
և թէ *թունչ* ձևը. առաջինի մէջ *դ* կանոնաւոր կերպով դարձել է *տ*,  
որովհետև չ ձայնը չկայ. իսկ երկրորդի մէջ չ կայ, ուստի և նրա ազ-  
դեցութեամբ *դ* եղել է *թ*:

117. Բառի մէջ *դ* դառնում է *թ*. սրա համար ունինք միայն եր-  
կու անկախ օրինակ. այն է՝ դադարել>թաթռէլ (Չալթր *տատռէլ*) և  
բարդութեանց մէջ դի>թի (Չ. *տի*) «կողմ». ինչ. չորսդի, ասդին և ան-  
դին:

*Գդակ* կամ *գտակ* բառի դէմ Նոր-Նախիջևանի բարբառը ունի  
*գդագ* (Չ. *կդագ*) ձևը, որոնք գալիս են երկրորդ (*գտակ*) ձևից:

Ընթացիկ փուլի աշխատանքները պարագային, երբ քաղաքի բար-  
բառը ներկայացնում է *դ*-ի դեմ *թ*, Չալթր հանում է *տ*. ինչ. դադա-  
րել>*թալթռել* (քղ.), *տատռել* (Չ.), սպրդել>*սփթռել* (քղ.), *սպտռել* (Չ.)  
հմմտ. նաև ծոթրին>քղ. *ցեթռին*, Չ. *ծէտռին*, մեղադրել>քղ. *մէխթրել*,  
*մէխտրել*, Չ. *մէխտրել*: Սրանից հետևում է որ Չալթրի մեջ *թր*, *թռ*  
ձայնախումբը տանելի չէ և դառնում է *տռ* նաև գոնէ *տր*:

Բառամեջի *դ* գտնում ենք նաև *խղա*<այդ բառի մեջ, որ ան-  
շուշտ *ղա* ձևի ազդեցությամբ է կազմուած:

118. Եւ ռնգականից յետոյ *դ* ձայնը մնում է *դ* (երկու շրջաննե-  
րում էլ). այսպէս են՝ բարեկենդան>*բարգէնդանք*, գունդ>*գունդ*  
«կլոր», գնդան>*գնդան*, թունդ>*թունդ*, խնդալ>*խընդալ*, կաղանդ>  
*գաղընդ*, հանդիպել>*հանդըրել*, հիւանդ>*հիւվանդ*, ունդ>*հունդ*, պինդ  
>*քինդ*, քանդել>*քանդել*:

Սրանց դէմ անկմամբ ունինք նաև *բարգէնանք* «բարեկեն-  
դան», *հիւլըննալ*<*հիւլընդնալ* «հիւանդանալ» (§ 201) և Անոնդ>*Խելօն*  
յատուկ անունը:

Գրականից փոխառեալ են խնդրել>*խընթրել*, խնդիրք>*խըն-  
թիրք*, կենդանի>*գէնթանի*, հանդարտ>*հանթարդ*, հնազանդ>*հնա-  
զանթ*, ցնդիլ>*ցընթել*, որոնց մեջ *դ* դարձել է *թ*՝ արևմտեան գրական  
արտասանութեան համեմատ:

119. Ը ձայնից յետոյ *դ* երկու տեսակ ձայնափոխութեան է են-  
թարկում. հին լեզուում *րդ* խումբը տալիս է քաղաքի շրջանում *րթ*,  
Չալթր *րտ* նոր լեզուի մեջ՝ քաղաքի շրջանում *շթ*, Չալթր *շտ*. օրի-  
նակները տե՛ս § 256:

120. Խ ձայնից յետոյ (ինչ էլ որ լինի սրա ծագումը), *դ* դառնում  
է քաղաքում *թ* կամ *տ*, Չալթրում միշտ *տ*. սրա համար ունինք եր-  
կու ապահով օրինակ. այն է՝ *խեղդել* և *մեղադրել*. առաջինը ար-  
տասանում է քաղաքում թե՛ *խըխթել*, թե՛ *խըխտել*, Չալթրի մեջ  
միշտ *խըխտել*, իսկ երկրորդը արտասանում է քաղաքում *մէխթը-  
րել*, *մէխտրել*, Չալթրում *մէխտրել*:

121. Բառավերջում *դ* ձայնը, ինչպէս *բ*, *գ*, *ձ* ձայների համեմա-  
տութիւնից երևում է, պիտի տար *թ*. բայց այս բանը ցոյց տալու հա-  
մար օրինակ չկայ: Չհաշուելով *որդն*, *բուրդ*, *մարդ*, *վարդ* բառերը՝  
որոնց մեջ *դ* կապուած է նախորդ *ր*-ին (§ 119), չհաշուելով նոյնպէս

Ղևոնդ և հնազանդ բառերը՝ որոնց մեջ *դ* յաջորդ ձայնն է ռնգականի (§ 118), *դ* յանգող միայն մեկ բառ կայ Նոր-Նախիջևանի բարբառում. այն է այդ>*ադ, իղա* բառը: Այս բառը թեև ներկայացնում է դ>դ, բայց ձայնափոխությունը կանոնաւոր չէ. նախադասութեանց երկրորդական մասերը սովորական կանոններից շեղուում են. այս մասին հմմտ. Meillet, Esquisse d'une gram. comp. էջ 15:

Զ

122. Ամեն դիրքի մեջ էլ սովորաբար մնում է *զ*. ինչ.

Բառի սկիզբը.– զաւակ>*զաւիագ*, զրուցել>*զուրուցել* «1. Թոշունի երգել. 2. զառանցել», զատիկ>*զադիգ* նն:

Բառի մեջ.– վազել>*վազել*, կզակ>*զզագ*, խուզել>*խուզել*, լիզել>*լզէլ*, լեզու>*լուզու* նն:

Բառի վերջը.– մագ>*մագ*, վիզ>*վիզ*, տիզ>*դիզ*, կակագ>*զազագ*, բոզ>*բոզ*, եզն>*յէզ* նն:

123. Յաջորդ խուլ բաղաձայնի մօտ խլանալով լինում է *ւ*. սրա համար իբր օրինակ ունինք գրականից փոխառեալ *աւք* «ազգ» բառը. բարբառում ուրիշ ո՛չ մի օրինակ չկայ, որի մեջ *զ* բաղաձայնը խուլի մօտ լինի:

Պատկ. Բ, էջ 285 գտնում ենք *տէղնէտէղով* ձևը, որ պետք է կարդալ *դէխսէղէղով*. այս բառը անշուշտ գալիս է *տեղգտեղով* ձեւից (հմմտ. Պլ.*տեղնգտեղօք* «մանրամասն»), ուր *զ* իւլացած է նախորդ *խ* ձայնի ազդեցութեամբ:

124. Մի քանի տեղ *զ* դարձել է *ձ*. այսպէս են՝ երագ>*էրաձ*, գմուռս>*ձումուռ* «մի տեսակ խունկ», տնագ>*դնաձ*, ձնաձ (առաջինը Փոքր-Սալայի, վերջինը Չալթրի մեջ, իսկ քաղաքը գիտէ միայն *դնագ*), մէկզմէկի>*մէմէզզի*>*մէմէձզի* «խրար, գմիմեանս» (միջին ձևը սովորական է քաղաքին, վերջինը կայ միայն Չալթր): Այս ձայնափոխությունները կանոնաւոր չեն և ըստ երևոյթին ո՛չ մի ձայնական օրէնքի չեն ենթարկուում:

Թ

125. Սովորաբար մնում է *թ*՝ ամեն դիրքով. ինչ.

Բառի սկիզբը.— թոռն>թօռ, թուզ>թուզ, թո՛ղ>թօ՛, թուք>թուք, թրթուր>թուրթուր, թաթաւ>թաթաւ՝ «անձրև», թնձկալ>թընձգալ (Չալթր թընձգալ), թոչել>թոչէլ նն:

Բառի մեջ.— փեթակ>փէթագ, թաթախել>թաթխէլ, \*թօթաւել>թօթվէլ, թթու>թուրու, թեթև>թէթէվ, աթոռ>աթօռք, կթել>գթէլ նն:

Բառի վերջը.— ամօթ>ամօթ, արծաթ>արձայթ, գաւաթ>գավայթ, երկաթ>էրգայթ, թուք>թուք, կաթն>գայթ, կոթ>գօթ, ձիւթ>ձուք, մուք>մուք, նիւթ>նիֆթ, ութ>ութը նն:

126. Խ ձայնին յաջորդող թ՝ ինչ էլ լինի իր ծագումը, դառնում է տ. ինչ. եօթն>օխտը, յաղթել>ըխտէլ, թուղթ>թուխտ, թաթախել>թաթխէլ, թախտէլ:

127. Բ ձայնին յաջորդող թ՝ հին լեզուի մեջ քաղաքում մնում է թ, բայց Չալթրում դառնում է տ. նոր լեզուի մեջ ր ձայնը վերածուելով շ՝ ինքն էլ կա՛մ մնում է անփոփոխ (քաղաքում) և կամ դառնում է նոյնպէս տ (Չալթրի շրջանում). օրինակները տե՛ս § 256:

128. Շնչեղ խուլ բաղաձայններից առաջ քաղաքի լեզուում թ մնում է, բայց Չալթրի շրջանում՝ երկու շնչեղներն էլ գրկում են շնչից և դառնում պարզ խուլ. շչական բաղաձայնի մօտ ատամնականն էլ վերածում է շչականի: Եղած օրինակներն են՝ փաթաթել>փաթթէլ, փատտէլ, աղօթք>աղօթք, աղօտկ, ցատկէլ>ցաթքէլ, ցատկէլ, վաթսուն>վաթցուն, վածծուն (Խրիմի մեջ վատուն). հմմտ. § 237:

129. Մ ձայնից առաջ թ կակղում, քաղաքում դառնում է դ, Չալթրում տ. ինչ. թմրիլ>դմրէլ, տմրէլ (Չալթր նաև թմրէլ ձևով). ուրիշ օրինակ չկայ:

130. Ռ, ր կամ շ ձայներից առաջ քաղաքի բարբառում թ մընում է, բայց Չալթրում տ է դառնում. ինչ. թրջել>քղ.թրչէլ, Չ. տրճէլ, տշճէլ, ծոթրին>քղ. ցէթոին. Չ. ծէտոին. բայց թոչել>թոչէլ (թէ՛ քաղաքում և թէ՛ Չալթրի մեջ). հմմտ. § 117:

Թրթուր>թուրթուր բառը ստանալով ու ձայնաւորը՝ իրարից բաժանուել են թ և ր, որով վերի ձայնափոխութեան տեղ մնացած չէ:

131. Երբ թ ձայնը գտնուի կ, ծ, պ խուլերի դրացութեան մեջ՝ նրանց ազդեցութեան տակ՝ Չալթրում դառնում է խուլ տ. այսպէս

են՝ գագաթն>կակատ, գաւաթ>կավատ, թագաւոր>տակաւօր, ձիւթ>ծուտ, շաբաթ>շապատ, ուրբաթ>ուրպատ:

## Ժ

132. Ամեն դիրքով մնում է ժ. ինչ. ժամ>ժամ «եկեղեցի», ժանգ>ժանգո, շարժ>ժաժ, ոյժ>ուժ, արժել>աժէլ, բաժանել>բաժնէլ, բաժին>բաժին:

133. Երբ պատահի խուլ բաղաձայնի մօտ՝ նրա ազդեցութեամբ խլանալով լինում է շ. ինչ. շարժել-շարժկտել>ժաշկըտէլ (Չ.), ժաշքքէլ (քղ.):

134. Մի քանի տեղ անկանոն կերպով դառնում է ջ. այսպէս են՝ կարծ-պանիր>գարջ-պանիր, գռ. անծուր>անջուր «ամպակ, նիհար (կերակուր)», պատիժ>բաղիջ, պատժել>բաջջէլ, վարժիլ>վարջըվէլ, վարժապետ>վաջաբէդ: Սրանցից առաջինը յատուկ է Չալթր գիւղին և ժողովրդական ստուգաբանութեամբ կազմուած է կարճ բառից. քաղաքում արդէն ասում են գաժ-բէնիր (կարժ «թելի կապոց» բառը իր գոյութիւնը կորցրած է ամեն տեղ. թէև մնում է դեռ Թոփտիում, ուր նոյնպէս տեղի է տալիս թրք. չիլէ բառին): Երկրորդը սխալմամբ միացուած է ջուր բառին, որովհետև ժուր արմատը առանձին գոյութիւն չունի: Բաջջէլ ձևը կայ նաև ուրիշ բարբառներում և յառաջացած է տ և ժ ձայների մերձաւորութիւնից՝ որ տալիս է միշտ ջ: Միւս երկուսը երկրորդական ձևեր են և ունին նաև իրենց կանոնաւոր վաժկէլ, վաժաբէդ, վաժբէդ ձևերը:

135. Բաժանել>բաժնէլ բառը Չալթր-Թոփտիում դարձել է պարնէլ, որով ստացուել է ժ>ր հետաքրքրական ձայնափոխութիւնը՝ թերևս յաջորդ ոնգականի պատճառաւ: Դժբախտաբար նրման դիրքով ուրիշ բառ չկայ՝ կանոնը ստուգելու համար:

## Լ

136. Ամեն դիրքի մէջ էլ մնում է լ. ինչ. լու>լու. լուանալ>լվանալ, լեզու>լուզու, անալի>անալի, բանալիք>բալիք, ալիւր>ալուր, գլուխ>գոլօխ, աւել>ավէլ, գալ>գալ, դալ>դալ, դգալ>թքալ, թել>թէլ «մետաղեայ թել» ևն:



137. Միայն մեկ անգամ բառասկզբի լ դարձել է յ. այն է՝ լու-  
բիա>լօբյա, որ սակայն աւելի գործածական է լօբյա ձևով:– Մեկ  
անգամ էլ նախաձայն չ՝ յաջորդ ն-ի ազդեցութեամբ դարձել է ն և  
յետոյ ընկել է՝ լստերք>լընդոռնք, նընդոռնք, ընդոռնք բառի մէջ՝ որի  
վրայ տե՛ս §287:

## Խ

138. Ամէն դիրքի մէջ էլ մնում է անփոփոխ. օր.

Բառի սկիզբը.– խաբել>խափել, խածանել>խաճնել, խագնել,  
խնձոր>խունձոր, խիւս>խուս են:

Բառի մէջ՝ երկու ձայնաւորի միջև կամ ձայնաւորից առաջ ու  
յետոյ՝ յաջորդ կամ նախորդ բաղաձայնով. ինչ. կախել>զախել, թա-  
թախել>թաթխել, աշխարհք>աշխարք, տախտակ>դախտագ, ոչխար  
>օչխար են:

Բառի վերջը՝ ձայնաւորից յետոյ՝ մենակ կամ յաջորդ (բայց ո՛չ  
նախորդ) մեկ բաղաձայնով. ինչ. մուխ>մուխ, քացախ>քացախ,  
ապուխտ>աքուխտ, բախտ>բախտ, թուխտ>թուխտ, դժոխք>թժօխք  
են:

139. Բառասկզբում իւ դարձել է հ՝ խաղող>հաւօղ բառի մէջ  
տարանմանութեամբ. արդարև միևնոյն բառի մէջ իրար յաջորդող  
իւ, դ, դ ձայները շատ ծանր էին և լեզուն, ինչպէս ուրիշ բարբառնե-  
րում, նոյնպէս և այստեղ պարզել է դրանք: Երեք նոյնպիսի կոկոր-  
դական բաղաձայններով խճողուած բառ չկայ մեր լեզուում՝ բացի  
խաղաղ բառից, որ Նոր-Նախիջևանի բարբառում գոյութիւն չունի.  
(ուրիշ բարբառներում կայ և նոյն օրէնքով դարձել է հաղաղ):

140. Բառամէջի իւ յաջորդական չ-ի մօտ դառնում է շ. ինչ.  
Նախիջևան>Նախչվան>Նաշըրվան, թրք.բախչէ>բաշչա. բայց նոյն  
փոփոխութիւնը տեղի ունեցած չէ աղջիկ, ողջ, առողջ, ողջոյն,  
վախճանիչ, փախչիչ բառերի մէջ:

141. Միայլ բառը գործածական է երկու ձևով՝ սիսալ և գղալ.  
այսպէս նաև գղալիլ «հարբիլ» <գրբ. սիսալակիլ. սրանց մէջ իս>ղ նա-  
խորդ գ-ի ազդեցութեամբ է. տե՛ս § 236:

142. Վախճանիլ բառը հին մատենագրութեան մէջ երկու ձև  
ունի՝ վախճանիլ և վաղճանիլ. որովհետև բառի ստուգաբանութիւ-

նը յայտնի չէ, չգիտենք թե սրանցից ո՛րն է հնագոյնը. եթէ առաջինն է, ինչպէս ընդունուած է, ուրեմն երկրորդի մէջ ճ՛ձայնը ջ թըրթոնուն հնչիւնն ստանալուց յետոյ՝ նրան հետևելով նաև *խ* դարձել է *ղ*. այսպէս է նաև Նոր-Նախիջևանի բարբառում, ուր ունինք *վաղջանէլ* և *վողջանէլ* ձևերը:

143. Բառավերջի *խ* բաղաձայնից առաջ եթէ ուրիշ բաղաձայն էլ կայ, այն ժամանակ հնչման դիրութեան համար *խ* ընկնում է. այսպէս է խորիսխ>*խօրիս* բառը: Ուրիշ նման ձևով բառ չկայ բարբառում:

Գաւառական բառ է *փօրփըխս* «gastroentérite հիւանդութիւնը», ուր *խ* յաջորդական *ս*-ից պաշտպանուելով՝ անկորուստ մնացել է:

## Ծ

144. Ամէն դիրքի մէջ էլ սովորաբար մնում է *ձ*.

Բառի սկիզբը. – ծակ>*ձազ*, ծով>*ձոււ*, ծոց>*ձօց*, ծալել>*ձալէլ* ևն:

Բառի մէջ. – կծու>*գուձու*, ծիծեռնակ>*ձձէռնիզ*, ծածկել>*ձաձգէլ*, ործկալ>*օձգալ* կամ *օրձգալ*, արածել>*արձէլ*:

Բառի վերջը. – ցած>*ցաձ*, ծիծ>*ձիձ*, այծ>*աձ* ևն:

145. Բառասկզբի *ծ*>*ձ* ազդուելով յաջորդ վանկի *զ* ձայնից՝ դառնում է *զ*. այսպէս են՝ ծառգարդար>*զարզարթար*, ծոագատիկ>*զոագադիզ*: Զ ձայնը պարունակող նախաձայն *ծ*-ով ուրիշ բառ չկայ բարբառում:

146. Նախաձայն *ծ* ազդուելով յաջորդ *թ*-ից՝ դարձել է *ց*՝ ծոթրին>*ցէթոռին* բառի մէջ. սրա դէմ Զալթրը ունի *ծէտռին*, ուր *թ* դառնալով *տ*՝ նախաձայն *ծ* նրա համեմատ մնում է *ծ*:

147. Ն ոնգականից առաջ գտնուած բառամէջի *ծ* դառնում է *զ*, թէև քաղաքի բարբառում կարող է մնալ նաև *ձ*. ինչ. խաժանել>*խաձնէլ*, *խազնէլ* (բայց կտր.*խաձի*), հեծնել>*հէձնէլ*, *հէզնէլ* (բայց կտր. *հէձա*):

148. Շնչեղ խուլ բաղաձայնի մօտ *ծ* ձայնը կա՛մ մնում է պարզ խուլ *ծ* և կամ շնչեղ *ց*. ինչ. անէծք>*անէցք* (քղ.), *անէծկ* (Չ.), կուրծք>*գուրցք* (քղ.), *գուրծկ* (Չ.): Նոյն բանը գտնում ենք նաև խուլ շչականից յետոյ. ինչ. Աստուծոյ>*Ասծու*:

149. Բառավերջի *ծ* տարանմանութեամբ դարձել է *դ*՝ կոծիծ>*գոձիդ* բառի մէջ: Բառամիջում և բառավերջում *ծ* պարունակող ուրիշ օրինակ չկայ:

150. Բոլորովին մասնաւոր հանգամանք է ներկայացնում Չալթր գիւղի արծաթ>*արգաթ* ձևը (կայ և քաղաքում), ուր *ծ*>*գ* ձայնափոխութիւնը այլուստ անծանօթ է: Ուրիշ բառերում *ր* բաղաձայնին յաջորդող *ծ* դառնում է միշտ *ձ*. ինչ.արածել>*արձէլ*, գործել>*գորձէլ*, պարծիլ>*բարձէնալ* են. նոյն իսկ *արծաթ* բառը երբեմն նաև Չալթրում. իսկ յաճախ քաղաքում ունի *արձաթ* ձևը:

#### Կ

151. Ամէն դիրքի մէջ էլ, թէ՛ քաղաքում և թէ Չալթր-Թովսի 2րջանում լինում է *գ*. օր.

Բառի սկիզբը.– կաշի>*գաշի*, կարմիր>*գարմիր*, կոյր>*գուր*, կռիւ>*գռէլ* են:

Բառի մէջ.– երեկոյ>*իրգուն*, հաւկիթ>*հաւկիթ*, ծածկել>*ձաձգէլ*, տնկել>*դնգէլ*, երկու>*էրգու* են:

Բառի վերջը.– պսակ>*փսագ*, մօտիկ>*մօղիգ*, կրակ>*գրագ*, բողկ>*բողգ*, ծաղիկ>*ձաղէգ* «մոխիր», կրուկ>*գուրունգ* են:

152. Ազդուելով խուլ բաղաձայններից՝ հնչւում է իբրև խուլ *կ* կամ նոյն իսկ դառնում է *ք*. ինչ.

Բառի սկիզբը.– կշիռ>*քշէռք*, կշտանալ>*քշտանալ*, կարդալ>*կաշտալ*, կարգուիլ>*կարկկէլ*. այս բոլորը Չալթրի մէջ է. իսկ քաղաքը ունի սովորական *գ* ձևով. միայն *կու գամ* բայն է՝ որ Չալթրում լինում է *կուկամ*, քաղաքում՝ *գուքամ*, *քուքամ*:

Բառի մէջ և վերջը.– աշակերտ>*աշկէրդ*, կսկիծ>*գսկիձ*, հասկանալ>*հասկընալ*, հասքընալ, մաշկ>*մաշկ* «ոչխարի մսի մէջ եղած թաղանթներ», շարժկտել>*ժաշկըտէլ*, ժաշքըթէլ, կսկուծ>*գուսկուձ* «լավ եփուած», ոսկի>*օսկի*, ոսկոր>*օսկօր* (այս վերջինը երեք տպագրեալ գրուածքների մէջ պատահել եմ նաև *ք* ձայնով՝ *գուսքուձ*, *օսքի*, *օսքօր*), սրսկել>*սրքրսկէլ* «արդուկելուց առաջ լուացքի վրայ ջուր ցանել», մուրացկան>*մուրացքան*, երիցկին>*իրիցքին*, ցատկել>*ցատկէլ*, ցաթքէլ, փեթակ>*փէթաք* (Չալթրում, իսկ քաղաքը՝ *փէթագ*), պակասիլ>*բակսէլ*, բաքսէլ, արձակել>*աձկրէլ* (Չ. Թէն քա-

դաքը ունի արցըզէլ), կոխկոտել>գօխքըռդէլ (Խրիմու առակներ, էջ 17): Խուլ բաղաձայնի մօտ գտնուած կ-ի համար ուրիշ օրինակ չկայ:

Եպիսկոպոս>յէբխգօբօս բառի մէջ կ մնում է գ՝ իբրև ուսումնական-կրօնական փոխառութիւն:

Շապիկ>շաբիք բառի մէջ կ դարձել է ք՝ ո՛չ թէ ձայնական օրէնքով, այլ վարտիք բառի նմանութեամբ. սովորաբար միասին գործածուում է շապիկ-վարտիք:

Չկայ>չիքա ձևի մէջ կ դարձել է ք՝ նախաձայն չ-ի ազդեցութեամբ:

Աղանի>աղվէնիք բառի մէջ՝ որ անշուշտ գալիս է \*աղանիկ նուագական ձևից, կ վերածուել է ք՝ յոգնակերտ ք մասնիկի նմանութեամբ:

Ելակ>էլաք (Չալթր), հէլաք (Մեծ-Սալա, Թոփտի) «վայրի մոռի» բառերի վրայ տե՛ս § 17:

153. Պտուկ>բուդուդ «ստինքի ծայր» բառի մէջ կ>դ ձայնափոխութիւնը ո՛չ թէ ձայնական օրէնքներով է, այլ ժողովրդական ստուգաբանութեամբ նմանեցնելով պտուդ «միրգ» բառին:

154. Բոկ>բոկիկ>բօբիգ բառի մէջ՝ ինչպէս ուրիշ շատ բարբառներում, նոյնպէս և այստեղ, կ ձայնը հետևելով նախաձայնին դարձել է ք:

155. Գաղտուկ բառը թէև քաղաքում կանոնաւոր գաղղուգ ձևով է, բայց Չալթրի մէջ դարձել է գաղղօդ՝ վերջաձայնը նաև ազդուելով միջին դ բաղաձայնից (\*գաղղուդ) և յետոյ էլ վերջաւորութիւնը ծանօթ –ոտ մասնիկի հետ փոխանակուելով:

156. Բառամէջի կ վերածուած է յ՝ բացառապէս ասպէսնայիկ<\*ասպէսնակիկ ձևի մէջ՝ որ գործածական է միայն գիւղերում: Յ ձայնին վերածուած կ-ի համար հմմտ. նաև §199:

157. Միջին կ-ի անկում տեղի է ունեցած էրիմաշթ «այր» և գինիմաշթ «կին» բառերի մէջ՝ որոնք էրիկմարդ, կնիկմարդ ձևերից են ածանցուած. նոյնպէս և մէկ մը>մէմը, մէկ կտոր մը>մէդօմը, և վերջապէս գարկանէլ բառի մէջ՝ որ \*գարկնէլ ձևից անցնելով՝ տուել է գարնէլ:

158. Բառի սկզբում *h* ձայնը սովորաբար անփոփոխ է մնում.  
ինչ. հաւ>*հաւ*, հպարտանալ>*հաբբրնալ*, հարսանիք>*հարսնիք*,  
հայր>*հար* են:

159. Միավանկ բառերում՝ յաջորդական *n* ձայնաւորի մօտ՝  
նախաձայն *h* դառնում է *ֆ*. այսպէս են՝ հող>*ֆօղ*, հորթ>*ֆօրտ*,  
*ֆօշտ*, հոտ>*ֆօդ*, որից հոտած>*ֆօդած*: Այս ձայնափոխութեան չեն  
ենթարկուած *հոլ* «տգեղ» (տարանմանութեամբ \**ֆօլ* ձևից խուսա-  
փելով) և *հոգ*՝ որ գոյութիւն չունի այս բարբառում: Անյայտ պատ-  
ճառով անփոփոխ են մնում նաև *hou*, *հօղ*, *հօն* «հոս, հող, հոն» բա-  
ռերը, որոնք ուրիշ բարբառներում նոյն օրէնքի համեմատ լինում  
են *ֆօս*, *ֆօդ*, *ֆօն*:

Բազմավանկ բառերը այս ձայնափոխութիւնից ազատ են.  
ինչ. հոգի>*հօփի*, հոկտեմբեր>*հօգդէմփէր*: Շատ հետաքրքրական են  
այն բազմավանկ բառերը՝ որոնք միավանկներից են բարդուած.  
սրանք տատանում են երկու վիճակի մէջ. այսպէս են *անհոգ* և  
*ջրհոր* բառերը, որոնք *հոգ* և *հոր* բառերից կազմուած լինելով՝ ու-  
նին *անֆօք*, *ջրֆօր* ձևերը. բայց իբրև բազմավանկ բառ՝ ասում են  
նաև *անհօք*, *ջուրհօք*, *ջրրհօք*: Առաջին ձևերը հնագոյն լեզուին են  
պատկանում, իսկ վերջին ձևերը հիմայ աւելի սովորական և տա-  
րածուած են: Այսպէս է նաև հոգալ>*հօքալ* «մտատանջուիլ», որ  
միայն *h* նախաձայնով է գործածական:

160. Ուրիշ բառերի հետ անձուկ կերպով միացած պարագա-  
յին՝ երբ նախորդ բառը բաղաձայնով է վերջանում, երկրորդ բառի  
նախաձայն ջնջւում է՝ նախորդ բաղաձայնն էլ շնչեղ խուլի փոխե-  
լով՝ եթէ կարելի է. օր. հինգ հատ>*հինք-ադ*, մէկ հատ>*մէքադ*, մէկ  
հատ մը>*մէքամ*, հինգ հոգի>*հինք-օքի*, հինգ հարիւր>*հինք-արուր*.  
այսպէս նաև բեր հոս>*բէրօս* կամ *բէրօսօս*:

161. Յաջորդական *u*-ի մօտ՝ նախաձայն *h* դառնում է *ֆ*. սրա  
համար ունինք միայն մէկ օրինակ, որ է՝ հիւսել>հուսել>\*հսել>*ֆսէլ*  
(հմմտ. § 89):

162. Ջնջուած է հնձել>*ընձէլ* բառի մէջ՝ որ գիտէ միայն Չալթր.  
քաղաքը այս բառը չունի:

163. Բառամիջում՝ երկու ձայնաւորի միջև անփոփոխ է մընում. ինչ. քահանայ>*քահանա*, նահանջ>*նահանջ* (տարի), պատուհաս>*բաղուհաս* (թէն այս բոլոր բառերն էլ գրականից են փոխառեալ) և կնքահայր>*զնգահար*:

Ա և է, ի ձայների միջև կակուղ հնչուելով՝ դառնում է յ. ինչ. սահել>*սայէլ*, պահել>*բայէլ*, մէկ պահի>*մէգ բայի* «մի քիչ ժամանակ»:

Բաղաձայնից յետոյ (ճիշտ ինչպէս § 160) ջնջւում է՝ նախորդը խուլի վերածելով. ինչ. աղուհաց(ք)>աղիացք>*ախացք*, *ախասք* «Մեծ Պահք», կը հաւատաս>*քաւաղաս*, կը հարցնէ>*քարցնէ*:

Ը ձայնից յետոյ ջնջուած է խորհուրդ>*խորուրթ* բառի մէջ՝ որ գրական փոխառութիւն է: *Ջրհոր* բառի մասին տե՛ս § 159, իսկ *օրհնէլ*՝ § 270:

Անփոփոխ է մնացած *n* ձայնից յետոյ՝ բոհրել>*բօհրէլ* բառի մէջ. իսկ *շնորհաւոր* բառի մէջ՝ *p*-ի անկումից յետոյ՝ *h* ձայնն էլ ջնջուելով՝ եղել է նախ *\*նօաւոր*, որից *շնաւօր*:

*Հնհնուրք* «մտատանջութիւն»>*հունհունուգ*, *հումհումունգ* բառի մէջ՝ իբր կրկնական՝ *h* իր գոյութիւնը պահում է՝ նախաձայնի ազդեցութեամբ:

164. Թւում է թէ *h* խումբը տալիս է *η*. սրա համար ունինք միայն մէկ օրինակ, այն է պահվըտուիլ>*բօղօղվէլ*, որի մօտ ունինք նաև *բօղօղվէլ*, *բօհըղվէլ* (< *\*պահստուիլ* ձևից):

165. Բառավերջում *h* դարձել է *ֆ*՝ ազահ>*աքաֆ* (գործածական է Չալթըր-Թոփտի) և թրքերէնից փոխառեալ *iştah* >*շթահ*, *շթաֆ* «ախորժակ» բառերի մէջ. անփոփոխ է մնում *մահ*, *շահ* բառերի մէջ, սակայն սրանք էլ գրական փոխառութիւն են անշուշտ: Ջնջուած է *պահ մի այլ* ձևի մէջ՝ որ միանալով իբր բարդ բառ տուել է *բամալ* «մի քիչ առաջ»:

[Հ դարձած *ֆ* գտնում ենք և բառամիջում՝ *ջուֆա* «չուխայ» (թրք. *çuha*) բառի մէջ, բայց չզիտեն թէ Խրիմի թաթարերէնից պատրաստ փոխառութիւն է թէ հայոց մէջ ձայնափոխուած: *Бугаровъ* չունի *ֆ*-ով ձև:]

Ը ձայնից յետոյ՝ երկուսը միասին ջնջւում են. ինչ. ճանապարհ>*ջանփա*. (իսկ խոնարհ>*խօնար* անշուշտ փոխառեալ է

գրականից)– բայց երբ կայ նաև յաջորդ *ք* ձայնը՝ *հ* միայն ջնջւում է և *ք* մնում է. ինչ. աշխարհք>աշխարք, շնորհք>շնորք. յաջորդական *ւ* ձայնի մօտ բոլորովին անհետանում է. ինչ. պահս>բաս:

Բառավերջում *հ* պարունակող ուրիշ բառ չկայ Նոր-Նախիջևանի բարբառում:

## 2

166. Բառակցի *ձ* քաղաքի շրջանում տալիս է *ձ*. իսկ Չալթրի շրջանում մեղմ ճ՝ կամ *ծ*. ինչ. ձի>ձի, ծի, ձուկն>ձուգ, ծուգ, ձայն>ձան, ծան, ձեռք>ձէռք, ձէռկ են:

167. Ազդուելով յաջորդ բաղաձայնից՝ նրա աստիճանին է վերածւում *ձգել* բառի մեջ, որ քաղաքը *ցքել*, Չալթր *ծկել* ձևն ունի. մինչդեռ արմատը (*ձիգ*) պահուած է կանոնաւոր *ձիք*, *ծիք* ձևերով՝ միջին ձայնաւորի պատճառաւ:

168. Բառամիջին, ինչպէս *բ, գ, դ, ջ* ձայների համեմատութիւնից երևում է, սպասւում էր *ց*. բայց այս բանը հաստատելու համար ո՛չ մի օրինակ չունինք Նոր-Նախիջևանի բարբառում. եղած բոլոր օրինակները ներկայացնում են մասնաւոր պարագաներ, հետևեալ ձևով.

169. Ն ոնգականից յետոյ մնում է *ձ*. ինչ. գանձանակ>քանձանակ, խանձել>խանձել, խնձոր>խունձոր, հնձել>ընձել, պապանձել>բաբընձել:

170. Ը բաղաձայնից յետոյ դառնում է *ց*. ինչ. արձակել>արցըզել, փորձել>փորցել, դերձան>դէրցան, թէրցան, բարձր>բացըռ, վարձք>վարցք. այս բոլորի մեջ Չալթր հանում է *ծ*. ինչ. ածկրել, տէրծան, պածը՛ն, վարծկ. միայն անփոփոխ է *փորցել*՝ որ թերևս գրական փոխառութիւն է:

171. Բաղաձայնից առաջ քաղաքում մնում է *ձ*, Չալթրում դառնում է *ց*. սրա համար ունինք միայն մի օրինակ, այն է *թնձկալ*, որ քաղաքում տուել է *թնձգալ*, Չալթրում նախ \**թնզգալ* և յետոյ շրջումով՝ *թնզգալ*:

172. Թանձր բառը դարձել է Չալթրի մեջ ըստ օրինի *թանձր՛ն*, բայց Թոփտիում *թա՛նդրը* «հաստ», նմանութեամբ *ծանդրը*, *մանդրը* բառերի:

173. Չալթրում կայ նաև վրձին>*վռձին* «խոզանակ» բառը. բայց այս բառը գիտեն միայն հնագոյն ծերունիները. նոր լեզուի մէջ ջնջուելով՝ փոխանակուել է ռուս. *шетка* հոմանիշով. մնում է միայն *վռձինի պէս* «շատ խիտ» դարձուածը. սրանց մէջ *ձ* ձայնը մնում է անփոփոխ:

174. Բառավերջում *ձ* դառնում է *ց*. սրա համար կայ միայն մէկ, բայց ապահով օրինակ, այն է *օձ>օց*: Միւս օրինակները անկախ չեն, որովհետև *ձ* ձայնը հետևում է *ն, ր* բաղաձայններին և որոնց մէջ ձայնափոխութիւնը նոյն է՝ ինչ որ բառամիջին. այսպէս՝ բրինձ>*բիրինձ*, տանձ>*դանձ*, բարձ>*բարց* (Չալթր *պարծ*):

## Ղ

175. Բառասկզբում գտնուած պարագային՝ *ղ* ձայնը, ինչպէս Պօլսի, նոյնպէս և Նոր-Նախիջևանի բարբառում խլանալով դառնում է *խ*. ինչ. ուղարկել>*ղրկել*>*խրգէլ*, ուղղորդ>*ղորդ*>*խօրթ*, *խօշտ*, Ղևոնդ>*խէվօն*, Ղուկաս>*խուգաս*, Ղունկիանոս>*խունգիյանօս*, Ղազար>*խազար*, Ղազարոս>*խազարօց*:

176. Բառամիջին՝ երկու ձայնաւորի միջև կամ թրթռուն բաղաձայնի մօտ մնում է *ղ*. ինչ. ծաղիկ>*ձաղէգ* «մոխիր», շաղուել>*շաղվէլ*, մեղու>*մէղու*, մեղր>*մէռղ*, բողկ>*բօղգ* (Պատկ. Բ. 325 ունի *բօխք* ձևը, որ հիմայ չի գործածւում), եղունգ>*օղունգ*, կատաղել>*գաղղէլ*, խեղճ>*խէղջ*, գաղտուկ>*գաղղուգ* ևն:

177. Խուլ բաղաձայնի մօտ դառնում է *խ*. ինչ. աղջիկ>*ախչիգ*, աղբատ>*ախքատ*, առողջ>*առօխչ*, եղբայր>*ախպար*, թուղթ>*թուխտ*, խեղդել>*խըխտէլ*, մեղադրել>*մէխթրէլ*, *մէխտրէլ*, մեղք>*մէխք*, ճեղք>*ջըխք*, յաղթել>*ըխտէլ*, ողբալ>*օխփալ*, ողջ>*վօխչ*, ողջոյն>*վօխչում*, քաղցնուլ>*քախցընալ*, խաղացուցանել>*խախցնէլ* (թէև չեզոքը լիւնում է *խաղալ*):

178. Ըստ այսմ *մ* ձայնի մօտ ըստ օրինի պէտք է մնար *ղ*, ինչպէս ունինք սաղմոս>*սաղմօս*, *սաղմօց*. Բայց *սեղմէլ* բառը դարձած է *սխմէլ*. սրա անկանոն *խ* ձայնը ըստ իս յառաջացած է թրք. *seğ* (հայերը արտասանում են *սըխը*) «սեղմ» բառից խաչաձևմամբ (տե՛ս MSL 10, 324): Առաջին ձևի դէմ անկմամբ կայ նաև *սամօց* փի. *սաղմօց* (տե՛ս Պատկ. Բ. 281):



179. Յաջորդական *հ* ձայնի հետ միանալով՝ *ղ* տալիս է *խ*.  
սրա համար ունինք շատ գեղեցիկ մի օրինակ. այս է՝ աղուհացք>  
\*աղհացք>ախացք, ախասք:

180. *Խաղող* բառի մեջ *խ* տարանմանությամբ *հ* ձայնին փոխուելուց յետոյ՝ երկրորդ տարանմանությամբ *ղ* դարձել է *վ*, որով բառը եղել է վերջապես *հավօղ*: Կրկին *ղ* և մեկ էլ *խ* ձայներով բեռնաւորուած ուրիշ մեկ բառ միայն կայ (*խաղաղ*), բայց սա լինելով գրական ձև՝ չէ ենթարկուած նոյն ձայնափոխութեան (§ 139):

181. Խղճմտանք>*խըջմըղանք* բառի մեջ՝ երեք բաղաձայնների խճողման պատճառաւ՝ *ղ* ընկած է անհետ: Երեք բաղաձայն գտնուում ենք նաև ծնծղա>*ձընձղա* և մղկտալ>*մըղզըղալ* բառերի մեջ, բայց այստեղ անկում տեղի ունեցած չէ, որովհետև առաջինը գրական բառ է, երկրորդի մեջ էլ բաղաձայնները իրարից բաժանուած են *ը* ձայնաւորով:

182. *Հիս* միասին տալիս են *խ*. ինչ. բղխել>*փխալ*. ուրիշ նման օրինակ չկայ բարբառում:

183. Բառի վերջում *ղ* սովորաբար լինում է *ղ*, ինչ. աղ>*աղ*, գիւղ>*գէղ*, գող>*գօղ*, խաղ>*խաղ*, տող>*տօղ*, իւղ>*յէղ*, կակուղ>*գազօղ*, հեղ>*հէղ*, հող>*ֆօղ*, տեղ>*դէղ*, մաղ>*մաղ*, ճիւղ>*ջուղ*, օղ>*օղ*, մատաղ>*մաղաղ*, նեղ>*նէղ*, պճեղ>*բջըղ*:

184. Խլանալով դարձել է խ՝ *ո՞ւրտեղ>վըդէ՞խ*, ասեղն>*ասէխ*, աստղ>*ասթխ*, շող>*շօխ* «արևի ցուք» (§ 310) բառերի մեջ. հմմտ. § 177. Բայց ասում են նաև տեղ>*դէղ* և շատ սովորական է *ասէղ*:

185. Անհետ կորած է թող>*թօ՛* բառի մեջ, որ հրամայական կազմելու համար է գործածուում: Բառի չափազանց յաճախ գործածութիւնը պատճառ է եղել այս պարզման, որով կարող ենք ասել *թօ՛* պարզապէս դարձել է նախամասնիկ:

Բառավերջի *ղ* ձայնի կրճատման օրինակ է նաև *ո՞ւրտեղ>վդէ՞*, որ սակայն գործ է ածուում նաև *վդէխ* ձևով (§ 184). առաջինից հոլովեալ ձևով ունինք *վդէղէն* «որ տեղից», որի մեջ *յ* ներդաշնակութեան համար է ներմուծուած՝ կրկին ձայնաւորների հանդիպումից խուսափելու համար:

186. Ամեն դիրքի մեջ էլ լինում է ջ՝ բարբառի երկու տիպարներումն էլ. ինչ.

Բառի սկիզբը.– ճակատ>*ջագադ*, ճանապարհ>*ջամփա*, ճեղք>*ջըխք*։

Բառի մեջ.– աճել>*աջէլ*, խղճմտանք>*խըջմըղանք*, կոճակ>*գոջագ*, կոճկել>*գոջգէլ*, կոճղեզ>*գոջղէզ*, վախճանել>*վաղջանէլ*, վիճակ>*վջագ* են։

Բառի վերջը.– լաճ>*լաջ* «փոքր տղայ», խեղճ>*խէղջ*, կարճ>*գարջ*, կոճ>*գոջ*, ճանճ>*ջանջ*, ճենճ>*ջինջ*, պատիճ>*բաղիինջ* «կանաչ լոբի»։

187. Խուլ բաղաձայնի մօտ ինքն էլ իսկանալով վերածւում է չ կամ ճ. սրա համար կայ միայն մի օրինակ, որ է ճօճք>*ջոչք* (քաղաքում), *ջօճկ* (Չալթրում) «կախօրրան»։

188. Երկու օրինակ կայ՝ որոնց մեջ ճ՝ ձայնը դարձել է ժ. առաջինն է *խղճմտանք* բառի դէմ երկրորդական *խըժմըղանք* ձևը, որի վրայ աւելի հանգամանօրէն տե՛ս § 200. Երկրորդն է գւռ. *լոյս-ճանազ* «բոլորովին լուսաւոր» բառը, որի դէմ քաղաքը թէն ունի կանոնաւոր *լուս-ջառաք* ձևը, բայց Չալթր հանում է *լուս-ժառանգ*. այս ձևը անշուշտ ժողովրդական ստուգաբանութեան արդիւնք է՝ ձևացած *ժառանգ* բառից. հետևաբար իրապէս այստեղ ճ>ժ ձայնափոխութիւն չկայ։

189. Առանց բացառութեան՝ ամեն դիրքի մեջ էլ մնում է ս. ինչ. մարդ>*մաշթ*, մուկն>*մուգ*, ամաչել>*ամըշնալ*, համ>*համ*։

190. Բոլոր բարբառներում, ինչպէս յայտնի է, ամեն>*ամմէն* «ամենայն» բառի մեջ ս կրկնուած է՝ սաստկութիւն ցոյց տալու համար. սակայն Նոր-Նախիջևանի բարբառում ունինք *ամէն*՝ մէկ ս-ով. քիչ անգամ ասում են *ամմէն*. Իսկ աղօթքի մեջ *ամէն* «եղիցի» բառը միշտ լինում է *ամմէն*։

191. *Միայնակ* բառը ունի կանոնաւոր *մէյնազ* ձևը (§ 72). բայց Չալթրում բացի սրանից կան նաև *փէյնազ*, *փայնազ* անկանոն ձևերը, որոնց մեջ ս-ի դէմ գտնում ենք փ։ Թէ ինչպէս է յառաջացել

այս ձայնափոխությունը՝ կարող չեմ բացատրել. բայց կնկատեմ որ միննոյն երևոյթը տեղի է ունեցած նաև թրք. *մէնթէշէ* բառի մէջ՝ որ քաղաքի բարբառով դարձել է *փէնթէշէ* «կողպէքի մաս»:

3

192. Բառասկզբում գտնուած *յ* բաղաձայնը անհետ ջնջուում է. ինչ. յիշել>*իշէլ*>*շէլ*, յօնք>*ունք*, *օնք*, յիշելք>*շէլք* «պատարագիչ քահանայի հաւաքած դրամը», յիշատակ>*շաղագ*, յիսուն>*իսուն*>*սուն* (քղ.), *սիւն* (Չ.) (այս ձևերի բացատրությունը տե՛ս 34), յօրանջել>*օրընջգդալ*, յորդորցնել>*օրթօրցնել* «բանը մեծացնել, լուսն ուղտ շինել», յստակել>*ըստըգէլ*, և մինչև անգամ *յոգնիլ*, որ Չալթըր ունի *օկնէլ* ձևով:

*Ծանօթ.*– *Յետ* և *յետև* բառերը՝ *յ*-ի անկումով կանոնաւոր կերպով դարձել են նախ *ետ*, *ետև* և յետոյ՝ որովհետև *ետ* միավանկ է, ըստ օրինի դարձել է *յէդ*, իսկ *ետև*՝ իբրև բազմավանկ՝ եղել է *էդէվ* (§ 16):

193. Նախաձայն *յ*-ի տեղ *հ* ենք գտնում՝ յունիս>*հունիս*, յուլիս>*հուլիս*, յունվար>*հունվար*, յօժար>*հօժար*, Յիսուս>*Հիսուս* բառերի մէջ: Միննոյն ժամանակ վերնի *սուն*, *օկնէլ*, *շաղագ* (§ 192) կանոնաւոր ձևերի մօտ ունինք նաև *հիսուն*, *հօքնէլ*, *հիշաղագ* ձևվերը, ինչպէս որ *յուլիս*, *յունիս* ձևերի դէմ էլ հին լեզուի մէջ գտնում ենք *ուլիս*, *ունիս* (ըստ Պատկ. Գ. 77, 113): Սրանցից նրանք՝ որ *հ* նախաձայնով են՝ փոխառեալ են գրականից, միւսները կանոնաւոր ժողովրդական ձևեր:

194. Թւում է թէ նախաձայն *յա* վանկը տալիս է է. այս ձայնափոխությունը գտնում ենք մի քանի բարբառներում. այսպէս՝ յարդ>*էրթ*, յաղթել>*էիստէլ* (Պօլիս), յատել>*էտէլ* (Խարբերդ), յատոց>*էտոց*, յառաջ>*էռէչ* (Երզ. և Եղ. *ünnü*), յամել>*էմէլ* (Ակն), Rivola-ի Բառգ. հայոց 1633, էջ 104 ունի *Յակոբ* կամ *էկոբ* ձևը: Նոր-Նախիջևանի բարբառում այս բոլոր բառերը չկան, որպէս զի նոյն կանոնը ստուգէինք. բայց պահուած է յարդ>*էշտ*. կայ նաև *յաղթէլ* բայը, բայց փոխանակ սպասուած *էիստէլ* ձևի, գտնում ենք *ըիստէլ*: Վերջապէս *Յակոբ*՝ իբր գրական բառ, մնում է *Ագօլի* ձևով:

195. Բառի մեջ *յ* ձայնը միանալով նախորդ *ա*, *ռ* ձայնաւորներին հետ՝ կազմում է երկբարբառ՝ յաջորդ բաղաձայնի մօտ: (Մրանց վրայ խօսուած է վերը §§ 66-74 և 92): Ուր որ յաջորդում է ձայնաւոր, *այ*, *ոյ* դադարում են երկբարբառ լինելուց, *յ* համարւում է բաղաձայն, և իբր բաղաձայն՝ պահում է իր գոյութիւնը երկու ձայնաւորի կամ նոյն իսկ ձայնաւորի ու բաղաձայնի միջև. ինչ. դայեակ>*դայէգ*, հայելի>*հայլի*, մայիս>*մայիս*, նայիլ>*նայէլ*, շոյել>*շօյէլ*, վայելել>*վայլէլ*, հայենակ>*հայնագ* «հայերէն» (§ 69):

196. Այս պարագային *յ* կրում է մի քանի մասնաւոր փոփոխութիւններ. ինչ.

յ>*վ*.– գտնւում է *ռ* ձայնաւորից յետոյ՝ շոյել>*շօվէլ* Բառի մեջ, որ սակայն աւելի սովորական է *շօյէլ* ձևով:

յ>*ն*.– նոյեմբեր>*նունէմփէր* ամսանունի մեջ, որ նաև *նույէմփէր* ձևով սովորական է. բայց երկուսի մեջ էլ *ռ* ձայնաւորը դարձել է *ռ*:

Ձնջուած է արագաբանութեան պատճառով՝ հրամայէ, հրամայեցէք>*համէ, համէցէք* քաղաքավարական ձևերի մեջ:

## Ն

197. Ամէն դիրքի մեջ էլ առհասարակ մնում է *ն*.

Բառի սկիզբը.– նայիլ>*նայէլ*, ի ներքս>*նէս*, նոր>*նօր*, նեղ>*նէղ* ևն:

Բառի մեջ.– ունդ>*հունդ*, մինչև>*մինչէվ*, անոյշ>*անուշ* ևն:

Բառի վերջը.– անուն>*անուն*, տուն>*դուն*, շուն>*շուն* ևն:

198. Յաջորդ շրթնային ձայնի մօտ պատահած ժամանակ՝ նրան հետևելով դառնում է *մ*. ինչ. անապակ>(սղմամբ) \**անպակ*>*ամբագ*, ճանապարհ>*ջամփա*, այնպէս>*ամբէս*, անբախտ>*ամփախտ*:

199. Բառամեջի *ն*՝ յաջորդ թրթռուն կատկայինի հետ՝ ն-ից առաջ գտնուած ժամանակ՝ երեք տեսակ ձայնափոխութեան է ենթարկւում. նախ՝ սովորաբար կորչում է՝ կատկայինը վերածելով *յ*. երկրորդ՝ դառնում է *նն* և կամ երրորդ՝ աւելի պարզուելով՝ լինում է պարզապէս *ն*: Այսպէս՝ ունինք անկանել>*իյնէլ, ըյնէլ, իննէլ*,

կանգնիլ>*գայնէ* (բայց չկայ \**գաննէ*), ցնկնել>*ցըննէ* (Մեծ-Սալա ունի *ցնէ*։ Իսկ Պօլսի *ցըյնէ* ձևը գոյութիւն չունի այս բարբառում)։

Այս ձայնափոխութիւնը, ինչպէս տեսանք, թրթռուն կատկայիւնի հետ կլիւնի, իսկ խուլ կատկայիւնի հետ, կամ ուրիշ բաղաձայնի և կամ ձայնատրի մօտ նոյն ձայնափոխութիւնը տեղի չի ունենալ. ինչ. *իլինքնալ* «լցուիլ», *իլինքցնէ* «լցնել», *գանգ առնէ* «կանգ առնել» (թէն կայ *գայնէ*), *գանգըղվէ* «գանգատուիլ», *փրորնքտալ*, *ժառանգէ*, *ժանգո* «ժանգ», նոյն իսկ անկանել, կտր. *ինգա*, *ընգա*, թէն անորոշը *իյնէ*, *ըյնէ*, *իննէ* և ներկ. *գիյնիս* նն։

200. Ուրիշ բարբառներում վերոյիշեալ օրէնքը մի քիչ աւելի ընդհանուր է. այսինքն՝ թէ՛ *ն* ձայնին յաջորդող և թէ առանձին գտնուած բոլոր շչական ու ճչական բաղաձայնները՝ յաջորդ ո՛րևէ բաղաձայնի մօտ (և ո՛չ թէ միայն *ն*-ի մօտ) գեղչում են՝ կորցնելով իրենց ատամնական մասը և բոլորովին ջնջում են իրենց նախորդ ռնգականը։ Այսպէս՝ Պօլսի բարբառով ունինք՝ կոճկել>*qodqէ*, անցնել>*ասնիլ*, ճանչնալ>*ջաշնալ*, ամչնալ>*ամըշնալ*, էրէճկտալ>*էրէժգըղալ* «յօրանջել», ինչնալ>*իշնալ* «իջանել», *ինչվան* «մինչև»>*իշվան*, անձրև>\**ազրէվ*>*արզէվ*, թնծկալ>*թզգալ* նն։ Նոր-Նախիջևանի բարբառում այս օրէնքը մասամբ միայն գործադրուած է. այսպէս՝ չ ձայնը ռնգականից յետոյ կամ անկախ՝ երբ պատահի յաջորդ ռնգականի մօտ՝ դառնում է շ, իսկ նախորդ ռնգականը ջընջւում է. ուրիշ բաղաձայնի մօտ, ինչպէս և միւս շչականներն ու ճչականները որևէ փոփոխութիւն չեն կրում. այսպէս՝ ըստ օրինի ունինք ճանաչել>*ճանչնալ* և *ջաշնալ* (կտր. *ջանցըցա*, ինչպէս նաև Պլ. *ջանցցա*, որովհետև վերի օրէնքը շչական բաղաձայնի մօտ չի գորում), ամաչել>*ամըշնալ*, բայց կայ նաև *ամընչնալ*, սակայն ունինք թնծկալ>*թնձգալ* (Չալթրի մէջ կայ *թնզգալ*, այս է \**թնզգալ*՝ որ միջին ձևն է Պլ. *թզգալ* ձևի), իջանել>*ինչնէ*, *ընչնէ*, ինչուան>*ինչվակի*, անցանել>*անցնէ*, յօրանջել>*օրինջղալ*, գօրինջղալ (Մեծ-Սալայում կայ *գօրինժղալ*), խղճմտանք>*խջմըղանք* (ոմանք նաև *խժմըղանք*)։

Բայց ինչ որ հաստատուն է՝ այդ այն է՝ որ այս բարբառում, ինչպէս և Պօլիս, *նշն* ձայնախումբը գոյութիւն չի կարող ունենալ և դառնում է շն. և սրա համար է ահա որ նոյն իսկ գաւառական *տօն-*

*շնորհաւոր* բարդ բառը՝ ուր *նշն* ձայնախումբը յառաջացել է պատահաբար, առաջին ռնգականի անկումով դարձել է *դօշնավօր*:

Բացառութիւն է միայն *անշնօրք* «անշնորհք»:

201. Ռնգականին յաջորդող ատամնականն էլ՝ յաջորդ ռնգականի մօտ ընկնում է. այսպէս՝ Պօլսի բարբառով ունինք հիւանդանալ>*հըվըտնալ*, կտր. *հըվըտծա*: Նոր-Նախիջևանի բարբառումն էլ երկու ձևով կայ՝ *հիվընդնալ* (քաղաքը) կամ *հիվըննալ* (Չալթր-Թոփտի): Ուրիշ պարագաներում ատամնականը չի ընկնում. Ինչպէս՝ խնդրել >*խընթրէլ*, ընտրել>*հընդրէլ* են:

202. Բառամեջի *ն* ընկնում է *ը* և ջ բաղաձայնների միջև՝ ուժեղացնելով նախորդ ցնցունը և վերածելով *ռ*. այսպէս է ապարանջան>\**ապըրնջան*>*աբրոջան*:

203. *Մ* ձայնից առաջ գտնուած բառասկզբի *ն* դառնում է *լ*. այսպէս են՝ նմանիլ>*լմանէլ* (Պլ. *ըլմանիլ*) և նմին նման>*լմին նման* «ճիշտ այսպէս» դարձուածը (գործ է ածում Պատկ. Բ. 364):

Այս ձայնափոխութեան համար թէև ուրիշ օրինակ չկայ, բայց կարող ենք յիշել *մասնաման* «հաղորդութեան աման» հետաքրքրական բառը՝ որի մէջ հեռաւոր ազդեցութեամբ *ն* դառնալով *լ*՝ բառը եղել է *մասլաման*:

Բառամիջի *նմ* ձայնախումբը անշուշտ անցնելով *մմ* ձևից՝ լինում է *մ*. սրա համար իբրև օրինակ ունինք հինգերորդ հոլովման պատկանող բառերի մի խումբ. ինչ. *էրզանմէն*>*էրզամէն* «ամուսնուց», *իրէնմէն*>*իրէմէն* «յիւրմէ» են: Երկու ձևերն էլ գործածական են բարբառում:

204. *Լ* ձայնին յաջորդող *ն*՝ սրան հետևելով լինում է *լ*. այսպէս է ելանել>ելնել>*էլլէլ*. այսպէս է նաև Պլ. *էլլալ*. Բայց Պօլսի բարբառում կատարյալի *էլա* ձևը վերականգնում է արմատը, մինչդեռ Նոր-Նախիջևանի բարբառում երկրորդ *լ* ձայնը արմատական համարուելով՝ լինում է կտր. *էլլա* «*էլա*»: Այս կանոնին իբրև երկրորդ օրինակ է ծառայում կլանել>*կլնէլ*>Պլ. *գըլլէլ*: Բայց այս բառը չկայ Նոր-Նախիջևանի բարբառում, ուր բացատրւում է *կուլ տալ* ոճով:

Այստեղ են պատկանում նաև *լնուլ*, *լինէլ* բայերը, որոնք այլուր նոյն ձայնական օրէնքի համաձայն տւել են կրկին *լ*. այսպէս՝ Ախլցխա *լլէլ* «լցնել», Պլ. *ըլլալ* «լինել»: Նոյնը տեղի է ունեցել

անշուշտ նաև Նոր-Նախիջևանի բարբառում, բայց յետոյ կրկին լ-երը իրար ձուլուելով՝ յառաջացել է լ. այսպէս ունինք լնուլ>ուլէլ, լինել>ըլալ (կամ նաև առաջին ձայնաւորի անկումով՝ լալ): Հմմտ. սրա հակառակ՝ լնտերք §§ 137, 287:

Նման մի երևոյթ պատահում է լուսնկայ բառի լուսնինգա ձևի մէջ, որ ըստ ոմանց արտասանւում է լուսլինգա և ուր երկրորդ լ ձայնը ծագում է նախաւոր ն-ից:

Սրանց հակառակ նլ խումբը՝ նախապէս լլ վերածուելուց յետոյ՝ պարզուելով լինում է լ. ինչ. բանալիք>\*բանլիք>բալլիք>բալիք. իսկ անփոփոխ մնացել է անալի>անլի բառի մէջ, ուր նոյն իսկ շրջմամբ դառնում է ալնի և ո՛չ թէ \*ալլի, ինչպէս սպասւում էր ըստ օրինի:

205. Բառավերջի ն յանգը և յօդը ջնջւում է և կամ դառնում ը. այսպէս մուկն>մուգ, ակն>ագ, բայց յօթն>օխտը, ութն>ուրթ, ինն>ինը, յօդով հացն>հացը ևն:

206. Բառավերջի ն դարձել է մ՝ մրջին>մրջուն>մուռչում և ողջոյն>վօխչում բառերի մէջ. այս երկուսն էլ ունին -չում վերջաւորութիւնը և երկուսն էլ սկսում են շրթնային բաղաձայնով. բառավերջի ն ազդուած է նախաձայնից:– Չալթր ունի վօխճում:

Միևնոյն ձայնափոխութիւնը գտնում ենք նաև խանութ>խամութ ձևի մէջ (որից խանութպան>խամութպան). գործածական է Չալթրի նոր սերնդի մէջ, մինչդեռ քաղաքը, ինչպէս և Չալթրի հին սերունդը ունին սովորական խանութ, խանթ ձևը: Այս ձայնափոխութիւնը թւում է թէ ձայնական օրէնքի արդիւնք չէ, այլ որևէ նմանողութեամբ յառաջացած. բայց ի՞նչ կապ կարող է լինել վաճառականի խանութի և ձիերի խամութի միջև:

Նոյնը գտնում ենք վերջապէս հնհնութ>հումհումունգ «մտատանջութիւն» բառի մէջ, որ հումհումութ ձևի հետ գործածական է քաղաքացոց ոմանց մօտ:

## Շ

207. Ամէն դիրքով էլ մնում է անփոփոխ. ինչ.

Բառի սկիզբը.– շուն>շուն, շուշան>շուշան, շերեփ>շէրէփ ևն:

Բառի մեջ.– մաշել>մաշէլ, տաշել>տաշէլ, հրեշտակ>հրշտագ  
նն:

Բառի վերջը.– գումէշ>գումէշ, փուշ>փուշ, գէշ>գէշ «յոռի» նն:

208. Նախաձայն շ՝ ազդուելով յաջորդ ժձայնից՝ դարձել է ժ.  
ինչ. շարժէ՝>ժաժէ՛, գետնաշարժ>գէտնաժաժ. և այս ձայնափոխու-  
թիւնը անփոփոխ մնում է, մինչև անգամ երբ ազդող ժձայնը նոր  
ձայնափոխութեամբ վերածուած լինի շ. ինչ. ժաշկըտէլ կամ ժաշք-  
թէլ «շարժկտել»:

209. Նախաձայն շ տարանմանութեամբ դարձել է *զ՝* յաջոր-  
դական չ բաղաձայնի ազդեցութեամբ՝ շրջել>զրշէլ «տապալել»  
բառի մեջ: Այս բառը Պօլսի բարբառում եղել է *սրշէլ*, ուր *ս* խուլ  
ձայնը համապատասխան է չ խուլ ձայնին. բայց Նոր-Նախիջնանի  
բարբառում *ր* թրթռունն է՝ որ ազդել է նոյնպէս և վերածել *զ*: Չալթ-  
րում *ր* ձայնը ջ-ի մօտ ըստ օրինի վերածուելով շ (§ 257), բառը յե-  
տոյ դարձել է *զշէլ*, ուր շ խուլի մօտ *զ* թրթռունը դեռ ապրում է,  
իբրև արդիւնք նախկին թրթռուն *ր*-ի ազդեցութեան: Բայց այս *զ*  
ձայնը ազդուելով շ-ից՝ եղել է ժ և *զշէլ* ձևի հետ միննոյն ժամա-  
նակ ունինք նաև *ժշէլ*:

210. Նոյնպիսի տարանմանութեամբ շ դարձել է *ս՝* շուրջառ>  
*սուռչալ*, *սուռչար* և կէս գրական շունչ>*սունչ* բառերի մեջ:

211. Բառավերջի շ դարձել է ջ, չ՝ միայն մատղաշ>*մաղղաջ*, Չ.  
*մաղղաչ* (երկուսի մեջ էլ գործածական է նաև *մաղղաշ*) բառում. թէև  
ուրիշ -աշ վերջացող բառ չկայ այս բարբառում, բայց կարող ենք  
հաստատօրէն ասել թէ այս ձայնափոխութիւնը ձայնական չէ, այլ  
յառաջացած է որևէ ժողովրդական ստուգաբանութեամբ՝ կապելով  
բառը թերևս *աճէլ*, *աճձնի* հետ:

## Չ

212. Առհասարակ ամէն դիրքով էլ մնում է անփոփոխ. ինչ.

Բառի սկիզբը.– չար>*չար*, չափ>*չափ*, չուան>*չուվան* նն:

Բառի մեջ.– մինչև>*մինչէլ*, ոչխար>*օշխար* նն:

Բառի վերջը.– պօշ>*բօջ*, ինչ>*ինչ*, կանաչ>*գանանչ*, փարչ>  
*փարջ* նն:



213. Յաջորդական *ն* ռնգականի մօտ դառնում է շ. և եթե նրանից առաջ *ն* ձայնն էլ կայ՝ կորչում է. ինչ. ամաչել>ամչնալ>ամրշնալ (կայ նաև ամրնչնալ և մինչև անգամ ամրնշնալ (ըստ Պատկ. Բ. 367), ճանաչել>ճանչնալ>ջաշնալ. կատարեալում առաջինը տալիս է ամրշցա, բայց երկրորդը ջանչըցա կամ ջանցըցա, ուր չ ազդուելով յաջորդ *ց*-ից՝ վերածուել է *ց* (§ 200):

214. Մի քանի տեղ խուլ բաղաձայնների մօտ և կամ *ն*-ից յետոյ Չալթրի տիպարում լինում է ճ. օր. աչք>աճկ, պինչ>պինճ, փախչել>փախճէլ, փչիլ>պլճէլ, կպչիլ>գըպճէլ, դունչ>տունճ. բայց անփոփոխ են ուրիշ նման պարագաներում. ինչ. մանչ>մանչ, ինչ>ինչ, փչել>փչէլ են. և յատկապես դունչ բառը՝ որ կայ թե թունչ և թե տունճ ձևով:

## Պ

215. Բառասկզբում *պ* սովորաբար տալիս է *բ* թե՛ քաղաքի և թե Չալթրի տիպարում. օր. պագանել>բաքնէլ, պատ>բադ, պաշար>բաշար, պէս>բէսնագ, պունկ>բուռունգ են:

216. Յաջորդական *ս* բաղաձայնի մօտ խլանալով լինում է *փ*. ինչ. պսակ>փսագ, պսակել>փսագէլ. այս օրինակը՝ որ միակն է, կայ և ուրիշ շատ բարբառներում:

217. Չալթրի տիպարում նախաձայն *պ* տալիս է *պ*՝ հետևեալ բառերի մէջ. պանիր>պանիր, պատիճ>պադինջ «կանաչ լոբի», պինչ>պինճ «քթածակեր», պնակ>պնագ «կաւէ խոր աման, չանախ», որոնց դէմ քաղաքն ունի բէնիր, բադինջ, բնագ ձևերը: Սրանցից առաջինը և վերջինը կարծում եմ թէ խաչաձևմամբ յառաջացած են թրք. *penir* «պանիր» և յն. *πίνωξ* «պնակ» հոմանիշ ձևերից (§ 15). *պնակ* բառը ուրիշ բարբառներում էլ ցոյց է տալիս այսպիսի անկանոնութիւն. այսպէս Խրբ. *բնագ*, Պլ. *փնագ*, որից հետևում է թէ խաչաձևումը միջին դարի շրջանին է պատկանում: Պինչ>պինճ բառի մէջ *պ* անշուշտ ազդուած է ճ վերջաձայնից, ճիշտ ինչպէս դունչ>տունճ (§ 116): Գալով պատիճ>պադինջ բառին, սրա անկանոն նախաձայնը գտնում ենք նաև միջին հայերէնում, ուր ունինք *բաճիճ*, *բաջիջ* «ընդդէմների կանաչ պատեանը» Նորայրի բառ. ֆրանս. (*gousse*), ՀԲուս. § 297, *բուճուճ* «շագանակի վրայի փշոտ

կճեպը» Վստկ. 152. Բայց այս բոլորի անկանոն նախաձայնի համար չեն կարող որևէ մեկնություն տալ:

218. Բառի մեջ, ձայնաւորից յետոյ գտնուած *պ* դառնում է *բ*. ինչ. շապիկ>*շաբիք*, հապա>*հաբա*, հանդիպել>*հանդրբել*, հպարտանալ>*հաբրրնալ*, դեպի>*դեբի*, ապրել>*աբրել*, պապակիլ>*բաբգել* «Բերանը չորանալ», կապոյտ>*գաբուդ* են:

219. Մբաղաձայնից յետոյ կամ խուլ բաղաձայնից առաջ ինքն էլ իսկանալով լինում է *պ* կամ *փ*. օր. ապսպրել>*աբըսպրել*, սպասել>*սպասել*, սպրդիլ>*սըպտըռել*, *սըփթըռել*, այսպէս>*ասպէսնագ*, կպչիլ>*գպչել* (քաղաքը), *գպճել* (Չալթր), Բայց յարակատարը *գբիլ է՝ պ* ձայնաւորի մօտ գտնուելու պատճառաւ:

Ուրիշ բաղաձայնի մօտ *պ* ձայնը չի պատահում բարբառիս մեջ, բացի հետևեալ մասնաւոր պարագաներից.

220. Ռնգականից յետոյ պատահած *պ* թէ՛ բառի մեջ և թէ՛ բառավերջում դառնում է *բ*. այսպէս՝ անապակ>անպակ>*ամբագ*, ամպ>*ամբ*, ումպ>*ումբ*:

*Ճանապարհ* բառը՝ ինչպէս Պօլիս և այլուր, նոյնպէս և այստեղ դարձել է *ջամփա*. Բառը սղմամբ եղել է նախ *\*ճանպարհ*, յետոյ ր-ի անկումով *\*ճանպահ* (հմմտ. Վն. *ճամբանի*), որից *\*ճամբահ* և *հ* շունչը անցնելով Բ-ի վրայ՝ յառաջացել է *ճամփա*>*ջամփա*:

221. Ըբաղաձայնից յետոյ ունինք միայն կերպ>*գէրբ*, կերպարանք>*գէրբարանք*, որոնց մեջ պ>բ: Թէև այս երկուսն էլ կարող են լինել գրական փոխառութիւն, բայց զուտ ժողովրդական ձևով ունինք *շուն գէրբի* «շան պէս, շան կերպ» բացատրութիւնը:

222. *Ինչպէս* շատ գործածական բառի մեջ չ բաղաձայնից յետոյ *պ* ջնջուելով՝ բառը դարձել է *ինչէս*:

223. *Սեպտեմբեր* ամսանունն մեջ *պ* ազդուելով յաջորդ *հոկտեմբեր* ամսանունն *կ* ձայնից՝ դարձել է *կ* և ըստ այսմ տուել է *սեզդէմփեր*:

224. *Տիպար(ք)* բառը՝ որ ըստ օրինի պիտի տար *դիբարք*՝ իտալերէնի կամ յունարէնի հետ խաչաձևմամբ դարձել է *թիփարք* «դէմք, կերպարանք»:

225. Բառավերջում *ւ* ձայնաւորից յետոյ տալիս է առանց բացառութեան *բ*. ինչ. վիշապ>*ուշաբ*, կճեպ>*զջէբ*, պարապ>*բարաբ*, իծիպ>*խճիբ*, կապ>*գաբ*, կոպ>*գօբ*:

Բաղաձայնի մօտ պատահում է միայն *ւ*, *բ*, *ս* ձայներից յետոյ և տալիս է ճիշտ այն արդիւնքը՝ ինչ որ բառամիջին. այսպէս ամպ>*ամբ*, ումպ>*ումբ* (§ 220), կերպ>*գէրբ* (§ 221), ոսպ>*վօսպ* (§ 219):

## Ջ

226. Բառասկզբի *ջ* քաղաքի շրջանում տալիս է *ջ*, իսկ Չալթրի շրջանում մեղմ *ջ'* կամ *ճ*. ինչ. ջուր>*ջուր*, ճուր, ջարդել>*ջարթէլ*, ճաշտէլ, ջրաղացք>*ջաղաչք*, ճաղաճկ:

227. Մի քանի բառ ունինք՝ որոնց մէջ նախաձայն *ջ* առանց որոշ պատճառի տալիս է *ջ'* Չալթրի տիպարում. այսպէս են՝ ջահ<\*ջարի>*ջառ*, ջերմն>*ջէրմ*, ջիղ>*ջըղ*, ջոկ>*ջօգ*:

Ջնջոց>*ջինջօց* բառը ժողովրդական ստուգաբանութեամբ ճենճ>*ջինջ* բառից կարծուելով՝ ինչպէս որ *ը* ձայնը վերածել է *ի*, նոյնպէս և նախաձայնը դարձել է *ջ*:

228. Բառի մէջը և վերջը *ջ* դառնում է *չ*. եղած օրինակներն են՝ հաջել>*հաչէլ*, ոջիլ>*օչիլ*, առաջ>*առաչ*, առաջեալ>*առչէվ*, մէջ>*մէչ*, մէջք>*մէչք*:

229. Ն ռնգականից յետոյ լինում է *ջ*. ինչ. բանջար>*փանջար*, յօրանջել>*օրինջդալ*, ջնջոց>*ջինջօց*, տանջել>*դանջէլ*, երինջ>*էրինջ*, խուլինջ>*խուլինջ*, մունջ>*մունջ*, նահանջ>*նահանջ*:

Ապարանջան բառի մէջ թէև *ն* կորած, բայց նրա առաջին ազդեցութեամբ *ջ* մնում է *ջ*, ինչպէս որ բաղաձայնն էլ դարձել է *ռ*. այսպէս՝ ապարանջան>\*ապրնջան>*աբրռջան*:

Ականջ>*անգաջ* բառի մէջ թէև *ջ* բառի վերջումն է, բայց նախապէս ռնգականի մօտ լինելու հետևանքով՝ մնացել է *ջ*, փոխանակ լինելու *չ*:

Ըստ երևույթի օրէնքին համապատասխան չէ իջանէլ>*ինչանէլ*, կտր. *ինչա*. Բայց կարդարանայ, եթէ ընդունինք որ *ն*-ի յաւելումը աւելի յետոյ է, քան բառամէջի ջ>չ ձայնափոխութիւնը, որ օրէնքին համապատասխան է:

230. Խ բաղաձայնից յետոյ, ինչ էլ լինի սրա ծագումը, ջ դառնում է չ (իսկ Չալթրում միշտ ճ), ինչ. աղջիկ>*ախչիգ, ախճիգ*, առողջ>*առօխչ, առօխճ*, ողջ>*վօխչ, վօխճ*, ողջոյն>*վօխչում, վօխճում* և այլն և այլն:

231. Բ բաղաձայնից յետոյ ջ նոյնպէս դառնում է չ. ինչ. թրջել>*թրչէլ*, մրջիւն>*մուռչում*, շրջել>*զրչէլ* «տապալել», վերջ>*վէրչ, քուրջ>քուռչ*:

Արջառ>*աչառ* բառի մէջ *ռ* ընկած լինելով՝ կարող չենք որոշել թէ այստեղ է պատկանում, թէ ուղղակի մտնում է § 228 օրինակների շարքը. այսինքն *ռ*-ի պատճառաւ ջ դարձել է չ, թէ՛ *աջառ* ձևի ջ բաղաձայնը իբրև բառամիջի՝ վերածուած է չ:

232. Չալթրի շրջանը խուլ բաղաձայնների մօտ երբեմն չ-ի տեղ հանում է ճ. ինչ. մէջք>*մէճկ, թրջել>տշճէլ, տրճէլ*, արջառ>*աճառ*:

233. Այն օրէնքը՝ որով ջ ձայնը բաղաձայնից առաջ գտնուած ժամանակ ատամնական մասը կորցնելով լինում է շ կամ ժ (§ 220), երբեմն զօրում է և երբեմն ոչ. ըստ այսմ ունինք իջանել>*ինչնէլ* (Պլ. *իշնէլ*), մէջք>*մէչք* (Պլ. *մէշկ*), յօրանջել>*զօրինջդալ* (Պլ. *էրէժգրդալ*), բայց նաև ոջլոս>*օշլօդ* և *յօրանջել* ձևի դէմ Մեծ-Սալայի մէջ *զօրինժդալ*:

## Ռ

234. Առանց բացառութեան ամեն դիրքի մէջ էլ մնում է *ռ*. ինչ. ամառն>*ամառ*, թոռն>*թօռ*, կռիւ>*գռէվ, բռնել>բռնէլ*, ծուռ>*ճուռ* ևն:

*Առնէլ* «անել» բառի մէջ՝ ուրիշ շատ բարբառների նման՝ այստեղ էլ կորած է *ռ* ձայնը և եղած է *անէլ*:

Ծառզարդար>*զարզարթար* «Ծաղկազարդի տօն» բառի մէջ *ռ* դարձել է *թ*՝ յաջորդ երկու վանկերի *ռ* ձայնի ազդեցութեամբ:

*Շուրջառ* բառի մէջ բառավերջի *ռ* նախ վերածուելով *ր* և յետոյ նախորդ վանկի *ռ*-ի հետ տարանմանութեամբ դարձել է չ. այսպէս ունինք ուրեմն *սուռչար* և *սուռչալ* ձևերը:

## Ս

235. Ամեն պարագայի մէջ էլ մնում է *ս*. ինչ.

Բառի սկիզբը.– սալոր>*սալոր*, սեալ>*սէլ*, սիսեռն>*սըսէռ* են:

Բառի մէջ.– պսակ>*փսագ*, հարսանիք>*հարսնիք* են:

Բառի վերջը.– ներքս>*նէս*, կէս>*գէս*, լոյս>*լուս*, չորս>*չորս* են:

236. Մի խումբը բառասկզբում տալիս է *զդ*. սրա համար կայ երկու օրինակ. այն է՝ սիալ>*զդալ*, սիալակիլ>*զդալիլ* «հարբիլ».  
(առաջինը գործածական է երկու ձևով):

237. Թս խումբը տալիս է *թց* կամ *ծծ*, *ցց*. սրա համար ունինք միայն մէկ հայերէն օրինակ, այն է *վաթսուն*, որ քաղաքում տալիս է *վաթցուն*, Չալթր *վածծուն*, և մէկ թուրքերէնից փոխառեալ բառ, այն է tütsü «ծխանելիք», որ քաղաքի բարբառում հնչում է *թիծծու*, *թիցցու*, Չալթր *թուծծու*: Նոր-Նախիջևանի բարբառում *թս* խմբով ուրիշ բառ չէ մնացած, բայց օրէնքը ապացուցում է նաև Պօլսի բարբառի համեմատութեամբ, ուր գտնում ենք նոյն օրէնքը, ինչ. *վաթսուն*>*վածծուն*, ութսուն>*ուծծուն*, յիսուն>*իթսուն*>*իծծուն* և թուրքերէնից փոխառեալ՝ *թիւթսիւ*>*թիւծծիւ*, *յաթսը*>*յածծը* (տե՛ս Բագմ. 1897, 261 և § 128):

238. Ազդուելով յաջորդ չ, *ժ* ձայներից՝ դառնում է շ. ինչ. տասնըչորս>տասչորս>դաշչորս, տասներեք>*տասնըժէք*>*դասժէք*>*դաշժէք*:

239. Մասնաւոր պարագաներ.

Բառասկզբի *ս* դարձել է *զ*՝ միայն սուգ>*զուք* բառի մէջ. բայց *սգաւոր* մնում է *սքալօր*. միայն Խրիմում կայ կանոնաւոր *զըքվօր* ձևը, ինչպէս ունի Матер. 45 և կամ առանց սղման *զուքվօր* (անդ՝ 45):

Բառասկզբի *ս*, ինչպէս այլուր, նոյնպէս այստեղ շ է դարձել՝ միայն սեալ>*շէլ* բառի մէջ. բայց նոյն դիրքով *սեալ* մնում է *սէլ*:

Բառավերջի *ս* դարձել է *ց*՝ սաղմոս>*սաղմօց*, *սամօց* բառի մէջ, որ և կայ *սաղմօս* ձևով. անշուշտ այս ձայնափոխութիւնը նմանողութեամբ է միայն՝ հետևելով *Գործոց* (Գործք Առաքելոց), *Ճաշոց*, *Մաշտոց* եկեղեցական գրքերի անուան:

Նոյնպիսի ձայնափոխութիւն ներկայացնում են հին լեզուի մէջ օրհասարակ>*հօրցագ* (ինչպէս ունի Պատկ. Բ. 282, իսկ այժմ *հօրսագ*, *հօրսուցու*) և գիւղերում Ղազարոս>*Խազարօց* յատուկ անունը:

240. Բառասկզբում *վ* միշտ տալիս է *վ*. ինչ. վեց>*վեց*, վատիլ>*վադէլ* «նիհարիլ», վառեակ>*վառէգ* են:

241. Վ նախաձայնը բաղաձայնի մօտ ընկած պարագային երբեմն տալիս է *վ* և երբեմն *ու*.

վիշապ>*\*վշապ* (§ 33)>*ուշաք* (ինչպես կայ այլուր).

վիճակ>*վջագ* (§ 39), բայց չկայ բնաւ *\*ուջագ*.

վճարել>*վջարէլ*, բայց Չալթր-Թոփտի նաև *ուջարէլ*.

վկայ>*վգա*, բայց *Աստուած վկայ* երդմնաձևում լինում է *ուգա*.  
ասում է *Ասվա՛ճուգա*.

վերայ>*վրա*. չկայ բնաւ *\*ուրա*.

վրձին>*վռձին* (§ 173). չկայ *\*ուռձին*.

վտարել>*վդարէլ*. գործ է ածում միայն *վդարէ՛ սա դէդէն* «կորի՛ր այստեղից» դարձուածով:

Վերջին երկուսը շատ հազուադիւս բառեր լինելով կարող են մի կողմ դրուել:

242. Բառի մէջ կամ վերջում *վ* ձայնը գտնւում է կա՛մ բարդ բառերում և կամ միայն *ռ*-ից հետոյ. իսկ ուրիշ ձայնաւորների հետ կազմում է *աւ*, *եաւ*, *էւ*, *իւ*, *ուա* ձևերը՝ որոնք երկբարբառ են բաղաձայնից առաջ, իսկ ձայնաւորի մօտ և բառավերջում ձևացնում են ձայնաւորից ու բաղաձայնից կազմուած խմբեր: Երկբարբառների վրայ խօսել ենք վերևում §§ 75-94: Բաղաձայն լինելու պարագային ունենում ենք միշտ վ. ինչ. ծով>*ձօվ*, կով>*գօվ*, գովել>*գօվէլ*, ժողովել>*ժողվէլ*, աւերել>*աւրէլ*, սովորիլ>*սօրվէնալ*, ով>*վօվ*, շնորհաւոր>*շնաւօր*, պառաւ>*բառաւ*, ձևք-ձևօնք>*ձէվօնք*, հով>*հօվ* «տգեղ», հեալ>*հէվալ*, հիւանդ>*հիվանդ*, հաւասար>*հաւսար*, հաւանիլ>*հաւինէլ*, խռովիլ>*խօռօվէլ*, խորովել>*կտր*. *խօրվից*, խոստովանիլ>*խօստրվանվէլ*, աւելել>*աւլէլ* են:

Բարդ բառերի մէջ մնում է *վ*. ինչ. դարիվեր>*դէրվէր*, դարիվայր>*դէրվար*:

243. Յաջորդական ատամնականի մօտ կորչում է. այսպէս են *առադուն* «առտուն», *ժողոդանք*, *ժողրդանք* «տունը ժողվել-մաքրելը», *ժողօղէլ* «ժողվտել». առաջինը գալիս է *առաւիդուն*>առաւօտուն

ձևից. իսկ միւսները *\*ժողովդանք* > ժողովտանք, *\*ժողովդէլ* > ժողովտել ձևերից. (*առավդուն* ձևը նոյնպէս գործածական է բարբառում, բայց *\*ժողովդէլ* կամ *\*ժողովդանք* չկայ, թէև բայը *ժողվէլ* ձևով է): Վտ խմբով ուրիշ բառ չկայ. ուրիշ բարբառներում գտնուած *պահվտիլ* «պահուիլ» և *հավտալ* «հաւատալ» բառերը այստեղ ուրիշ ձև են ստացած. առաջինը տեղափոխութեամբ եղել է *բօհօղվէլ*, *բօհըղվէլ*, *բօղօղվէլ*, իսկ երկրորդը առանց միջին *ա*-ի կորստեան՝ *հավաղալ*, որով երկուսն էլ գերծ են մնացած նոյն ձայնափոխութիւնից:

Այս կանոնին իբր հաստատութիւն կարող են ծառայել նաև երկու նման պարագաներ, այն է *վթ*, *ֆթ* խմբերի պարզումը *թ*՝ հետևեալ երկու բառերի մէջ. այսպէս՝ *նիսվիթացի* (Նիսվիթա գիւղի բնակիչ) արագ արտասանութեամբ լինում է *նիսթացի* (միջին *ի*-ի անկումով՝ անցնելով *\*նիսվթացի* ձևից) և թուրքերէնից փոխառեալ *քուֆթա*՝ որ քաղաքի հին լեզուով կլինի *քուիթա*, Չալթր *կուտա*: *Ֆթ* խմբի այս ձևափոխութիւնը ընդհանուր չէ սակայն ուրիշ թուրքերէն փոխառութեանց, այնպէս որ առանց փոփոխութեան ունինք *դէֆթէր* «տետրակ», *սիֆթէ* «նախ և առաջ»:

Այստեղ է պատկանում նաև *թօթուէլ* բառը, որ անշուշտ շրջմամբ *\*թօվթել* ձևն ստանալուց յետոյ՝ դարձել է *թօթէլ*՝ գիւղերում և երբեմն նաև քաղաքում՝ «գլուխը շարժել» նշանակութեամբ:

244. Որբնայրի > *օրֆարի* բառի մէջ՝ *վ* միանալով նախորդ *բ*-ի հետ՝ տուել է *ֆ*. սրա վրայ տե՛ս § 103:

245. Ազդուելով նախաձայն *ւ*-ից՝ միջին *վ* դարձել է *ւ*՝ միայն մահուանական > *մահմանական* բառի մէջ. Պօլսի բարբառով կայ սրա պարզ *մահման* < մահուան (սեռ.) ձևը, որ այստեղ գոյութիւն չունի:

## Տ

246. Բառակզբում, ձայնաւորից ու թրթռուն բաղաձայնից յետոյ դառնում է *դ*. ինչ.

Բառի սկիզբը. – տուն > *դուն*, տեղ > *դէդ*, տէր > *դէր*, տղայ > *դղա*:

Բառի մէջ. – մօտիկ > *մօդիգ*, արտասուք > *արդուսունք*, գաղտուկ > *գադդուգ*:

Բառի վերջը.– գանգատ>*գանգադ*, աշակերտ>*աշկէրդ*, աղտ>*աղդ* են:

247. *Ս, շ, խ* ձայներից յետոյ խլանալով՝ մնում է *տ*. ինչ. ապուխտ>*աքուխտ*, աստառ>*աստառ*, քախտ>*քախտ*, բշտել>*բշտէլ*, դատաստան>*դադաստան*, խիստ>*խիստ* «յոյժ», կուշտ>*գուշտ*, կըշտանալ>*քշտանալ*, հանգիստ>*հանքիստ*, հաստ>*հաստ*, հաստատ>*հաստադ*, հրեշտակ>*հրըշտագ*, հացտապակ>*հաստաքագ* «մի տեսակ խմորեղէն» (թէն ասում են *դաքգէլ* «տապակել»), խոստանալ>*խօստանալ*, խոստովանիլ>*խօստըվանվէլ*, սխտոր>*սխտօր*, մուշտակ>*մուշտագ*, յստակել>*ըստըգէլ* «մաքրել, կեղնել», նստիլ>*նստէլ*, ուխտ>*ուխտ*, պաշտել>*քաշտէլ*, տախտակ>*դախտագ*, ստանալ>*ըստանալ*, վաստակիլ>*վաստըգէլ* «շահիլ», ստակ>*ըստագ* «դրամ»:

Տ բաղաձայնի խլութինը արտայայտելու համար է, որ վերոյիշեալ պարագաներում՝ նոր-նախիջնանցի գրողները իրենց տառադարձութեան համեմատ նոյն բառերը շատ անգամ գրում են *թ* տառով. այսպէս տպուած են գտնում «ապուխթ, խիխթ, քշթանալ, ըսթակ, սուխթօր, մուշթակ, նսթած» զանազան թերթերի և գրքերի մէջ:

248. Վերիններից դուրս իբրև խուլ բաղաձայնի մօտ՝ *տ* կայ միայն *ք* ձայնի մօտ՝ հետևեալ օրինակների մէջ, ուր *տ* դառնում է երբեմն *թ* և երբեմն մնում է *տ*. այսպէս են՝ ժաժկտել>*ժաշքըթէլ* (քդ.), *ժաշկտէլ* (Չ.) «շարժել», փոնգտալ>*փոնքտալ*, օգտել>*օքտէլ* «բաւականանալ»:

249. Երկու բաղաձայնի միջև գտնուած պարագային ընկնում է, պայմանով որ առանձին վանկ չլինի կազմած և կամ *ռ* ձայնից չգտնուի անմիջապէս առաջ. ինչ. հպարտանալ>*հաքըրտնալ*>*հաքըրնալ*, Աստուած>*Աստվաձ*>*Ասվաձ*, սեռ. Աստուծոյ>*Աստծու*>*Ասծու*, թօփտեցի «Թոփտի գիղացի»>*թոփտցի*>*թօփցի* (հմմտ. § 35): Բայց կայ քրտնիլ>*քրդընէլ*, մտանել>*մըդնէլ*, գտանել>*գըդնէլ*, ընտրել>*հընդռէլ*, կտրել>*գըդռէլ*, սանտր>*սանդռ*:

Արագաբանութեան պատճառով ջնջուած է *վօ՞ զինա* «ո՞վ գիտե՞» (Չալթր) և *մէքամ* «մէկ հատ մը» ձևերի մէջ:

250. Ք և խ բաղաձայններից անմիջապէս առաջ գտնուած ժամանակ վերածւում է *թ*. ինչ. միտք>*միթք*, աստղ>*ասթխ*, ոտք>*վօթք*,



պարտք>*բարթք*, պետք>*բէթք*, ցատկել>*ցաթքէլ*. սրանց դէմ Չալթրում գտնում ենք *տ*. այսպէս՝ *միտկ*, *աստիս*, *վօտկ*, *բարտկ*, *բէտկ* և *ցատկէլ*:

251. Յաջորդական ջ ձայնի մօտ՝ նմանողութեամբ լինում է ջ. սրա համար ունինք միայն մէկ օրինակ, որ է պատճառ>*բաջջառ* (կայ նաև գրական *բաղջառ* ձևը), իսկ պատժել>*բաջջէլ* բառի մէջ *տժ* խումբը տուած է ջջ: Նոյն խմբերը պարունակող ուրիշ բառ չկայ Նոր-Նախիջևանի բարբառում:

252. Տ ձայնը ազդուելով յաջորդ վանկի ձ բաղաձայնից՝ դարձել է ձ>ժ՝ միայն Աստուծոյ>*Ասձուձու*>*Ասծուձու*, Աստուծմէ>*Աս-ձուձմէ*>*Ասծուձմէ*, Աստուծմով>*Ասձուձմով*>*Ասծուձմով* ձևերի մէջ:

Մասնաւոր պարագայ է Չալթրում գործածական տնագ>*ձնաձ* բառը, որի դէմ քաղաքն ունի կանոնաւոր կերպով *դնազ*. իսկ Փոքր-Սալա *դնաձ*. սրանից երևում է, որ բառի վերջաձայնը նախ դարձել է ձ, որի ազդեցութեամբ էլ յետոյ նախաձայնը եղել է ձ (§ 124):

253. Այս բոլորից դուրս *տ* ձայնի համար գտնում ենք հետևեալ մասնաւոր պարագաները.

տ>*տ*.– սրա համար իբր օրինակ ունինք միայն մի բառ՝ *տանձ*, որ Չալթրում հակառակ կանոնի տալիս է *տանձ*, թէև քաղաքը կանոնաւոր կերպով ունի *դանձ*.

տ>*թ*.– այսպէս ենք գտնում հետևեալ բառերում՝

տափակ>*թափիազ*. այստեղ նախաձայն *տ* ազդուել է յաջորդ *փ*-ից և վերածուել նրա աստիճանին.

տիպար>*թիփարթ*. արդիւնք է յունարէնի կամ իտալերէնի հետ խաչաձևման (§ 224).

փետուր>*թէքուր*. յառաջացած է *փ-տ* ձայների տեղափոխութեամբ (\**տէփուր*) և յետոյ նոյն բաղաձայնների աստիճանները փոխանակելով.

խախտւտ>*խախտլթ*. այսպէս դարձած գտնում ենք երկու տիպարներումն էլ, առանց որոշ պատճառի. որից նաև բայը *խախլթէլ* (միայն Չալթր *խախտէլ*). նոյն վերջաւորութեամբ ուրիշ բառերում կանոնաւոր կերպով գտնում ենք –*ուղ*. ինչ. սուտ>*սուղ*, շոյտ>*շուղ*, պուտ>*բուղ* «կաթիլ», կուտ>*գուղ*.

հպարտ>*հաբարթ*, սաղաւարտ>*սաղավարթ*. այս երկուսն էլ վերջաւորում են -*արտ* յանգով, սակայն այս բանը պատահմունք է միայն. որովհետև նոյն վերջաւորութեամբ ուրիշ բառեր կանոնաւոր են. ինչ. հանդարտ>*հանթարդ* և մարտ>*մառդ* ամսանունը (թուրքերէնից փոխառեալ). -*րտ* խումբը ուրիշ ձայնաւորներից յետոյ ըստ սովորական կանոնի լինում է *րդ*. ինչ. պորտ>*բորդ*, սիրտ>*սիրդ*, ցուրտ>*ցուրդ*, աշակերտ>*աշկերդ*: Նոյն իսկ վերևի բառերի դէմ ունինք Չալթր *տ*-ով *հաբարտ*, *սաղավարտ*. քաղաքում ըստ ումանց *հըմբարդ*.

*տ*>*թթ*. – այսպէս է լինում փոխիլ>*փըթթէլ* (Չալթր *պըտտէլ*) բառի մէջ. այստեղ *տ* ձայնը նախորդ *փ*-ի ազդեցութեամբ դարձել է *թ* և յետոյ սաստկութեան համար կրկնուել է. հմմտ. *ամմէն* «ամենայն» <ամէն: Ճիշտ նոյն ձևով է նաև Պօլսի բարբառում:

## Ը

254. Բառի թէ՛ մէջը և թէ՛ վերջը սովորաբար մնում է անփոփոխ. ինչ. երագ>*էրաձ*, ալիւր>*ալուր*, ջուր>*ջուր*, չօր>*չօր*, արին>*արուն*, ի վերայ>*վրա*:

255. Ատամնական *դ*, *տ*, *թ* և ճչական *ձ* (*ց*) ձայներից անմիջապէս յետոյ եկող *ր* դառնում է *ռ*. այսպէս են ընտրել>*հընդռէլ*, դադարել>*դադրել*>*թարթռէլ* (քդ.), *տատռէլ* (Չ.), ծոթրին>*ցէթռին* (քդ.), *ծետռին* (Չ.), կտրել>*գդռէլ*, կտրիճ>*գըդռիջ* «քաջ երիտասարդ», լնդերք>*լնդռէնք* (քդ.), *լզդռէնք* (Չ.), մանր>*մանդր*>*մանդռ*, ծանր>*ծանդր*>*ձանդռ*, սանտր>*սանդռ*, Պետրոս>*Բէդրոս*, շատրուան>*շադըռվան*, սպրդել>*\*սպդդրել*>*սփթռէլ* (քդ.), *սպտռէլ* (Չ.), բարձր>*բացռ*, բարձրանալ>*բացըռնալ*, թանձր>*թանձռ* (Թոփտի *թանդռ*) «հաստ»:

Մեղադրել>*քդ*. *մէխթրէլ*, *մէխտրէլ*, Չ. *մէխտրէլ* բառի մէջ այս ձայնափոխութիւնը տեղի ունեցած չէ. նոյնպէս է *ռլորել* բառը՝ որ քաղաքում ունի *օլդըրէլ* ձևը, իսկ Չալթրում կանոնաւոր կերպով *օլդըրէլ*:

Խնդրել>*խնթրէլ* բառը գրական փոխառութիւն է և օրէնքին չի հպատակում:

Օրէնքը այնպէս հաստատուն է, որ երբ որևիցէ մի պատճառով ատամնականը հեռանայ, նախկին *ր* նորից երևան կգայ. այս-

պէս թէն ունինք դադարել>թաթոնէ, տատոնէ, բայց դադար>տատար, դադարութիւն>տատուրտին (Չալթր):

256. Ատամնական *դ, թ* ձայներից անմիջապէս առաջ գրտնուած *ր* երկու տեսակ ձայնափոխութեան է ենթարկուում. *րդ, րթ* խմբերը հաւասարապէս տալիս են քաղաքի հին լեզուում *րթ*, նոր լեզուում *շթ*, իսկ Չալթրի շրջանում *րդ* տալիս է հին լեզուում *րտ*, նոր լեզուում *շտ*, բայց *րթ* տալիս է հին լեզուում *րթ*, նոր լեզուում *շտ*: Սակայն ամեն պարագայի մէջ էլ Չալթրի տիպարի համար բառավերջի *րթ* խումբը տանելի չէ և նրա տեղ գտնուում ենք միշտ *րտ*: Այսպէս՝

րդ>*րթ, շթ* (քաղաքը), *րտ, շտ* (Չալթր).– արդար>*արթար, աշթար, արտար, աշտար*, բուրդ>*բուրթ, բուշթ, պուրտ, պուշտ*, բրդել>*փրթէլ, փշթէլ, պրտէլ, պշտէլ*, երդումն>*էրթում, էշթում, էրտում, էշտում*, լեարդ>*լէրթ, լէշթ, լէրտ, լէշտ*, կարդալ>*գարթալ, գաշթալ, կարտալ, կաշտալ*, հաղորդել>*հաղորթվել, հաղօշթվել, հաղօրտվել, հաղօշտվել*, մակարդ>*մագարթ, մագաշթ, մագարտ, մագաշտ*, մարդ>*մարթ, մաշթ, մարտ, մաշտ*, յարդ>*էրտ, էշտ* (քաղաքում գործածական չէ), որդի>*օրթի, օշթի, օրտի, օշտի*, որդն>*վօրթ, վօշթ, վօրտ, վօշտ*, ուղղորդ>*խօրթ, խօշթ, խօրտ, խօշտ*, ջարդել>*ջարթէլ, ջաշթէլ, ճարտէլ, ճաշտէլ*, վարդ>*վարթ, վաշթ, վարտ, վաշտ*, վարդավառ>*վարթէվօր, վաշթէվօր, վարտէվօր, վաշտէվօր*, վարդապետ>*վարթաբէդ, վաշթաբէդ, վարտաբէդ, վաշտաբէդ*.

րթ>*րթ, շթ* (քաղաքը), *րթ, շտ* (Չալթր).– արթուն>*արթուն, աշտուն* «աչալուրջ» (գործածական է միայն Չալթր), գարթուն>*գարթուն, գաշթուն, գարթուն, գաշտուն* (թէ՛ քաղաքում և թէ՛ գիւղերում գործածական է «չքնած» նշանակութեամբ), երթալ>*էրթալ, էշթալ, էրթալ, էշտալ*, մորթել>*մօրթէլ, մօշթէլ, մօրթէլ, մօշտէլ*, հորթ>*ֆօրտ, ֆօշտ* (քաղաքում սրա տեղ գործ են ածում թուրքերէնից փոխառեալ *բուզօվ* բառը), քերթել>*քէրթէլ, քէշթէլ, քէրթէլ, քէշտէլ*:

Այս փոփոխութեան ենթարկուած չեն շուրթն>*շուրթ* «ամանի կամ սեղանի եզերքը», թրթուր>*թուրթուր*, ծառգարդար>*գարգարթար*, յորդորիլ>*օրթօրէլ* «առատանալ» («ջուրի պէս յորդորիս» օրինէնքում միայն), յորդորցնել>*օրթօրցնէլ* «լուն ուղտ շինել, մի բան շատ մեծացնել»: Առաջինը նախաձայն *շ*-ի պատճառաւ՝ կրկին

շ-երից խուսափելով, միսները *թար, գար, օր* վանկերից ազդուելով, որոնց մեջ *ր* ձայնի գոյութիւնը բնական է:

Գրականից փոխառեալ են ժողովուրդ>*ժողովուրթ* (քղ.), *ժողովուրտ, ժողովօրտ* (Չ.), խորհուրդ>*խօրուրթ* (քղ.), *խօրուրտ* (Չ.) բառերը, ուստի և շ-ով ձևեր չունին:

*Մպրդել* բառը տեղափոխութեամբ դարձել է քաղաքում *սփթռել* (Չ. *սպտռել*), որով ատամնականը *ր*-ից առաջ անցնելով՝ շ ձայնը չի ձևացած, այլ *դ* սովորականին՝ իբրև *ր*-ին յաջորդող թրթռուն բաղաձայն՝ վերածուած է շնչել խուլի:

*Խրթին* բառը հնչուելով *խոթին* (*ռ*-ով) այս րթ>*շտ* ձայնափոխութեան չի ենթարկուած:

257. Նոյնպիսի ձայնափոխութիւն տեղի է ունենում նաև րջ>*րճ* խմբի մեջ, որ տալիս է *շճ*. սրա համար ունինք միայն երկու օրինակ, որ է թրջել>*թրշէլ* և շրջել>*գրշէլ*. Բայց Չալթրի տիպարում առաջինը *տրճէլ, տշճէլ* (§ 265), երկրորդը *գշճէլ, ժշճէլ* (§ 209):

*Կարճ* բառը ստանալով *գարջ* ձևը՝ *րճ* ձայնախումբը ջնջուած է և հետևաբար այս օրէնքին չի ենթարկուում: Նոյնպէս է նաև որոճալ>*որճալ*>*գօռջալ* բառը Թոփտիի շրջանում, ուր *րճ* դառնալով *ռջ*՝ ի սպառ հեռացած է վերևի պայմանից: Արջառ>*աշառ* բառի մեջ *ր* ջնջուելով՝ այլևս *րջ* խումբը մնացած չէ:

Ուրիշ նման խմբով բառ չկայ Նոր-Նախիջևանի բարբառում:

258. Հակառակ *րդ, րթ* ձայնական խմբերի վիճակին՝ *րտ* դառնում է միայն *րդ, րթ, րտ* և շ ձայնը չի ձևանում. այսպէս՝ աշակերտ >*աշկէրդ, վարտիք*>*վարդիք, քրտինք*>*քրդինք, քրտնել*>*քրդընէլ, ամբարտաւան*>*ամփարդավան, պարտք* >*բարթք* (քղ.), *բարտկ* (Չ.), պորտ>*բօրդ, մկրտել*>*մըզըրդէլ, հանդարտ*>*հանթարդ, մարտ* (ամփսը)>*մարդ* (քղ.), *մառդ* (Չ.), սաղաւարտ>*սաղավարթ* (Չ. *սաղավարտ*), արտասուք>*արդուսունք, լնտերք*>*լրդէնք, սիրտ*>*սիրդ, հպարտ*>*հաբարթ, դատարկ*>*դարտակ*>*դարդագ, ցուրտ*>*ցուրդ*:

Միայն ուրտեղ>*վրդէխ* ձևի մեջ *ր* արագաբանութեան պատճառաւ ջնջուած է. (Խրիմում կայ *վըրդէխ. հմմտ. Խրիմու առակներ, էջ 12 և 15*):

259. Բառասկզբի *ի* և *է* ձայնաւորների միջև գտնուած *ր* լինում է *ժ* և նախորդ *ի* ձայնաւորն էլ կորչում է. այսպէս են՝ երեք>*իրէք*>

*ժէք*, իւրեան>*իրէն*>*ժէն*, իւրեանք>*իրէնք*>*ժէնք*, իւրեանց>*իրէնց*>*ժէնց* (հմմտ. § 33):

260. *Ժ* ձայնից առաջ գտնուած *ը* ընկնում է. ինչ. արժան>*արժան*, արժել>*արժէ*, բարժանել>*բարժնէլ*, շարժել>*ժարժէլ*, կարծ-պանիր> *գարժ-բէնիր* (գիւղերում ժողովրդական ստուգաբանութեամբ *գարշ-պանիր*), վարժապետ>*վարժաբէդ*, *վարժէդ*, վարժատուն>*վարժադուն*, վարժիլ>*վարժըվէլ* (թէն իբր գրական ձև գործ է ածւում նաև *վարժըրվէլ* կամ *վարջըրվէլ*):

261. *Ս* ձայնից առաջ *ը* ընկել է՝ մրսել>*մսէլ*, չորսդին>*չօսսդին* (Չ.), ներքս>*նէս*, դուրս>*դուս* բառերի մէջ. բայց ուրիշ տեղեր մնում է անկորուստ. ինչ. մարսել>*մարսէլ*, հարսն>*հարս*, հարսանիք>*հարսանիք* (բայց գիւղերում *հասնիք*), սարսատիլ>*սարսըդէլ* «մի քիչ չորանալ» և նոյն իսկ չորս>*չօրս* (որի դէմ սակայն Խրիմում գտնում ենք *չօս*):

Շատ հետաքրքրական է *մսուր* բառի մէջ *ը* ձայնի անկումը. այս բառը գիւղերում գործ է ածւում *մուսուրք* ձևով, իսկ քաղաքում գտնում ենք *մուսլուխ*: Վերջինը հետևեալ ձևով է կազմուած. նախ թուրքերէնը փոխ է առել հայերէնից մսուր>\**մուսուր* բառը՝ աւելացնելով թուրքերէնի -լուխ մասնիկը (տեղ ցոյց տուող), որով \**մուսուրլուխ*, միջին ձայնաւորի կորուստով \**մուսըլուխ* և *ս*-ի տեղափոխութեամբ *\*մուրսլուխ*, որից էլ *ը*-ի անկումով *մուսլուխ*: Կարող է լինել որ այս բոլոր ձայնափոխութիւնները տեղի ունեցած լինեն թուրքերէնի մէջ նախ և յետոյ էլ պատրաստ անցած հայերէնի. կարող է լինել որ ընդհակառակը ամէն ինչ հայերէնի մէջ կատարուած լինի և վերջապէս կարող է լինել, որ ձայնափոխութիւնները թուրքերէնի մէջ սկսած և հետոյ հայերէնի մէջ վերջացած լինեն: Խրիմի թուրքերէնի մէջ *մուսուրլուխ* ձևի գոյութեան իբր ապացոյց են ծանայում Կարնոյ թրք. բարբառով müsürlük (Բիւրակն 1898, 627) և Եւդոկիոյ թրք. բարբառով musurluk «մսուր» (Յուշարձան, էջ 330 ր):

*Ս*-ի մօտ *ը*-ի անկում տեղի չի ունեցած մարսել>*մարսէլ*, *մասրէլ*, մոսրել>*մօրսէլ*, *մօսրէլ* «շփել» բառերի մէջ՝ թերևս իրենց կրկնակաների պատճառաւ:

262. *Շ* ձայնից առաջ *ը* ընկած է *փշրանք* բառի մէջ. այս բառը բարբառում ստացել է նախ երկու ձև՝ *փշրանք* և շրջմամբ՝ *փրշանք*

(հմմտ. Պլ. *փրշանք*): Առաջինը պահուած է անփոփոխ. երկրորդը դարձել է *փշանք*. և այս երկու ձևերը իրար մօտ գոյութիւն ունին այսօր բարբառիս մէջ: Սրա համեմատ ասում է նաև *փշուգաբուր* կամ *փուշուրուգաբուր* < փշրուկ-ապուր. բայց կայ միայն *փշրել* և ոչ *փշել*:

Ուրիշ տեղ շ-ի մօտ *ր* չէ ընկած. ինչ. հրեշտակ > *հրշտագ*, գարշելի > *գարշէլի* (Չ. *կառշէլի*):

263. Ը ընկած է նաև որբնայրի > *օրֆարի*, *օֆարի* (§ 103), օրհասարակ > *հօրսագ*, արջառ > *աջառ*, *աճառ*, բարձր > *բացո* (§ 255), երբ > *յէփ*, սուրբ > *սուրփ*, *սուփ* (բայց լիբբ > *լէրփ*), մէկ կտոր մը > *մէդօմբ*, չարչրկել > *չարչրգէլ*, հրամայեցէք > *համէցէք*, հրամայէ > *համէ՛*, որձկալ > *օձգալ* (աւելի շատ *օրձգալ*, *գօրձգալ*), ջրադացք > *ջադացք* բաների մէջ: Այս բոլորը բաղաձայնների խոնումից խուսափելու նպատակով յառաջացած սղումներ են, բացի *համէցէք*, *համէ*, *մէդօմբ* բառերից, որ արդիւնք են արագաբանութեան:

264. Ը ռնգականի մօտ՝ երկու է-ի միջև՝ կակղելով դառնում է *յ*. սրա համար իբր օրինակ ունինք՝ էրնել > *էյնէլ* «ցորենը հոսել», որ իբրև գիւղի կեանքին յատուկ բառ՝ գործածական է միայն Չալթրթոփտի շրջանում, և \*երանեակ > էրնէկ > *էյնէգ*՝ որ գործածական է քաղաքի հնագոյն լեզուի մէջ. նորերը, ինչպէս նաև գիւղացիք, գործ են ածում *էրնէգ*: Ուրիշ ձայնաւորի մօտ *ր* ձայնի մեղմացման այսպիսի դէպքեր չեն պատահում. հմմտ. գարկանել > *գարնէլ*, կարենալ > *գարնալ*, գրրնալ, հպարտանալ > *հաբըրնալ*:

265. Ու ձայնաւորից յետոյ և չ բաղաձայնից առաջ՝ *ր* ձայնը ուժովնալով՝ լինում է *ռ*. սրա համար ունինք երկու լաւ օրինակ. այն է քուրջ > *քուռչ*, մրջին > *մուռչում*, մինչև անգամ շուրջառ > *սուռչալ*, *սուռչար*: Ուրիշ ձայնաւորից յետոյ չ-ի մօտ նոյն ձայնափոխութիւնը տեղի ունեցած չէ. ինչ. վերջ > *վէրչ*, շրջել > *գրչէլ* «տապալել», փարչ > *փարչ*, թրջել > *թրչէլ*. – (այս երկուսի դէմ Չալթր ունի *գշճէլ*, *ժշճէլ* և *տրճէլ*, *տշճէլ* ձևերը, որոնց մէջ *ր* դարձել է շ. հմմտ. § 257), արջառ > *աջառ*:

266. Ղ բաղաձայնի մօտ նոյնպէս զօրանալով դառնում է *ռ*. սրա համար ունինք հին հայերէնից միայն մէկ լաւ օրինակ, որ է մեղր > մէրդ > *մէռդ* և գւռ. խարխնծի > *խառղըզի*, որ գործածական է

Չալթրի մէջ (սրա դէմ քաղաքն ունի *խառխաղի* ձևը): Նոյն օրէնքը հաստատելու համար իբր օրինակ կարող են ծառայել նաև թուրքերէնից փոխառեալ *բուռդու* «գշիր, ծակիչ», *խառդա* «ագռաւ» նն բառերը, որոնց մէջ պարզ *ր*-ի տեղ գտնուում ենք միշտ ուժեղացած *ռ*:

267. Ը ձայնաւորից յետոյ և *ճ* բաղաձայնից առաջ *ր* նոյնպէս ուժեղանում և լինում է *ռ*. սրա համար ունինք երկու օրինակ. այն է՝ կրծել>*գըռձէլ* և վրձին>*վըռձին* (վերջինիս մասին տես § 173): Ուրիշ ձայնաւորներից յետոյ գտնուած *ր* ձայնը *ճ*-ի մօտ նոյն փոփոխութիւնը չի կրում. ինչ. արածել>*արձէլ*, գործ>*քօրձ*, գործել>*գօրձէլ* «հիւսել», կործանիլ>*գօրձանկէլ*. նոյնպէս գրաբարի այն *րձ* խմբերը՝ որոնք բարբառում ստացել են ուրիշ ձև. ինչ. դերձան>*թէրցան*, վարձք>*վարցք*, բարձ>*բարց*, արձակել>*արցըզէլ*:

268. Երեսուն>*էռսուն*, դարձայ>*դառցա*, բուրվառ>*փուռվառ* բառերի մէջ *ր* ուժովնալով եղել է *ռ*՝ ո՛չ թէ ձայնական պատճառներով, այլ զուտ նմանողութեամբ՝ առաջինը քառասուն>*քառսուն* թուականից, երկրորդը՝ *դառնալ* անորոշ եղանակից, վերջինը՝ երկրորդ վանկի *ռ* բաղաձայնից ազդուելով:

269. Ը ձայնը ուժեղացած է նաև խորունկ>*խօռունգ* (այսպէս է Չալթրում, իսկ քաղաքը *ր*-ով *խօրունգ*), խրթին>*խրթին*, գարշելի>*կառշէլի* (այսպէս Չալթր, իսկ քաղաքը *գարշէլի*), ծարաւ>*ճառաւ*, կատար>*գադառք* «հաւի կատար», ոսկր>*օսկօռ*, ապարանջան>*աքոջան* բառերի մէջ: Սրանցից առաջին չորսի մէջ անշուշտ այս ձայնափոխութիւնը կատարուած է իմաստին սաստկութիւն տալու համար, միւսները անյայտ պատճառով: Վերջինին համար հմմտ. § 202:

Թուրքերէնից փոխառեալ է *մառդ* «մարտ» ամսանունը (Չալթրը), այնպէս որ սրա մէջ *ր*>*ռ* ձայնափոխութիւնը առ երևոյթս է:

Անյայտ է նոյնպէս *ր*>*ռ* ձայնափոխութեան պատճառը որոճալ >որճալ>*գօռջալ* ձևի մէջ՝ որ գործածական է Թոփտի և Չալթր:

270. Ը հ խումբը բառավերջում ջնջուում է. այսպէս է ճանպարհ >*ջանկիա* (§ 220). իբրև գրականից փոխառեալ՝ պահուած է խոնարի>*խօնար* բառի մէջ, իսկ յաջորդ *ք*-ից պահպանուելով՝ նոյնպէս մնացել է աշխարհք>*աշխարք*, շնորհք>*շնորք* բառերի մէջ:

Բառամիջին՝ ձայնատրի մօտ՝ մնացել է միայն *հ* շունչը կորցնելով՝ խորհուրդ>*խօրուրթ* բառի մեջ, որ թերևս գրական փոխառութիւն է միայն: Յաջորդական *ն*-ի մօտ պահուած և աւելի է զօրացած՝ *ր* վերածելով *ռ* և *հ* շունչն էլ դարձնելով *թ*. այսպէս է օրհնել>*օռհնէլ* (Չալթր), *օռթնէլ* (քաղաքը): Վերջապէս արագաբանութեան պատճառով բոլորովին ջնջուել է շնորհաւոր>*շնավօր* բառի մեջ:

*Ջրհոր* բառի ձայնափոխութեան վրայ տե՛ս § 159:

Բառավերջի *ր* ևս ընկնում է *հարհւր* բառի մեջ՝ արագ արտասանութեան ժամանակ. այսպէս՝ *հար'դասը* «հարիւր տասը», *հար'իսուն* «հարիւր յիսուն», *հարու'մանէթ* «հարիւր ռուբլի»:

### 3

271. Առհասարակ ամէն դիրքի մեջ էլ մնում է *ց*. ինչ.

Բառի սկիզբը.-*ց*ած>*ցաձ*, *ց*անել>*ցանէլ*, *ց*որեան>*ցօրէն*, *ց*նկնել>*ցըննէլ*:

Բառի մեջ՝ երկու ձայնատրի միջև կամ *ն*, *ր* բաղաձայններից յետոյ. ինչ. *գ*րուցել>*գուրուցէլ*, *գ*իւղացի>*գէղացի*, անցանել>*անցնէլ*, *ց*անցաւ>*ցանցաւ*, *հարցանել*>*հարցընէլ*, *կցել*>*գցէլ*, *վերացուցանել*>*վէրցընէլ*, *կորուսանել*>*գօրցըվէլ*:

Բառի վերջը՝ ձայնատրից կամ *ն*-ից յետոյ. ինչ. *հաց*>*հաց*, *ծոց*>*ձօց*, *թաց*>*թաց*, *վեց*>*վէց*, առանց>*առանց*:

272. Խուլ բաղաձայնների մօտ քիչ անգամ է պատահում և այս պարագային քաղաքը տալիս է *ց*, Չալթր *ծ*. ինչ. քաղցնուլ>*քախցընալ*, *քախծընալ*, քաղաքացի>*քախքըրցի*, *քախկըծի*, ամաչեցի>*ամըշցա*, *ամըշծա*, փայտացայ>*փատցա*, *փատծա*:

273. Բաղաձայնից անմիջապէս առաջ գտնուած ժամանակ *ց* երբեմն դառնում է *ս*, բայց երբեմն էլ մնում է անփոփոխ (այս օրէնքի մասին հմմտ. § 200). ինչ. աղուհացք «մեծ պահք»>*ախասք* (որ սակայն *ախացք* ձևով էլ գործածական է), *հացտապակ*>*հաստաբագ* «մի տեսակ խմորեղէն», դիմացդէմ>*դիմասդէմ* «դէմ առ դէմ», բայց կտուց>*գուղուցք* (Չ. *գուղուծկ*) «հաւի կտուց», անցանել>*անցնէլ*:



274. *Ջրաղաց* բառի մեջ՝ *ջ* ձայնը նախաձայն *ջ*-ի կամ *ճ*-ի ազդեցությամբ վերածուած է *չ* կամ *ճ* այսպէս՝ *ջաղաչք*, *Չալթր ճահաճկ*:

Փ

275. Ամէն դիրքի մեջ էլ անփոփոխ է մնում. ինչ.

Բառի սկիզբը.– փայտ>*փառ*, փեսայ>*փէսա*, փսիսել>*փիսսել*, փուշ>*փուշ*:

Բառի մեջ.– թափել>*թափէլ*, խափանել>*խափանէլ*, շփել>*շփէլ*:

Բառի վերջը.– եփ>*յէփ*, թեփ>*թէփ*, խուփ>*խուփ*, ծեփ>*ձէփ*, շերեփ>*շէրէփ*, չափ>*չափ*, սարսափ>*սարսափ* «սարսափելի»:

276. *Չալթրի* մեջ նախաձայն *չի*՝ յաջորդ բաղաձայնի ազդեցությամբ շունչը կորցնելով վերածուել է *պ*-ի՝ փլչել>*պլճէլ* (կայ միայն անէծքներում), փտիլ>*պտտէլ* բառերի մեջ:

277. Փետուր>*թէքուր* բառի մեջ տեղափոխուած են *չի* և *տ*, և իրարի աստիճան ստացած. սրանով *չի* դարձել է *թ*:

278. *Փ* դարձել է *բ*՝ թափօր>*թաքուր* բառի մեջ. բայց սա ուրիշ բան չէ՝ եթէ ոչ թրք. tabur «խումբ, վաշտ» բառը, որ փոխառութեամբ անցել է Նոր-Նախիջևանի բարբառին և խաչաձևման օրէնքով էլ ստացել է այս նշանակութիւնը: Ըստ այսմ նկատուած ձայնափոխութիւնը զուտ ձայնաբանական չէ:

Ք

279. Ամէն դիրքով էլ սովորաբար մնում է *ք*. ինչ.

Բառի սկիզբը.– քառասուն>*քառսուն*, քար>*քար*, քսան>*քսան*, քուն>*քուն*:

Բառի մեջ.– շաքար>*շաքար*, աղքատ>*ախքառ*, քրքրել>*քրքրէլ*:

Բառի վերջը.– աղիք>*աղէք*, ոլոք>*օլօք*, շուք>*շուք*, յօնք>*ունք*, շնորհք>*շնօրք*:

280. Երբեակ բաղաձայնների խմբի մեջ՝ արտասանութեան դիրքութեան համար ք ընկնում է. ինչ. ի ներքս>*նէս*, պէտք չէ>*բէտ չէ* (թէն առանձին ասում է *բէթք* «պէտք»): Սակայն մնում է կուրծք>*գուրցք*, ինչպէս և պարտք>*բարթք*, վարձք>*վարցք* բառերի մեջ:

Առանձնապես հետաքրքրական է թրք. beksimed «պաքսիմատ» բառը՝ որ բարբառիս անցնելով դարձել է նախ *\*բէքսիմէթ*, յետոյ միջին *ի* ձայնաւորի անկումով *\*բէքսմէթ* (§ 35) և վերջապես *ք*-ի անկումով *բէսմէթ*:

281. Ուլունք>*հիլուն*, *հիւլին* բառի մէջ՝ բառավերջի *ք*, որ գրաբարի յոգնակերտ նշանն է, չգիտեմ ինչ պատճառով ջնջուած է. այսպիսով ստացուած է մի տարօրինակ երևոյթ.՝ յոգնակի՝ առանց յոգնակիի նշանի:

282. Կնքահայր>*գընգահար* (քղ.), *գընգըհար* (շ.) բառի մէջ նախաձայն *գ*-ի և միանգամայն նախորդ *ն*-ի ազդեցութեամբ *ք* դարձել է *գ*. Թէև ասուում է կնունք>*գունունք* և մինչև անգամ կնքամայր>*գնքամար*:

283. Վերջաձայն *ք* դարձել է *գ*՝ նաւակատիք>*նավագաղիգ*, հնհնութք>*հունհունուգ*, *հումհումունգ* բառերի մէջ. առաջինը անշուշտ զատիկ>*գաղիգ* բառի նմանութեամբ և երկրորդը *-ուք* վերջաւորութիւնը *ուկ*, *ունկ* նուագական մասնիկի հետ շփոթելով:

284. Մձայնից յետոյ *ք* նրբանալով հնչւում է *կ*. այսպէս է խօսք>*խօսկ* բառը.՝ *սք* խումբը պարունակող ուրիշ բառ չկայ Նոր-Նախիջևանի բարբառում:

285. Խուլ և շնչեղ խուլ բաղաձայններից յետոյ գտնուած Ժամանակ՝ Չալթրի տիպարում, կրկին շնչի խնայողութեան համար *ք* դառնում է *կ*, նոյն աստիճանին վերածելով նաև նախորդ շնչեղը. այսպէս՝ թք>*տկ*, խք>*խկ*, ծք>*ծկ*, դք>*խք*>*խկ*, ճք>*ճկ*, շք>*շկ*, չք>*ճկ*, ջք>*չք*>*ճկ*, տք>*տկ*, ցք>*ծկ*. ինչ.

թք>*տկ* .- աղօթք>*աղօտկ*

խք>*խկ* .- դժոխք>*տժօխկ*

ծք>*ծկ* .- անէծք>*անէծկ*, կուրծք>*գուրծկ*

դք>*խք*>*խկ*.- աղքատ>*ախկաղ*, ճեղք>*ջըխկ*, քաղաքացի>*քախկըծի*, մեղք>*մէխկ*

ճք>*ճկ* .- ճօճք>*ջօճկ*

շք>*շկ* .- հրաշք>*հրաշկ*

չք>*ճկ*.- աչք>*աճկ*, ջրաղացք>*ջաղաչք*>*ճաղաճկ*

ջք>*չք*>*ճկ* .- մէջք>*մէճկ*

տք>տկ.– միտք>միտկ, ոտք>վօտկ, պարտք>բարտկ, պետք>բէտկ

ցք>ծկ.– կտուցք>գուդուծկ, ձգել>ցքել>ծկէլ, վարձք>վարցք>վարծկ:

Այս բոլորի դէմ քաղաքի տիպարն ունի *ք*՝ նախորդ շնչեղ խուլ բաղաձայնով. այսպէս՝ *աղօթք, թծօխք, անէցք, գուրցք, ախքաղ, ջըխք, մէխք, ջօջք, հրաշք, աչք, ջաղաչք, մէչք, միթք, վօթք, բարթք, բէթք, գուդուցք, ցքէլ, վարցք*:

Անյայտ պատճառներով *ք* դարձել է *կ*՝ նաև հետևեալ բառերի մէջ. բաղանիք>պաղնիկ, բանալիք>պալլիկ, բերանք>պէրանկ «անգիր սովորելը», բուք>պուկ «ձիւն», մեք>մենք>մինկ, գիրք>կիրկ, ձեռք>ձէռկ, քահանայ>կհանա: Այս բոլորը Չալթրի տիպարումն են, որոնց դէմ քաղաքը հանում է սովորական *ք*-ով ձևեր. այսպէս են՝ *բաղնիք, բալլիք, բէրանք, փուք, մէնք, քիրք, ձէռք, քահանա*:

## Տեղափոխութիւն

286. Բաղաձայնների տեղափոխութիւն տեղի է ունենում սովորաբար *յ*-ով կազմուած խմբերի մէջ. ինչ.

թխ>խտ.– թաթախել>թաթխել>թախտել

խս>սխ.– խստոր>սխտօր

սխ>խս.– փսխել>փխսել

շխ>խշ.– բաշխել>բախշէլ, որ սակայն թուրքերէնի ազդեցութեամբ է. այլուր *շխ* ներկայանում է կրկին ձևերով էլ. ինչ. աշխատիլ> աշխադէլ (Խրիմում կայ *ախշադէլ*), աշխարհք>աշխարք, բայց և *ախշարք* (Պատկ. Բ. էջ 278), Նախիջևան>Նախշվան և Նաշխվան, թրք. *aşxana*>ախշանա «խոհանոց»<sup>4</sup>, նշխարք>նշխարք, նիխշարք. նոյն իսկ վերի բառը գործածական է նաև *բաշխէլ* ձևով:

287. Երկրորդ տեղը բռնում են *ր, ռ* բաղաձայններով կազմուած խմբերը, յարակից կամ հեռու. այսպէս՝ ոլոռն>ռռնէլ (Չալթրի

<sup>4</sup> *Aşxana*-ն թուրքերէնն էլ իր հերթին փոխառել է պարսկերէնից. կազմուած է պարսկերէն *آش* *aš* («ճաշ, ուտեստ») և *خانه* *xane* («տուն») արմատներից, բառացի՝ «ճաշատուն, ճաշասենյակ» (ծանօթ. խմբ.):

մէջ *ուլէռ*), մեղր>*մէռդ*, օրհասարակ>*հօրսագ*, մարսել>*մասրէլ*, մարսական>*մասրական*, գռ. մոսրել>*մօսրէլ*, *մօրսէլ* «մաժել, շփել», աւերել>*աւրէլ*, *արվէլ*, դատարկ>*դարդագ*, արձակել>*աձկրէլ* (Չ.), սովորել>*սօրվէնայ*, ծանրութիւն, դադարութիւն>*ձանդուրտին*, *տատուրտին* (Չ.), սպրդել>*սփթռէլ* (քղ.), *սպտռէլ* (Չ.):

Հետաքրքրական է յատկապէս *լինդ*, յգ. *լնդերք* բառը, որ այս բարբառում ստացել է բազմազան ձևեր. այսպէս՝ քաղաքի զանազան ընտանիքներում գտել եմ *լնդէռք*, *լրդէնք*, *լընդռէնք*, *նընդռէնք*, *ընդռէնք* ձևերը, իսկ Չալթրի շրջանում յաւելմամբ *լրզդրռէնք* (անշուշտ կապելով *լիզէլ* և *լէզու* բառերի հետ):

Ուրիշ բաղաձայններով տեղափոխութեան օրինակ են՝ ա-կանջ>*անգաջ*, թնձկալ>*թնզգալ* (Չալթր), աւելել>*աւլլէլ*, *աւլվէլ*, անալի>*անլի*, *ալնի*, մէկգմէկի>*մէմէզգի*, փետուր>*թէքուր* (§ 253), հարսանիք>*հարսնիք*, բայց Խրիմում՝ *հարսինք* (Նաւասարդեան, Հեքիաթներ, հտ. Է, էջ 56):

*Կդպէլ*, *կդպանք* բառերի դէմ Նոր-Նախիջևանի բարբառն ունի *գրդէլ*, *գրդաք* ձևերը, որոնք սակայն աւելի համաձայն են արաբ. قُذِف «փականք» մայր ձևին:

## Յաւելում

288. Յաւելումների մէջ առաջին տեղը բռնում է բառակցքի *հ* ձայնը, որ գրաբարի համեմատութեամբ գտնում ենք մի քանի բառերի մէջ. ինչ. ազանել>*հաքնէլ*, արբենալ>*հարփէլ*, ընտրել>*հընդռէլ*, ուլունք>*հիլուն*, ունդ>*հունդ*, որթ>հորթ>*ֆօշտ*: Սրանցից *արբենալ* = լտ. sorbeo, լիթ. sreibù, հւլ. srūbati, *որթ* = յն. πόρτις, սանս. pr̥thuka համեմատութիւնները ցոյց են տալիս՝ որ զաւառականները իրենց նախաձայն *հ*-ով ներկայացնում են աւելի հնագոյն մի ձև՝ որ գրաբարը չգիտէ: Ըստ այսմ նախաձայն *հ*-ի յաւելման խնդիրը դառնում է կասկածելի և պէտք է իւրաքանչիւր բառի համար կատարել առանձին քննութիւն՝ հաստատելու համար թէ ո՞րն է աւելի նախնական, գրաբարի՞ ձևը, թէ՞ բարբառային ձևը՝ իր նախաձայն *հ*-ով:

289. Մի քանի բայական ձևերի ծայրին աւելացած ենք գտնում *զ* ձայնը. այսպէս են՝ եռալ>*գէռալ* «մարմինը քոր գալ, մարմաջել», յօրանջել>*օրինջդալ*, բայց նաև *գօրինջդալ*, ործկալ>*օրձգալ*, բայց Չալթր *գօրձգալ*, որոճալ>*գօռջալ* (Թոփտի): Մրանք ձայնական պայմանների արդիւնք չեն, այլ պարզապէս ներկայացնում են սահմանականի *կը* մասնիկը՝ որ բայերի միւս ժամանակների վրայ էլ կցուած է՝ արմատական համարուելով: Այսպէս է նաև եռալ> Պլ. *գէռալ*, աղնձիլ> Զթ. *գաղնձիլ* «մարմաջել», որոճալ> Ասլ. *գէօռջալ*, ործկալ> Հմշ. *գօյձգալ*:

290. *Նր*, *լր* խմբի մէջ սովորաբար զարգանում է *ղ* ատամնականը՝ որի ազդեցութեան տակ *ր* ձայնն էլ դառնում է *ռ*. ինչ. ծանր> *ձանդռ*, մանր> *մանդռ*, ոլորել> *օլղրէլ* (քղ.), *օլղրռէլ* (Չ.):

291. *Ըհն* խմբի մէջ զարգացել է *թ* ձայնը, որ կարող է *հ*-ի և *ն*-ի փոխանցիչ կապը համարուիլ, ինչպէս որ ուրիշ տեղ նոյնի փոխարէն գտնում ենք *շ*. այսպէս՝ օրհնել>Չ. *օռհնէլ*, Ննխ. *օթնէլ*, Խրբ. *օռշնիլ*: Հմմտ. նաև § 270:

292. Մի խումբ բառերի մէջ, յատկապէս *չ*, *ճ*, *ք* բաղաձայններինց առաջ զարգանում է աւելորդ *ն* ձայնը՝ առանց որոշ կանոնի. ինչ. արտասուք>*արդոստունք*, ամաչել>*ամընչնալ*, դու>*դուն*, դրացի>*դիրացին*, իջանել>*ինչնէլ*, լի(ք)>*իլինք*, լստերք>*լընդռէնք* (§ 287), լուսնկալ>*լուսնինգա* (որից *լուսլինգա* և *լուստնգա*), կանաչ>*գանանչ*, մեք>*մէնք*, պատիճ>*բաղինջ* «կանաչ լոբի»: Կայ նաև մեծ>*մէնձ* Խրիմի մէջ. հմմտ. *մէնձ մէնձ ֆիլէր*, *մէնձ ավանագնէր*. (Խրիմու առակներ, էջ 8), բայց Նոր-Նախիջևանում ունինք միայն *մէձ* ձևը:

293. Մ ռնգականից յետոյ առաջացել է *բ* շրթնայինը՝ միայն համար>*համբար* «աշակերտի դաս» բառի մէջ. նոյն բառը սակայն *համար* «վասն» նշանակութեամբ մնում է անփոփոխ: Բայական ձևն է սովորաբար *համրէլ* «հաշուել» առանց յաւելումի. բայց Պատկանեանի մօտ գտնում ենք յաւելմամբ *համբրէլ* ձևը (հմմտ. Պատկ. Ա. 305, Բ 425, Գ 64), որ այժմ գործածական չէ: Կայ և հպարտ>*հաբարթ* բառը՝ որի դէմ Պատկանեանի մօտ գտնում ենք *մ* ձայնի յաւելումով *հըմբարդ* (հմմտ. Պատկ. Ա. 328, Բ 291):

294. Բ ձայնը աւելացել է սարկաւագ>*սարգաւարք* բառի մէջ, ինչպէս ունինք և շատ ուրիշ բարբառների մէջ:

295. Մ ձայնից յետոյ աճել է *տ* բաղաձայնը լուսնկայ>*լուսինգա*, *լուսնինգա*, *լուսլինգա* բառի մէջ, որ սրանց հետ երբեմն էլ *լուստրնգա* ձևն է առնում:

296. Շատ կերպարանափոխուած *լնդերք* բառի ձևերից մէկն էլ է Չալթրի *լըզդըռէնք* ձևը, որի մէջ աւելցուած *զ`* ո՛չ թէ ձայնական օրէնքներով է յառաջացած, այլ պարզապէս լիզել>*լզէլ*, լեզու>*լուզու* բառերի նմանողութեամբ:

297. Իբրև յենարան բառակցքի *լ-ի* վրայ աւելացուած են *ի*, *ու* ձայնաւորները՝ լի>*իլինք*, լնուլ>*ուլէլ* բառերի մէջ (հմմտ. Ախց. *լլէլ*): Նոյնպիսի յենարան ունի նաև Պօլսի բարբառում նմանիլ>*ըլմանիլ*, որի դէմ այստեղ գտնում ենք *լըմանէլ*, ներկայ՝ *գըլմանի*, *գըլմանի*<sup>5</sup>:

## Եզրակացութիւն

298. Բաղաձայնների փոփոխութեանց այս մասնաւոր կանոնները քննելով և իրար հետ համեմատելով՝ կարելի է տալ հետևեալ ընդհանուր օրէնքները՝ Նոր-Նախիջևանի բարբառի համար:

ա) Հին հայերէնի թրթռուն պայթուցիկ բաղաձայնները քաղաքի տիպարում բառակիզբը մնում են թրթռուն, Չալթրի տիպարում դառնում են մեղմ շնչեղ թրթռուն (խուլ), երկու տիպարում էլ բառամիջին, բառավերջը և *ք*-ից յետոյ հաւասարապէս լինում են շնչեղ խուլ, իսկ ռնգականից յետոյ՝ միշտ թրթռուն:

բ) Հին հայերէնի խուլերը երկու տիպարում էլ լինում են թրթռուն, իսկ շնչեղ խուլերը մնում են անփոփոխ.– *ի*, *ու*, *շ* ձայններից յետոյ գտնում ենք խուլ բաղաձայններ:

---

<sup>5</sup> Բացի յատուկ ներկայացուած յաւելումից և տեղափոխութիւնից, «Ձայնաբանութիւն» մասում ընդհանուր շարադրանքով բերում են այնպիսի յայտնի հնչիւնափոխական երևոյթների օրինակներ, ինչպիսիք են հնչիւնի անկումը, կրկնութիւնը, բաղաձայնների առնմանութիւնը և տարնմանութիւնը, ձայնաւորների ներդաշնակութիւնը, հնչյունի պարզեցումը և բարդացումը, ամփոփումը և ժողովրդական ստուգաբանութիւնը (ծանօթ. խմբ.):

գ) Խուլ կամ շնչեղ խուլ + շնչեղ խուլ խմբերը քաղաքի տիպարում վերածում են կրկին շնչեղ խուլերի, իսկ Չալթրի տիպարում կրկնակ պարզ խուլերի:

դ) Շչական (գ, ժ, շ, ս), նայ (լ, մ, ո, վ) և կոկորդական /ս/ բաղաձայնները սովորաբար մնում են անփոփոխ:

ե) Բ ցնցունը ատամնականից կամ ձ-ից յետոյ, ինչպես և չ, ձ, ղ ձայներից առաջ լինում է *ռ*, ատամնականից առաջ լինում է *շ*, իսկ *ժ* (նաև *ս*, *շ*) շչականների մօտ ջնջւում է:

զ) Բառասկզբի /ջնջւում է:

է) Բառասկզբի *ղ* դառնում է /ս/:

ը) Հ շունչը մնում է միայն բառասկզբում, այլուր տկարանալով ջնջւում է և իրեն տեղ յառաջ է գալիս /, իսկ *ռ*-ից առաջ միավանկների սկիզբը դառնում է *ֆ*:

թ) Ռնգական *ն* ձայնը զանազան բաղաձայնների մօտ փոխում է իր կերպարանքը. այսպես՝ նկ>*յ*, նմ>*լմ*, նլ>*լ*, լն>*լլ*, *լ*, իսկ շրթնային բաղաձայնի մօտ լինում է *ւ*:

ժ) Վ բաղաձայնը յաջորդական ատամնականի մօտ ջնջւում է:

## Գ ՄԱՍ Ձևաբանություն

### ա) Յոգնակիի կազմությունը

299. Յոգնակի կազմելու համար միավանկ բառերի վրայ աւելացում է *-էր* մասնիկը, բազմավանկների վրայ *-նէր* մասնիկը. ինչ. հող>*ֆօղ*, *ֆօղէր*, կով>*գօվ*, *գօվէր*, խնձոր>*խունձօր*, *խունձօրներ* են:

300. Բարդ բառերի ծայրը գտնուած միավանկ բառերը այլ ևս բազմավանկի վերածուած լինելով՝ յոգնակիի մէջ ստանում են *նէր* մասնիկը. ինչ. *դասնըմէզներու* «մօտաւորապէս ժամը 11-ին», *անօրները* «յաւուրսըն յայնոսիկ», բայց իբրև առանձին բառեր՝ *ասօրէրը*, *անօրէրը*:

301. Ռուսերէն այն բառերը՝ որոնք բառասկզբում մի քանի բաղաձայն ունենալով՝ ռուսերէնի մէջ արագ արտասանութեամբ միավանկ, իսկ հայերէնի օրէնքներով բազմավանկ են համարւում, այս բարբառի մէջ ռուսերէնի նման միավանկ են և հետևաբար ստանում են *-էր* մասնիկը. ինչ. столъ *սթօլ* «սեղան», յգ. *սթօլէր*, шляпа *շլլափ* «գլխարկ», յգ. *շլլափէր*, фракъ *ֆռաք* «հագուստի տեսակ», յգ. *ֆռաքէր*, складъ *սքլադ* «մթերանոց», յգ. *սքլադէր*, плащъ *փլաշշ* «անձրևի դէմ վերարկու», յգ. *փլաշշէր*, сѡръ *գրօռ* «մի տեսակ կար». յգ. *գրօռէր* են:

Նորերը հայերէն և հայերէնի անցած թուրքերէն բառերն էլ այս ոճով յոգնակի են դարձնում. այսպէս ունինք՝ *ստազ* «դրամ», յգ. *ստազէր*, *սխալ*, յգ. *սխալէր*, *գրագ* «կրակ», յգ. *գրագէր*, *թֆանգ* «հրացան», յգ. *թֆանգէր* են, որոնք հին և միջին սերունդի մէջ կանոնաւորապէս լինում են *ստագներ*, *սխալներ*, *գրագներ*, *թֆանգներ* են:

302. Մէկ և կէս վանկ համարուած բառերը՝ իբրև բազմավանկ՝ յոգնակիում ստանում են *-նէր* մասնիկը. ինչ. ծանր>*ձանդրռ*, յգ. *ձանդրռներ*, մանր>*մանդրռ*, յգ. *մանդրռներ*, սանտր>*սանդրռ*, յգ. *սանդրռներ*, նօսր>*նօ՛ւրր*, յգ. *նօւրրներ*: Միայն աստղ>*ասթիս*, յգ. *ասթիսէր*:



303. Այն միավանկ բառերը՝ որոնք գրաբարի մեջ *ն* յանգն ունենալով՝ յոգնակիի մեջ ստանում են *-ն-էր* վերջաւորութիւնը, Նոր-Նախիջևանի բարբառում նոյն *ն-ից* գուրկ են մնում. այսպէս՝ *մատ, մուկ, ձուկ, հարս, լեռ, դուռ*, նաև *ծառ* բառերը զանազան բարբառներում լինում են *յգ. մատներ, մկներ, ձկներ, հարսներ, լեռներ, դռներ, ծառներ*. սակայն այստեղ լինում են *մադէր, մուգէր, ձուգէր, հարսէր, դուռէր, ձառէր* (իսկ *լեռ* բառը Նոր-Նախիջևանի բարբառում գոյութիւն չունի):

304. *Հի* բառի յոգնակին լինում է քաղաքի շրջանում և Նիսվիթա՝ *ձինէր*, իսկ միւս գիւղերում *ձիյէր*. սակայն այս *ձինէր* ձևը ո՛չ թէ *-նէր* մասնիկով է կազմուած, այլ եզակի *ձին* ձևից՝ որ գործածական է Նիսվիթա գիւղերում և Պօլսում. այսպէս՝ ուղ. *ձին*, յօդով՝ *ձինը*, սեռ. *ձինի* ևն:

*Հի* բառին նման է նաև *լու*, որ Նոր-Նախիջևանում տալիս է *յգ. լունէր*. բայց եգ. *լուն* ձևը բարբառիս մեջ գոյութիւն չունի. թէև կայ ուրիշ տեղ (հմատ. Խարբերդի բարբառով՝ ուղ. *լուն*, սեռ. *լվան*, *յգ. լունէր*):

305. *-վըներ* մասնիկով կազմուած յոգնակի ձևերը, որոնք այնչափ սովորական են ուրիշ բարբառներում (ինչ. ձեռքվըներ, ոտվըներ, աչվըներ, ծնկվըներ, մատվըներ ևն), ամեննին գոյութիւն չունին այս բարբառում:

306. Սրան հակառակ կան մի քանի հաւաքական ձևեր, որոնք գործ են ածում իբրև յոգնակի, թէև շատ քիչ անգամ և հետզհետէ ջնջուելու վրայ են. այսպէս են՝ *տղաք* «տղայք», *գէղացիք* «գիւղացիք», *մաշթիք* «մարդիկ», *ախալըրդիք* «եղբայրներ», *օսկօրդանք* «ոսկորներ», *գորդանք, գորվանք* «կտորներ» և շատ անելի. քիչ անգամ՝ *դէղվանք* «տեղեր», *քուրվըդիք* «քոյրեր», *դէրվըդիք* «տէրեր»: Ուրիշ ձևեր, ինչպէս *շնկտիք, կնկտիք* «շներ, կնիկներ» ևն գոյութիւն չունին:

Չալթրում կայ *տուրվանք* բառը, որ *դուր* «հարթ, դուրան» բառի հաւաքական ձևն ունի, բայց գործ է ածում միայն իբրև եզակի. օր. *տուրվանք դէղ է* «հարթ տեղ է»:

## բ) Հոլովներ

307. Նոր-Նախիջևանի բարբառը թե՛ եզակիում և թե՛ յոգնակիում գիտե 6 հոլով. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական:

Անունների հոլովման մեջ պետք է նկատել որ՝

Ուղղականը գործ է ածում նաև իբր կոչական. ինչ. *Խէվը էգավ* «խնը եկաւ», *Հաճէ՛, խէ՛վ, գէնէ էգար* «տո՛, գի՛ժ, դարձեալ եկար»:

Սեռական և տրական հոլովները միշտ նոյն վերջաւորութիւնն ունին. ինչ. *Հօրըս ստագն էր՝ հօրըս դուվի* «հօրս դրամն էր, հօրս տուի»:

Հայցականը շնչաւոր որոշեալ առարկաների համար նոյն է սեռ.-տր. հոլովաձևի հետ, իսկ անշունչ, ինչպէս նաև շնչաւոր անորոշ առարկաների համար նոյն է ուղ. հոլովաձևի հետ. ինչ. *Մաշթուն փախ դուվին* «մարդուն վռնտեցին». *Մաշթ գը խէվցունուք* «մարդ կը խենթեցնէք», *Քարէրը թաքէ՛* «քարերը դէ՛ն գցիր»:

Հայցականը գործ է ածում նաև իբր շարժում ցոյց տուող (նախդրի հայցական) և դադարում ցոյց տուող (ներգոյական) հոլով. ինչ. *Խանութ գէշթամ* «խանութ կերթամ». *Քշէրնէրը խանութը գը բաղգիմ* «գիշերները խանութումն եմ քնում»:

Գործիականը գործ է ածում ի մեջ այլոց նաև *և* շաղկապի փոխարէն. օր. *Մէզ հաղ էրիմարթօվ մէզ հաղ գինիմարթ* «մէկ այր և մէկ կին»:- Գործիականի այսպիսի գործածութիւնը՝ որ կայ նաև Պօլսի բարբառում, թուրքերէնից անցել է մեզ:

## գ) Հոլովում

308. Նոր-Նախիջևանի բարբառում գրաբարի անկանոն ու բարդ հոլովումը չափազանց պարզուած ու կանոնաւորուած է: Գրաբարի 14 կանոնաւոր ու անկանոն հոլովումներից մնացել է միայն ութը, որոնցից երեքը, բայց յատկապէս մէկը միայն ընդհանուր է, միւսները յատուկ են որոշ տեսակի բառերի կամ սակաւաթիւ բացառութիւնների:

## Առաջին հոլովում

309. Այս հոլովման վերջաւորութիւններն են՝ սեռ.-տր. -ի, բց. -է, գրծ.- *օվ*. յգ. սեռ.-տր. -(ն)էրու, բց. (ն)էրէ, գրծ. (ն) էրով:

Օրինակ՝

Ու. Հ.	հաց	հաց-էր	բառավ	բառավ-ներ
Ս. Տ.	հաց-ի	հաց-էրու	բառավ-ի	բառավ-ներու
Բ.	հաց-է	հաց-էրէ	բառավ-է	բառավ-ներէ
Գ.	հաց-ով	հաց – էրով	բառավ-ով	բառավ-ներով

Այս հոլովման տակ են գնում բարբառիս բառերի ամենամեծ մասը, բոլոր օտար փոխառութիւնները առանց բացառութեան, նոյնպէս և օտար վերջամասնիկներով ածանցուած հայերէն բառերը: Հին հայերէնի գրեթէ բոլոր բունները վերածուած են այս հոլովման. անխտիր ասում են օր. *անունի* «անուան», *դունի* «տան», *շունի* «շան», *ձուգի* «ձկան», *յէզի* «եզան», *դուռի* «դրան», *արունի* «արեան», *ալուրի* «ալեր», *ասէղի* «ասղան», *քունի* «քնոյ», *աղէքի* «աղեաց», *ասթիսի* «աստեղ», *աթօռքի* «աթոռոյ», *աղվէնիքի* «աղաւնոյ», *զինիի* «զինւոյ», *բարիի* «բարւոյ (սպրանքի)», *գօլօխի* «գլխոյ», *թիլի* «թիւոյ», *ձիլի* «ձիւոյ», *լուզուի* «լեզուի», *օրֆարիի* «օրբնայրւոյ» են ևն: Մինչև անգամ յաջորդ Գ, Դ, Ե, մասամբ նաև Զ և Է հոլովման հետևող բառերը կարող են հոլովուել այս ձևով:

Իբրև բացառութիւն համարուած *տան*, *դրան*, *շան* ևն գրաբար ձև հոլովումների մասին տե՛ս § 319:

## Երկրորդ հոլովում

310. Երկրորդ հոլովման վերջաւորութիւնները նոյն են առաջինի հետ՝ բացի եզակի սեռ.-տր. հոլովաձևից, որ -ու վերջաւորութիւնն ունի: Օր. մաշթ «մարդ».

Ու. Հ.	մաշթ	մաշթ-էր
Ս. Տ.	մաշթ-ու	մաշթ-էրու
Բ.	մաշթ-է	մաշթ-էրէ

Այս հոլովման հետևում են նախ բոլոր բայերի աներևոյթները՝ առանց բացառութեան (*սիրելու, ասելու, մէռնելու, խաղալու* նն) և երկրորդ՝ մի քանի սակաւաթիւ գոյականներ, որոնք են.

*մաշթ* «մարդ», *մաշթու*,

*ջամփա* «ճանապարհ», *ջամփու*,

*ամիս*, *ամսու* կամ *ամուսու*, *ամիսէ*,

*հէղ* «անգամ», *հէղու*, բց. *հէղուէն* (չկայ *հէղէ*), *հէղօվ*.

*շափաթ* «շաբաթ», *շափթու*, *շափաթէ*,

*հօքի* «հոգի», *հօքու*,

*օրթի* «որդի», *օրթու*,

*դդա* «տղայ», *դդու*,

*գուլօխ* «գլուխ», *գուլխու*,

*հօրսագ* «օրհասարակ, կէսօր», հօրսուգու:

Սրանցից *ամիս*, *հէղ* և *շաբաթ* բառերը պատկանում են իսկապէս Գ հոլովման և նրա համեմատ էլ հոլովում են.— *հոգի*, *որդի*, *տղայ*, *գլուխ* բառերը իսկապէս պատկանում են առաջին հոլովման և միայն ասացուածների մէջ հետևում են երկրորդ հոլովման: *Մարդ* բառը հոլովում է նաև բց. *մաշթումէ*, *մաշթումէն*, գրծ. *մաշթումօվ*. օր. *Սերթ մաշթումէ գը վախնանք* «խիստ մարդուց վախենում ենք»: Սրա նման *որդի* և *տղայ* բառերն էլ տալիս են բց. *օրթումէն*, *օշթումէն*, *դդիմէն*: Մնացեալ բառերը չունին այսպիսի հոլովածներ:

*Հայ* բառը հոլովում է սեռ. *հայի* և ո՛չ *հայու*:

*Հոյս* բառից կայ *լուսու զանգ* «առաւօտեան ժամերգութեան զանգը», իբր բարդ բառ. բայց առանձին հոլովում է *լուս*, *լուսի* նն: Սրա նման՝

*Շող* > *շող* «արևի ցոլք» բառից կայ *արեվին շօխուն*:

311. Բայերի աներևոյթները, որ ինչպէս ասացինք, այս հոլովման են հետևում առանց բացառութեան, երբեմն ստանում են կրկին սեռականի նշան, թէ՛ *ու* և թէ՛ *ի*. օր.

*Հէռու ըլալուին սէրէքօվը* «հէռու լինելու պատճառով»:

*Ուղէլույին յօռուխը գիդէ* «ուտելու ձևը գիտէ»:

*Ստագ վաստրգէլոյին դէղը « փող շահելու տեղը»:*

*Համան փախ դալոյին բանը գը նայի «իսկոյն վոնտելու միջոցը կորոնէ»:*

*Գաղղուգ բան ասէլոյի բէս «գաղտնի բան ասելու ձևով»:*

*Յօրէնին աջէլոյին համար բէթք է «ցորենի աճման համար կարևոր է»:*

*Ամէն բանով թամամ ըլալոյին խայրաթը անինք «ջանանք ամէն կերպով կատարելագործուիլ»:*

### Երրորդ հոլովում

312. Երրորդ հոլովման վերջաւորութիւններն են՝ սեռ.-տր.  
-*վան*, բց. -է, գրծ. -*օվ*. յոգնակիի վերջաւորութիւնները առաջին հո-  
լովման պէս են. ինչ.

Ու. Հ.	օր	օր-էր
Ս. Տ.	օր-վան	օր-էրու
Բ.	օր-է	օր-էրէ
Գ.	օր-օվ	օր-էրօվ

313. Այս հոլովման հետևում են ժամանակ ցոյց տուող մի  
խումբ բառեր, որոնց ամբողջական ցանկը դնում ենք այստեղ.

Ամառն>*ամառ, ամառվան, ամառէն, ամառօվ*.

Ամիս>*ամիս, ամիսվան, ամիսէ, ամիսօվ*.

Անգամ>*անքամ, անքամվան, անքամէ, անքամօվ*.

Առաջ>*առաջ, -վան, -վանէ*.

Առաւօտ>*առա(վ)դուն, առա(վ)դվան, առադվանէ, առդրվանէ*.

Ատեն>*ադէն, -վան, -վանէ, -օվ*.

Գիշեր>*քշէր, -վան, -վանէ, -օվ*.

Երբ>*յէփ, յէփվան, յէփվանէ, յէփէն*.

Երեկոյ>*իրգուն, իրգուվան, իրգվան, իրգվանէ, իրգունէ, իր-  
գունօվ*.

Երէկ>*էրէգ, -վան, -վանէ*.

Զատիկ>*գադիգ, գադ(ի)գվան, գադ(ի)գվանէ*.

Ժոււմ>ժոււմ, ժումվան.

Կանուխ>գանօխ, -վան, -վանէ.

Կիրակի>գիրագի, գիրագվան, գիրագիի, գիրագվանէ, գիրագիօվ.

Հեղ>հէղ, -վան, -վանէ, կամ հէղու, հէղունէն, հէղօվ.

Հերու>հէրու, հէրվան, հէրվանէ.

Հինութ «հին ժամանակ», սեռ. հինութվան, բց. Հինութվանէ.

Ձմեռն>ձմէռ, -վան, -վանէ, -օվ.

Մայիս>մայիս, -վան, -վանէ.

Շաբաթ>շափաթ, -վան, -վանէ, կամ շափթու, շափաթէն, շափաթօվ.

Ուրբաթ>ուրփաթ, -վան, -վանէ, -օվ.

Պահ մի այլ>բամալ «մի քիչ առաջ», բամալվան, -վանէ.

Վաղիւ>վաղը, վաղվան, վաղվանէ. գործ է ածուում նաև վաղին ձևը՝ միայն վաղին օրը «մօտ ժամանակներս, մօտերս», Ասորէն վաղին գէցիլ իմ «այսօր-վաղը սպասում եմ» ձևերի մէջ.

Տարի>դարի, դարվան, դարվանէ, դարօվ, դարիօվ.

Տօն>դօն «Տօն ծննդեան», դօնվան, դօնվանէ, դօնէ.

Յերեկ>ցօրէզ, -վան, -վանէ, ցօրէզօվ.

Օր>օր, օրվան, օրվանէ, օրօվ:

Այս շարքին են պատկանում են նաև թուրքերէնից և ռուսերէնից փոխառեալ ժամանակ ցոյց տուող բառերը. ինչ.

Գուգ (Զ.), գիւգ (քղ.) «աշուն», -վան, -վանէ.

Մինութ (ռուս.) «րոպէ», մինութվան, մինութօվ.

Շինըիս (թրք.) «այժմ», -վան, -վանէ.

Սաբախտվան, սաբախտվանէ (թրք.) «առտուան, առուօտվանից».

Դայմաքվան (թրք.) «ամէն ժամանակուայ».

Դարբավան «անգամուայ».

Այս բոլոր բառերը հոլովւում են նաև առաջին հոլովման համեմատ. ինչ. ամառի, ամառէն, ամառօվ. բացի մի քանիսից, որոնք մասամբ միայն հետևում են առաջին հոլովման. այս ձևով կազմուած հոլովները արդէն նշանակուած են վերի ցանկում: Բացառականում մի քանիսը դառնում են -վանէ, որ այս հոլովման

հիմնական ձևն է. ըստ այսմ գործիականն էլ պիտի լիներ *-վանօյ*. բայց այս ձևի տակ հասկացում է «այն ժամանակ եղածով». ինչ. *գիշերվանով* «գիշերվանն էլ միասին հաշուելով»: Գործիականը կազմում է պարզ *-օյ* վերջաւորութեամբ. բայց առհասարակ այս բառերը գործիական չունին. կարելի չէ ասել օրինակ՝ *հէրուով, հինութով* ևն:

Առանձին հետաքրքրութեան արժանի է *կէս* բառը, որ թէև թուական անուն է, բայց երբոր ժամանակի համար է գործածւում, հետևում է վերոյիշեալ հոլովման. ինչ. *շամիաթուգէսվան, ամիսու-գէսվան, օրուգէսվան* և այլն:

Պատկանեանի մօտ գտնում ենք երբեմն *-վա* ձևով սեռական, փոխանակ *-վան*. այսպէս օր. *ամառվա, ձմէռվա* (Պատկ. Ա. 283), *դարվա* «տարուայ» (Պատկ. Բ. 274). բայց չգիտեմ թէ սրանք հին բարբառին յատուկ ձևե՞ր են թէ արևելահայ գրական լեզուի ազդեցութեան արդիւնք. ներկայումս այսպիսի ձևեր չկան:

### Չորրորդ հոլովում

314. Չորրորդ հոլովման վերջաւորութիւններն են՝ սեռ.-տր. *-թան*, բց. *-թէնէ*, գրծ. *-թինօյ*. յոգնակիի վերջաւորութիւնները նոյն են առաջին հոլովման հետ:

Ու. Ն.	քէշութին	քէշութիններ
Ս. Տ.	քէշութան	քէշութիններու
Բ.	քէշութենէ	քէշութիններէ
Գ.	քէշութինօվ	քէշութիններօվ

Այս հոլովման տակ են գնում բոլոր *-ութին* «ութին» վերջացող վերացական բառերը. սակայն այս հոլովումը, մանաւանդ բացառականը, այժմ արդէն մոռացուած է և նրան հետևող բառերը հոլովում են առաջին հոլովմամբ. ինչ. *քէշութին, քէշութինի, քէշութինէ, քէշութինօվ* ևն:

## Հինգերորդ հոլովում

315. Հինգերորդ հոլովման վերջաւորութիւններն են՝ սեռ.-տր. -ան, բց. -անմէ, գրծ. -անմօլ. յոգնակին նոյն է առաջին հոլովման հետ. ինչ.

Ու. Հ.	երիգ	երիգ-ներ
Ս. Տ.	երգան	երիգ-ներու
Բ.	երգանմէ	երիգ-ներէ
Գ.	երգանմօլ	երիգ-ներօլ

Այս հոլովման հետևում են մի քանի սակաւաթիւ գոյականներ, որոնք են՝ *էրիգ* «այր, ամուսին», *գնիգ* «կին» և *ախիգ* «աղջիկ». այս բոլորը կարող են հոլովուիլ նաև առաջին հոլովման պէս:

Բացառականում այս բառերը կարող են ստանալ զանազան ձևեր. այսպէս՝ *էրգանմէ, էրգանմէն, էրգամէն, էրգամէ, ախիգանմէն, ախիգանմէ, ախիգամէն, գնգանմէ, գնգանմէն, գնգամէն*:

Պատկ. Ա. 275 գտնում ենք *էրգա* սեռականը, որ կա՛մ հին ձև է կամ արևելահայ լեզուի ազդեցութեամբ յառաջացած: Արդի բարբառը այսպիսի ձև չգիտէ:

## Վեցերորդ հոլովում

316. Վեցերորդ հոլովման մէջ սեռ.-տր. հոլովաձևը կազմուում է ուղղականի շեշտեալ ձայնաւորը դարձնելով *օ*, իսկ բց. և գրծ. հոլովները կազմուում են սեռ.-տր. հոլովաձևի վրայ աւելացնելով *-մէ, -մօլ/մասնիկները*: Յոգնակին նոյն է առաջին հոլովման հետ:

Ու. Հ.	ախպար	ախպարներ
Ս. Տ.	ախպօր	ախպարներու
Բ.	ախպօրմէ	ախպարներէ
Գ.	ախպօրմօլ	ախպարներօլ

Այս հոլովման տակ են գնում միայն երեք բառ, որոնք են. *ախպար* «եղբայր», *հար* «հայր», *մար* «մայր». բայց սրանցից բարդուած բառերը կանոնաւոր կերպով հոլովուում են առաջին հոլովման հա-



մեմատ. այսպես են՝ *գնգահար* «կնքահայր», *գնքամար* «կնքամայր», *սանահար* «սանահայր», *սանամար* «սանամայր», սեռ. *գնգահարի*, *գնքամարի*, *սանահարի*, *սանամարի*, բց. *գնգահարէ*, *գնքամարէ*, *սանահարէ*, *սանամարէ* են, և ո՛չ թէ *գնգահոր*, *գնքամոր*, *սանահոր*, *սանամոր*, *գնքամորմէ* են, ինչպես գտնում ենք ուրիշ բարբառներում: Բացառապես երբեմն ասում են սեռ. *ախպարիս*, բց. *ախպարէս*:

### Եօթներորդ հոլովում

317. Եօթներորդ հոլովման վերջաւորութիւններն են՝ սեռ.-տր. -օշ, բց. -օշմէ, գրծ. -օշմօլ. յոգնակին առաջին հոլովման հետ նոյն է. բայց կարելի է նաև ներմուծել -օշ- մասնիկը. ինչ.

Ու. Հ.	քուր	քուր-էր	
Ս. Տ.	քուր-օշ	քուր-էրու,	քուր-օշներու
Բ.	քուր-օշմէ	քուր-էրէ,	քուր-օշներէ
Գ.	քուր-օշմօլ	քուր-էրօլ	

Այս հոլովման տակ են գնում *քուր* «քոյր», *դէր* «տէր», *դալ* «տալ», *դաքր* «տագր» բառերը: Բայց սրանցից ածանցուած *մօրքուր* և *հօրքուր* բառերը հոլովում են առաջին հոլովման պէս. օր. *մօրքուրիս*, *հօրքուրիս*, բց. *մօրքուրէս*, *հօրքուրէս* և ո՛չ թէ *մօրքուրօշ*, *մօրքուրօշմէ* են:– «Տանտէր» բառը գործածական չէ:

### Ութերորդ հոլովում

318. Այս հոլովմամբ ունինք միայն *Աստուած* բառը՝ որ հին հայերէնի -ոյ հոլովման է պատկանում. բարբառիս մէջ ձայնական փոփոխութեանց պատճառով ստացել է բոլորովին անկանոն մի ձև. այսպէս՝

Ու. Հ.	Ասվաձ
Ս. Տ.	Ասծու, Աստուձու, Ասծուձու
Բ.	Աստուձմէ, Ասծուձմէ

Գրաբարաձև հոլովումներ

319. Այս բոլորից դուրս կան մի քանի հոլովաձևեր, որոնք գրաբարի հոլովման մնացորդներն են.

-*աց* վերջաւորութեամբ և միայն բացառականի իմաստով՝ *ասթիաց, արթիաց, անթիաց, վօրթիաց* «այս կողմից, այդ կողմից, այն կողմից, ո՛ր կողմից»:

-*օց* վերջաւորութեամբ և սեռ.-տր. իմաստով՝ *մաշթօց* «մարդոց», *դուղօց, դղօց* «տղայոց», բացառականի իմաստով՝ *քախքօց քաղաք* «ի քաղաքէ ի քաղաք», *դարօց դարի* «տարուց տարի», նաև ներգոյականի իմաստով՝ *դէղօցդէղ* (Զ.) «տեղ, տեղ, ի տեղիս տեղիս» (օր. անձրևը դէղօցդէղ եկաւ): Նոյն վերջաւորութեան վրայ կարելի է աւելացնել նաև -*մէ, -մօլ* և կազմուում է երկրորդ անգամ բացառական ու գործիական հոլով. *մաշթօցմէ, դղօցմէ, մաշթօցմօլ, դղօցմօլ*:

-*օք* վերջաւորութեամբ և եզակի գործիականի իմաստով. ինչ. *իդա հալօքը* «այդ վիճակով», *բօյօքը* «ամբողջ հասակով» (երկուսն էլ թուրքերէն փոխառութիւն գրաբար հոլովուած), *բէրնօք* «բերանով» (գտնում ենք վիճակի աւանդական մի երգի մէջ՝ *Матер. 115, Բրիստօս իր բէրնօք ասաց*), *վրայօք* «վրայով, մասին», *փախիլօք* «պատահմամբ», *սիրդօքս* «սրտովս, սրտիս ուզածի պէս» (*իդա բանը սիրտօքս չէդալ, սիրտօքս է*): Կան նաև կրկին հոլովուած ձևեր, որոնց մէջ -*օք* գործիականի վերջաւորութիւնը այլ ևս նշանակութիւնից զուրկ է. ինչ. *ուծօքին գօրա* «ուծի համեմատ, որչափ ուծը ներում է», *հալօքօլս, հալօքնէրօլս* «իմ վիճակով, մեր վիճակով, մեր վիճակի համեմատ», *աւլէլօքօլ* «առաւելօք»:

-*ն* հոլովմամբ և ներքին փոփոխութեամբ են՝ *տան, շան, դրան, մթան* սեռականները՝ որոնք անկախ գործածութիւն չունին և գտնւում են միայն մի քանի բարդ բառերում և ասացուածներում. ինչ. *շան-լագօղ* «շան լակոտ», *շան-վօրթի* «շան որդի», *դանուդէր* «ընտանիքի տէր, ամուսնացած, տուն տռան վրան (Զ.) «դրացու-

թեան մէջ» (օր. տոտ տռան վրան գռել անել չի վայլի), *մթանը* «մութ ժամանակ» (իբր մակբայ):

## դ) Սդում

320. Ձայնաւորների և երկբարբառների սղման և կրճատման օրէնքը՝ որ հին հայերէնում այնպիսի ընդարձակ գործածութիւն ունէր, բոլորովին ջնջուած է Նոր-Նախիջևանի բարբառում: Հոլովական բոլոր ձևերի մէջ էլ ուղղականի ձևը մնում է անփոփոխ. ինչ. *միս, միսի, միսէ, - մուխ, մուխի, մուխէ, - սիրդ, սիրդի, սիրդէ, - քուր, քուրօչ, քուրօչմէ* են: Այս օրէնքը ա՛յնքան է յառաջ գնացել՝ որ մինչև անգամ բառակազմութեան մէջ էլ է ցոյց տալիս իր ուժը և բարբառիս բարդ ու ածանց բառերից շատերը՝ որոնք հին լեզուից ժառանգութիւն են մնացել, սղման օրէնքը ջնջելով՝ իբր նոր կազմուած բառեր՝ նախկին ձայնաւորները վերականգնած են. ինչ. դրսեցի> *դուսացի*, բրդոտ>*բուշթօղ*, սրտոտ>*սիրդօղ*, ջրոտ>*ջուրօղ*, կիսամեռ>*գէսամէռ*, կիսակատար>*գէսագադար* են են:

321. Այս ընդհանուր կանոնից ազատ են մնացել մի քանի սակաւաթիւ բացառութիւններ, որոնցից ոմանք հին հայերէնից ժառանգութիւն են, միւսները նոր ձայնական օրէնքների արդիւնք, հետևեալ ձևով.

ա. Բառավերջի *ա* ձայնաւորը կորչում է *փէսա* «փեսայ», *դդա* «տղայ» և *ջամփա* «ճամբայ» բառերի հոլովման մէջ. սեռ. *փէսի, դդի, ջամփու*, բց. *փէսէն, դդէն, ջամփէն* են:

բ. Վերջավանկի *ա* ձայնաւորը կորչում է *բէրան* «բերան», *վջագ* «վիճակ (Համբարձման)», *շափաթ* «շաբաթ», *դագ* «տակ, յատակ», *ստագ* «դրամ», *աշխարք* «աշխարհ», *գոնակ* «կոնակ» բառերի մէջ. ինչ. սեռ. *բէրնի, վջգին, աշխրրքի, ստրգի, գոնրգի*, բց. *բէրնէն, դգէն, գրծ. գոնրգօւ* են. բայց այս բոլորը աւելի յաճախադէպ են հին լեզուում. (հմմտ. *ստրգի* Պատկ. Բ. 285, 383, *դգէն* Բ. 403, *աշխրքի* Ա. 265, 266, Գ. 260 են). նորերի մօտ հետզհետէ ջնջւում են՝ տեղի տալով ընդհանուր ձևին. *բէրանի, ստագի, դագէն* են:

գ. Վերջավանկի *ի* ձայնաւորը ջնջւում է *էրիգ, սիրդ, ամիս, զաղիգ* բառերի մէջ, նաև *դարի* «տարի» բառի ծայրը. այսպէս՝ *էրգան, ամսու, սրդի, զաղգին, դարվան*. Բայց ասւում է նաև *սիրդի, զաղիգվան*. Հների մէջ *աղջիկ* բառը գործածւում է թէ՛ սղմամբ և թէ առանց սղման, նորերի մէջ առանց սղման: Խրիմի (հմմտ. *Matep.* 45) և Թովտիի շրջանում ունինք *էրգընքին* «երկնքի», որ հիմայ քաղաքի բարբառում առանց սղման է:

322. Բացի սրանից հոլովման ժամանակ երկու ձայնաւոր իրար մօտ պատահած ժամանակ՝ ներմուծւում է *յ* բաղաձայնը. ինչ. *բազլա* «բակլայ», սեռ. *բազլայի, հէռու* «հեռու», սեռ. *հէռույի, բց. հէռույէն, լուզու* «լեզու», սեռ. *լուզույի, բց. լուզույէն* ևն: Այսպէս են եղել նաև *թի, ձի* բառերը. սեռ. *թիյի, ձիյի, բց. թիյէ, ձիյէ, յգ. թիյէր, ձիյէր* ևն. և յետոյ այս *յ* յաւելուածը արմատական կարծուելով՝ անցել է նաև ուղղականի վրայ, որով բառը դարձել է *թիյ, ձիյ* (§ 44):

### ե) Յօդ

323. Որոշեալ յօդերն են *ը* և *ն*. առաջինը դրւում է բաղաձայնայանգ բառերի ծայրը, երկրորդը՝ ձայնաւորայանգ բառերի. ինչ. *մարթը, մաձունը, գինին, հօքին*:

324. Որոշեալ յօդը կարող է դրուել բառի բոլոր հոլովների վրայ, բացի գործիականից, որ սովորաբար յօդից զուրկ է մնում. օր. *հացին, հացէն, հացէրը, հացէրէն, հացէրուն*, բայց *հացօվ, հացէրօվ*:

325. Այլ շաղկապի և էական բայի սահմանական ներկայի և անկատարի մօտ բաղաձայնայանգ բառերի *ը* յօդը վերածւում է *ն*. ինչ. *հացն ալ դունն է* «հացն էլ տանն է»:

326. Անորոշ յօդերն են *մէգ, մէքադ* (< մէկ հատ), *մէքամ* (< մէկ հատ մը), որոնք դրւում են գոյականից առաջ և չեն հոլովւում. ինչ. *մէքադ հացի համար, մէգ մաշթու քօվ, մէգ մաշթէ, մէքամ մէձ դուն* «մի մեծ տուն» ևն: Անորոշ է լինում բառը նաև առանց որ և է յօդի:

Մը անորոշ յօդը առանձին չի գործածւում, այլ *մէգ* թուականի հետ. ինչ. *մէգ մարթ մը, մէգ դուն մը*: Այլ շաղկապի մօտ նոյնը կրճատուելով լինում է *մ*. ինչ. *մէգ օր մալ, մէգ քիչ մալ*:

## զ) Ածականի աստիճանները

327. Բաղդատական կազմելու համար դրական ածականի վրայ դրում են *ավելի* «աւելի» կամ *դահա* (թրք. daha «դեռ, աւելի», նոյնպէս նշան բաղդատականի) բառերը, որոնք մնում են անհոլով: Օր. *Աս դունը ան դունէն ավելի մէձ է, Դահա մէձ դուն մալ ունիմ:* Ածականը կարող է նաև առանց որևէ յաւելուածի պարզապէս բացառականի հետ գործածուիլ. *Աս դունը ան դունէն մէձ է:*

328. Որակական ածականները առհասարակ բաղդատական են դառնում *-գէզ* մասնիկով. այսպէս՝ *մէձգէզ* «մեծկակ», *ձանդոգէզ* «ծանրկէկ», *բացըռոգէզ* «բարձրկէկ», *խօշօրոգէզ* «խոշորկէկ», *հաստ-գէզ* «հաստկէկ», *ձէրոգէզ* «ծերկէկ», *բարազգէզ* «բարակկէկ», *էրզան-գէզ* «երկայնկէկ», *գարջոգէզ* «կարճկէկ», *գարմիրոգէզ* «կարմիրկէկ», *մութոգէզ* «մութկէկ», *ցածգէզ* «ցածկէկ», *լուսոգէզ* «լուսկէկ» են, որոնց նշանակութիւնն է «մի քիչ աւելի կամ բաւական մեծ ...» են:

Գրեթէ ամէն ածականի վրայ կարելի է այս մասնիկը դնել. մինչև անգամ կայ *քօշագէզ* «մի անկիւն». *քօշա* (պրս. کوشه kūše) բառը գոյական է, բայց իբր ածական առնուելով՝ ստացել է բաղդատականի մասնիկը. ասում է *քօշագէզ դէդ մը* «աւելի անկիւն ընկած՝ բաւական առանձնակաց մի տեղ»:

329. Գերադրական կազմելու համար դրական ածականի վրայ դրում են *խիստ* կամ *էնգ* բառերը. (վերջինը թրք. en գերադրական մասնիկն է, որ թուրք գաւառականներում eոց ձևն ունի). օր. *խիստ դէսօք* «շատ գեղեցիկ», *էնգ աղէզ* «ամենալաւ». հմմտ. Պօլսի բարբառով *էն*. ինչ. *էն մեծ, էն կարմիր* են:

Չալթրի շրջանում հաւասարապէս գործածական են նաև *էնգէ, էնգը* (Թոփտի *էնգի*) ձևերը. ինչ. *էնգէ պածըռ, էնգը պածըռ, էնգի պածըռ, էնգ պածըռ* «ամենաբարձր»:

Սրա մակբայական գործածութեան վրայ տես § 404:

330. Մի խումբ ածականներ, յատկապէս գոյն ցուցնող ածականները, գերադրական են դառնում մասնաւոր նախամասնիկներով, որոնք ձևացած են ածականի նախաձայնի բաղաձայնից + ձայնաւոր + *ւ*, *ւ'* կամ *չ* բաղաձայնը: Նախաձայնի բաղաձայնը բնակա-

նաբար գոյութիւն չի ունենալ՝ եթէ բառը սկսի ձայնաւորով, մասնիկի ձայնաւորը զանազանում է բառի առաջին վանկի ձայնաւորի համեմատ. եթէ՝ ածականի առաջին վանկի ձայնաւորը *ա* է, մասնիկի ձայնաւորն էլ լինում է *ա*, եթէ *ը* է՝ լինում է *ը*. եթէ *ի* է՝ լինում է *ի*. եթէ *է* = *է* է՝ լինում է *ի* կամ *է*. եթէ *ո* = *օ* է՝ լինում է *ի* կամ *օ*. եթէ *ու* է՝ լինում է *ու*: Այսպէս ունինք՝

*ա* – *գա՛ւ-գաբուղ* «բոլորովին կապոյտ», *գա՛ւ-գարմիր* «բոլորովին կարմիր», *թա՛ւի-թաց*, *թա՛ւ-թաց* (բայց աւելի *թի՛ւի- թաց*) «բոլորովին թաց», *գա՛ւի* – *գանանչ* «բոլորովին կանաչ», *բա՛ւ-բարաբ* «բոլորովին պարապ», *թա՛ւ-թափազ* «բոլորովին տափակ»:

Ե, է – *դի՛ւի-դէղին* «բոլորովին դէղին», *սի՛ւի-սէլ* «բոլորովին սև», *ջի՛ւի-ջէրմազ* «բոլորովին ճերմակ», *մէ՛ւ-մէնազ* «բոլորովին մինակ»:

*ը* – *գը՛ւի-գըլօր* «բոլորովին կլորակ»:

*ի* – *շի՛ւի-շիղազ* «բոլորովին շիտակ», *ի՛ւիւի-իլինք* «բոլորովին լիքը»:

*ո*, *օ* – *նի՛ւի-նօր* «բոլորովին նոր», *չի՛ւի-չօր* «բոլորովին չոր» (որի ազդեցութեամբ էլ անկանոն կերպով ասում է *թի՛ւի-թաց*):

*ու* – *գու՛ւի-գուլօր* «բոլորովին կլոր»:

Այս բոլորի մէջ նկատելի է *ի՛ւիւի-իլինք* ձևը՝ որ կազմուած է բաղաձայնի կրկնութեամբ՝ անշուշտ իմաստի սաստկութեան համար: Կրկնութիւնը կարելի է եղած յաջորդ ձայնաւորի պատճառաւ: Միւս բառերի մէջ ձայնաւոր չկայ և հետևաբար կրկնութիւնն էլ կարելի չէր:

Երկու առանձին ձևեր էլ կան՝ որոնք իրենց նմանները չունին. սրանք են՝ *լա՛ւ-գաբուղ* «բոլորովին կապոյտ» և *խանք-խընդ-մընդան* «շատ ուրախ». առաջինը գործածական է բարբառում՝ *գա՛ւ-գաբուղ* ձևին կից, երկրորդը գտնում ենք գործածուած Պատկանեանի մօտ (հտ. Բ. 441) և այժմ անծանօթ է:

Չալթրի շրջանում այս բոլոր ձևերը անփոփոխ նոյն են. միայն *սև* և *դէղին* բառերը գերադրական մասնիկի մէջ *ի* ձայնաւորը ջնջելով՝ լինում են *սըւի-սէլ*, *տըւի-տէղին*:

Գերադրականի կազմութեան այս ոճը՝ որ գոյութիւն ունի նաև Պօլսի բարբառում՝ փոխառեալ է թուրքերէնից. այստեղից առ-

նուած են նախ բոլորովին պատրաստ բառեր. ինչ. *բօ՛ւ-բօշ* «բոլորովին պարապ», *չը՛ի-չըփլախ* (Չ. *ճը՛ն-ճիպլախ*) «բոլորովին մերկ», *թի՛ի-թէմիգ* «բոլորովին մաքուր», *փի՛ւ-փիթին* «ամբողջապէս», *է՛ի-էշգարէ* «շատ ակներև», *բէ՛ւ-բէլլի* «շատ յայտնի», *թա՛ւ-թամամ* «բոլորովին կատարեալ, բոլորովին լրացած», *սի՛ւ-սիյահ* «բոլորովին սև», *մօ՛ւ-մօռ* «բոլորովին կապոյտ», յետոյ սրանց օրինակով կազմուած են հայերէն բառերը:

331. Գերադրական կարելի է կազմել նաև ածականի առաջին վանկի վրայ ուժով և երկար մի շեշտ դնելով. ինչ. *է՛՛բզան* «շատ երկար», *գա՛՛րմիր* «շատ կարմիր», *ա՛՛ղէգ* «շատ լավ», *մէքաղ գէ՛է՛շ շուն ունի* «մի շատ գէշ շուն ունի»:

Գերադրականի այս ոճը փոխառեալ է ռուսերէնից, ուր ունինք նոյն ձևով՝ *кра՛сный* «շատ կարմիր», *до՛лго* «շատ երկար» են:

## է) Թուական անուններ

332. Թուականները չորս տեսակ են.

ա. Բացարձակ, որ թուականների հիմնական ձևն է. ինչ. *մէգ, էրզու, իրէք* կամ *ժէք* են:

բ. Դասական. կազմում է բացարձակների վրայ աւելացնելով *-ում* մասնիկը՝ որ պրս. *թ* -um դասական մասնիկն է՝ փոխառութեամբ անցած այս բարբառին. օր. *ժէքում* «երրորդ», *չօրում* «չորրորդ» են. հմմտ. պրս. *čaharum*, *panjum*, *šašum* «չորրորդ, հինգերորդ, վեցերորդ» են<sup>6</sup>: Նոյն մասնիկը գործ է ածում նաև Սուչավայի հայոց բարբառում:

Բացառութիւն է միայն *առչի* «առաջին»:

*Երկու* բառը դասական կազմելու ժամանակ ստանում է *ս* յաւելուածը և դառնում է *էրզուում*:

<sup>6</sup> Ժամանակակից պարսկերէնում դասական թվականի մասնիկը *-om*-ն է՝ *čaharom*, *panjom*, *šešom* (ծանօթ. խմբ.):

Դասականները գործ են ածում նաև իբր կոտորակ. ինչ. *դասնում փայլ* «մէկ տասներորդը», *սա նարա հինգում փայն է* «սա նրա 1/5 ն է»:

գ. *Բաշխական*. կազմում են մինչև *տասը*՝ կրկնութեամբ, իսկ այնուհետև *-ական* մասնիկով:

դ. *Չափական*. կազմում են *-նոց* մասնիկով և ցոյց են տալիս թէ ո՞րչափ է առարկայի գինը կամ արժէքը, քաշը կամ ծանրութիւնը, տարիքը:

333. Ահաւասիկ այս չորս տեսակ թուականների համադրական ցուցակը.

<i>բացարձակ</i>	<i>դասական</i>	<i>բաշխական</i>	<i>չափական</i>
1. մէգ	առչի	մեմէգ	մէգնոց
2. երգու	երգուսում	երգ-երգու	երգունոց
3. իրէք ժէք	իրէքում ժէքում	իրէք-իրէք ժէք-ժէք	իրէքնոց ժէքնոց
4. չօրս	չօրսում	չօրս-չօրս	չօրսնոց
5. հինգ	հինգում	հինգ-հինգ	հինգնոց
6. վէց	վէցում	վէց-վէց	վէցնոց
7. օխտը	օխտում	օխտ-օխտը	օխտնոց
8. ութը	ութնում	ութ-ութը	ութնոց
9. ինը	իննում	ին-ինը	իննոց
10. դասը	դասում	դաս-դասը	դասնոց
11. դասնըմէգ	դասնըմէգում	դասնըմէգազան	դասնըմէգնոց
12. դասվերգու(ս) դասներգու(ս) դասնըվերգու(ս)	դասվերգուսում դասներգուսում դասնըվերգուսում	դասվերգուազան դասներգազան դասնըվերգազան	դասվերգունոց դասներգունոց դասնըվերգունոց
13. դասվիրէք դասնըժէք դասժէք դաշժէք	դասվիրէքում դասնըժէքում դասժէքում դաշժէքում	դասվիրէքազան դասնըժէքազան դասժէքազան դաշժէքազան	դասվիրէքնոց դասնըժէքնոց դասժէքնոց դաշժէքնոց
14. դասնըչօրս դասչօրս	դասնըչօրսում դասչօրսում	դասնըչօրսազան դասչօրսազան	դասնըչօրսնոց դասչօրսնոց



դաշօրս	դաշօրսում	դաշօրսագան	դաշօրսնօց
15. դասնըհինգ	դասնըհինգում	դասնըհինգագան	դասնըհինգնօց
16. դասնըվեց	դասնըվեցում	դասնըվեցագան	դասնըվեցնօց
17. դասնըօխտը	դասնըօխտում	դասնըօխտագան	դասնըօխտնօց
դասնըվօխտը	դասնըվօխտում	դասնըվօխտագան	դասնըվօխտնօց
18 դասնըութը	դասնըութում	դասնըութագան	դասնըութնօց
դասնըվութը	դասնըվութում	դասնըվութագան	դասնըվութնօց
19. դասնըինը	դասնըիննում	դասնըիննագան	դասնըիննօց
դասնըվինը	դասնըվիննում	դասնըվիննագան	դասնըվիննօց
20. քսան	քսանում	քսանագան	քսաննօց
30. էռսուն	էռսունում	էռսունագան	էռսուննօց
40. քառսուն	քառսունում	քառսունագան	քառսուննօց
50. իսուն, հիսուն	(հ)իսունում	(հ)իսունագան	(հ)իսուննօց
սուն, սին	սունում	սունագան	սուննօց
60. վաթցուն (§128)	վաթցունում	վաթցունագան	վաթցուննօց
70. յեթմիշ	յեթմիշում	յեթմիշագան	յեթմիշնօց
80. սեքսէն	սեքսէնում	սեքսէնագան	սեքսէննօց
90. դօխսան	դօխսանում	դօխսանագան	դօխսաննօց
100. հարութ	հարութում	հարութագան	հարութնօց
1000. հազար	հազարում	հազարագան	հազարնօց

Մրանցից *հիսուն* հին ձևն է, *իսուն*, *սուն* նոր ձևը, Չալթրում՝ *սին*:- *Յեթմիշ*, *սեքսէն* և *դօխսան* փոխառեալ են թրք. yetmiş, seksen, doqsan հոմանիշներից, առաջինը Չալթրում լինում է *յետմիշ*, միւսները անփոփոխ են:

334. Ինչպէս երևում է վերևի ցուցակից. տասնաւորների և միաւորների միութիւնը կատարւում է մի քանի ձևով. *տասն* բառը կարող է ստանալ պարզ *տասն* և կրճատ *տաս* ձևը (որից *տաշ*), և իր ու միաւորի միջև կարող է դրուիլ *ը*, *վ*/կամ միացեալ *ըվ*. կարող է նաև միաւորը միանալ պարզ յարադրութեամբ: Այսպէսով կունենանք վեց տարբեր ձև. այն է *դասս*-, *դաշ*-, *դասն*-, *դասնը*-, *դասով*- և *դասնըվ*-:

Եթե փնտռենք՝ այս բոլորի ծագումը և մեկնությունը, կգտնենք որ հնապէս եղել է 3 ձև. այն է տասնաւորների և միաւորների պարզ յարադրութիւն և կամ նրանց միութիւնը *և, ու* շաղկապներով: Պարզ յարադրութեան մէջ *տասն* բառը կա՛մ մնացել է ամբողջութեամբ և կամ բաղաձայնների խճողումից խուսափելու համար յապաւել է *ն* ձայնը, որից յետոյ *ս* ձայնն էլ՝ յաջորդ բաղաձայնների ազդեցութեամբ դարձել է *շ*:

Պարզ և ամբողջական յարադրութեամբ ունինք միայն *տասներկու*՝ որ տալիս է *դասներգու* կամ *դասներգուս*. - *ն* բաղաձայնի կորուստով ունինք *տասերեք* և *տասչօրս*, որոնք տալիս են *դասժէք*, *դասչօրս*. - միևնոյն բառերում *ս* ձայնը նոր հնչումով դառնալով *շ*՝ ստանում ենք *դաշժէք*, *դաշչօրս*: - *Եւ* շաղկապով միանում են 2, 7, 8, 9 թուականները, որոնց մէջ *ե* կրճատուելով լինում է *ը* (§ 20, 21), որով ունենում ենք *դասնըվերգու*, *դասնըվօխտը*, *դասնըվույթը*, *դասնըվինը* (իբր տասններկու, տասննեօթը, տասնևույթը, տասնևինը): - Միևնոյն ձևի մէջ *ե* և նրա հետ նաև *ն* ջնջուելով՝ յառաջացել է *տասս*/. այսպէս ունինք *դասսվերգու*, *դասսվիրէք* (12, 13):

Ամենից աւելի յաճախեալ են *ու* շաղկապով միացած ձևերը, որոնց մէջ *ու* իբր միջին ձայնաւոր կրճատուելով՝ լինում է *ը* (§ 62), որով ունենում ենք *տասնը*- ձևը. այսպէս են՝ *դասնըմէգ*, *դասնըժէք*, *դասնըչօրս*, *դասնըհինգ*, *դասնըվէգ*, *դասնըօխտը*, *դասնըույթը*, *դասնըինը*:

Բնական էր սպասել որ կրկին շաղկապներից *և* կցուած լինէր ձայնաւորով սկսող միաւորների հետ, իսկ *ու*՝ բաղաձայնով սկսողների հետ, ինչպէս է իրօք: Բացառութիւն են կազմում միայն 7, 8, 9 թուականները, որոնք կարող են ստանալ թէ՛ *և* և թէ՛ *ու* շաղկապները. սրանցից առաջինը (*և*) կանոնաւոր է, իսկ երկրորդը (*ու*) անշուշտ 4, 5, 6 միաւորների նմանութեամբ:

Սկսեալ 21 թուից մինչև վերջ՝ տասնաւորների և միաւորների միութիւնը կատարւում է պարզ յարադրութեամբ. *ը* ձայնը չի կարող ներմուծուիլ: Բայց *վ* կարող է երբեմն ներմուծուիլ. այսպէս սովորաբար ասում են *քսանմէգ* (21), *քսաներգուս* (22), *քսանժէք* (23), *էռսունչօրս* (34), *քառսունհինգ* (45) ևն, երբեմն նաև *քսանվերգուս* (22), *քսանվիրէք* (23), *քսանվույթը* (28) ևն, բայց ո՛չ երբեք *քսանըմէգ*,

*քսանըջօրս, քսանըհինգ* են, ինչպես գտնում ենք բոլոր բարբառների մեջ:

335. Հոլովման մեջ, առանց բացառութեան, բոլոր թուականները հետևում են առաջին հոլովման. ինչ. *մէգին, հինգին, քսանումին* (20-րդ ին), *էսուննոցին* են:

Բացարձակ թուականները յոգնակի գործածուելով՝ մօտաւոր մի թիւ են ցոյց են տալիս. ինչ. *էրգու հարուր հիսուններ ունիմ* «ունիմ մօտաւորապէս 250 ռուբլի»: *Մահաթը հինգէրու քուքամ* «մօտաւորապէս ժամը 5-ին կգամ»: *էրգուսներու արի* «մօտաւորապէս ժամը երկուսին արի»: Այս պարագային մինչև իսկ *մէգ* բառը յոգնակիով է գործածուում. ինչ. *մէգէրու քուքամ* «մօտաւորապէս ժամը մէկին կգամ»: *Դասնըմէգներու արի* «մօտաւորապէս ժամը 11-ին արի»: *Մէգ ամիսներ գա* «շուրջ մէկ ամիս կլինի»:

Սրա համեմատ են նաև ամսանունները. ինչ. *նույէմփերներու* «նոյեմբերի մօտ ժամանակները»:

Բացարձակ թուականների յոգնակին (մանաւանդ կրկնութեամբ) ցուցնում է նաև առատութիւն, շատութիւն. *Հարուրներով գա* «հարիւրաւորներ կան». *Դասներով-քսաններով գու գուղնուս* «տասնեակներ ու քսանաւորներ կը գտնես»:

336. *Երկու* բառը յօդ ստանալու և հոլովման ժամանակ առնում է նաև *ս* բաղաձայնը. ինչ. *էրգուսը, էրգուսին, էրգուսէն, էրգուսօվ, էրգուսներ, էրգուսներուն, էրգուսներէն, էրգուսներով*: Այսպէս նաև տասնաւորներում. ինչ. *դասվէրգուսը, քառսունէրգուսէն* են: Նոյն ձայնը մտնում է նաև դասականների և չափականների կազմութեան մեջ. ինչ. *էրգուսում, էրգուսնօց, դասվէրգուսում, դասվէրգուսնօց*. Բայց զարմանալի կերպով պակասում է բաշխականներում. ինչ. *դասվէրգուսզան* են. միայն Չալթրի մեջ ունինք *դասվէրգուսազան* են ձևերը:

*Հատ* բառի հետ միանալով՝ *երկու* բառը արագ արտասանութեամբ լինում է *էրգվ*-. ինչ. *էրգվադ, դասներգվադ* «2, 12 հատ»:

337. *Օխտը, ութը, ինը, դասը* և սրանցից կազմուած տասնաւոր թուականները հոլովման ժամանակ, ինչպէս և *ալ* շաղկապի և էական բայի սահմանականի մօտ իրենց *ը* յանգը վերածում են *ն*. ինչ. *օխտնի, ութնօվ, ինն ալ, դասն է, դասնըիննէն* են: Նոյնը եղել է

նան դասականների, բաշխականների և չափականների կազմութեան մէջ. ինչ. *օխտնում, ութնօց, քսանիննագան* են:

Նոյն թուականները բաշխականների կազմութեան մէջ կրկնութեան ժամանակ գրկուում են իրենց *ը* յանգից և լինում են *օխտ-օխտը, ութ-ութը, ին-ինը, դաս-դասը*:

338. Նոյնպիսի կրճատում գտնում ենք նաև *մէկ* և *երկու* թուականների բաշխականում. առաջինը կորցնելով իր *կ* վերջաձայնը՝ տալիս է *մէ-մէգ*, երկրորդը գրկուելով իր *ու* վերջաձայնից՝ լինում է *երգ-երգու*:

*Հարիւր* բառը արագ արտասանութեամբ լինում է *հարու* և աւելի կրճատ *հար*. ինչ. *չօրս-հինգ հարու մանէթ* (400-500 ռ.), *հար-դասը* (110), *հարիսուն* (150):

339. Դասականներից *առչի* բառը հոլովման և յօդ ստանալու ժամանակ՝ առնում է *ն* ձայնը. ինչ. *առչինը, առչինին, առչինէն, առչինօվ* են. իսկապէս սրանք *առաջին* բառի ածանցներն են:

## ը) Միջակ անուններ

340. Միջակ անունները Նոր-Նախիջևանի բարբառում հետևյալներն են, իրենց հոլովմամբ հանդերձ.

*Ամէն* «բոլոր, բոլորեքեան», *ամէնին, ամէնէն, ամէնօվ*. իբր ածական գործ է ածում «ամբողջ» իմաստով և առնում է յօդ. ինչ. *Ամէն ֆօղը աղաներուն մնաց* «ամբողջ հողը աղաներին մնաց»:

*Ամէն մաշթ, ամէն մաշթու, ամէն մաշթէ, ամէն մաշթօվ*:

*Բնչ, ինչի՞, ինչէ՞, ինչօ՞վ, ինչէ՞ր, ինչէրո՞ւ, ինչէրէ՞, ինչէրօ՞վ*:

*Մէգ մը* «ոմն». գործ է ածում հեքեաթ պատմելու ժամանակ. սովորական բարբառում քիչ է պատահում. ինչ. բց. *մէգմէն, մէգի-մէն, մէգիմէ* «յուսմեմն». միւս հոլովները չկան:

*Մէգալ* «միւս», *մէգալին, մէգալէն, մէգալօվ*. յոգնակիում ստանում է երեք ձև. *մէգալները, մէգալներուն, մէգալներէն, մէգալներօվ* կամ աւելի սովորական՝ *-ունք, -օնք* ձևով՝ *մէգալունք, մէգալունց, մէգալունցէն, մէգալունցօվ* կամ *մէգալօնք, մէգալօնց, մէգալօնցմէն, մէգալօնցմօվ*. (*-ունք* և *-օնք* ձևերը զանազանում են ըստ թաղի

կամ ըստ անձի. սակայն միևնույն անձը երկու ձևերն էլ խառն չի գործածում). դասական գործածութեամբ ասում է *մէգալուն օրը* «միւս օրը» են:

Մէմէգը «ոմն, ոմն ոք, շատերի միջից մէկը» *մէմէգի, մէմէգէ, մէմէգօվ*

*Մէմէգ մաշթ* «ոմն», *մէմէգ մաշթու* են:

*Մէգգմէգ* «իրար», *մէգգմէգու, մէգգմէգէ* կամ *մէգըգմէգումէ, մէգըգմէգօվ*. նոյնը *գ* ձայնի տեղափոխութեամբ՝ *մէմէգգի, մէմէգգէ, մէմէգգօվ*. Չալթրի շրջանում՝ *գ*-ի տեղ *ձ* ձայնով՝ *մէմէձգի, մէմէձգիմէ, մէմէձգօվ* կամ *մէմէձգիմօվ*. Խրիմում *կ*-ի անկումով *մէգմէգի* (Նաւասարդեան, Հեքեաթներ, հտ. է. էջ 63, 65, 69):

*Մէգ քանի, մէգ քանիին, մէգ քանիէն, մէգ քանիօվ*, նաև *մէգ քանի մը*. ինչ. *մէգ քանի մը հօքի*. յատկապէս «մի քանի անգամ». ինչ. *մէգ քանի մը կնացի* (Զ.):

*Մէդօմը* «մէկ կտոր մը, քիչ մը»:

*Մէքամ* «մէկ հատ մը»:

*Մէմէքամ* «մէկ մէկ, իւրաքանչիւրին մէկ հատ»:

*Շաղը* «շատը», *շաղին, շաղէն, շաղօվ, շաղերը, շաղերու, շաղերէ, շաղերօվ*:

*Ուրիշ, ուրիշի, ուրիշէ* կամ *ուրիշմէ, ուրիշօվ* կամ *ուրիշիմօվ, ուրիշներ, ուրիշներու, ուրիշներէ, ուրիշներօվ*:

*Վօվ, վօր, վօրին, վօրիմէն* կամ *վօրինմէն, վօրիմօվ* կամ *վօրինմօվ*. յոգնակին ունի երեք ձև. *վօվէր*՝ որ հիմայ խափանուած է (տե՛ս Պատկ.Գ. 361) և *վօրունք* կամ *վօրօնք, վօրունց* կամ *վօրօնց, վօրունցմէ* կամ *վօրօնցմէ(ն), վօրունցմօվ* կամ *վօրօնցմօվ*. երկու ձևերն էլ գործածական են թաղի կամ անձի տարբերութեամբ. սակայն *վօրօնք* ձևը յաղթելու վրայ է: Գործ է ածում նաև «մէկը, մէկին» նշանակութեամբ և այս պարագային կրկնում է. ինչ. *Սմէնուն իրէն սիրած յէմիշը (պտուղը) խօստացիլ էի. վօրին շէֆդալու, վօրին սալօր, վօրին սէիս, վօրին ձմէրուկ* (Պատկ.Գ. էջ 57). *Վօրը հօս գուգէ, վօրը հօն* (մէկը ա՛յստեղ է ուզում, մէկը ա՛յստեղ): Կրճատ ձև է *վօ* «ով». ինչ. *Վօ՛ գինա վօվ* «ո՛վ գիտէ ո՛վ»:- *Վօվ* նաև իբր յոգնակի է գործածում. ինչ. *Վօվ վօր գնացիլ էին նը, նաքա ստացան*:

*Քանի, քանիի, քանիէն, քանիօվ, քանիներ, քանիներու, քանիներէ, քանիներով:*

## Թ) Դերանուններ

341. Անձնական դերանուններն են.

Առաջին դեր		Երկրորդ դեր	
Եզ.	Եզ.	Եզ.	Եզ.
Ու.	յէս	մէնք	դուն
Ս.	իմ	մեր	քու
Տ.Հ.	ինձի	մեզի	քեզի
Բ.	ինձիմէն	մեզիմէն	քեզիմէն
Գ.	ինձիմով	մեզիմով	քեզիմով

## Երրորդ դեր

Եզ.	Եզ.	Եզ.	Եզ.
Ու.	նա	նաքա	ինքը
Ս.	նարա	նացա,	իրենք, րենք, ժենք,
		նարանց	ինքերը
Տ.Հ.	նարա(ն)	նացա	իրենք, րենք, ժենք
		նարանց	իրենք, րենք, ժենք
Բ.	նարամէն	նացամէն	իրենցմէն, րենցմէն
		նարանցմէն	ժենցմէն, ժենցմէն
Գ.	նարամով	նացամով,	իրենմով, րենմով,
		նարանցմով	իրենցմով, ժենցմով

342. Մրանց մէջ, ինչպէս գիտենք, *իրէն, իրէնք* և այլ *ի*-ով ձեւերը պատկանում են հին լեզուին. առանց ձայնաւորի *րէն, րէնք* պատկանում են նոր սերունդին, ուր արդէն դարձել են *ժէն, ժէնք* ևն:

Գիւղերում գտնում ենք հետևեալ տարբերութիւնները.

Ա դեմքի յոգնակին Չալթրի շրջանում լինում է *մինկ* և *մենք*. միւս հոլովներում *գ*-ի տեղ *ձ* բաղաձայնով գտնում ենք՝ տր.-հյց. *մէձի*, բց. *մէձիմէն*, գրծ. *մէձիմօվ*:

Բ դեմքի յոգնակին նոյնպիսի ձայնափոխութեամբ լինում է տր.-հյց. *ծէձի*, բց. *ծէձիմէն*, գրծ. *ծէձիմօվ*. բայց եզակիում չկան *\*քէձի* և նման ձևեր: Սրանից հետևում է որ ձայնափոխութիւնը սկսել է նախ Բ դեմքի յոգնակիից. բառասկզբի *ձ*-ի ազդեցութեամբ բառամիջի *գ* դարձել է *ձ* (*ձէզի>\*ձէձի*, բայց որովհետև Չալթրում նախաձայն *ձ* դառնում է *ծ*, ուստի և *ծէձի*). սրանից նմանողութեամբ նոյնը անցել է Ա դեմքի յոգնակիին, *մէզի>մէձի* բայց այստեղ կանգնել է և դեռ չէ անցած եզակիին:

Գ դեմքի եզակիում գտնում ենք *նարա* և *նարան* ձևերը. *նարա* սովորական է քաղաքում և Չալթրում. իսկ *նարան* գործածական է Թոփտիում և Փոքր-Սալայում:

Նկատելի է որ անձնական դերանուններում տր. և հյց. հոլովները նոյն ձևն ունին միշտ՝ առանց շնչաւոր և անշունչ առարկաների տարբերութեան. ինչ. Չմերուզը *առէք, իրէն գերէք, գուդէրը քահէցէք*:

Գ դեմքի դերանունան կրկնուած յոգնակիի ձևն է *ինքէրը իրէնց* «իրենք իրենց»:

Քաղաքավարական խօսակցութեան մեջ՝ ռուսերէնի ոճին հետևելով՝ Գ դեմքի դերանունան եզակիի փոխարէն գործ է ածում յոգնակի. ինչ. *նաքա ասին օր Դուք հօս էզի իք նացա դունը գէշթա ք. նացամէ ն առիք*. այս բոլորի մեջ (*նաքա, նացա, նացամէն*) մէկ հոգու մասին է խօսքը:

343. Ցուցական դերանունները՝ որոնք բարբառիս մեջ շատ բազմազան ձևերի են վերածուած, կարող ենք կանոնաւորապէս դասաւորել հետևեալ եղանակով.

Ա.– *աս, սա, ադ, դա, ան, նա*. գալիս են գրաբարի *այս, այդ, այն, սա, դա, նա* ձևերից. բարբառիս ցուցականների պարզ ձևերն են, որոնցից ածանցում են մնացեալ բոլոր ձևերը.

Բ.– *իսա, իդա, ինա*. կազմուած են *ի* յենարանի յաւելումով *սա, դա, նա* պարզ ձևերի վրայ. բայց որովհետև բարբառիս մեջ *ս* բաղաձայնից առաջ *ի* ընկնում է (§ 33), ուստի *իսա* ձևն էլ

հետզհետե խափանուելու վրայ է. արդեն Չալթրում ջնջուած է և նրա տեղ գործ է ածուում *սյա* ձևը. քաղաքում շարունակուում է *խսա* ձևը՝ անշուշտ ազդեցութեամբ *իդա* և *ինա* ձևերի:

Գ.– *խսան, իդան, ինան* կամ *խսանը, իդանը, ինանը*. առաջինները կազմուած են երկրորդ դեմքի ցուցականներից՝ *ն* յօղի յաւելումով. իսկ երկրորդները նրանց վրայ աւելացնելով նաև *ը* յօղը: Ս բաղաձայնից առաջ *ի* ձայնաւորի անկումով Չալթրում ձևացել են *սան, սանը* ձևերը:

Դ.– *ասիգը, իսիգը, ադիգը, իդիգը, անիգը, ինիգը*. կազմուած են *աս, իսա, ադ, իդա, ան, ինա* ձևերից՝ աւելացնելով *-իկ* նուագական մասնիկը, որ այնպէս սովորական է հին հայերէնի ցուցականներում (ինչ. *այսորիկ, այսմիկ, այնուիկ* են). մասնիկի վրայ աւելացել է նաև *ը* յօղը՝ երրորդ խմբի ցուցականների ոճով. (առանց յօղի ձևերը՝ *իսիկ, իդիկ, ինիկ* կամ *ասիկ, ադիկ, անիկ* գտնուում ենք Կարնոյ բարբառում): Ս բաղաձայնից առաջ *ի* ձայնաւորը ջնջուելով՝ բարբառիս մէջ *իսիգը* ձևը գոյութիւն չունի հիմայ, ինչպէս նաև նրանից յառաջացած *\*սիգը* ձևը. բայց երկուսի էլ նախաւոր գոյութեան ապացոյցներն են բց. *իսկից, սիգից, սկից*՝ որոնք գործածական են մինչև հիմայ:

Ե.– *իսավիգը, իդավիգը, ինավիգը*. կազմուած են *իսա, իդա, ինա* պարզ ցուցականներից՝ ներմուծելով *վ* ձայնը և աւելացնելով *-իկ* նուագականը: Այս *վ* ձայնի ներմուծումը գտնուում ենք դերանունների մէջ շատ տեղ. ինչ. Նոր-Նախիջևանի բարբառում *ասուվ*> *ասվուվ, ադուվ*>*ադվուվ, ինուր*>*ինրվուր*: Պօլսի բարբառով *սըզէ*> *սըվզէ* «սրանից» *\*սաուր*>*սավուր, սըվուր* «սրա» են: Հնագոյն *\*իսավիգը* ձևը այժմ չի գործածուում. *ի* ձայնաւորի անկումով սրանից յառաջացել է *սավիգը*, որ արդի բարբառի ընդունած ձևն է: Կորած է նաև *\*ինավիգը* հին ձևը, ճիշտ ինչպէս որ Պօլսի բարբառումն էլ կորած են *\*նվիգա, \*նվիգագ* «այն» ձևերը, մինչդեռ սրանց համադիր *սվիգա, սվիգագ* և *դվիգա, դվիգագ* ձևերը շարունակուում են իրենց գոյութիւնը:

Զ.– *ասիվիգը, իսիվիգը, ադիվիգը, իդիվիգը, անիվիգը, ինիվիգը*. բոլորն էլ կազմուած են *ասի, իսի, ադի, իդի, անի, ինի* պարզ ցուցականներից, որոնք այս բարբառում գոյութիւն չունին հիմայ,



բայց գտնուում են ուրիշ բարբառներում և անշուշտ յառաջացած են *ասիկ, իսիկ, ադիկ, իդիկ, անիկ, ինիկ* ձևերից՝ վերջին *կ* բաղաձայնի կրճատումով. հմմտ. Պօլսի բարբառով *ասիզագ, ադիզագ, անիզագ, սվիզագ, դվիզագ, նվիզագ* և սրանցից յառաջացած *ասիզա, ադիզա, անիզա, սվիզա, դվիզա, նվիզա* ձևերը: Նոր-Նախիջևանի բարբառում հնապէս գոյութիւն ունեցած պէտք է լինին սակայն *ասի, իսի, ադի, իդի, անի, ինի* պարզ ցուցականները, ինչպէս ցոյց են տալիս *իդիբէս, իդրէս* «այդպէս», *սիբէս* «այսպէս» մակբայները: Վերի ձևերից *իսիվիզը* հին ձևն է, բայց դեռ կորած չէ. հմմտ. Պատկ. Բ. 301 և Լոյս 1910, № 31, էջ 7. *ի* ձայնաւորի անկումով կազմուած նոր ձևն է *սիվիզը*, որ հիմայ աւելի գործածական է:

Է.− *\*ասըվիզը, \*իսըվիզը, ադըվիզը, \*իդըվիզը, անըվիզը, \*ինըվիզը*. կազմուած են վեցերորդ խմբից՝ երկրորդ վանկի *ի* ձայնաւորը սղուելով և վերածուելով *ը* (§ 35). *\*իսըվիզը* ձևը նախաձայն *ի*-ի անկումով դարձել է յետոյ *սըվիզը*, որ հիմայ գործածական է բարբառում: Միւսներից *\*ասըվիզը, \*իդըվիզը, \*ինըվիզը* ձևերը հիմայ չեն պատահում բարբառիս մէջ առանձին, բայց սովորական են հոլովեալ ձևերով:

Ը.− *ասվիզը, \*իսվիզը, ադվիզը, իդվիզը, \*անվիզը, \*ինվիզը*. կազմուած են նախորդ եօթներորդ խմբի ցուցականներից՝ երկրորդ վանկի սղեալ *ը* ձայնաւորը բոլորովին ջնջելով: Ս բաղաձայնի մօտ նախաձայն *ի* ջնջվելով՝ *\*իսվիզը* ձևից յառաջացել է *սվիզը*, որ բոլորովին նոյնացել է նախորդ խմբից ուրիշ ճամբով յառաջացած *սվիզը* ձևի հետ: Չեն գործածուում *\*անվիզը, \*ինվիզը* ձևերը, որոնց ջնջումը նոյն պատճառով է ինչ որ վերը թիւ Ե՝ *\*ինսվիզը*:

Յուցականների այս բոլոր ձևերը ամփոփուած և դասաւորուած են հետևեալ տախտակում.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը
աս			ասիզը		ասիվիզը	*ասըվիզը	ասվիզը
սա	իսա	իսան, իսանը	*իսիզը	*իսավիզը	իսիվիզը	*իսըվիզը	*իսվիզը
	այա	սան, սանը	*սիզը	սավիզը	սիվիզը	սըվիզը	սվիզը
ադ			ադիզը		ադիվիզը	ադըվիզը	ադվիզը

դա	իդա	իդան, իդանը	իդիզը	իդավիզը	իդիվիզը	*իդըվիզը	իդվիզը
ան			անիզը		անիվիզը	անըվիզը	*անվիզը
նա	ինա	ինան, ինանը	ինիզը	*ինավիզը	ինիվիզը	*ինըվիզը	*ինվիզը

344. Այս բառերը հոլովուով են հետևեալ ձևով.

### Ա խումբ

Ու.	<i>աւ</i>					
Ս.Տ.	ասօր	ասուր	ասվօր	ասիվօր	ասըվօր	
Բ.	ասօրմէն		ասվօրմէն	ասիվօրմէն	ասըվօրմէն	
Գ.	ասօրմօլ	ասօլ	ասվօլ	ասիվօրմօլ	ասըվօլ	

Ու.	<i>ադ</i>				
Ս.Տ.	ադօր	ադուր	ադվօր		ադըվօր
Բ.	ադօրմէն		ադվօրմէն		
Գ.	ադօրմօլ	ադօլ	ադվօլ	ադիվօլ	ադըվօլ

Ու.	<i>ան</i>				
Ս.Տ.	անօր	անուր	անվօր		անըվօր
Բ.	անօրմէն				
Գ.	անօրմօլ	անօլ		անիվօլ	անըվօլ

Ու.	<i>սա</i>				
Ս.Տ.	սարա				
Բ.	սարամէն				սագից
Գ.	սարամօլ				

Ու.	<i>դա</i>				
Ս.Տ.	դարա				
Բ.	դարամէն				
Գ.	դարամօլ				

Ու.	<i>նա</i>
Ս.Տ.	նարա
Բ.	նարամեն
Գ.	նարամով

### Բ խումբ

Ու.	իսա			
Ս.Տ.	իսօր	(ի)սավօր	(ի)սըվօր	սիվօր
Բ.		(ի)սավօրմեն	(ի)սըվօրմեն(ն)	սիվօրմեն
Գ.		(ի)սավօրմով	(ի)սըվօրմով	սիվօրմով
		սավով	սըվով	սիվով

Ու.	<i>իդա</i>				
Ս.Տ.	իդօր	իդավօր	իդըվօր	իդիվօր	իդվօր
		իդավուր(ին)			
Բ.	իդօրմեն	իդավօրմեն	իդըվօրմեն(ն)	իդիվօրմեն	
Գ.	իդօրմով	իդավօրմով	իդըվօրմով	իդիվօրմով	
		իդավով	իդըվով		

Ու.	<i>սյա</i>		
Ս.Տ.	սյօր	սայօր	սյավօր
Բ.	սյօրմեն	սայօրմեն	
Գ.	–		

### Գ խումբ

Այս խմբին պատկանող ձևերը (*իսան, իսանը* կամ *սան, սանը, իդան, իդանը, ինան, ինանը*) անհոլով են. գործ են ածուում միայն ուղ.-իյց. հոլովաձևով. ինչ. *էդաձը իսա՞ն է* «էդաձը ա՞յս է». *Իդանը հօս բէր* «այդ այստեղ բեր»:

### Դ խումբ

Դ խմբին պատկանող ցուցականները (*ասիգը, \*իսիգը* կամ *\*սիգը, ադիգը, իդիգը, անիգը, ինիգը*) նոյնպես անհոլով են. բայց

մնում են դեռ նրանց բացառականները և այն զարմանալի յատկութեամբ որ բոլորն էլ կազմւած են Ում ճիւղի բարբառներին յատուկ *-ից* մասնիկով. այսպէս՝

Ու. ասիգը\* իսիգը\* սիգը ադիգը իդիգը անիգը ինիգը  
Բ. ասկից իսկից սիգից ադգից իդգից անգից ինգից  
սկից

Պօլսի բարբառումն էլ կայ Ում-ի ոճով բացառական. ինչ. *ասկէց, անգէց, ադգէց, սկէց, դգէց, նգէց, վո՞ւրգէց*:

### Ե խումբ

Այս խմբից մնում է միայն *սավիգը* և *իդավիգը* ձևերը, որոնք անհոլով են. գործ են ածւում միայն իբրև ուղ.-հյց.:

### Զ-Ը խումբ

Այս երեք խմբերը գրեթէ նոյն ձևով են հոլովւում. ուստի և միացնում ենք մէկ ցուցակի մէջ.

Ու	ասիվիգը	իսիվիգը	սիվիգը	ադիվիգը	իդիվիգը	անիվիգը	ինիվիգը
Ս.Տ.					իդիվիգին		ինիվիգին
Բ.			սիվիգից		իդիվիգէն		ինիվիգէն
Գ.			սիվիգօվ		իդիվիգօվ		ինիվիգօվ

Ու	*ասըվիգը	*իսըվիգը	սըվիգը	ադըվիգը	*իդըվիգը	անըվիգը	*ինըվիգը
Ս.Տ.				ադըվիգին	իդըվիգին	անըվիգին	ինըվիգին
Բ.				ադըվիգէն	իդըվիգէն	անըվիգէն	ինըվիգէն
Գ.				ադըվիգօվ	իդըվիգօվ	անըվիգօվ	ինըվիգօվ
Ու	ասվիգը	*իսվիգը	սըվիգը	ադվիգը	իդվիգը	*անվիգը	*ինվիգը
Ս.Տ.				ադվիգին	իդվիգին		
Բ.				ադվիգէն	իդվիգէն		
Գ.				ադվիգօվ	իդվիգօվ		

345. Յոգնակիի կազմութեան մէջ ցուցականներից ոմանք հետևում են եզակիին, ուրիշներ կազմում են նոր բներից. այսպէս ունինք՝

եզ. աւ, ադ, ան - յգ. ասօնք, ադօնք, անօնք.  
ասունք, ադունք, անունք.  
ասօնքները, ադօնքները, անօնքները.

եզ. սա, դա, նա - յգ. սաքա, դաքա, նաքա.

եզ. իսա, իդա, ինա - յգ. իսօնք, իդօնք, ինօնք.  
\*իսօնքները, իդօնքները, ինօնքները.  
(ի)սավօնք, իդավօնք, ինավօնք.  
(ի)սավօնքները, իդավօնքները, ինավօնքները.  
\*(ի)սավունք, իդավունք, \*ինավունք.

եզ. ասի, ադի, անի - յգ. ասիվօնք, ադիվօնք, անիվօնք.  
ասիվօնքները, ադիվօնքները, անիվօնքները.  
ասըվօնք, ադըվօնք, անըվօնք.  
ասըվօնքները, ադըվօնքները, անըվօնքները.

եզ. իսի, իդի, ինի - յգ. (ի)սիվօնք, իդիվօնք, ինիվօնք.  
(ի)սիվօնքները, իդիվօնքները, ինիվօնքները.  
\*(ի)սիվունք, իդիվունք, \*ինիվունք.  
(ի)սըվօնք, իդըվօնք, ինըվօնք.  
(ի)սըվօնքները, իդըվօնքները, ինըվօնքները.  
\*(ի)սըվունք, իդըվունք, \*ինըվունք.  
(ի)սվօնք, իդվօնք, ինվօնք.  
(ի)սվօնքները, իդվօնքները, ինվօնքները.  
\*(ի)սվունք, իդվունք, \*ինվունք:

346. Ինչպէս տեսնում է, այս 22 (առաջին դէմքի համար 31) ձևերը վերածում են վեց պարզագոյն ձևերի. այսպէս՝

ա. *Ասօնք, աղօնք, անօնք*, որոնք ընդհանուր են Կը ճիւղին վերաբերող ուրիշ շատ բարբառների և կազմուած են *այս, այդ, այն* եզակի ցուցականներից *-օնք* յոգնակերտ մասնիկով. հմմտ. *մէրոնք, ձերոնք, իմոնք, քոնոնք* են:

բ. *Սաքա, դաքա, նաքա*. ծագում են հին հայերէնի *սոքա, դոքա, նոքա* ձևերից, սրանց միջին *ո* ձայնաւորը վերածելով *ա*՝ մասամբ վերջաձայն *ա-* ի ազդեցութեամբ և մասամբ էլ *սա, դա, նա* եզակիների *ա-*ի ազդեցութեամբ:

գ. *Բսօնք, իղօնք, ինօնք*. կազմուած են *իսա, իղա, ինա* եզակիներից՝ յոգնակերտ *-օնք* մասնիկով և *ա* ձայնաւորի ջնջումով:

դ. *Բսալօնք, իղալօնք, ինալօնք*. կազմուած են նոյնպէս *իսա, իղա, ինա* եզակիներից՝ յոգնակերտ *-օնք* մասնիկով և ներմուծելով *ւ* ձայնը, որ գտանք նաև եզակիի Ե-Ը խմբերում:

ե. *Ասիլօնք, աղիլօնք, անիլօնք*. կազմուած են *ասի, աղի, անի* նախաւոր ձևերից՝ յոգնակերտ *-օնք* մասնիկով և *ւ* ձայնի ներմուծմամբ: Ներկայումս *ասի, աղի, անի* եզակիները գոյութիւն չունին բարբառում. բայց նախապէս գոյութիւն ունէին անշուշտ, ինչպէս տեսանք եզակիի Զ խմբի կազմութեան մէջ:

զ. *Բսիլօնք, իղիլօնք, ինիլօնք*. կազմուած են *իսի, իղի, ինի* եզակիներից՝ յոգնակերտ *-օնք* մասնիկով և *ւ* ձայնի ներմուծմամբ: Եզակի *իսի, իղի, ինի* ձևերի վրայ, որ հիմայ գոյութիւն չունին բարբառում, տե՛ս նոյնպէս եզակիի Զ խմբի մէջ:

Վերջին ե և գ ձևերի մէջ միջին *ի* ձայնաւորը սղուելով կամ ընկնելով՝ յառաջ են գալիս *ասըլօնք, իսըլօնք, իսլօնք* են երկրորդական ձևերը: *Ասիլօնք, աղիլօնք, անիլօնք* ձևերից կրճատուած *\*ասլօնք, \*աղլօնք, \*անլօնք* ձևերին չեմ պատահել, բայց կարող է լինել որ մի որևէ գիւղում կամ թաղում գոյութիւն ունենան:

Ուր որ յոգնակերտ *-օնք* մասնիկը կայ՝ կարելի է այնտեղ *օ* ձայնաւորի փոխարէն գտնել *ու*. այսպէս՝ *ասօնք* կամ *ասունք, իսալօնք* կամ *իսալունք, իսիլօնք* կամ *իսիլունք, իսըլօնք* կամ *իսըլունք, իսլօնք* կամ *իսլունք* են: Բացառաբար *իսօնք, ասիլօնք* և *ասըլօնք* ձևերի դէմ չկան *\*իսունք, \*ասիլունք, \*ասըլունք* ձևերը՝ որոնք հաւանաբար կարելի է թէ որևէ գիւղի կամ թաղի մէջ գոյութիւն ունին:

-*օնք* մասնիկով կազմուած յոգնակիները Չալթրի շրջանում կարող են երկրորդ անգամ յոգնակի դառնալ -*ները* մասնիկով և ահա վերևի բոլոր ութը ձևերի դեմ կունենանք 8 նոր կրկնակ ձևեր, ինչ. *ասօնք, ասօնքները, իսավօնք, իսավօնքները* են: Չարմանալի է որ -*ունք* ձևի դեմ այսպիսի կրկնակներ չկան:

Ս բաղաձայնից առաջ *ի* ձայնաւորի անկման օրէնքի համաձայն (§ 33) *իսավօնք, իսիվօնք* են ձևերը լինում են նաև *սավօնք, սիվօնք* են. առաջինները գոյութիւն ունին հնագոյն լեզուի մէջ (հմմտ. *իսիվօնց* Պատկ. Բ. 377), իսկ երկրորդները միայն նոր լեզուի մէջ և մանաւանդ գիւղերը: *Իսօնք* և *\*իսօնքները* ձևերը չեն կրճատուում, իսկ *իսրվօնք, իսրվօնքները, իսրվունք* ձևերը մի կողմից և *իսվօնք, իսվօնքները, իսվունք* ձևերը միւս կողմից՝ կրճատմամբ հասնում են միևնոյն արդիւնքին:

347. Յուցական դերանունների յոգնակիները հոլովւում են հետևեալ ձևով.

Ու.	ասօնք	ասունք	ասօնքները
Ս.Տ.	ասօնց	ասունց	ասօնքներուն
Բ.	ասօնցմէն		ասօնքներէն
Գ.	ասօնցմով		ասօնքներով
	ասօնցով		

Ու.	ադօնք	ադունք	ադօնքները
Ս.Տ.	ադօնց	ադունց	ադօնքներուն
Բ.	ադօնցմէն		ադօնքներէն
Գ.	ադօնցմով	ադունցմով	ադօնքներով
	ադօնցով		

Ու.	անօնք	անունք	անօնքները
Ս.Տ.	անօնց	անունց	անօնքներուն
Բ.	անօնցմէն		անօնքներէն

Գ.	անօնցմով անօնցով	անօնքներով
----	---------------------	------------

Ու.	սաքա	դաքա	նաքա
Ս.Տ.	սացա	դացա	նացա
Բ.	սացամէն	դացամէն	նացամէն
Գ.	սացամով	դացամով	նացամով

Ու.	իսօնք	*իսօնիքները	(ի)սավօնք	(ի)սավօնքները *(ի)սավունք
Ս.Տ.	իսօնց		սավօնց	սավօնքներուն
Բ.	իսօնցմէ		սավօնցմէն	սավօնքներէն
Գ.	իսօնցմով		սավօնցմով	սավօնքներով

Ու.	իդօնք	իդօնքները	իդավօնք	իդավօնքները իդավունք
Ս.Տ.	իդօնց	իդօնքներուն	իդավօնց	իդավօնքներուն իդավունց
Բ.	իդօնցմէն	իդօնցներէն	իդավօնցմէն	իդավօնքներէն իդավունցմէն
Գ.	իդօնցմով	իդօնքներով	իդավօնցմով	իդավօնքներով

Ու.	ինօնք	ինօնքները	ինավօնք	ինավօնքները *ինավունք
Ս.Տ.	ինօնց	ինօնքներուն	ինավօնց	ինավօնքներուն
Բ.	ինօնցմէն	ինօնքներէն	ինավօնցմէն	ինավօնքներէն
Գ.	ինօնցմով	ինօնքներով	ինավօնցմով	ինավօնքներով

Ու.	ասիվօնք	ասիվօնքները	ասըվօնք	ասըվօնքները
Ս.Տ.	ասիվօնց	ասիվօնքներուն	ասըվօնց	ասըվօնքներուն ասիվօնցներուն



Բ.	ասիվոնցմէն	ասիվոնքներէն	ասըվոնցմէն	ասըվոնքներէն
Գ.	ասիվոնցմով	ասիվոնքներով	ասըվոնցմով	ասըվոնքներով

Ու.	աղիվոնք	աղիվոնքները	աղըվոնք	աղըվոնքները
Ս.Տ.	աղիվոնց	աղիվոնքներուն աղիվոնցներուն	աղըվոնց	աղըվոնքներուն աղըվոնցներուն
Բ.	աղիվոնցմէն	աղիվոնքներէն	աղըվոնցմէն	աղըվոնքներէն
Գ.	աղիվոնցմով	աղիվոնքներով	աղըվոնցմով	աղըվոնքներով

Ու.	անիվօսք	անիվոնքները	անըվոնք	անըվոնքները
Ս.Տ.	անիվոնց	անիվոնքներուն (*անիվոնցներուն)	անըվոնց	անըվոնքներուն
Բ.	անիվոնցմէն	անիվոնքներէն	անըվոնցմէն	անըվոնքներէն
Գ.	անիվոնցմով	անիվոնքներով	անըվոնցմով	անըվոնքներով

իդիվոնք, իդիվոնց, իդիվոնցմէն, իդիվոնցմով.

իդիվոնքները, իդիվոնքներուն կամ իդիվոնցներուն, իդիվոնքներէն կամ իդիվոնցներէն (Պատկ. Գ. 91), իդիվոնքներով.

իդիվունք, իդիվունց.

իդըվոնք, իդըվոնց, իդըվոնցմէն, իդըվոնցմով.

իդըվոնքները, իդըվոնքներուն, իդըվոնքներէն, իդըվոնքներով.

իդըվունք, իդըվունց.

իդվոնք, իդվոնց, իդվոնցմէն, իդվոնցմով.

իդվոնքները, իդվոնքներուն կամ իդվոնցներուն, իդվոնքներէն, իդվոնքներով.

իդվունք, իդվունց:

Սրա համեմատ նաև *խիվոնք* նև:

348. Ինչպէս տեսնուում է ցուցակների այս ձևերը, եզակի թէ յոգնակի, իրենց բոլոր հոլովներով, մեծաւ մասամբ համադիր ու համապատասխան են իրար. բայց մի քանի տեղ համադրութիւնը պակասում է այսպէս՝ առաջին դէմքի համար կայ բց. *սագից* ձևը, բայց չկան երկրորդ և երրորդ դէմքին համապատասխան *\*ղագից*, *\*նագից* ձևերը. երեք դէմքերի համար ունինք սեռ.-տր. *ասուր, ա-դուր, անուր* ձևերը, բայց պակասում են սրանց միւս հոլովները

*\*ասուրմէ, \*անուրմէ* են. կան առաջին դէմքի համար *ասիւօր, ասիւօրմէն, ասիւօրմօւ*. Բայց միւս երկու դէմքերի համապատասխան *\*աղիւօր, \*անիւօր, \*աղիւօրմէն, \*անիւօրմօւ* են ձևերը պակասում են. երկրորդ և երրորդ դէմքերի համար կան *իդօրմէն, ինօրմէն, իդօրմօւ, ինօրմօւ*, Բայց չկան առաջին դէմքի համար *\*իսօրմէն, \*իսօրմօւ*, սեռական ձևը լինելով հանդերձ կայ կրճատ *իդիւօր* ձևը, Բայց ո՛չ սրա համապատասխան առաջին և երկրորդ դէմքերը կան և ոչ էլ սրա միւս հոլովները. երկրորդ և երրորդ դէմքերի համար կան *աղըվիզը, անըվիզը* բառերը իրենց բոլոր հոլովներով, Բայց սրանց համապատասխան առաջին դէմքի նոյն իսկ ուղղականը չկայ. և ուրիշ բազմութիւն մանր պակասներ:

Այս պակասների համար կարող ենք ասել թէ ոմանք հնապէս անշուշտ կային և հիմայ խափանուած են, ինչպէս որ ուրիշներ էլ խափանուելու վրայ են և հագուագիւտ գործածութիւն ունին, ոմանք էլ իբրև հագուագիւտ ձևեր գործածութեան մէջ աչքի չեն գարնում և այս պատճառով էլ ո՛չ ականջով կարողացել եմ լսել և ո՛չ էլ տպագրեալ գրութեանց մէջ պատահել. վստահ եմ սակայն որ Խրիմի որևէ մէկ գաւառականում և կամ Նոր-Նախիջևանի շրջանի որևէ մէկ գիւղում կամ թաղում կան ու պիտի գտնուին:

349. Վերը նշանակուած ցուցակների բոլոր ձևերն էլ գործածական են իբրև ցուցական դերանուն. Բայց նրանցից *աս, սա, իսա, սյա – ադ, դա, իդա – ան, նա, ինա* ձևերը գործածական են նաև իբրև ցուցական ածական՝ յաջորդ գոյականով՝ որին կցւում է անպատճառ որոշեալ յօդ. ինչ. *աս մաշթը, սա դունը, ան ջուրը, իդա խանութէն* են: Միւս ձևերը՝ որոնք ունին որոշեալ յօդ (*իսան, սանը* են), կամ կազմուած են *-իկ* նուագականով և կամ յոգնակի են, գործածուում են միմիայն իբր դերանուն և բնաւ չեն կարող ածական լինել:

350. Ստացական ածականներն են.

Ա դէմք – *իմ, իմիս*, – յգ. *մէր*.

Բ դէմք – *քու, քուգուդ*, – յգ. *ձէր*.

Գ դէմք – *իրէն, րէն, ժէն*, – յգ. *իրէնց, րէնց, ժէնց*.

*նարա*, – յգ. *նացա*:

Սրանք բոլոր գործածում են գոյականի մօտ, որի վրայ աւելանում է եզակիում Ա դեմքի համար *ս* յօդը, Բ դեմքի համար *դ* յօդը, Գ դեմքի և յոգնակիի բոլոր դեմքերի համար էլ *ը* կամ *ն* յօդը. ինչ. *իմ դունըս* կամ *իմիս դունս* «տուն իմ», *քու հացդ* կամ *քուգուդ հացդ* «հաց քո», *իրեն մաշթը* կամ *ժեն մաշթը* «այր իւր», *մէր հացը* ևն:

Սրանք իբր ածական՝ դրում են գոյականից առաջ, բայց իբր կոչական գոյականի հետ գործածուին, լինում են յետադաս. ինչ. *Վա՛յ, նախշո՛ւնս իմիս, հօքի ս, սիրագա՛ւնս իմիս:*

351. Ստացական ածականները յօդ առնելով և անկախաբար գործածուելով լինում են դերանուն և հոլովում են հետևեալ ձևով. (յօդը միշտ *ը* է, բայց էական բայի և *ալ* շաղկապի մօտ լինում է *ն*. ինչ. *իմիսը, իմիսն է, իմիսն ալ*):

### Եզակի

Ու.	իմիսը	քուգուդը	ժենը	նարանը
Ս.Տ.	իմիսին	քուգուդին	ժենին	նարանին
Բ.	իմիսէն	քուգուդէն	ժենէն, ժէնմէն	նարանէն, նարանմէն
Գ.	իմիսով	քուգուդով	ժէնով	նարանով
	իմիսմով	քուգուդմով	ժէնմով	նարանմով

Ու.	մէրը	ձերը	ժէնցը	նացանը
Ս.Տ.	մէրին	ձերին	ժէնցին	նացանին
Բ.	մէրէն	ձերէն	ժէնցէն	նացանէն
Գ.	մէրով	ձերով	ժէնցով	նացանով

### Յոգնակի

Ու.	իմիսները	քուգուդները	ժէնները	նարանները
Ս.Տ.	իմիսներուն	քուգուդներուն	ժէններուն	նարաններուն
Բ.	իմիսներէն	քուգուդներէն	ժէններէն	նարաններէն
Գ.	իմիսներով	քուգուդներով	ժէններով	նարաններով

Ու.	մէրերը	ձերերը	ժէնցերը	նացանները
Ս.Տ.	մէրերուն	ձերերուն	ժէնցերուն	նացաններուն

Բ.	մերերեն	ձերերեն	ժենցերեն	նացաններեն
Գ.	մերերով	ձերերով	ժենցերով	նացաններով

Յոգնակին կարող է կազմուել նաև *-օն/ի* մասնիկով. այսպես՝

Ու.	իմիսօնք	քուգուդօնք	ժէնօնք	նարանօնք
Ս.Տ.	իմիսօնց	քուգուդօնց	ժէնօնց	նարանօնց
Բ.	իմիսօնցմէն	քուգուդօնցմէն	ժէնօնցմէն	նարանօնցմէն
Գ.	իմիսօնցմով	քուգուդօնցմով	ժէնօնցմով	նարանօնցմով

Ու.	մէրօնք	ձէրօնք
Ս.Տ.	մէրօնց	ձէրօնց
Բ.	մէրօնցմէն	ձէրօնցմէն
Գ.	մէրօնցմով	ձէրօնցմով
	մէրօնցով	ձէրօնցով

*-օնք* վերջաւորութիւնը, ինչպէս այլուր նկատել ենք (§ 340), կարող է դառնալ նաև *-ունք*, որից սեռ. *-ունց* են. ինչ. *մէրօնք* կամ *մէրունք*, *մէրօնց* կամ *մէրունց*, *մէրօնցմէն* կամ *մէրունցմէն* են, որ աւելորդ են համարում մի առ մի յիշել:

*-ց* ձայնից առաջ ըստ ոմանց *ն* ձայնը ջնջւում է, որով ունենում ենք *քուգուդօնց* կամ *քուգուդօց*, *քուգուդօցմով*, *մէրօնցմով* կամ *մէրօցմով*, *ձէրօնցմով* կամ *ձէրօցմով* են ձևերը, որ այսպէս աւելորդ են համարում բոլորը կարգով յիշել:

*Իս*, *քու* ստացական ածականներից դերանուն չի կազմում. իբր ածական էլ նուազ գործածական են քան *իսիս* և *քուգուդ* ձևերը. *(ի)րէն*, *(ի)րէնց* ձևերը յատուկ են հին բարբառին և ճիշտ նման *ժէն*, *ժէնց* ձևերին, ուստի աւելորդ համարեցի նրանց դերանունների հոլովմունքը նշանակել:

Վերոգրեալ բոլոր ստացականներն էլ եզակիի առաջին և երկրորդ դէմքի երկու թուերի մէջ էլ փոխանակ որոշեալ յօդի՝ կարող են ստանալ նաև դիմորոշ յօդ (առաջին դէմքի համար *ս*, երկրորդ դէմքի համար *դ*), հետևեալ ձևով.

Ու.	–	–	իմիսներս	քուգուղներդ
Ս.Տ.	իմիսիս	քուգուղիդ	իմիսներուս	քուգուղներուդ
Բ.	իմիսէս	քուգուղէդ	իմիսներէս	քուգուղներէդ
Գ.	իմիսովս	քուգուղով	իմիսներովս	քուգուղներովդ
	իմիսմովս	քուգուղմովդ		

Ու.	իմիսօնքս	քուգուղօնքդ
Ս.Տ.	իմիսօնցս	քուգուղօնցդ
Բ.	իմիսօնցմէս	քուգուղօնցմէդ
Գ.	իմիսօնցմովս	քուգուղօնցմովդ

Կամ նաև *ն-ի* ջնջումով՝ *քուգուղօցդ, քուգուղօցմովդ* են:

Հին լեզուի մէջ *իմիս* և *քուգուղ* ձևերը սղուելով լինում են *իմը՝ ս, ըմը՝ ս, քուգը՝ դ.* այսպէս՝

Ու.	իմը՝ սը, ըմը՝ սը (Պատկ. Գ. 143)	ըմըսօնք
Ս.Տ.	ըմըսիին	ըմըսօնց
Բ.	ըմըսէն	ըմըսօնցմէն
Գ.	ըմըսով, ըմըսմով	ըմըսօնցմով

Նմանապէս *քուգըղը, քուգղը* Պատկ. Գ. 153, 261, բց. քուգղէն Պատկ. Գ. 136: Միւս ձևերը չեն հանդիպած:

352. Նախորդ § 351 յօդուածում յիշուած բոլոր ստացական դերանունները իրենց նշանակութեան մէջ զօրութեամբ պարունակում են մէկ եզակի կամ մէկ յոգնակի գոյական. այսպէս՝ փոխանակ ասելու *իմ ձիս ճերմակ է, քու ձիդ սև է*, կարող ենք *ձի* գաղափարը ներփակելով *իմ, քու* ստացականների մէջ՝ ասել *իմիսը ջերմագ է, քուգուղը սեւ է*. կամ նոյնը յոգնակիով՝ փոխանակ ասելու «իմ ձիերս ճերմակ են, քու ձիերդ սև են», կարող ենք պարզապէս ասել *իմիսները ջերմագ ին, քուգուղները սեւ ին*:

Բայց կարող է լինել որ զօրութեամբ արտայայտուելու գոյականը հետն էլ մի յատկացուցիչ ունենայ. օր. «իմ ձիուս ոտքը ճերմակ է, քու ձիուդ ոտքը սև է»: Այս պարագային կարելի է գոյականը իր յատկացուցիչով միասին ներփակել *իմ, քու* ստացականների

մէջ և այն ժամանակ երևան կգայ ստացականների մի նոր շարք որ կազմուած է նախորդ ստացականների սեռականից՝ աւելացնելով նրա վրայ որոշեալ յօդ (եզ. Ա և Բ դէմքերի վրայ երբեմն էլ *ս, ղ* դիմորոշները) և ամբողջը առնելով իբր ուղղական: Այս ոճով վերի օրինակը դառնում է *իմիսինը ջերմագ է, քուգուդինը սել է:*

Ահա այս կարգի ստացականների ամբողջ շարքը.

<i>Մի գոյականով</i>	<i>Երկու գոյականով</i>
իմիսը	իմիսինը
քուգուդը	քուգուդինը
ժէնը	ժէնինը
նարանը	նարանինը
մերը	մերինը
ձերը	ձերինը
ժէնցը	ժէնցինը
նացանը	նացանինը
իմիսները	իմիսներունը, իմիսներուսը
իմիսօնք	իմիսօնցը, իմիսօնցըսը
քուգուդները	քուգուդներունը, քուգուդներուդը
քուգուդօնի	քուգուդօնցը, քուգուդօնցըդը
ժէնները	ժէններունը
նարանները	նարաններունը
մերօնք	մերօնցը
ձերօնք	ձերօնցը
ժէնօնք	ժէնօնցը
նարանօնք	նարանօնցը
մերերը	մերերունը
ձերերը	ձերերունը
ժէնցները	ժէնցներունը
նացանները	նացաններունը

Այս բոլոր երկրորդ աստիճանի ստացականներն էլ հոլովւում են սովորական ձևով՝ առաջին աստիճանի (պարզ կամ մէկ գոյական պարունակող) ստացականներին նման. օր.

Ու.	իմիսինը	քուգուդինը	մերինը
Ս.Տ.	իմիսինին	քուգուդինին	մերինին
Բ.	իմիսինէն	քուգուդինէն	մերինէն
Գ.	իմիսինով	քուգուդինով	մերինով
	իմիսինմով	քուգուդինմով	
	իմիսիմով	քուգուդիմով	

Ու.	մերօնցը	իմիսօնցը
Ս.Տ.	մերօնցին	իմիսօնցին
Բ.	մերօնցէն	իմիսօնցէն
Գ.	մերօնցմով	իմիսօնցմով

### Յոգնակի

Ու.	իմիսինօնք	քուգուդինօնք	մերինօնք
Ս.Տ.	իմիսինօնց	քուգուդինօնց	մերինօնց
Բ.	իմիսինօնցմէն	քուգուդինօնցմէն	մերինօնցմէն
Գ.	իմիսինօնցմով	քուգուդինօնցմով	մերինօնցմով

Ու.	մերօնցները	իմիսօնցները
Ս.Տ.	մերօնցներուն	իմիսօնցներուն
Բ.	մերօնցներէն	իմիսօնցներէն
Գ.	մերօնցներով	իմիսօնցներով

Յոգնակիում -*օնք* դնելու փոխարէն՝ կարելի է և դնել -*նէք*, բայց քիչ գործածական է. ինչ. *քուգուդինները, քուգուդիններէն* են:

Ամբողջ հոլովման մէջ եզակի առաջին և երկրորդ դէմքի դէրանունները կարող են ստանալ *ւ, ղ* դիմորոշ յօդերը. բացի սրանից առաջին սեռականի *ի* ձայնաւորը կարող է բոլորովին ընկնել, որով յառաջ են գալիս իրար հոմանիշ միայն չորս ձևեր. օր.

Ու.	իմիսինը			
Ս.Տ.	իմիսինին	իմիսինիս	իմիսնին	իմիսնիս
Բ.	իմիսինէն	իմիսինէս	իմիսնէն	իմիսնէս
Գ.	իմիսինով	իմիսինովս	իմիսնով	իմիսնովս

իմիսիմով	իմիսիմովս
իմիսիմով	իմիսիմովս

Ու.	քուգուդինը			
Ս.Տ.	քուգուդինին	քուգուդինիդ	քուգուդնին	քուգուդնիդ
Բ.	քուգուդինէն	քուգուդինէդ	քուգուդնէն	քուգուդնէդ
Գ.	քուգուդինով	քուգուդինովդ	քուգուդնով	քուգուդնովդ
	քուգուդինմով	քուգուդինմովդ		
	քուգուդիմով	քուգուդիմովդ		

Ու.	մէրինը	
Ս.Տ.	մէրինին	մէրնին
Բ.	մէրինէն	մէրնէն
Գ.	մէրինով	մէրնով

Ու.	իմիսիւնք	իմիսիւնքս	իմիսիւնք	իմիսիւնքս
Ս.Տ.	իմիսիւնց	իմիսիւնցս	իմիսնց	իմիսնցս
Բ.	իմիսիւնցմէն	իմիսիւնցմէս	իմիսնցմէն	
			իմիսնցմէս	
Գ.	իմիսիւնցմով	իմիսիւնցմովս	իմիսնցմով	իմիսնցմովս

Ու.	քուգուդիւնք	քուգուդիւնիդ	քուգուդնք	քուգուդնքդ
Ս.Տ.	քուգուդիւնց	քուգուդիւնցդ	քուգուդիւնց	քուգուդիւնցդ
Բ.	քուգուդիւնցմէն	քուգուդիւնցմէդ	քուգուդիւնցմէն	քուգուդիւնցմէդ
Գ.	քուգուդիւնցմով	քուգուդիւնցմովդ	քուգուդիւնցմով	քուգուդիւնցմովդ

Ու.	մէրիւնք	մէրնւնք
Ս.Տ.	մէրիւնց	մէրնւնց
Բ.	մէրիւնցմէն	մէրնւնցմէն
Գ.	մէրիւնցմով	մէրնւնցմով



Տեղ տեղ կարելի է *մ* և *ց* բաղաձայններից առաջ գտնուած *ն* ունգականը ջնջել. ինչ. *քուգուղինոնց* կամ *քուգուղինոց*, *քուգուղինոնցմէն* կամ *քուգուղինոցմէն* են, *նարանինմէն* կամ *նարանիմէն*, *նարանինմով* կամ *նարանիմով*:

353. Ստացական դերանունները կարող են պարունակել նաև երեք գոյական և այս բանը տեղի է ունենում այն ժամանակ, երբ գոյականի մօտ գտնուած յատկացուցիչը ինքը մի յատկացուցիչ էլ ունի. այսպէս օրինակի համար՝ «իմ ձիուս ոտքի եղունգը ճերմակ է, քու ձիուդ ոտքի եղունգը սև է» նախադասութեանց մէջ *իմ*, *քու* ստացական ածականները ունին իւրաքանչիւրը մէկ ստացեալ՝ երկու յատկացուցիչով: Այս երեք գոյականները միասին արտայայտելու համար ահա կազմուած են երրորդ աստիճանի ստացական դերանունները, որոնք կազմուած են երրորդ աստիճանի ստացական դերանունների սեռականից՝ աւելացնելով նրանց վրայ որոշեալ յօդը և ամբողջը առնելով իբր նոր ուղղական: Այսպէս վերի նախադասութիւնները ստացական դերանուններով արտայայտելով լինում են՝ *իմիսինինը ջերմագ է, քուգուղինինը սեւ է*:

Ահա այս կարգի ստացականների շարքը, համեմատութեամբ նախորդների, ամբողջական և *ի* ձայնաւորը կրճատուած ձևով.

մէկ գոյականով	երկու գոյականով	երեք գոյականով
իմիսը	իմիսինը	իմիսինինը, իմիսինը
քուգուղը	քուգուղինը	քուգուղինինը, քուգուղինը
ծէնը	ծէնինը	ծէնինինը, ծէնինը
նարանը	նարանինը	նարանինինը, նարանինը
մերը	մերինը	մերինինը, մերինը
ձերը	ձերինը	ձերինինը, ձերինը
ծէնցը	ծէնցինը	ծէնցինինը
նացանը	նացանինը	
իմիսները	իմիսներունը, իմիսներուսը	
իմիսօնք	իմիսօնցը, իմիսօնցըսը	իմիսօնցինը, իմիսօնցիսը
քուգուղները	քուգուղներունը, քուգուղներուդը	
քուգուղօնք	քուգուղօնցը, քուգուղօնցըդը	քուգուղօնցինը
մերօնք	մերօնցը	մերօնցինը
ծէնները	ծէններունը	
նարանները	նարաններունը	
ձերօնք	ձերօնցը	ձերօնցինը

Ժէսօնք	Ժէսօնցը	Ժէսօնցինը
նարանօնք	նարանօնցը	նարանօնցինը
մերերը	մերերունը	
ձերերը	ձերերունը	
Ժէսնէրը	Ժէսնէրունը	Ժէսնէրունինը
նացաննէրը	նացաննէրունը	

Երկրորդ շարք յոգնակիներն էլ կարող են այս ձևի տակ մտնել և կանցնին երրորդ շարքը. այպէս՝

իմիսինօնք	իմիսինօնցը, իմիսնօնցը
քուգուղինօնք	քուգուղինօնցը, քուգուղնօնցը
մերօնցնէրը	մերօնցնէրունը
նարան(ի)նօնք	նարաննօնցը ևն ևն:

Այս բոլորը առնուելով իբր նոր ուղղական՝ կարող են հոլովիլ իրենց կարգին՝ հետևեալ ձևով (ամբողջական կամ կրճատելով / չ ձայնը).

Ու.	մերինինը	մերնինը	մերնինները
Ս.Տ.	*մերինինին	մերնինին	մերնիններուն
Բ.	մերինինէն	մերնինէն	մերնիններէն
Գ.	մերինինօլ	մերնինօլ	մերնիններօլ

Ու.	մերօնցնէրունը	քուգուղնօնցը
Ս.Տ.	մերօնցնէրունին	քուգուղնօնցին
Բ.	մերօնցնէրունէն	քուգուղնօնցէն
Գ.	մերօնցնէրունօլ	քուգուղնօնցօլ

Ու.	իմիսօնցինը կամ	իմիսօնցիսը
Ս.Տ.	իմիսօնցինին	—
Բ.	իմիսօնցինէն	իմիսօնցինէս
	իմիսօնցիսմէն	իմիսօնցիսմէն
Գ.	իմիսօնցինօլ	իմիսօնցիսօլ
	իմիսօնցիսմօլ	իմիսօնցիսմօլ

Ինչպէս տեսնուում է, երկրորդ կարգի ստացական դերանուններից մի քանիսը երրորդ կարգին չեն հասնում. սրանք գլխաւորապէս - *նէրունը* վերջաւորութիւնն ունեցողներն են: Կան երրորդ կարգին պատկանող մի քանի դերանուններ էլ, որոնք չեն հոլովւում. ինչ. *խմիսինինը, քուզուղինինը* են: Այս բոլորի պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ բազմաթիւ *ին*-երի խճողումը, որ միտքն են շփոթում և առգանութիւնը դժուարացնում:

354. Խնդիր է թէ ստացական դերանունները չորրորդ կարգին էլ հասնո՞ւմ են. այսինքն կարո՞ղ են պարունակել իրենց մէջ չորս գոյական (մէկ ստացեալ՝ երեք յատկացուցիչով). Օրինակի համար այս ոճի մի նախադասութիւն. «Իմ ձիուս ոտքի եղունգի ծայրը ճերմակ է, քու ձիուդ ոտքի եղունգի ծայրը սև է»:

Պատասխանը հաստատական է:

Բայց որովհետև այսպիսի ձևով կազմուած նախադասութիւններ կեանքի մէջ չափազանց քիչ են պատահում, բնական է թէ նրանց փոխարինողը ստացական դերանուններն էլ աւելի քիչ պէտք էր որ պատահէին: Եթէ երրորդ կարգի ստացականներից ոմանք մասնիկների խճողման պատճառով այլ ևս անսովոր ու անգործնական են դարձել, նոյնը աւելի մեծ չափով տեղի պիտի ունենար անշուշտ չորրորդ կարգի ստացականների վերաբերմամբ:

Ահա այս պատճառներով է որ չորրորդ կարգի ստացականները չափազանց փոքր թիւ են կազմում. իմ պատահածները հետևեալներն են.

*մէրիններունը, ձէրիններունը.*

*քուզուղնօնցինը.*

*խմիսնօնցինը, խմիսնօնցիսը, խմիսնօնցինս.*

*նարաննօնցինը, սեռ. նարաննօնցինին, բոց. նարաննօնցինէն, գրծ. նարաննօնցինմօլ*

*մէրօնցներունինը, բց. մէրօնցներուննէն, գրծ. մէրօնցներուննօլ.*

*ձէրօնցներունինը, բց. ձէրօնցներուննէն, գրծ. ձէրօնցներուննօլ:*

Բոլորի էլ կազմութիւնը նոյն է նախորդների հետ, այն է եր-  
րորդ շարքի սեռականը որոշեալ յօդով առնելով՝ իբր նոր ուղղա-  
կան գործածել՝ դիմորոշ յօդով կամ առանց դիմորոշի, *ի* ձայնաւորի  
սղումով կամ առանց սղման:

355. *Ընդհանուր նկատողութիւն.*– Որովհետև ստացական  
դերանունների բարդ ձևերը գործածութեան մէջ առանձին դժուա-  
րութիւններ են ներկայացնում, ուստի շատեր խառնիխուռն գործ  
են անում, առանց ուշադրութիւն դարձնելու պահանջուած կարգին.  
մանաւանդ որ շատ անգամ խօսքի կազմութիւնից արդէն յայտնի է  
մնում իսկապէս ի՛նչ բանի մասին է խնդիրը: Շատ անգամ էլ  
փոխանակ ստացական դերանուն դնելու՝ պարզապէս ստացեալը  
կրկնում են ստացական ածականի հետ: Օր. *Իմիս ձիիս վօթքը  
ջերմագ է, քուզուղը սեւ է.* ըստ օրինակի պիտի հասկացուէր թէ  
խօսակցի ոտքը սև է և ո՛չ թէ նրա ձիու. բայց որովհետև խօսողների  
համար արդէն յայտնի է թէ խօսակցութիւնը ձիու ոտքի մասին է և  
ո՛չ թէ մարդու, ուստի պէտք չի զգացում անպատճառ պահան-  
ջուած *քուզուղին*ը ձևը գործածելու և *քուզուղը* ձևն էլ բաւական է  
համարում՝ առանց վախելու թիւրիմացութիւնից:

356. Երբ գոյականը իր հետ մի ստացական ածական ունի,  
կարելի է ստացականը ջնջել և նրա փոխարէն գոյականի վրայ  
ստացական յօդ դնել:

Ստացական յօդերն են՝ Ա դէմքի համար *ա*, Բ դէմքի համար *դ*,  
Գ դէմքի համար՝ բաղաձայնայանգ բառերի ծայրը *ը*, իսկ ձայնաւո-  
րայանգ բառերի ծայրը *ն*: Երբ ստացեալը յոգնակի է և ստացողը  
եզակի, գոյականը լինում է յոգնակի և նրա վրայ դրում է ստացա-  
կան յօդը: Միևնոյն ձևը գործ է ածուում նաև ա՛յն ժամանակ՝ երբ  
ստացողը յոգնակի է, առանց զանազանութիւն դնելու եզակի և յոգ-  
նակի ստացեալի միջև: Ըստ այսմ միևնոյն ձևը ունի երեք նշանա-  
կութիւն. այսպէս օր. հացէ՛րըս նշանակում է «իմ հացերս, մեր  
հացը, մեր հացերը»:

Հոլովման ժամանակ գոյականն է որ հոլովում է և ստացա-  
կան յօդը մնում է անփոփոխ. օր.

### Ա դէմք

Ու.Հ.	հացըս «իմ հացը»	հացերըս «իմ հացերը, մեր հացը, մեր հացերը»
Ս.Տ.	հացիս	հացերուս
Բ.	հացէս	հացերէս
Գ.	հացովըս	հացերովըս

### Բ դէմք

Ու.Հ.	հացըդ «քո հացը»	հացերդ «քո հացերը, ձեր հացը, ձեր հացերը»
Ս.Տ.	հացիդ	հացերուդ
Բ.	հացէդ	հացերէդ
Գ.	հացովդդ	հացերովդդ

### Գ դէմք

Ու.Հ.	հացը «իր հացը»	հացերը «իր հացերը, իրենց հացը, իրենց հացերը»
Ս.Տ.	հացին	հացերուն
Բ.	հացէն	հացերէն
Գ.	հացովը	հացերովը

Յոգնակիի մէջ զանազանութիւն դնելու համար Կը ճիւղի *հացերնիս* և Ում ճիւղի *հացնէրս* ևն ձևերը գոյութիւն չունին այստեղ: Բնականաբար - *նէր* մասնիկը դրւում է միայն այն պարագային, երբ գոյականը բազմավանկ է. ինչ. Խանութներս «իմ խանութները, մեր խանութը, մեր խանութները»: Չալթրի հին բարբառում միայն բացառաբար կայ *ձեռք, ոտք* միավանկներից - *նէր* մասնիկով կազմուած յգ. *ձեռկընէրդ, փօտկընէրդ*՝ առանց սակայն նշանակութեան խտրութեան. ինչ. *ձեռկընէրդ լվա* «դու քո ձեռքերը լուա», *ձեռկընէրդ լվացէք* «դուք ձեր ձեռքը կամ ձեր ձեռքերը լուացէք»:

Միւս միավանկ բառերը, նոյն իսկ *աչք, ծունկ, մատ* ևն սովորական ձևով ստանում են - *էր* մասնիկը:

Խրիմում երկրորդ դէմքի դիմորոշ յօդը լինում է *թ* փոխանակ *դ*. ինչ. *ջազադիթ*՝ ճակատիդ, *քուզութ*՝ քուկուդ:

357. Բ. Ջ. Է և գրաբարաձև հոլովման պատկանող բառերը ստացական յոդ ստանալու ժամանակ իբր բուն գործածում են ո՛չ թե բառի ուղղականը, այլ սեռ.-տր. հոլովաձևը. ինչ. *գուլխունէրուս* «մեր գլխին» (փոխանակ ասելու *գլուխներուս.- ալայը գուլխունէրուս թօփ արինք* «բոլորը մեր գլուխը ժողովեցինք»), *հօքունէրուն* «իրենց հոգուն» (փխ. *հօքինէրուն.- հօքունէրուն մէխք չէ՞*). *մօրէրուն* «իրենց մօր» (փխ. *մարէրուն.- մօրէրուն հէտ գնացին. մօրէնուն անգաջը գիյնի* «իրենց մայրը կլսէ»), *տոցօցներուս, տոցօցներուդ* «տըղոցս, տղոցդ» (փխ. *տղաքներուս, տղաքներուդ*), *մաշթունմէն, օշթունմէն* «իբ մարդուց, իր որդուց» (ստացական յոդը ներս ներմուծուած):

358. Վերը յիշատակուած բոլոր բառերն էլ գոյական էին. բայց ստացական յոդ կարող են ստանալ ո՛չ միայն գոյականները, այլ ամէն մասունք բանի՝ որ կարող է *իմ, քու, մեր, ձեր* ևն ստացականների կից գործածուիլ. ինչ. *ինչէրուն է բէթկ* «իրենց ինչի՞ն է պէտք», *էլլէներէս էղէվ* «մեր էլլելուց յետոյ», *տէսնէներէդ էղէվ* «ձեր տեսնելուց յետոյ», *հէղիս մաշթը* «ինձ հետ եղող մարդը» ևն:

359. Ստացական դերանունների ոճով՝ շատ անգամ ստացական յոդ ունեցող սեռական յատկացուցչի մօտ գտնուած յատկացեալը ջնջուում է (եթէ նախապէս կրկնուած է) և նրա փոխարէն յատկացուցիչը ստանում է յատկացեալի հոլովը, վրան աւելացնելով նաև որոշեալ յոդը: Օր. *իմիս փունուրթըս ավելի մամայիսին քուքար* (Պատկ. Բ. Էջ 277) «իմ բնութիւնս աւելի մօրս բնութեան էր համապատասխանում», փխ. ասելու *«իմիս փունուրթըս մամայիս փունուրթին քուքար»*: Այսպէս նաև *դուդուսը* «իմ տղուս ունեցածը», *դուդուդը* «քու տղուդ ունեցածը», *դուդունը* «իբ տղի ունեցածը», *դիմացիդը* «քո դիմացի ...ը», *բաբայիսը* «հօրս ...ը», *ախպօրներունը* «իրենց եղբոր ...ը» ևն:

Նոյն դարձուածը կայ նաև Պօլսի բարբառում. բայց այստեղ նախ տրուում է որոշեալ յոդը և յետոյ ստացական յոդը, մինչդեռ Նոր-Նախիջևանի բարբառում ընդհակառակը առաջ ստացական յոդն է և յետոյ որոշեալ յոդը. այսպէս Պլ. *դուդունդս* = Ննխ. *դուդուսը* «իմ տղի ...ը», Պլ. *հէղինդ* = Ննխ. *հէղիդը* «քեզ հետ եղողը»:

360. Վերոյիշեալ ձևը գործածական է նաև ամեն տեսակի յատկացուցիչների, միջակ անունների և յատկապէս նախադասութիւնների մէջ, որոնք այս ոճով կազմում են գոյականներ, որոնք հոլովում են սովորական ձևով թէ՛ եզակի և թէ՛ յոգնակի, և միանգամայն իրենք էլ կարող են ստացական դերանունների ոճով երկրորդ և երրորդ կարգի հասնիլ (§ 352-3). օր. *վերինը*.

Ու.	վերինը	վերինները	վերինինը	վերինինները
Ս.Տ.	վերինին	վերիններուն	վերինինին	վերինիններուն
Բ.	վերինէն	վերիններէն	վերինինէն	վերինիններէն
Գ.	վերինով	վերիններով	վերինինով	վերինիններով

Ու.	վերիններունը	*վերիններունները	վերիններունինը
Ս.Տ.	վերիններունին		
Բ.	վերիններունէն		
Գ.	վերիններունով		

Այսպէս նաև *դիմացինը*, *քովինը*, *հեղիսը*, *հեղիղը*, *հեղինը*, *տազինը* (տակինը), *Նէրսէսինը*, *վորի՜նը*, *վորինի՛նը*, *վորօ՛նցը*, *վօրօնցնէ՛րը* ևն:

361. Յարաբերական դերանունն է *վօր* կամ կրկնուած ձևով *վօրը վօր*, *վօրն օր*, որոնց հոլովման պատկերը հետևեալն է.

Ու.	վօր	վօրը վօր	վօրն օր
Ս.Տ.	վօրին	վօրին վօր	վօրին օր
Բ.	վօրմէն	վօրմէն վօր	վօրմէն օր
	վօրինմէն	վօրինմէն վօր	վօրինմէն օր
	վօրգից	վօրգից վօր	վօրգից օր
Գ.	վօրինմով	վօրինմով վօր	վօրինմով օր
	վօրինով	վօրինով վօր	վօրինով օր
	վօրիմով	վօրիմով վօր	վօրիմով օր
	վօրով	վօրով վօր	վօրով օր
	վօրնով	վօրնով վօր	վօրնով օր

### Յոգնակի

Ու.	վօրօնք	վօրօնք վօր	վօրօնք օր
Ս.Տ.	վօրօնց	վօրօնց վօր	վօրօնց օր
Բ.	վօրօնցմէն	վօրօնցմէն վօր	վօրօնցմէն օր
Գ.	վօրօնցմօվ	վօրօնցմօվ վօր	վօրօնցմօվ օր

Գործ է աճուում նաև «ոմն, ոմանք» իմաստով. *Վօրը հէռույէն, վօրը գաղղուգ, վօրն ալ ջուրին դագէն:*

### Ժ) Բայ

#### 362. Լծորդութիւններ.

Հին հայերէնի չորս լծորդութիւնները (-ել, -իլ, -ալ, -ուլ) և նրանց ռնգային տիպարները (-անել, -անիլ, -անալ, -նուլ) Նոր-Նախիջևանի բարբառում կրել են հետևեալ փոփոխութիւնները.

Ա լծորդութեան անորոշի -ել վերջաւորութիւնը դարձել է -էլ. ներկայում դրուում են -իւ, -իւ, -է, -ինք, -իք, -ին վերջաւորութիւնները, որով ներկայի խոնարհումը նոյնացած կլինի երկրորդ լծորդութեան խոնարհման հետ (բացի եգ. Գ դէմքից), ինչպէս է նաև անկատարում. բայց կատարեալի մէջ հին հայերէնի վերջաւորութիւնները պահուում են, որով և երկու լծորդութիւնները զանազանում են դարձեալ իրարից: Այսպէս՝

ներկ.		անկատ.	
եմ>իմ	եմք>ինք	էի>է'յի	էաք>է'յինք
ես>իս	էք>իք	էիր>է'յիր	էիք>է'յիք
է>է	են>ին	էր>էր	էին>է'յին

#### կատարեալ

եցի>էցի	եցաք>էցինք
եցեր>էցիր	եցիք>էցիք
եաց>ից	եցին>էցին



Բ լծորդութեան անորոշի -*հլ* վերջաւորութիւնը լինում է -*էլ*. ներկայի, անկատարի և կատարեալի վերջաւորութիւնները հետեւ-վում են հին հայերէնի վերջաւորութեանց, որով Բ լծորդութեան տիպարը պահւում է:

ներկ.		անկատ.	
իւ>իւ	իւք>իւք	էի>է՛յի	էաք>է՛յիւք
իս>իս	իք>իք	էիր>է՛յիր	էիք>է՛յիք
ի>ի	ին>ին	էր>էր	էին>է՛յին
կատարեալ			
	եցայ>եցա		եցաք>եցանք
	եցար>եցար		եցայի>եցաք
	եցաւ>եցալ		եցան>եցան

Գ լծորդութեան անորոշի վերջաւորութիւնն է հին հայերէնի պէս -*ալ*. Խոնարհման մէջ հին հայերէնի վերջաւորութիւնները գրեթէ անփոփոխ պահւում են. այսպէս՝

ներկ.		անկատ.	
ամ>ամ	ամք>անք	այի>ա՛յի	այաք>ա՛յիւք
աս>աս	այի>աք	այիր>ա՛յիր	այիք>ա՛յիք
այ>ա	ան>ան	այր>ար	ային>ա՛յին
կատարեալ			
	ացի>ացի		ացաք>ացիւք
	ացեր>ացիր		ացէք>ացիք
	աց>աց		ացին>ացին

Դ լծորդութիւնը առհասարակ ջնջուած է մեր բարբառներուն. այսպէս նաև Նոր-Նախիջևանի բարբառում և նրան հետևող բայերը վերածուել են ուրիշ լծորդութեանց. ինչ. *թողուլ*՝ որ դարձել է թողց-նել, իբրև անցողական:

Ա լծորդութեան երկրորդ տիպարը անորոշում պահում է հին ձևը (-անել>-նէշ). հին հայերէնի վերջաւորութիւնները գրեթէ անփոփոխ մնում են ամբողջ խոնարհման մէջ: Բայց այս խոնարհման հետևում են միայն մի քանի բայեր, մնացեալները բոլոր ձևափոխուելով անցել են Բ լծորդութեան ռնգային տիպարին: Այսպէս որ կարող ենք ասել թէ Ա լծորդութեան ռնգային տիպարը ջնջուած է նոր լեզուի մէջ:

ներկ.		անկատ.	
անեմ>նիմ	անեմք>նիւք	անէի>նէ՛յի	անէաք>նէ՛յիւք
անես>նիս	անէք>նիք	անէիր>նէ՛յիր	անէիք>նէ՛յիք
անէ>նէ	անեն>նին	անէր>նէր	անէին>նէ՛յին

կատարեալ	
ի>ի	աք>իւք
եր>իր.	իք>իք
->ից	ին>ին

Բ լծորդութեան երկրորդ տիպարը թէև անորոշի վերջաւորութիւնը դնում է -նէշ, բայց խոնարհման ժամանակ գրեթէ անփոփոխ պահում է հին հայերէնի Բ լծորդութեան երկրորդ տիպարի վերջաւորութիւնները. այսպէս՝

ներկ.	անկ.	կտր.
անիմ>նիմ	անէի>նէ՛յի	այ>ա
անիս>նիս	անէիր>նէ՛յիր	ար>ար
անի>նի	անէր>նէր	աւ>ավ
անիմք>նիւք	անէաք>նէ՛յիւք	աք>անք
անիք>նիք	անէիք>նէ՛յիք	այք>աք
անին>նին	անէին>նէ՛յին	ան>ան

Գ լծորդութեան երկրորդ տիպարը սկզբից մինչև վերջը պահում է հին հայերէնի վերջաւորութիւնները. ինչ.

ներկ.	անկ.	կտր.
-անամ>-նամ	-անայի>-նա՛յի	-ացայ>-ցա
-անաս>-նաս	-անայիր>-նա՛յիր	-ացար>-ցար
-անայ>-նա	-անայր>-նար	-ացաւ>-ցավ
-անամք>-նանք	-անայաք>-նա՛յինք	-ացաք>-ցանք
-անայք>-նաք	-անայիք>-նա՛յիք	-ացայի>-ցավ
-անան>-նան	-անային>-նա՛յին	-ացան>-ցան

Դ լծորդութեան երկրորդ տիպարը՝ առաջին տիպարին նման բոլորովին ջնջուած է նոր բարբառներում. բայց Նոր-Նախիջևանի բարբառը միւս բարբառներից զանազանում է նրանով՝ որ նորից է վերականգնում այս տիպարը՝ պահելով հին հայերէնի *առնում* բայը և առաջին լծորդութեան երկրորդ տիպարին վերաբերող բայերի մի մասը վերածելով այս տիպարին. ինչ. *գուղնում* «գտնեմ», *տէսնում* «տեսանեմ», *մուտնում* «մտանեմ», *թուքնում* «թքանեմ», *հէձնում* «հեծանեմ»: Սրանց մասին տես վարը § 370:

363. Ըստ այսմ Նոր-Նախիջևանի բարբառը ունի երեք լծորդութիւն և չորս ոնգային տիպար. սրանց խոնարհման համար կառնենք հետևեալ օրինակները.

Ա լծ.	լսել, լսիմ	–	բաքնել, բաքնիմ
Բ լծ.	հարփել, հարփիմ	–	հաքնել, հաքնիմ
Գ լծ.	խաղալ, խաղամ	–	մօռնալ, մօռնամ
Դ լծ.		–	մղնել, մուղնում:

Խոնարհման մէջ բայի հիմնական ձևերն են ստորադասականի ներկան և անցեալը, սահմանականի կատարեալը, հրամայականը և դերբայները. մնացեալ բոլոր ժամանակները (սահմանական ներկայ, անկատար, ապառնի կն) կազմում են նոյն պարզ ձևերից:

Այստեղ դնում ենք բոլոր լծորդութեանց յիշեալ պարզ ձևերի խոնարհումը.

#### 364. Ա լծորդութիւն

*Ստոր. ներկ.*    *Ստոր. անց.*    *Սահմ. կտր.*

լսիմ	լսե՛լի	լսեցի
լսիս	լսե՛լիր	լսեցիր
լսե	լսե՛ր	լսից
լսինք	լսե՛լինք	լսեցինք
լսիք	լսե՛լիք	լսեցիք
լսին	լսե՛լին	լսեցին

*Հրամ.*– լսե՛, լսեցեք.

*Դերք.*– Լսող, Լսաձ, Լսիլ, Լսել, Լսելիք, Լսելու.

Այսպէս են խոնարհում ի մէջ այլոց՝  
 Աշխատել>*աշխատել* «շահիլ», կտր. *աշխատեցի*  
 Բռնել>*բռնել, բռնեցի.*  
 Համբերել>*համփըրել, համփըրեցի.*  
 Համբուրել>*համփըրել, համփըրեցի.*  
 Հանել>*հանել, հանեցի.*  
 Մաղել>*մաղել, մաղեցի.*  
 Մեղադրել>*մէխտրել, մէխտրեցի.*  
 Ողորմիլ>*օղօրմել, օղօրմեցի.*  
 Պաղատիլ>*բաղաղել, բաղաղեցի.*  
 Վառել>*վառել, վառեցի.*

### 365. Ա լծորդութեան Բ տիպար

<i>Ստոր. ներկ.</i>	<i>Ստոր. անց.</i>	<i>Սահմն. կտր.</i>
բաքնիմ	բաքնե՛լի	բաքի
բաքնիս	բաքնե՛լիր	բաքիր
բաքնե	բաքնե՛ր	բաքից
բաքնինք	բաքնե՛լինք	բաքինք
բաքնիք	բաքնե՛լիք	բաքիք
բաքնին	բաքնե՛լին	բաքին

*Հրամ.*– բաք, բաքեք.

*Դերք.*– Բաքնել, Բաքաձ, Բաքիլ, Բաքնող, Բաքնելու, Բաքնելիք:

Այսպէս են մի քանի սակաւաթիւ բայեր, որոնք են.

Պագանել>բաքնել, բաքի.

Թքանել>թուքնել, թուքի.

Խածանել>խաձնել, խաձի.

Ք...>քաքնել, քաքի:

«Խածանել» բայը ունի ձև. հին բարբառով *խաձնել*, նոր բարբառով *խազնել*. Խոնարհման մէջ ճ մնում է ամէն տեղ՝ ուր կայ մի յաջորդական ձայնաւոր. այսպէս՝ կատարեալի, հրամայականի և անցեալ դերբայի կրկին ձևերի մէջ:

### 366. Բ լծորդութիւն

*Ստոր. ներկ.*

*Ստոր. անց.*

*Սահմն. կտր.*

հարփիմ

հարփե՛լի

հարփեցա

հարփիս

հարփե՛լիր

հարփեցար

հարփի

հարփե՛ր

հարփեցալ

հարփինք

հարփե՛լինք

հարփեցանք

հարփիք

հարփե՛լիք

հարփեցաք

հարփին

հարփե՛լին

հարփեցան

*Հրամ.*– հարփե՛, հարփեցեք.

*Դերբ.*– հարփել, հարփաձ, հարփիլ, հարփօղ, հարփելու, հարփելլիք:

Թոփտորում ներկ. եզ. Գ դէմքը վերջաւորում է միշտ *է* փխ. *ի*, որով նոյնանում է Ա լծորդութեան հետ. ինչ. *հարփե՛, փսնէ, գայնէ, ունէ*:

Այս լծորդութեան տակ են գնում ի միջի այլոց.

Բանիլ>բանել, բանեցա.

Բուսանիլ>փսնել, փսնեցա.

Գանգատիլ>գանգըղվել, վեցա.

Զարթնուլ>զաշթել, զաշթեցա.

Ծնանիլ>ձնել, ձնեցա.

Կանգնիլ>գայնել, գայնեցա.

Հանդիպիլ>հանդըբել, հանդըբեցա.

Հաւանիլ>հավնել, հավնեցա.

Մաշիլ>մաշել, մաշեցա, մաշէ՛ (թէ՛ ներգործական և թէ չեզոք գործածութեամբ).

Յոգնիլ>հօքնել, հօքնեցա.

Նայել>նայել, նայեցա.

Շարժկտիլ>ժաշքըթել, ժաշքըթեցա.

Ուռիլ>ուռել, ուռեցա.

Վայելել>վայլել, վայլեցա.

Վառիլ>վառել, վառեցա, վառէ՛ (թէ՛ ներգործական և թէ չեզոքի գործածութեամբ).

Ցատկել>ցաթթել, ցաթթեցա.

Քրտնել>քրտընել, քրտընեցա.

Օգտել>օքտել, օքտեցա:

### 367. Բ լծորդութեան Բ տիպար

*Ստոր. ներկ.      Ստոր. անց.      Սահմն. կտր.*

հաքնիմ	հաքնէ՛յի	հաքա
հաքնիս	հաքնէ՛յիր	հաքար
հաքնի	հաքնէր	հաքավ
հաքնինք	հաքնէ՛յինք	հաքանք
հաքնիք	հաքնէ՛յիք	հաքաք
հաքնին	հաքնէ՛յին	հաքան

*Հրամ.*– հաքի՛ր, հաքի՛ք.

*Դերբ.*– հաքնել, հաքած, հաքիլ, հաքսօղ, հաքնելու, հաքնելիք:

Թոփտի գիւղում ներկայ եգ. Գ դէմքը՝ նախորդի նման վերջաւորում է միշտ *է*. ինչպէս՝ հաքնէ, *անցնէ* են:

Այս լծորդութեան տակ են գնում ի մէջ այլոց հետեւեալ բայերը.

Անցանել>անցնել, անցա.

Գտանել>գդնել, գդա.

Իջանել>ինչնել, ինչա.

Հասանել>հասնել, հասա.  
 Հեծանել>հեզնել, հեծա.  
 Մեռանել>մեռնել, մեռա.  
 Մտանել>մդնել, մդա.  
 Տեսանել>դեսնել, դեսա:

Այսպես են խոնարհուում նաև -յի վերջաւորած բայերը՝ որոնք կատարեալի, հրամայականի և անցեալ դերբայի մէջ չ ձայնը ջնջում են. այսպէս՝

կպչել>գպչել, գբա, գբիր, գբիք.  
 փախչիլ>փախչել, փախա, փախիր, փախիք.  
 թռչիլ>թռչել, թռա, թռիր, թռիք.

դպչիլ>տպչել (այս բայը գոյութիւն ունի միայն Չալթրի մէջ, տպչել, մի՛ տպչիր, մի՛ տպչիք ձևերով. ուրիշ ժամանակներ չկան):

### 368. Գ լծորդութիւն

<i>Ստոր. ներկ.</i>	<i>Ստոր. անց.</i>	<i>Մահմն. կտր.</i>
խաղամ	խաղայի	խաղացի
խաղաս	խաղա՛յիր	խաղացիր
խաղա	խաղար	խաղաց
խաղանք	խաղա՛յինք	խաղացինք
խաղաք	խաղա՛յիք	խաղացիք
խաղան	խաղա՛յին	խաղացին

*Հրամ.*– խաղա՛, խաղացէք.

*Դերբ.*– խաղալ, խաղացած, խաղացիլ, խաղացող, խաղալու, խաղալիք:

Այսպէս են խոնարհուում ի մէջ այլոց՝

Թնձկալ>թնձգալ, թնձգացի.  
 Խնդալ>խնդալ, խնդացի.  
 Հազալ>հազալ, հազացի.  
 Հաւատալ>հավաղալ, հավաղացի.  
 Հեծկլտալ>հեծգըլդալ, հեծգըլդացի.  
 Հնալ>հեվալ, հեվացի.

Ործկալ>օրձգալ, օրձգացի.– նաև՝  
 Ուզել>ուզենալ, ուզանալ (ներկ. ուզենամ, ուզանամ, անց.  
 ուզենայի, ուզանայի, կտր. ուզացի, հրմ. ուզա՛յ):

### 369. Գ լծորդութեան Բ տիպար

<i>Ստոր. ներկ.</i>	<i>Ստոր. անց.</i>	<i>Սահմն. կտր.</i>
մօռնամ	մօռնա՛յի	մօռցա
մօռնաս	մօռնա՛յիր	մօռցար
մօռնա	մօռնար	մօռցավ
մօռնանք	մօռնա՛յինք	մօռցանք
մօռնաք	մօռնա՛յիք	մօռցաք
մօռնան	մօռնա՛յին	մօռցան

*Հրամ.*– մօռցի՛ր, մօռցիք.

*Դերբ.*– մօռնալ, մօռցաձ, մօռցիլ, մօռցօղ, մօռնալու, մօռնալիք:

### Այսպես են խոնարհում ի մեջ այլոց՝

Ամաչել>ամրշնալ, ամրշցա.

Բառնալ>բառնալ, բառցա.

Գիտել>գիղնալ, գիղցա.

Գողանալ>գօղնալ, գօղցա.

Դառնալ>դառնալ, դառցա.

Դիմանալ>դիմանալ, դիմացա.

Երևիլ>երեվնալ, երեվցա.

Թուլանալ>թուլանալ, թուլացա.

Իմանալ>իմանալ, իմացա.

Խոստանալ>խօստանալ, խօստացա.

Կալ>գենալ, գեցա.

Կամիլ>գամէնալ, գամէցա.

Կարենալ>գրնալ կամ գարնալ, գրցա կամ գարցա.

Հասկանալ>հասկընալ, հասկըցա.

Հնանալ>հիննալ, հինցա.

Հպարտանալ>հաբըրնալ, հաբըրցա.

Ճանաչել>ջաշնալ, ջանչըցա կամ ջանցըցա.



Շփանալ>շփանալ, շփացա.  
 Ունել>ունէնալ, ունէցա.  
 Պարծիլ>բարձէնալ, բարձէցա.  
 Սովորիլ>սօրվէնալ, սօրվէցա.  
 Ստանալ>ստանալ, ստացա.  
 Քաղցնուլ>քախցընալ, քախցըցա:

### 370. Դ լծորդութեան Բ տիպար

<i>Ստոր. ներկ.</i>	<i>Ստոր. անց.</i>
մուղնում	մուղնո՛ւյի
մուղնուս	մուղնո՛ւյիք
մուղնու	մուղնուր
մուղնունք	մուղնո՛ւյինք
մուղնութ	մուղնո՛ւյիք
մուղնուն	մուղնո՛ւյին

Այս խոնարհման հետևում են գտանել *>գուղնում*, տեսանել *>դէսնում*, մտանել *>մուղնում*, թքանել *>թուքնում*, հեծանել *>հէձնում*՝ բայերը: Այս բոլորն էլ սակայն ունին միայն ստոր. ներկայ և անցեալ (և նրանից անծանցուած) ձևերը. մնացեալ ձևերը խոնարհում են ուրիշ լծորդութեամբ: Այսպէս՝ *թքանել* հետևում է Ա լծորդութեան երկրորդ տիպարին, իսկ միւս չորս բայերը (գտանել, տեսանել, մտանել, հեծանել) Բ լծորդութեան երկրորդ տիպարին: Առ հասարակ այս լծորդութիւնը ջնջուելու վրայ է: Ներկայի եզ. Գ դէմքը քաղաքի մէջ վերածուած է Ա լծորդութեան (*գտնէ, տեսէ, մտնէ, թուքնէ, հէձնէ*), թէև հները խոնարհում էին չորրորդ լծորդութեամբ. Պատկանեանի ժամանակ դեռ ասում էին *գու մուղնու* (Պատկ. Բ. էջ 298). Միւս դէմքերը նոր լեզուի մէջ լսւում են թէ՛ Դ լծորդութեան և թէ՛ Բ լծորդութեան ձևով: Անցեալ անկատարի ձևը քաղաքում առհասարակ դարձել է Բ լծորդութեան թէև հների մէջ կենդանի էր: Գիւղերը թէ՛ ներկան և թէ՛ անցեալը պահել են անփոփոխ Դ լծորդութեամբ:

### 371. Անկանոն բայեր.

Հին հայերենի անկանոն բայերից շատը ջնջուած է նոր բարբառներում կա՛մ ուղղակի գոյութիւնը ջնջուելով (ինչպէս *յառնեն, ըմպեն*, որոնք աշխարհաբարի մէջ այլ ևս չկան), և կամ նրանց անկանոն մասերը կանոնաւորի վերածուելով (ինչ. *լսել, ճանաչել*, որոնց կատարեալը գրաբարում լինում է անկանոն կերպով *լուայ, ճանեսայ*, աշխարհաբարում *լսեցի, ճանաչեցի* կամ *ճանչցայ*): Ընդհակառակը բարբառներում անկանոն բայերի կարգն են անցել մի խումբ այնպիսի բայեր, որոնք կա՛մ հին հայերենի խոնարհումից հետքեր պահելով և կամ նոր ձայնափոխութեանց ենթարկուելով՝ խոնարհման սովորական տիպարներից շեղումներ են ցոյց տալիս այս ու այն կէտում:

372. Այսպիսի անկանոն բայերի ցուցակը Նոր-Նախիջևանի բարբառում՝ հետևեալն է.

#### 1. Անկանիլ>իյնել, ըյնել, իննել.

Ներկ.– իյնիմ, իյնիս, իյնի, իյնինք, իյնիք, իյնին.

Անց.– իյնէ՛ յի, իյնէ՛ յիր, իյնէր, իյնէ՛ յինք, իյնէ՛ յիք, իյնէ՛ յին.

Կտր.– ինգա, ինգար, ինգավ, ինգանք, ինգաք, ինգան.

Հրամ.– ինգի՛ր, ինգի՛ք.

Դերբ.– ինգաձ, ինգիլ, ինգօղ, իյնէլիք, իյնէլու:

Այս բայի անկանոնութիւնը ձայնաբանական պատճառով է յառաջանում և կայանում է նրանում՝ որ հին հայերենի *նկ* խումբը յաջորդ ձայնաւորի մօտ մնում է, իսկ *ն* բաղաձայնի մօտ դառնում է *յ* (§ 199):

#### 2. Առնել>անել

Ներկ.– անիմ, անիս, անէ, անինք, անիք, անին.

Անց.– անէ՛ յի, անէ՛ յիր, անէր, անէ՛ յինք, անէ՛ յիք, անէ՛ յին.

Կտր.– արի, արիր, արավ, արինք, արիք, արին.

Հրամ.– արա՛, արէք.

Դերբ.– արօղ, արաձ, արիլ, արէլիք, անէլու:

### 3. Առնուլ>առնել.

Ներկ.– առնում, առնուս, առնու, առնունք, առնուք, առնուն.

Անց.– առնո՛ւյի, առնո՛ւյիր, առնուր, առնո՛ւյինք, առնո՛ւյիք, առնո՛ւյին.

Կտր.– առի, առիր, առավ, առինք, առիք, առին.

Հրամ.– ա՛ռ, առէք.

Դերբ.– առնօղ, առաձ, առիլ, առնելիք, առնելու:

Այս խոնարհումը գտնում ենք Չալթրի շրջանի մեջ, իսկ քաղաքում՝ միայն հների մօտ. նորերը վերածում են առաջին լծորդութեան, յատկապես ներկ. եզ. Գ դեմքը և ամբողջ անցեալը (առնէ, առնէ՛յի նն):

### 4. Ասել>ասել

Ներկ.– ասիմ, ասիս, ասէ, ասինք, ասիք, ասին.

Անց.– ասէ՛յի, ասէ՛յիր, ասէր, ասէ՛յինք, ասէ՛յիք, ասէ՛յին.

Կտր.– ասի, ասիր, ասաց, ասինք, ասիք, ասին.

Հրամ.– ասա, ասէք.

Դերբ. ասօղ, ասաձ, ասիլ, ասելիք, ասելու:

Նկատելի է որ կատարեալի յոգնակի նոյն է ներկայի հետ: Եզ. Գ *ասաց* ձևի դէմ Խրիմում ունինք *ասից* (տե՛ս Նաւասարդեան, Հեքիաթներ, Է. էջ 49,50):

### 5. Բանալ>բանալ

Ներկ.– բանամ, բանաս, բանա, բանանք, բանաք, բանան.

Անց.– բանա՛յի, բանա՛յիր, բանար, բանա՛յինք, բանա՛յիք, բանա՛յին.

Կտր.– բացի, բացիր, բացից, բացինք, բացիք, բացին.

Հրամ.– բա՛ց, բացէք.

Դերբ.– բացօղ, բացաձ, բացիլ, բանալիք, բանալու.

### 6. Բերել>բերել

Ներկ.– բերիմ, բերիս, բերէ, բերինք, բերիք, բերին.

Անց.– բերէ՛յի, բերէ՛յիր, բերէր, բերէ՛յինք, բերէ՛յիք, բերէ՛յին.

Կտր.– բերի, բերիր, բերից, բերինք, բերիք, բերին.

Հրամ.– բե՛ր (Զ. Պի՛ր), բերեք.

Դերբ.– բերօղ, բերաձ, բերիլ, բերելիք, բերելու:

Նկատելի է որ այստեղ էլ կատարեալի յոգնակին նոյն է ստոր.  
ներկայի հետ:

#### 7. Գալ>գալ.

Ներկ.– քամ, քաս, քա, քանք, քաք, քան.

Անց.– քա՛յի, քա՛յիր, քար, քա՛յինք, քա՛յիք, քա՛յին.

Կտր.– էգա, էգար, էգավ, էգանք, էգաք, էգան.

Հրամ.– արի՛, արիցեք.

Դերբ.– էգաձ, էգիլ, էգօղ, քալիք, քալու.

Հրամայականի համար գիւղերն ունին *էգիր, էգիցեք* ձևերը.  
քաղաքում *էգիր* ձևը առանձին չի գործածւում, բայց կայ *վա՛գ էգիր*  
«թո՛ղ, ձգի՛ր» և *մա՛ն էգիր* «փնտոյի՛ր» ոճերի մէջ. սրանց յոգնակին  
լինում է սովորական ձևով *վագ արիցեք, ման արիցեք*, բայց ո՛չ *թէ  
վագ էգիցեք, ման էգիցեք*, որ գիւղերի գործածած ձևերն են:

#### 7. Դնել>դնել

Ներկ.– դնիմ, դնիս, դնէ, դնինք, դնիք, դնին.

Անց.– դնե՛յի, դնե՛յիր, դներ, դնե՛յինք, դնե՛յիք, դնե՛յին.

Կտր.– դրի, դրիր, դրից, դրինք, դրիք, դրին.

Հրամ.– դի՛ր, դրեք.

Դերբ.– դնօղ, դրաձ, դրիլ, դնելիք, դնելու:

#### 8. Ելանել>ելլել

Ներկ.– ելլիմ, ելլիս, ելլէ, ելլինք, ելլիք, ելլին.

Անց.– ելլե՛յի, ելլե՛յիր, ելլեր, ելլե՛յինք, ելլե՛յիք, ելլե՛յին.

Կտր.– ելլա, ելլար, ելլավ, ելլանք, ելլաք, ելլան.

Հրամ.– յե՛լ, յելեք.

Դերբ.– ելլաձ, ելլիլ, ելլօղ, ելլելու, ելլելիք.

Անկանոնությունը յառաջացել է ձայնաբանական պատճառներով. *եղանեղ* բայը տուել է նախ *եղնեղ*, որ խոնարհուում է *հաքնեղ* բային նման. բայց կատարեալում չ նմանողութեամբ արմատական համարուելով՝ եղել է *եղլա*, փոխանակ *եղա*, ինչպէս ունի Պօլսի բարբառը: Հրամայականում բառը միավանկ մնալով՝ ըստ օրինի եղել է *յէլ*, որին հետեւել է նաև յոգնակին և անկանոն կերպով ստացել է *յէ* նախաւանկը:

#### 10. Երթալ>երթալ, էշտալ, էշթալ

Ներկ.– էշթամ, էշթաս, էշթա, էշթանք, էշթաք, էշթան.

Անց.– էշթա՛յի, էշթա՛յիր, էշթար, էշթա՛յինք, էշթա՛յիք, էշթա՛յին.

Կտր.– գնացի, գնացիր, գնաց, գնացինք, գնացիք, գնացին.

Հրամ.– գնա՛, գնացէք.

Դերբ.– գնացաձ, գնացիլ, գնացօղ, էշթալու, էշթալիք:

Քիչ անգամ գործածուում է նաև *էշթաձ*. ինչ. *էշթաձ աղէնս* «գնալու ժամանակս», *էշթաձիս հէղս զը դանիմ* «երբ երթամ՝ հետս կտանիմ»:

#### 11. Զարկանել>զարնել

Ներկ.– զարնիմ, զարնիս, զարնէ, զարնինք, զարնիք, զարնին.

Անց.– զարնէ՛յի, զարնէ՛յիր, զարնէր, զարնէ՛յինք, զարնէ՛յիք, զարնէ՛յին.

Կտր.– զարգի, զարգիր, զարգից, զարգինք, զարգիք, զարգին.

Հրամ.– զա՛րգ, զարգէք.

Դերբ.– զարգաձ, զարգիլ, զարնօղ, զարնէլու, զարնէլիք:

#### 12. Լալ>լալ.

Ներկ.– լամ, լաս, լա, լանք, լան, լան.

Անց.– լա՛յի, լա՛յիր, լար, լա՛յինք, լա՛յիք, լա՛յին.

Կտր.– լացի, լացիր, լացից, լացինք, լացիք, լացին.

Հրամ.– լա՛ց, լացէք.

Դերբ.– լացաձ, լացիլ, լացօղ, լալու, լալիք:

#### 13. Լինել>ըլալ, լալ.

Ներկ.– (ը)լամ, (ը)լաս, (ը)լա, (ը)լանք, (ը)լաք, (ը)լան.

Անց.– (ը)լա՛յի, (ը)լա՛յիր, (ը)լաբ, (ը)լա՛յինք, (ը)լա՛յիք, (ը)լա՛յին.  
 Կտր.– եղա, եղար, եղավ, եղանք, եղաք, եղան.  
 Հրամ.– եղի՛ր, եղիք.  
 Դերբ.– եղաձ, եղիլ, եղօղ, (ը)լալու, (ը)լալիք:

Գործածում է նաև «կարենալ» նշանակությամբ. գիւղացիք արդէն *կրնալ* բայը ջնջած են և նրա փոխարէն գործածում են *ըլլալ*. օր. *բան հասկցնէլ գորայի ղ վօր* «կարո՞ղ էիր բան հասկացնել». *ուտէլու գըլա ս* «կարո՞ղ ես ուտել»: Քաղաքում թէն «կարենալ» բայը կայ (հինը *գարնալ*, նորը *գրնալ*), բայց գործածական է նաև *ըլալ* ձևը:

#### 14. Լնուլ>ուլել

Ներկ. – ուլում, ուլուս, ուլու, ուլունք, ուլուք, ուլուն.  
 ուլիմ, ուլիս, ուլէ, ուլինք, ուլիք, ուլին.  
 լնիմ, լնիս, լնէ, լնինք, լնիք, լնին.  
 Ըլիմ, ըլիս, ըլէ, ըլինք, ըլին.  
 Անց. – ուլո՛ւյի, ուլո՛ւյիր, ուլուր, ուլո՛ւյինք, ուլո՛ւյիք, ուլո՛ւյին.  
 ուլէ՛յի, ուլէ՛յիր, ուլէր, ուլէ՛յինք, ուլէ՛յիք, ուլէ՛յին.  
 լնէ՛յի, լնէ՛յիր, լնէր, լնէ՛յինք, լնէ՛յիք, լնէ՛յին.  
 Ըլէ՛յի, Ըլէ՛յիր, Ըլէր, Ըլէ՛յինք, Ըլէ՛յիք, Ըլէ՛յին.  
 Կտր. – լցի, լցիր, լցից, լցինք, լցիք, լցին.  
 Հրամ. – լի ց, լցեք.  
 Դերբ. – լցաձ, լցիլ, լցօղ, ուլելիք, ուլելու:

Ներկայի և անցեալի չորս ձևերն էլ հաւասարապէս գործածական են քաղաքում. Չալթր ունի *ուլում*... ձևը, որի եզ. Գ դէմքը ըստ սովորականին ջնջուած է քաղաքում (§ 370). *ուլիմ, ըլիմ, լնիմ* և *ուլէյի, ըլէյի, լնէյի* ձևացած են Դ լծորդութիւնը առաջինի համեմատ խոնարհելու ձգտումից (§ 370), որ քաղաքում աւելի զօրաւոր է քան գիւղերում:

#### 15. Լուանալ>վանալ

Ներկ.– վանամ, վանաս, վանա, վանանք, վանաք, վանան.

Անց.– լվանա՛յի, լվանա՛յիր, լվանար, լվանա՛յինք, լվանա՛յիք, լվանա՛յին.

Կտր.– լվացի, լվացիր, լվաց, լվացինք, լվացիք, լվացին.

Հրամ.– լվա՛, լվացէք.

Դերբ.– լվացաձ, լվացիլ, լվացող, լվանալու, լվանալիք:

Անկանոնությունը կայանում է նրանում՝ որ բայի ներկան և անկատարը պատկանում են Գ լծորդութեան երկրորդ տիպարին, իսկ կատարեալը և հրամայականը Գ լծորդութեան: Այս անկանոնությունը գրաբարի պատճառով է, ուր ունինք հրամ. *լուա՛*, փոխանակ ըստ օրինի լինելու *\*լուացիր*. և այս բարբառը *լուանալ* ձևը դարձել է *լվալ>վլալ*, որով ամբողջ բայը անցել է Գ լծորդութեան:

#### 16. Կորչիլ>գորցրվել

Ներկ.– գորցրվիմ, գորցրվիս, գորցվի, գորցվինք, գորցվիք, գորցվին.

Անց.– գորցրվե՛յի, գորցրվե՛յիր, գորցրվեր, գորցվե՛յինք, գորցրվե՛յիք, գորցրվե՛յին.

Կտր.– գորա, գորար, գորավ, գորանք, գորաք, գորան.

Հրամ.– գորի՛ր, գորցվե՛, գորիք, գորցրվեցէք.

Դերբ.– գորաձ, գորիլ, գորցվող, գորցվելու, գորցվելիք:

Կազմուած է երկու պակասաւոր բայերից. առաջինն է *գորց-վիլ*՝ որ համապատասխանում է *կորուսանիլ* ձևին և երկրորդն է *կորչիլ*. առաջինից կազմուում են ներկան, անցեալը, ներկայ և ապառնի դերբայները. երկրորդից կազմուում են կատարեալը և անցեալ դերբայները: Հրամայականը երկու ձևով էլ կայ:

#### 17. Նստիլ>նստել

Ներկ.– նստիմ, նստիս, նստի, նստինք, նստիք, նստին.

Անց.– նստե՛յի, նստե՛յիր, նստե՛ր, նստե՛յինք, նստե՛յիք, նստե՛յին.

Կտր.– նստա, նստար, նստավ, նստանք, նստաք, նստան

Հրամ.– նի՛ստ, նստէք.

Դերբ.– նստաձ, նստիլ, նստող, նստելու, նստելիք:

#### 18. Ուտել>ուդել

Ներկ.– ուդիմ, ուդիս, ուդե, ուդինք, ուդիք, ուդին.

Անց.– ուղե՛յի, ուղե՛յիր, ուղեր, ուղե՛յինք, ուղե՛յիք, ուղե՛յի.

Կտր.– գերա, գերար, գերավ, գերանք, գերաք, գերան.

Հրամ.– գե՛ր (Զ. գի՛ր), գերեք.

Դերբ.– գերաձ, գերիլ, ուղող, ուղելու, ուղելիք:

### 19. Տալ>դալ

Ներկ.– դամ, դաս, դա, դանք, դաք, դան.

Անց.– դա՛յի, դա՛յիր, դար, դա՛յինք, դա՛յիք, դա՛յին.

Կտր.– դուվի կամ դուրի, դուվիր, դուվից կամ դուրից, դուվինք, դուվիք, դուվին.

Հրամ.– դո՛ւր, դուվեք կամ դուրեք.

Դերբ.– դուվաձ, դուվիլ կամ դուրիլ, դուվօղ, դալու, դալիք:

### 20. Տանիլ>դանել

Ներկ.– դանիմ, դանիս, դանի, դանինք, դանիք, դանին.

Անց.– դանե՛յի, դանե՛յիր, դաներ, դանե՛յինք, դանե՛յիք, դանե՛յին.

Կտր.– դարի, դարիր, դարավ, դարինք, դարիք, դարին.

Հրամ.– դա ը, դարեք.

Դերբ.– դարաձ, դարիլ, դանօղ, դանելու, դանելիք:

## 373. Պակասաւոր բայեր

### 1. Եւ>իւմ.

Ներկ.– իմ, իս, է, ինք, իք, ին.

Անկ.– է՛յի, է՛յիր, էր, է՛յինք, է՛յիք, է՛յին.

Մնցեալը լրանում է առնելով *ըլալ* բայից:

### 2. Կամ>գամ.

Ներկ.– գամ, գաս, գա, գանք, գաք, գան.

Անկ.– գա՛յի, գա՛յիր, գար, գա՛յինք, գա՛յիք, գա՛յին.

Մնացեալը լրանում է *ըլալ* կամ *զղնվել* բայից:

### 3. Ունիւմ>ունիւմ.

Ներկ.– ունիմ, ունիս, ունի (Թոփտի *ունէ*), ունինք, ունիք, ունին.

Անկ.– ունե՛յի, ունե՛յիր, ուներ, ունե՛յինք, ունե՛յիք, ունե՛յին.



Մնացեալը լրանում է *ունէնալ* բայից:

#### 4. Գիտել>գիդիմ

Ներկ.– գիդիմ, գիդիս, գիդէ, գիդինք, գիդիք, գիդին.

Անկ.– գիդէ՛յի, գիդէ՛յիր, գիդէր, գիդէ՛յինք, գիդէ՛յիք, գիդէ՛յին:

Մնացեալը լրանում է *գիդնալ* բայից:

#### 5. Ուզել>ուզիլ

Ներկ.– ուզիմ, ուզիս, ուզէ, ուզինք, ուզիք, ուզին.

Անկ.– ուզէ՛յի, ուզէ՛յիր, ուզէր, ուզէ՛յինք, ուզէ՛յիք, ուզէ՛յին:

Մնացեալը լրանում է *ուզէնալ*, *ուզանալ* բայից:

374. Բացի վերոյիշեալ պարզ ձևերից, բայերը ունին նաև մի քանի բարդ ձևեր, որոնք յիշեալ պարզ ձևերից են կազմւում առանձին մասնիկներով կամ բառերով. այսպէս են սահմանականի ներկան, անկատարը, ապառնին, անցեալ ապառնին և թէականի բոլոր ձևերը:

Սահմանական ներկան և անկատարը կազմւում են ստորադասականի ներկայի և անկատարի սկիզբը դնելով *կը* մասնիկը, որ Նոր-Նախիջևանի բարբառի մէջ ունի *զը*, *զ*, *քը* հիմնական ձևերը.– *զը* դրւում է ամէն կարգի թրթռուն բաղաձայնով սկսող բայերի վրայ, *զ* դրւում է ձայնաւորով սկսող բայերի վրայ, իսկ *քը* դրւում է ամէն տեսակի խուլ բաղաձայնով սկսող բայերի վրայ. օր.

<i>Ստոր. ներկ.</i>	<i>Սահմ. ներկ.</i>	<i>Ստոր. անց.</i>	<i>Սահմ. անկ.</i>
լսիմ	զը լսիմ	լսէ՛յի	զը լսէ՛յի
էշթամ	զէշթամ	էշթա՛յի	զէշթա՛յի
խաղամ	քխաղամ	խաղա՛յի	քխաղա՛յի
շարիմ	քշարիմ	շարէ՛յի	քշարէ՛յի
հավնիմ	քհավնիմ	հավնէ՛յի	քհավնէ՛յի

Սրանից դուրս՝ մասնաւոր պարագաներում գործածւում են *գու*, *քու* մասնիկները. *գու* դրւում է միավանկ բայերի և առաջին վանկում *ու* ձայնաւորն ունեցող և թրթռուն բաղաձայնով սկսող

բայերի վրայ. *քու* դրում է *գամ* բայի և առաջին վանկում *ու* ունեցող և խուլ բաղաձայնով սկսող բայերի վրայ. այսպես՝

<i>Ստոր. ներկ.</i>	<i>Մահմ. ներկ.</i>	<i>Ստոր. անց.</i>	<i>Մահմ. անկ.</i>
լամ	գուլամ	լա՛յի	գուլա՛յի
դամ	գուդամ	դա՛յի	գուդա՛յի
գուղնում	գուգուղնում	գուղնո՛ւյի	գուգուղնո՛ւյի
մուղնում	գումմուղնում	մուղնո՛ւյի	գումմուղնո՛ւյի
քամ	քուքամ	քա՛յի	քուքա՛յի
ցուցունում	քուցուցունում	ցուցունե՛յի	քուցուցունե՛յի
թուռցունում	քութուռցունում	թուռցունե՛յի	քութուռցունե՛յի

Բոլորովին մասնաւոր պարագայ է ներկայացնում *սիրել* բայը, որի սահմանականը լինում է *քի* մասնիկով. ինչ. *քիսիրիւ, քիսիրէ՛յի*. այս *ի* ձայնը յառաջացած է յաջորդ *ի* ձայնաւորի նմանութեամբ (§ 28). բայց վերի ձևերի հետ միասին գործածական են նաև *քսիրիւ, քսիրէ՛յի*:

Այս բոլորից դուրս Չալթրի շրջանում գտնում ենք նաև *կը, կու* մասնիկները. սրանք գործածւում են պարզ խուլ բաղաձայնով սկսող բայերի առջև, որոնց դէմ քաղաքը ունենալով թրթռուն բաղաձայններ՝ ըստ այսմ դնում է *գ, գու* (*գամ* բայի մօտ *քու*). ինչ.

քաղաքը	Չալթր
գը բերիւ, գը բերէ՛յի	կը պերիւ, կը պերէ՛յի
գը բռնիւ, գը բռնէ՛յի	կը պռնիւ, կը պռնէ՛յի
գուգուղնում, գուգուղնո՛ւյի	կուկուղնում, կուկուղնո՛ւյի
քուքամ, քուքա՛յի	կուկամ, կուկա՛յի

Ընդհանուր օրէնքով՝ *կը* մասնիկը (իբ բոլոր տեսակներով) դրում է անմիջապէս բայի վրայ. բայց մի խումբ բայական ոճերի մէջ կարող է բայից բաժանուել. ինչպէս՝ *գը ման քա* «ման է գալիս», *գը ձան տա* «ձայն է տալիս, կանչում է», *քը փախ տա* «փախ է տալիս, վնասում է», *գաքուլ դա* «փխ. ապուլ կու տայ, թողնում է, արձակում է», *գը ման քար* «ման էր գալիս» են: Այս բոլորի մէջ ոճը

իբր մէկ բառ ընդունուած է: Սրա հակառակը թիրատեսութեամբ մէկ բառը իբր ոճ առնուելով՝ բաժանուած է *գօրհնջտալ* «յօրանջել» և եղած է *գօրհնջ դալ*. ըստ այսմ կտր. *գօրհնջ դուվից* փոխանակ ասելու *գօրհնջտաց*:

375. Պարզ ապառնին և անցեալ ապառնին կազմում են ստորադասական ներկայի և անցեալի վրայ աւելացնելով *բիդ*, *բիդի*, *բիթ*, *բիդօր*, *բիդըր*, *բիդուր* մասնիկները: Սրանցից առաջինը բարբառի ամենասովորական ձևն է և գործածում է ձայնաւորով կամ թրթռում բաղաձայնով սկսող բայերի մօտ. խուլ բաղաձայնների մօտ դառնում է *բիթ* (Չալթր լինում է *բիտ*), աւելի քիչ պատահում է *բիդի*, որ կարող է թէ՛ ձայնաւորի և թէ՛ որևէ բաղաձայնի մօտ գտնուիլ: Շատ աւելի հազուադիւս են *բիդըր* և *բիդուր*, որոնց հնագոյն ձևը *բիդօր*՝ այժմ գործածութիւնից դուրս է ընկած. օր.

<i>Ստոր. ներկ.</i>	<i>Ապառ.</i>	<i>Ստոր. անց.</i>	<i>Անց. ապառ.</i>
լսիմ	բիդ լսիմ	լսե՛յի	բիդ լսե՛յի
էշթամ	բիդ էշթամ	էշթա՛յի	բիդ էշթա՛յի
խաղամ	բիթ խաղամ	խաղա՛յի	բիթ խաղա՛յի
հաքնիմ	բիթ (h)աքնիմ	հաքնե՛յի	բիթ (h)աքնե՛յի

Այս մասնիկները, ինչպէս յայտնի է, ծագում են հին *պիտի* և *պիտի որ* ձևերից. առաջինը տալիս է *բիդի*, սղմամբ *բիդ* (§ 35) և յաջորդ խուլերից ազդուելով *բիթ* կամ *բիտ*: Երկրորդը տալիս է սղմամբ *բիդօր*, ձևափոխմամբ *բիդուր* և աւելի սղուելով *բիդըր*:

Մասնիկները դրում են միշտ բայից առաջ և ո՛չ բնաւ բայից յետոյ, ինչպէս կարող է լինել Պօլսի բարբառում:

Երբ երկու կամ աւելի ապառնիներ մօտ մօտի դրուած լինին, կարելի է մասնիկը միայն առաջինի վրայ դնել և միւսները թողնել ստորադասականի ձևով. ինչ. *բիդ էշթամ ասիմ*. *բիդ էշթամ նարան գուղնում ասիմ* (պիտի երթամ, նրան պիտի գտնեմ ու պիտի ասեմ):

Ապառնիի մասնիկը կարող է բայից հեռանալ՝ եթէ ուրիշ որևէ բառ, որ բայի հետ կապակցութիւն ունի, նրանց մէջտեղը մտնէ. բայց պայմանաւ որ մասնիկը առաջ անցնի և ո՛չ բնաւ բայից յետոյ. ինչ. *բիդի բէդի հաւիա՞ սօրվէցունում* «ձրի՞ պիտի սովորեցնեմ»:

Այս ձևը ընդունուած է յատկապէս ոճաւոր բայերի մէջ. *ինչ. բիղ ման քա* «ման պիտի գայ», *բիթ փախ տամ* «պիտի վռնտեմ». կարելի է ասել և *ման բիթ քա, փախ բիղ դամ*ն:

376. Այստեղ պէտք է յիշել հրամայականի երկրորդ ձևը, որ կազմուում *թող* (նոր ձևով *թօ*) մասնիկով և գործածական է միայն ներկ. եզ. Գ և անկատար եզ. և յգ. Բ և Գ դէմքերով. *ինչ.*

	Ներկայ	Անկատար
եզ. Բ.		թօղ երթայիր, թօ էշթայիր
Գ.	թօ՛ղ երթա, թօ էշթա	թօղ երթար, թօ էշթար
յգ. Բ.		թօղ երթայիք, թօ էշթայիք
Գ.	թօ՛ղ երթան, թօ էշթան	թօղ երթային, թօ էշթային

Երբ հրամայական բայերը կրկնուած են, ուրիշ բարբառներում սովորաբար *թող* մասնիկը մէկ անգամ է դրուում, բայց այս բարբառում կարող է թէ՛ կրկնուել և թէ՛ կրճատուել. *ինչ. թօ էշթա գէնա* կամ *թօ էշթա, թօ գէնա* «թօ՛ղ երթայ կենայ», *թօ էշթա առնէ* կամ *թօ էշթա, թօ առնէ* «թող երթայ առնէ»:

Նոր-Նախիջևանի բարբառին յատուկ մի ձև է *ի՛նչ* հարցականից յետոյ *թող* հրամայականի գործածութիւնը, որ ուրիշ բարբառներում անսովոր է. *ինչ. ի՛նչ թօ անէ* «ի՞նչ անի», *ի՛նչ թօ ասէ* «ի՞նչ ասի»:

377. Բայերի բաղադրեալ ժամանակները կազմուում են անցեալ և ապառնի դերբայների և էական բայի յարադրութեամբ. Այսպէս՝

#### Մահմանական

Յարակատար.– բերիլ իմ, բերած իմ, իս, է, ինք, իք, ին.

Գերակատար.– բերիլ էի, բերած է՛յի, է՛յիր, էր, է՛յինք, է՛յի.

Կրկին կատարեալ.– բերած էղա, էղար...

Ապառնի յարակատար.– բերած բիղ լամ, բիղ լաս...

Ապառնի գերակատար.– բերած բիղ լայի...

Պարտաւորական կատարեալ.– բերելու էղա...

Պարտաւորական յարակատար.– բերած ըլալու իմ.

Պարտաւորական գերակատար.– բերած ըլալու է՛յի.  
Պայմանական յարակատար.– բերած գըլամ.  
Պայմանական գերակատար.– բերած գըլայի.  
Պայմանական ապառնի.– բերելու գըլամ.  
Պայմանական անցեալ ապառնի.– բերելու՛ գըլա՛յի.

#### Ստորադասական

Յարակատար.– բերած ըլամ.  
Գերակատար.– բերած ըլա՛յի.  
Ապառնի.– բերելու ըլամ.  
Ապառնի անկատար.– բերելու ըլա՛յի

#### Հրամայական

Կատարեալ.– բերած եղիր.  
Յարակատար.– բերած թօ ըլա (չունի Ա դէմք).  
Գերակատար.– բերած թօ ըլար (չունի Ա դէմք).

#### Դերբայ

Յարակատար.– բերած ըլալ.

*Դիտողութիւն.*– իրար յաջորդող մի քանի բաղադրեալ ձևերի մէջ էական բայը կարող է դրուել միայն մէկ անգամ. ինչ. *գնացիլ իս դէսի՛լ իս* կամ *գնացիլ դէսի՛լ իս* «գնացել տեսե՛լ ես», *դարիլ է ձախիլ* է կամ *դարիլ ձախիլ է* «տարել ծախել է»:

Բարդ ապառնիի տարօրինակ մի ձև է *բիդ բերիլ էի*, որի համար իբր օրինակ գտնուում եմ հետևեալները.

Ադ չըլար նը ի՞նչ բիդ արիլ էին զավալըները (Խաթաբալա 1908, էջ 205 բ):

Յէփօր (երբ) ժամին ագբարը դունէր բիդ խօրթիլ է՛յինք (անդ. էջ 232 ա).

Գէնէ բան բիդ ասիլ էր (անդ. 1909, էջ 94 գ):

378. Վերոյիշեալ բոլոր բայական ձևերը, բացի հրամայականից և դերբայներից, ունին նաև իրենց թէական եղանակը, որ կազմուում է պարզապէս նրանց վրայ աւելացնելով *նը* յետադաս մասնիկը, որ համապատասխանում է Պլ. *նէ*, միջին հայերէն *նա*

ձևերին: (Խրիմի մեջ արդեն ունինք *նէ* ձևը. օր. Ինչքան մարթ գան  
նէ. Նաւասարդեան, Հեքիաթներ, է. 55 նն): Այսպէս՝

Սահմ. ներկ.– գը բերիմ      գը բերիմ նը

Անկատար.– գը բերէ յի      գը բերէ յի նը

Ստոր. ներկ.– լսիմ      լսիմ նը

Ստոր. անց.– լսէ յի      լսէ յի նը

Կատարեալ.– լսեցի      լսեցի նը

Ապառնի.– բիդ լսիմ      բիդ լսիմ նը

Անց. ապառ.– բիդ լսէ յի      բիդ լսէ յի նը

Ստոր. յարակ.– բերած ըլամ      բերած ըլամ նը

Ստոր. անց. ապ.– բերելու ըլա յի բերելու ըլա յի նը  
                                  նն                                   նն                                   նն

Թեականի *նը* մասնիկը սովորաբար դրուում է բայի վրայ և ուրիշ բառ չի կարող մուծուել նրանց միջև: Սակայն *ալ* շաղկապը կարող է բացառութիւն կազմել և թէ՛ առաջ և թէ՛ յետոյ ընդունիլ *նը* մասնիկը. առաջ դրուելու պարագային՝ *նը* մասնիկի *ը* ձայնաւորը կըրճատուում և իբր բառ միանում է շաղկապին. ինչ. *մեռցունուս գոր գոր անիս նալ ասէլու չիմ* կամ ... *անիս ալ նը* նն:

Երբ մի քանի թեական բայեր իրար յաջորդեն, վերջինը միայն ստանում է *նը* մասնիկը. ինչ. *էշթաս առնուս նը...*

379. Թեական նը ձևին մօտիկ նշանակութիւն ունի իսէ մասնիկը (թրք. ise «եթէ»), որ սովորաբար աւելացուած է կատարեալի վրայ և տալիս է «հենց որ, անմիջապէս որ, ե՛րբ որ» նշանակութիւնը. օր. *մառդին այագները անցան իսէ* «հենց որ մարտի ցըրտերը անցան». *խըմէցիր իսէ* «ե՛րբ որ խմեցիր»:

380. Պատմական եղանակի ձևերը կազմուում են վերոյիշեալ բոլոր ձևերի (մինչև անգամ թեականների վրայ) աւելացնելով *էղիլ է* ձևը, որ համապատասխանում է Պօլսի *էղէր* (< եղեր, թրք. imiş) ձևին. օր.

գը լսիմ – գը լսիմ եղիլ է.

գդնըվիլ է – գդնըվիլ է եղիլ է.

բիդ էշթաս – բիդ էշթաս եղիլ է.

բերելու ըլաս նը – բերելու ըլաս նը եղիլ է.

այսպէս նան միւս բոլոր ձևերը, բացի դերբայներից:

Սովորաբար *էղիլ* է ձևը դրուում է բայից յետոյ. բայց կարող է և առաջ դրուել. օր. *իմ դունիս մէջը էղիլ է աշկերդներ զըզարթացունէ* (Պատկ. Բ. 276):

Ումանք էղիլ է ձևը կրճատելով գործածում են *էղըլ* է (§ 35):

Փոխանակ ասելու *էղիլ է*, գործածում է նաև նոյնի թրք. *իմիշ* ձևը. ինչ. *Բիդ էշթաս իմիշ* «պիտի երթաս եղեր», *բէրէլու ըլաս նը իմիշ* «երբ բերելու լինիս եղեր» ևն: Առաջինին նման այս էլ՝ որ սովորաբար բայից յետոյ է դրուում, կարող է երբեմն էլ առաջ դրուիլ. ինչ. *իմիշ հոն քումուրը ածան գըլա* «այստեղ ածուխը էծան կլինի եղեր»:

*Իմիշ* ձևը ատելի հեգնանքի համար կարող է քանի քանի անգամ կրկնուիլ. օր. *Մարթուն մէզը, իմիշ, Քալո՛ւստա, իմիշ, աս ինչի՞ քօզայէդ* (թրք. boza, buza խմիչքը) *վազ էգիլ իս իմիշ* (Պատկ. Գ. 39):

### 381. Անցողական բայեր

Անցողական բայերը կազմում են երկու ձևով. կա՛մ բացի արմատի ատելացնելով *-ցնէլ, -ցունէլ, -ցունուլ* բայակերտ մասնիկները՝ կամ հետը խոնարհելով *տամ* բայը. օր. *մօռնալ - մօրցնէլ, մօրցունէլ, մօրցնում. հալնէլ - հալնէցնէլ, հալնէցունէլ, հալնէցունում, իսկ քանալ - քանալ դալ*:

Այս ձևերից առաջինը *-ցնէլ* յատուկ է միայն քաղաքին. Նոյնպէս է նաև *-ցունէլ*. երրորդը անորոշ *-ցունուլ* ձևով գործածական չէ, այլ կայ միայն ներկայի և անկատարի մէջ և իբրև Դ լծորդութիւն՝ ենթակայ է այն վիճակին՝ որ տեսանք վերը § 370: Վերջին *տալ* բայով ձևերը ընդհանուր գործածական են:

Խոնարհման ժամանակ առաջինները հետևում են առանձին ձևի. վերջինը նկատելու բան չունի, որովհետև խոնարհում է միայն *տամ* բայը սովորական ձևով, իսկ բուն բայը անորոշ ձևով անփոփոխ մնում է:

Ահաւասիկ *-ցնէլ* ձևով խոնարհման պատկերը.

Ստոր. ներկ.

մօրցնիմ

մօրցունիմ

մօրցունում

մօղցնիս	մօղցունիս	մօղցունուս
մօղցնէ	մօղցունէ	մօղցունու
մօղցնինք	մօղցունինք	մօղցունունք
մօղցնիք	մօղցունիք	մօղցունուք
մօղցնին	մօղցունին	մօղցունուն

Ստոր. անցեալ

մօղցնէ՛յի	մօղցունէ՛յի	մօղցունո՛ւյի
մօղցնէ՛յիր	մօղցունէ՛յիր	մօղցունո՛ւյիր
մօղցնէր	մօղցունէր	մօղցունուր
մօղցնէ՛յինք	մօղցունէ՛յինք	մօղցունո՛ւինք
մօղցնէ՛յիք	մօղցունէ՛յիք	մօղցունո՛ւյիք
մօղցունէ՛յին	մօղցունէ՛յին	մօղցունո՛ւյին

Կատարեալ

մօղցուցի  
մօղցուցիր  
մօղցուց  
մօղցուցինք  
մօղցուցիք  
մօղցուցին

Հրամայական

մօղցո՛ւր  
մօղցուցե՛ք

Դերբայներ

մօղցնել	մօղցունել
	մօղցուցաձ, մօղցուցիչ
մօղցնօղ	մօղցունող
մօղցնելու	մօղցունելու
մօղցնելիք	մօղցունելիք



Կատարեալի մէջ *-ցուցի* են վերջաւորութեան տեղ ունանք դնում են *-ուցի* են. այսպէս *հաքցնէլ* բայից ունինք թէ՛ *հաքցուցի, հաքցուցիր, հաքցուց, հաքցուցինք, հաքցուցիք, հաքցուցին* և թէ՛ *հաքուցի, հաքուցիր, հաքուց, հաքուցինք, հաքուցիք, հաքուցին*, այսպէս նաև *վերցուցի* կամ *վերուցի, հասցուցի* կամ *հասուցի, կպցուցի* կամ *կպուցի* են: Նոյնպէս հրամայականի մէջ՝ *հաքցուր* կամ *հաքուր, կպցուր* կամ *կպուր* են: Կրկին ձևերի զուգորդութեան համար կարող ենք համեմատել հին *-ուցանէլ* և *-ացուցանէլ*:

Դիտ. 1.– «Ուտել» բայի անցողականը լինում է *ուղէցնէլ* և ոչ թէ «կերցնէլ»:

Դիտ. 2.– Եթէ բայի առաջին վանկում կայ *ը* ձայնաւորը՝ յաջորդ վանկերի *ու* ձայնաւորի ազդեցութեամբ դառնում է *ու*. ինչ. խմցնել *<խումցունում*: Թէև ներգործականը լինում է *խմէլ*:

Դիտ. 3.– Անցողականի պէս են խոնարհւում նաև *ցուցունէլ, հաքցունէլ* բայերը:

Դիտ. 4.– Թողուլ բայը ստանալով *-ցնէլ* վերջաւորութիւնը անցողականի ձև է առած և խոնարհւում է վերի ձևով, սակայն հնութեան իբր մնացորդ կայ հրամ. *թող, որի նոր ձևերն են թողցուր* կամ *թողուր*: Կատարեալ *թողուցի...* ձևը կարող է համարուիլ թէ՛ իբրև Դ լծորդութեան մնացորդ և թէ իբրև անցողականի ձև՝ առանց *ց*-ի. ինչ. *հաքուցի* են:

### 382. Կրաւորական բայեր

Կրաւորական բայերը կազմւում են ներգործական (երբեմն նաև չեզոք) բայերի անորոշի վերջաւորութիւնը դարձնելով *-վէլ*. այսպէս՝

Ա լծ. – լսել – լսվել.

խաձնել – խաձնըվել.

Բ լծ. – բըսնել – բըսնըվել.

հաքնել – հաքնըվել, հաքվել.

Գ լծ. – խաղալ – խաղացվել.

մօռնալ – մօռցվել.

Դ լծ. – առնուլ – առնվել:

Այս բոլոր բայերն էլ խոնարհւում են Բ լծորդութեան համեմատ, հետևեալ ձևով.

<i>Ստոր. ներկ.</i>	<i>Ստոր. անց.</i>	<i>կատար.</i>
լսվիմ	լսվէ յի	լսվեցա
լսվիս	լսվէ յիր	լսվեցար
լսվի	լսվէր	լսվեցավ
լսվինք	լսվէ յինք	լսվեցանք
լսվիք	լսվէ յիք	լսվեցաք
լսվին	լսվէյին	լսվեցան

*Հրամ.* – լսվէ՛, լսվեցէք:

*Դերբ.* – Լսվաձ, Լսվիլ, Լսվօղ, Լվսելու, Լսվելիք:

Այս ձևով է կազմւում և խոնարհւում նաև անցորդական բայերի կրաւորականը. ինչ. գօղցնել – *գօղցվէլ*, հավնեցնել – *հավնեցվէլ* ևն:

Անկանոն բայերի կրաւորականը սովորաբար կանոնաւոր է. բայց մի քանիսը անկանոն են. ուստի կարևոր ենք համարում բոլորի կրաւորական ձևերը նշանակել այստեղ.

1. անկանիլ>իյնել
2. առնել>անել – արվել.
3. առնուլ>\*առնուլ – առնվել.
4. ասել>ասել – ասվել.
5. բանալ>բանալ – բացվել.
6. բերել>բերել – բերվել.
7. գալ>քալ – քացվել.
8. դնել>դնել – դրվել.
9. ելանել>ելլել – էլլըցվել.
10. երթալ>էշթալ – էշթըցվել.
11. զարկանել>զարնել – զարնրվել.
12. լալ>լալ – լացվել.

13. լինել>ըլալ – ըլըվել.
14. լնուլ>ուլել – լցվել.
15. լուանալ>լվանալ – լվացվել.
16. կորչիլ>գորցըվել.
17. նստիլ>նստել – նստըվել.
18. ուտել>ուդել – ուդվել.
19. տալ>դալ – դրվել.
20. տանիլ>դանել – դարվել:

383. Կրաւորական բայերը գործ են ածուում ո՛չ միայն իբրև Ա. կրաւորական, այլ և՝

Բ. Կարողական. ինչ. *գը լսվի* «կարող է լսուիլ, կարելի է լսել», *գէշթըցվի* «կարելի է երթալ» են.

Գ. Փոխադարձ. ինչ. *ձէձգվիլ* «իրար ծեծել», *մէ մէզգի հէդ գը ձէձգըվին* «իրար հետ կծեծկուին»:

Դ. Անդրադարձ կամ կրաւորակերպ չեզոք. ինչ. *գը լվացվիմ*, *քը սանդորվի*, *քը հաքվի* են:

Ե. Չեզոք. ինչ. *մաշվիլ* «հիւծիլ». *ինչո՞ւ գը մաշվիս*:

Գլխաւորապէս կարողական նշանակութեան պատճառաւ է որ բարբառիս մէջ ո՛չ միայն ներգործականները, այլ առհասարակ ամէն բայ կարող է կրաւորական ձև ստանալ. մինչև անգամ *գալ* բայից *քացվէլ* և նման ձևեր:

384. Բացասական բայեր.

Բայերի բացասականը կազմելու համար սովորաբար դրականի սկիզբը աւելացուում է չ կամ չի բացասական մասնիկը. այսպէս են ստորադասական ներկան և անցեալը, կատարեալը և դերբայները. օր. *չլսիմ*, *չլսէ՛յի*, *չլսէցի*, *չլսող*, *չլսած* կամ *չի լսիմ*, *չի լսէ՛յի*, *չի լսէցի*, *չի լսող*, *չի լսած* են:

385. Սահմանական ներկայի բացասականը հինգ ձև ունի. առաջին ձևը կազմելու համար *գը* (*գու* են) մասնիկը ջնջուում է և նրա տեղ դրուում *չիմ*, *չիս*, *չի*, *չինք*, *չիք*, *չին* էականը. իսկ բուն բայը

դրուում է բացասական բայաձև, որ կազմուում է ստոր. ներկայի Ա դեմքի չ/վերջաձայնը վերածելով լ. ինչ. *չիմ լսիլ, չիս չսիլ, չի լսիլ* են:

Երկրորդ ձևը կազմելու համար *գը, գու* մասնիկը ջնջուում է և մնացեալի վրայ դրուում է *չի* մասնիկը, որ ձայնաւորի մօտ դառնուում է չ. սրանով սահմ. ներկայի բացասականը ձևապէս նոյնանուում է ստոր. ներկայի բացասականի հետ, բայց շփոթութեան առաջն առնելու համար սահմանականուում բացասական մասնիկի վրայ դրուում է մի գօրաւոր շեշտ, որից գուրկ է ստոր. ներկայի բացասականը. օր.

Սահմ. ներկ.– *չի՛ լսիմ* «չեմ լսուում», *չէ՛րթամ* «չեմ գնուում»:

Ստոր. ներկ.– *չլսի՛մ, չի լսի՛մ* «չլսեմ», *չէրթա՛մ* «չգնամ»:

Ըստ այսմ եգ. Գ դեմքը պիտի լինէր *չի՛ լսէ*. բայց այս ձևը բնաւ գործածական չէ և կայ միայն առաջին ձևով. ինչ. *չի լսիլ, չի բաքնիլ, չի հաքնիլ* են: Բացառութիւն է կազմուում միայն ուզել բայը, որից երկրորդ ձևով ունինք *չուզէ*. օր. *հաց չուզէ, ջուր չուզէ, էրէսս դէսնէլ չուզէ*:

Երրորդ ձևը նոյն է առաջին ձևի հետ, միայն այստեղ ջնջուած է բայի վերջաձայն լ. ինչ. *չիմ լսի, չիս լսի, չի լսի, չինք լսի, չիք լսի, չին լսի* են:

Չորրորդ ձևը նոյն է երկրորդի հետ. միայն այստեղ էականը փոխանակ լինելու *չի՛* դրուում է հաւասարապէս *չին* բոլոր դեմքերի համար, բացի եգ. Գ դեմքից, որ մնուում է առաջին ձևով. ինչ. *չիմ լսիմ, չին լսիս, չի լսիլ, չին լսինք, չին լսիք, չին լսին*:

Հինգերորդ ձևը առաջին և երկրորդ ձևերի խառնուրդն է, այսինքն թէ՛ էական բայն է խոնարհուում և թէ բուն բայը՝ իրենց բոլոր դեմքերով. ինչ. *չիմ լսիմ, չիս լսիս, չի լսիլ, չինք լսինք, չիք լսիք, չին լսին*:

Ներկայի սոյն հինգ ձևերը անխտիր ընդհանուր չեն ամբողջ բարբառին առհասարակ. այլ իւրաքանչիւրը յատուկ է այս կամ այն գիւղին կամ շրջանին. այսպէս քաղաքում որոշ ընտանիքներ գործածուում են առաջին ձևը, ուրիշներ երկրորդ ձևը: Զալթր-Թովսի շրջանում գործածուում են առաջին և երրորդ ձևերը: Մեծ և Փոքր-Սալա գիւղերը գործածուում են չորրորդ ձևը: Բսկ վերջին հինգերորդ ձևը՝ որ շատ քիչ գործածական է, պատահուում է քաղաքում:

386. Սահմանական անկատարի բացասականը կազմելու համար ունինք 4 ձև. բոլորի մէջ էլ սահմանականի *գը, գու* մասնիկը ջնջում է և նրա տեղ դրում *չէր, չի* (ձայնատրի մօտ *չ*), *չին* էականները՝ անխտիր բոլոր դէմքերի համար. իսկ բուն բայը մնում է անփոփոխ. չորրորդ ձևի մէջ միայն գործածում է բացասական բայաձև. ինչ. *չէր լսէր, չէր լսէիր, չէր խաղար, չէր հաքնէլինք, չի լսէի, չին լսէի, չէր խաղայի, չի խաղայի, չին խաղայի, չօքտէր, չէր ասիլ* ևն:

Ներկայի նման անկատարի բացասական ձևերն էլ ընդհանուր չեն ամբողջ բարբառին. այլ իւրաքանչիւրը ունի իր յատուկ շրջանը: Այսպէս քաղաքում գործածում է *չէր լսէր* կամ *չի լսէի* ձևը. Չալթր-Թոփտի շրջանը գործածում է *չէր լսէի* ձևը. Մեծ և Փոքր-Սալա գիւղերը գործածում են *չին լսէի*. իսկ վերջին (չորրորդ) ձևը գտնում ենք միայն մի քանի անգամ գործածուած Պատկանեանի գործերում. *չէր ասիլ* Հանգ. գր. և պատմ. Ա. 340, *չէր էրէվնալ* Հանգ. գր. Բ. 39, *չէի գուղնուլ* ևն:

Նկատելի է որ անկատարի եզ. Գ դէմքը շատ անգամ նոյնա-նում է ուրիշ բարբառների ներկայի հետ. այսպէս *չի բաքնէր, չի դար, չօքդէր* նշանակում են «չէր համբուրում, չէր տալիս, չէր բաւում», մինչդեռ նոյն ձևերը Պօլսի բարբառում նշանակում են «չի համբուրում, չի տալիս, չի բաւականանում»:

387. Ապառնիի ներկան և անցեալը բացասական չունին և նրանց տեղ գործածում են պարտաւորական ներկայի և անցեալի բացասական ձևերը. ինչ. *բիդ էշթամ - էշթալու չիմ - բիդ էշթայի - էշթալու չէյի*: Տեղափոխուած *չեմ երթալու, չէի երթալու* ձևերը գործածական չեն: Պարտաւորական ներկայի և անցեալի դրական ձևը բարբառում ջնջուած լինելով՝ ապառնի բացասականի այս գործածութիւնը թիւրիմացութեան տեղիք չի տալիս: Միայն բացասական անցեալի ձևն է՝ որ թէ՛ ապառնիի և թէ՛ պարտաւորականի իմաստով գործածում է. այսպէս՝ *էշթալու չէյիր* նշանակում է թէ՛ «չալիտի երթայիր» և թէ՛ «չպէտք է երթայիր»:

Պատկանեանի գործերի մէջ պատահում ենք բացասական ապառնիի ձևեր. ինչ. *չի բիդի լան* Բ. 301, *բիդի չի վախնա* Բ. 437, *բիդի չի լաս* Բ. 437, *բիդի չասիմ* Բ. 440, *բիդի չի անիս* Բ. 444, *չի բիդի*

լա Գ. 190. այս բոլորը հին բարբառին յատուկ ձևեր են, որոնք այժմ էլ երբեմն գործածում են:

388. Բաղադրեալ ձևերի մէջ բացասականի մասնիկը սովորաբար դրւում է էական բայի և ոչ թէ դերբայի վրայ: Յարակատարի և գերակատարի բացասական կազմելու համար առնւում է երկրորդ -*ած* ձևը և ոչ բնաւ -*իլ* ձևը. ինչ. *բերած չիմ, բերած չէի*. (որովհետև *չիմ բերիլ, չէր բերիլ* ձևերը դառնում են սահմ. ներկայ և անկատար): Իրար հակադրութեամբ ասւում է օր. *ի՛նչ էղիլ է, ի՛նչ էղած չէ, ի՛նչ ասիլ է, ի՛նչ ասած չէ* (տրականը -*իլ* դերբայով, բացասականը -*ած* դերբայով): Յարակատարի և գերակատարի ձևերը կարող են շրջամբ էլ կազմուիլ. ինչ. *չէ բերած, չէի բերած*:

Քիչ անգամ պատահում է որ բացասական մասնիկը դրուի դերբայի վրայ. ինչ. *չէզած էր* «եկած չէր», *չտեսած ըլայի նը* «եթէ տեսած չլինէի», *քէշքէմ չբերած էի* «երանի՛ բերած չլինէի»:

Ապառնի յարակատարի և ապառնի գերակատարի բացասականը գործածական չէ, ինչպէս ապառնիի ներկան և անցեալը. սրանց տեղ գործածւում է պարտաւորական ներկայի և անցեալի բացասականը: Չեն ասում օր. *բերած չայիտի ըլամ, բերած չայիտի ըլայի*, այլ *բերած ըլալու չիմ, բերած ըլալու չէ՛յի*:

389. Արգելականը կազմւում է *մի՛* մասնիկով, իսկ բայը դրւում է եզակի Բ դէմքում բացասական բայաձևով, յոգնակի Բ դէմքում ստոր. ներկայ յգ. Բ դէմքով. ինչ. *մի՛ լսիլ, մի՛ լսիք* են: Կայ նաև վերջաձայն *լ*-ի յապաւումով *մի՛ լսի* են ձևը: *Մի՛* մասնիկի ի ձայնաւորը կարող է երբեմն կրճատուիլ, ձայնաւորի մօտ բոլորովին ջընջուիլ, բաղաձայնի մօտ վերածուիլ *ը*. ինչ. *մէ՛շթա, մէ՛շթալ* «մի՛ երթար», *մէ՛շթաք* «մի՛ երթաք», *մը՛ լսի* «մի՛ լսեր», *մը՛ լսիք* «մի՛ լսեք»:

390. Ահաւասիկ չորս լծորդութեանց բայերի բացասական ձևերի տախտակը.

Չենք դնում մնացեալ բարդ ձևերի, թեականի, պատմականի, ինչպէս նաև կրաւորական, անցողական, անկանոն և պակասաւոր բայերի բացասականը, որովհետև այդ բոլորը կազմւում են միևնոյն ձևով, առանց որևէ մասնաւոր կանոնի. ինչ. *բերէլու չըլաս նը էղիլ է, չլսված, չհանվէցուցի* են:

Բարբառիս մէջ սովորական ձև է բայերի դրականի ու բացասականի կրկնութիւնը՝ անմիջական մի գործողութիւն ցոյց տալու համար. ինչ. *գէրած չի գէրած* «անմիջապէս որ կերաւ», *գարգաճ չի գարգաճ* «հէնց որ զարկաւ»: Այս ձևը միայն դերբային է յատուկ և ոչ դիմատրոներին:

391. Հարցական շինելու համար բաւական է ձայնի աստիճանի բարձրացնել. բայց կարելի է նաև դնել թրք. *mi* հարցական մասնիկը, որ հին լեզուի մէջ աւելի սովորական էր և այժմ քիչ է գործածուում. ինչ. *գինիմարթ չէ՞ մի* «կնիկ չէ՞» (Պատկ. Բ. 285), *բէլլի մի չէ* «յայտնի չէ՞ միթէ» (Պատկ. Բ. 287): Փոխանակ *մի* ձևի՝ հին մարդկանց մօտ քիչ անգամ գործածուում էր *մը* ձևը. ինչ. *իմացա՞ր մը, գա՞ր մը չքա՞ր մը* «կա՞ր թէ չկար»:

392. Ժամանակների գործածութիւնը և նշանակութիւնը

Սահմանական ներկան գործածուում է Կը ճիւղի բարբառների սովորական ոճով թէ՛ իբրև բուն ներկայ, շարունակական ներկայ և ապառնի:

Սահմանական անկատարը նոյնպէս ունի բուն անկատարի և շարունակականի նշանակութիւնը:

Ստորադասական ներկան և անցեալը ոչ միայն բուն ստորադասականի նշանակութիւնն ունին, այլ և գործածուում են իբր ըղձական և իբր հրամայական:

Ստորադասական անցեալի բացասական ձևը ունի մի տարօրինակ գործածութիւն. այն է հեզնական ձևով ներկայի կամ ապառնիի նշանակութիւն. հմմտ. *մէքամ գօվի համար 500 մանէթ չիդայի* «մեկ կովի համար 500 ռուբլի չե՞մ տայ» - *Աջըմանք խազախ բանվօր դունս նէս չմդցընէի բարէմ* «ես կեղտոտ ռուս աղախին ներս տունս չե՞մ մտցնի»:

## Մ ա հ մ ա ն ա կ ա ն ն երկայ

### Առաջին ձև

Չիմ լսիլ	Չիմ բաքնիլ	Չիմ հարփիլ	Չիմ հաքնիլ	Չիմ խաղալ	Չիմ մօռնալ	Չիմ մուղնուլ
չիս լսիլ	չիս բաքնիլ	չիս հարփիլ	չիս հաքնիլ	չիս խաղալ	չիս մօռնալ	չիս մուղնուլ
չի լսիլ	չի բաքնիլ	չի հարփիլ	չի հաքնիլ	չի խաղալ	չի մօռնալ	չի մուղնուլ
չինք լսիլ	չինք բաքնիլ	չինք հարփիլ	չինք հաքնիլ	չինք խաղալ	չինք մօռնալ	չինք
չիք լսիլ	չիք բաքնիլ	չիք հարփիլ	չիք հաքնիլ	չիք խաղալ	չիք մօռնալ	մուղնուլ
չին լսիլ	չին բաքնիլ	չին հարփիլ	չին հաքնիլ	չին խաղալ	չին մօռնալ	չիք մուղնուլ

### Երկրորդ ձև

Չի՛ լսիմ	Չի՛ բաքնիմ	Չի՛ հարփիմ	Չի՛ հաքնիմ	Չի՛ խաղամ	Չի՛ մօռնամ	Չի՛ մուղնում
չի՛ լսիս	չի՛ բաքնիս	չի՛ հարփիս	չի՛ հաքնիս	չի՛ խաղաս	չի՛ մօռնաս	չի՛ մուղնուս
չի՛ լսիլ	չի՛ բաքնիլ	չի՛ հարփիլ	չի՛ հաքնիլ	չի՛ խաղալ	չի՛ մօռնալ	չի՛ մուղնուլ
չի՛ լսինք	չի՛ բաքնինք	չի՛ հարփինք	չի՛ հաքնինք	չի՛ խաղանք	չի՛ մօռնանք	չի՛ մուղնունք
չի՛ լսիք	չի՛ բաքնիք	չի՛ հարփիք	չի՛ հաքնիք	չի՛ խաղաք	չի՛ մօռնաք	չի՛ մուղնուք
չի՛ լսին	չի՛ բաքնին	չի՛ հարփին	չի՛ հաքնին	չի՛ խաղան	չի՛ մօռնան	չի՛ մուղնուն



### Երրորդ ձև

Չիմ լսի	Չիմ բաքնի	Չիմ հարփի	Չիմ հաքնի	Չիմ խաղա	Չիմ մօռնա	Չիմ մուղնու
չիս լսի	չիս բաքնի	չիք հարփի	չիս հաքնի	չիս խաղա	չիս մօռնա	չիս մուղնու
չի լսի	չի բաքնի	չի հարփի	չի հաքնի	չի խաղա	չի մօռնա	չի մուղնու
չինք լսի	չինք բաքնի	չինք հարփի	չինք հաքնի	չինք խաղա	չինք մօռնա	չինք մուղնու
չիք լսի	չիք բաքնի	չիք հարփի	չիք հաքնի	չիք խաղա	չիք մօռնա	չիք մուղնու
չին լսի	չին բաքնի	չին հարփի	չին հաքնի	չին խաղա	չին մօռնա	չին մուղնու

### Չորրորդ ձև

Չին լսիմ	Չին բաքնիմ	Չին հարփիմ	Չին հաքնիմ	Չին խաղամ	Չին մօռնամ	Չին մուղնում
չին լսիս	չին բաքնիս	չին հարփիս	չին հաքնիս	չին խաղաս	չին մօռնաս	չին մուղնուս
չի լսիլ	չի բաքնիլ	չի հարփիլ	չի հաքնիլ	չի խաղալ	չի մօռնալ	չի մուղնուլ
չին լսինք	չին բաքնինք	չին հարփինք	չին հաքնինք	չին խաղանք	չին մօռնաք	չին մուղնունք
չին լսիք	չին բաքնիք	չին հարփիք	չին հաքնիք	չին խաղաք	չին մօռնաք	չին մուղնուք
չին լսին	չին բաքնին	չին հարփին	չին հաքնին	չին խաղան	չին մօռնան	չին մուղնուն

### Հինգերորդ ձև

Չիմ լսիմ	Չիմ բաքնիմ	Չիմ հարփիմ	Չիմ հաքնիմ	Չիմ խաղամ	Չիմ մօռնամ	չիմ մուղնում
չիս լսիս	չիս բաքնիս	չիս հարփիս	չիս հաքնիս	չիս խաղաս	չիս մօռնաս	չիս մուղնուս
չի լսիլ	չի բաքնիլ	չի հարփիլ	չի հաքնիլ	չի խաղալ	չի մօռնալ	չի մուղնուլ
չինք լսինք	չինք բաքնինք	չինք հարփինք	չինք հաքնինք	չինք խաղանք	չինք մօռնաք	չինք մուղնունք
չիք լսիք	չիք բաքնիք	չիք հարփիք	չիք հաքնիք	չիք խաղաք	չիք մօռնաք	չիք մուղնուք
չին լսին	չին բաքնին	չին հարփին	չին հաքնին	չին խաղան	չին մօռնան	չին մուղնուն

## Անցեալ անկատար

### Առաջին ձև

Չեր լսէ յի	Չեր բաքնէ յի	Չեր հարփէ յի	Չեր հաքնէ յի	Չեր խաղա՛ յի	Չեր մօռնա՛ յի	Չեր մուղնու՛ յի
չեր լսէ յիր	չեր բաքնէ յիր	չեր հարփէ յիր	չեր հաքնէ յիր	չեր խաղա յիր	չեր մօռնա յիր	չեր մուղնու յիր
չեր լսեր	չեր բաքներ	չեր հարփեր	չեր հաքներ	չեր խաղար	չեր մօռնար	չեր մուղնուր
չեր լսէ յինք	չեր բաքնէ յինք	չերհարփէ յինք	չեր հաքնէ յինք	չեր խաղա յինք	չեր մօռնա յինք	չեր մուղնու յինք
չեր լսէ յիք	չեր բաքնէ յիք	չեր հարփէ յիք	չեր հաքնէ յիք	չեր խաղա յիք	չեր մօռնա յիք	չեր մուղնու յիք
չեր լսէ յին	չեր բաքնէ յին	չեր հարփէ յին	չեր հաքնէ յին	չեր խաղա յին	չեր մօռնա յին	չեր մուղնու յին

### Երկրորդ ձև

Չի՛ լսէյի	Չի՛ բաքնէ՛ յի	Չի՛ հարփէ՛ յի	Չի՛ հաքնէ՛ յի	Չի՛ խաղա՛ յի	Չի՛ մօռնա՛ յի	Չի՛ մուղնու՛ յի
չի՛ լսէյիր	չի՛ բաքնէ՛ յիր	չի՛ հարփէ՛ յիր	չի՛ հաքնէ՛ յիր	չի՛ խաղա յիր	չի՛ մօռնա յիր	չի՛ մուղնու յիր
չի՛ լսեր	չի՛ բաքներ	չի՛ հարփեր	չի՛ հաքներ	չի՛ խաղար	չի՛ մօռնար	չի՛ մուղնուր
չի՛ լսէյինք	չի՛ բաքնէ յինք	չի՛ հարփէ յինք	չի՛ հաքնէ յինք	չի՛ խաղա յինք	չի՛ մօռնա յինք	չի՛ մուղնու յինք
չի՛ լսէյիք	չի՛ բաքնէ յիք	չի՛ հարփէ յիք	չի՛ հաքնէ յիք	չի՛ խաղա յիք	չի՛ մօռնա յիք	չի՛ մուղնու յիք
չի՛ լսէյին	չի՛ բաքնէ յին	չի՛ հարփէ յին	չի՛ հաքնէ յին	չի՛ խաղա յին	չի՛ մօռնա յին	չի՛ մուղնու յին

### Երրորդ ձև

Չին լսէ յի	Չին բաքնէ՛ յի	Չին հարփէ՛ յի	Չին հաքնէ՛ յի	Չին խաղա՛ յի	Չին մօռնա՛ յի	Չին մուղնու՛ յի
չին լսէ յիր	չին բաքնէ յիր	չին հարփէ յիր	չին հաքնէ յիր	չին խաղա յիր	չին մօռնա յիր	չին մուղնու յիր
չին լսեր	չին բաքներ	չին հարփեր	չին հաքներ	չին խաղար	չին մօռնար	չին մուղնուր
չին լսէ յինք	չին բաքնէ յինք	չին հարփէ յինք	չին հաքնէ յինք	չին խաղա յինք	չին մօռնա յինք	չին մուղնու յինք
չին լսէ յիք	չին բաքնէ յիք	չին հարփէ յիք	չին հաքնէ յիք	չին խաղա յիք	չին մօռնա յիք	չին մուղնու յիք
չին լսէ յին	չին բաքնէ յին	չին հարփէ յին	չին հաքնէ յին	չին խաղա յին	չին մօռնա յին	չին մուղնու յին

## Չորրորդ ձև

Չէի լսիլ	Չէի բաքնիլ	Չէ՛յի հարփիլ	Չէ՛յի հաքնիլ	Չէ՛յի խաղալ	Չէ՛յի մօռնալ	Չէ՛յի մուղնուլ
չէիր լսիլ	չէիր բաքնիլ	չէ՛յիր հարփիլ	չէ՛յիր հաքնիլ	չէ՛յիր խաղալ	չէ՛յիր մօռնալ	չէ՛յիր մուղնուլ
չեր լսիլ	չեր բաքնիլ	չէր հարփիլ	չէ՛ր հաքնիլ	չէր խաղալ	չէր մօռնալ	չէր մուտդուլ
չէինք լսիլ	չէինք բաքնիլ	չէ՛յինք հարփիլ	չէ՛յինք հաքնիլ	չէ՛յինք խաղալ	չէ՛յինք մօռնալ	չէ՛յինք մուղնուլ
չէիք լսիլ	չէիք բաքնիլ	չէ՛յիք հարփիլ	չէ՛յիք հաքնիլ	չէ՛յիք խաղալ	չէ՛յիք մօռնալ	չէ՛յիք մուղնուլ
չէին լսիլ	չէին բաքնիլ	չէ՛յին հարփիլ	չէ՛յին հաքնիլ	չէ՛յին խաղալ	չէ՛յին մօռնալ	չէ՛յին մուղնուլ

## Ա ն ց ե ա լ կ ա տ ա ր ե ա լ

Չլսեցի	Չբաքի	Չհարփեցա	Չհաքա	Չխաղացի	չմօռցա	Չմղա
չլսեցիր	չբաքիր	չհարփեցար	չհաքար	չխաղացիր	չմօռցար	չմղար
չլսից	չբաքից	չհափեցավ	չհաքավ	չխաղաց	չմօռցավ	չմղավ
չլսեցինք	չբաքինք	չհարփեցանք	չհաքանք	չխաղացինք	չմօռցանք	չմղանք
չլսեցիք	չբաքիք	չհափեցաք	չհաքաք	չխաղացիք	չմօռցաք	չմղաք
չլսեցին	չբաքին	չհարփեցան	չհաքան	չխաղացին	չմօռցան	չմղան

## Մ տ ո ր ա դ ա ս ա կ ա ն ն ե ր կ ա յ

Չլսիմ	Չբաքնիմ	Չհարփիմ	Չհաքնիմ	Չխաղամ	Չմօռնամ	Չմուղնում
չլսիս	չբաքնիս	չհարփիս	չհաքնիս	չխաղաս	չմօռնաս	չմուղնուս
չլսե	չբաքնե	չհարփի	չհաքնի	չխաղա	չմօռնա	չմուղնու
չլսինք	չբաքնինք	չհարփինք	չհաքնինք	չխաղանք	չմօռնանք	չմուղնունք

չլսիք	չբաքնիք	չհարփիք	չհաքնիք	չխաղաք	չմօռնաք	չմուղնուք
չլսին	չբաքնին	չհարփին	չհաքնին	չխաղան	չմօռնան	չմուղնում

**Մ տ ո ր ա դ ա ս ա կ ա ն ա ն ց ե ա լ**

Չլսե՛ր յի	Չբաքնե՛ր յի	Չհարփե՛ր յի	Չհաքնե՛ր յի	Չխաղա՛ր յի	Չմօռնա՛ր յի	Չմուղնու՛ր յի
չլսե՛ր յի	չբաքնե՛ր յի	չհարփե՛ր յի	չհաքնե՛ր յի	չխաղա՛ր յի	չմօռնա՛ր յի	չմուղնու՛ր յի
չլսե՛ր	չբաքնե՛ր	չհարփե՛ր	չհաքնե՛ր	չխաղա՛ր	չմօռնա՛ր	չմուղնու՛ր
չլսե՛ր յինք	չբաքնե՛ր յինք	չհարփե՛ր յինք	չհաքնե՛ր յինք	չխաղա՛ր յինք	չմօռնա՛ր յինք	չմուղնու՛ր յինք
չլսե՛ր յիք	չբաքնե՛ր յիք	չհարփե՛ր յիք	չհաքնե՛ր յիք	չխաղա՛ր յիք	չմօռնա՛ր յիք	չմուղնու՛ր յիք
չլսե՛ր յին	չբաքնե՛ր յին	չհարփե՛ր յին	չհաքնե՛ր յին	չխաղա՛ր յին	չմօռնա՛ր յին	չմուղնու՛ր յին

**Ա պ ա ռ ն ի**

Լսե՛լու չիմ	Բաքնե՛լու չիմ	Հարփե՛լու չիմ	Հաքնե՛լու չիմ	Խաղա՛լու չիմ	մօռնա՛լու չիմ	մղնե՛լու չիմ
լսե՛լու չիս	„ չիս	„ չիս	„ չիս	„ չիս	„ չիս	„ չիս
լսե՛լու չէ	„ չէ	„ չէ	„ չէ	„ չէ	„ չէ	„ չէ
լսե՛լու չինք	„ չինք	„ չինք	„ չինք	„ չինք	„ չինք	„ չինք
լսե՛լու չիք	„ չիք	„ չիք	„ չիք	„ չիք	„ չիք	„ չիք
լսե՛լու չին	„ չին	„ չին	„ չին	„ չին	„ չին	„ չին

### Ա ն ց ե ա լ ա պ ա ռ ն ի

Լսելու չէ՛յի	Բաքնելու չէ՛յի	Հարփելու չէ՛յի	Հաքնելու չէ՛յի	խաղալու չէ՛յի	մօռնալու չէ՛յի	մղնելու չէ՛յի
լսելու չէ՛յիր	„ չէ՛յիր	„ չէ՛յիր	„ չէ՛յիր	„ չէ՛յիր	„ չէ՛յիր	„ չէ՛յիր
լսելու չէր	„ չէր	„ չէր	„ չէր	„ չէր	„ չէր	„ չէր
լսելու չէ՛յինք	„ չէ՛յինք	„ չէ՛յինք	„ չէ՛յինք	„ չէ՛յինք	„ չէ՛յինք	„ չէ՛յինք
լսելու չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք
լսելու չէ՛յին	„ չէ՛յին	„ չէ՛յին	„ չէ՛	„ չէ՛յին	„ չէ՛յին	„ չէ՛յին

### Հ ռ ա մ ա յ ա կ ա ն ա ռ ա ջ ի ն

մի՛, լսի(լ)	մի՛, բաքնի(լ)	մի՛, հարփի(լ)	մի՛, հաքնի(լ)	մի՛, խաղա(լ)	մի՛, մօռնա(լ)	մի՛, մուղնուլ
մի՛, լսիք	մի՛, բաքնիք	մի՛, հարփիք	մի՛, հաքնիք	մի՛, խաղաք	մի՛, մօռնաք	մի՛, մուղնուք

### Հ ռ ա մ ա յ ա կ ա ն ե ռ կ ը ը ը

թօ չլսե՛	թօ չբաքնե՛	թօ չհարփի՛	թօ չհաքնի՛	թօ չխաղա՛	թօ չմօռնա՛	թօ չմուղնու՛
թօ չլսի՛ն	թօ չբաքնի՛ն	թօ չհարփի՛ն	թօ չհաքնի՛ն	թօ չխաղա՛ն	թօ չմօռնա՛ն	թօ չմուղնու՛ն

### Հ ռ ա մ ա յ ա կ ա ն ա ն ց ե ա լ

թօ չլսե՛իր	թօ չբաքնե՛յիր	թօ չհարփե՛իր	թօ չհաքնե՛յիր	թօ չխաղա՛իր	թօ չմօռնա՛յիր	թօ չմուղնու՛յիր
թօ չլսեր	թօ չբաքներ	թօ չհարփեր	թօ չհաքներ	թօ չխաղար	թօ չմօռնար	թօ չմուղնուր
թօ չլսե՛իք	թօ չբաքնե՛յիք	թօ չհարփե՛իք	թօ չհաքնե՛իք	թօ չխաղա՛յիք	թօ չմօռնա՛յիք	թօ չմուղնու՛յիք
թօ չլսե՛ին	թօ չբաքնե՛յին	թօ չհարփե՛ին	թօ չհաքնե՛ին	թօ չխաղա՛յին	թօ չմօռնա՛յին	թօ չմուղնու՛

### Յ ա ր ա կ ա տ ա ր

Բերած չիմ	Բաքած չիմ	Հարփած չիմ	Հաքած չիմ	խաղացած չիմ	մօղացած չիմ	մդած չիմ
„ չիս	„ չիս	„ չիս	„ չիս	„ չիս	„ չիս	„ չիս
„ չէ	„ չէ	„ չէ	„ չէ	„ չէ	„ չէ	„ չէ
„ չինք	„ չինք	„ չինք	„ չինք	„ չինք	„ չինք	„ չինք
„ չիք	„ չիք	„ չիք	„ չիք	„ չիք	„ չիք	„ չիք
„ չին	„ չին	„ չին	„ չին	„ չին	„ չին	„ չին

### Գ ե ր ա կ ա տ ա ր

Բերած չէ՛յի	Բաքած չէ՛յի	Հարփած չէ՛յի	Հաքած չէ՛յի	խաղացած չէ՛յի	մօղացած չէ՛յի	մդած չէ՛յի
„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք
„ չէր	„ չէր	„ չէր	„ չէր	„ չէր	„ չէր	„ չէր
„ է՛յինք	„ չէ՛ինք	„ չէ՛ինք	„ է՛յինք	„ է՛յինք	„ չէ՛յինք	„ չէ՛յինք
„ չէ՛յիք	„ չէ՛իք	„ չէ՛իք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք	„ չէ՛յիք
„ չէ՛յին	„ չէ՛ին	„ չէ՛ին	„ չէ՛յին	„ չէ՛յին	„ չէ՛յին	„ չէ՛յին

### Դ ե ր ք ա յ ն ե ր

Չլսող	Չբաքնող	Չհարփող	Չհաքնող	Չխաղացող	Չմօղցող	Չմդնող
չլսած	չբաքած	չհարփած	չհաքած	չխաղացած	չմօղցած	չմդնած
չլսել	չբաքնել	չհարփել	չհաքնել	չխաղալ	չմօղնալ	չմդնոտլ
չլսելիք	չբաքնելիք	չհարփելիք	չհաքնելիք	չխաղալիք	չմօղնալիք	չմդնելիք
չլսելու	չբաքնելու	չհարփելու	չհաքնելու	չխաղալու	չմօղնալու	չմդնելու

Թեական ձևերը ցույց են տալիս թեութիւն կամ պայման. ինչ. *էշթամ նը* «եթէ երթամ, երբոր երթամ». *մինչէվ թայթոի նը* «մինչև որ դադարի». *ինչ բէթք է նը դո'ւր* «ինչ որ պետք է տո'ւր»:

Թեական եղանակի բազմաթիւ ձևերի մէջ ամենից աւելի գործածական են բուն թեական ներկայի եզակի և յոգնակի երկրորդ դէմքերը, որոնք բացի թեականից ունին նաև մի տեսակ խնդրական, աղաչական հրամայականի նշանակութիւն. ինչ. *դաս նը* «եթէ տաս, երբոր տաս», բայց նաև «խնդրեմ, տո'ւր». օր. *իդա մուգրադը դաս նը*. «խնդրեմ, այդ մկրատը տո'ւր»: Գործածուում է նաև իբրև հաստատական, կամ իր հաւանութիւնը ցույց տալու համար. ինչ. *Ա'խպար, մաշթը բան գասէ նը'.* *Գէշ սոյէն բիդ վախէնա' նը...* *Հինութ աղէթները աղէգ ին նը ...* (Եղբա՛յր, մարդը բան է ասում. Սաստիկ պիտի վախենայ. Հին սովորութիւնները լաւ են):

Շատ անգամ այս *նը* մասնիկը լինում է հարցական և գործածուում է պակասաւոր նախադասութեան մօտ. ինչ. *Հաբա անունը չի տար նը ...* *Հաբա ալայ-մալայ առներ էղթար նը*՝ (այն ժամանակ ինչ պիտի անէինք):

Սահմանականի յարակատար և գերակատար ձևերի մէջ սովորաբար գործածական են *բէրիլ իւմ*, *բէրիլ էի* ևն ձևերը, իսկ *բէրաձ իւմ* (բերած եմ), բէրաձ է'յի (բերած էի) ձևերի գործածութիւնը հազուագիւտ է: Սահմանականի գերակատարը շատ անգամ ստորադասական գերակատարի նշանակութիւն ունի. ինչ. *քէշքէմ բէրաձ է'յի*՝ փիւ. ասելու *քէշքէմ բէրաձ ըլայի* «երանի թէ բերած լինէի»:

Պատմական եղանակի բոլոր ձևերը ցույց են տալիս թէ խօսողը ուրիշի միջոցով է տեղեկացել իր պատմածին և որին շատ վստահութիւն չի ընծայում, օր.*բիդ էշթա էղիլ է* «ասում են թէ, կարծում կամ ենթադրում է թէ պիտի երթայ»: Յոյց է տալիս նաև ծաղր կամ հեգնանք. ինչ.*ինձի բիդ ձէձէ էղիլ է* «ինձ պիտի ծեծե եղէր»:

Նոր ռուսախօս սերունդի մէջ նկատուում է յարակատարի և գերակատարի ջնջումը և նրանց փոխարէն կատարեալի գործածութիւնը. օր. *Իմիս ձնաձ օրս բաբաս ամբէսնաք մէգ մէձ բադէվ արալ օր...* *հարուրէն ավէլի մաշթ ձան դուվից.*– Բոլորը այնպէս է

պատմում, որ կարծես թե ինքն էլ նոյն հանդեսին մասնակից էր: Այս բանը ռուսերեն լեզուի ազդեցությամբ է յառաջացած, ուր յարակատար և գերակատար ձևերը գոյություն չունենալով՝ փոխանակում են կատարեալով:

Երբ գործողությունը մեկ անգամ՝ կատարուած վերջացած չէ (ինչպէս է վերի օրինակում *դուվից* բառը), այլ մի ժամանակ շարունակուած է, յարակատարի տեղ փոխանակ կատարեալ դնելու՝ դրում է անկատար. *ինչ.մեզ գազէթը մանէթով զը ձախէլին* «մէկ լրագիրը մէկ ռուբլի են ծախել (մի ժամանակ շարունակ)»:

Ռուսերենի ազդեցութեամբ է նաև կատարեալի բացասականի նորօրինակ գործածությունը՝ կարողականի նշանակությամբ և ժամանակի փոփոխությամբ. *ինչ.է՛, չհասաք*. «չէք կարող հասնիլ, չպիտի կարենաք հասնիլ»: *Պուք չառիք* «չէք կարող առնել, չպիտի կարողանաք առնել». *Ան դուն չհասար ա լ* «օ, չպիտի կարենաս հասնիլ»:

Հրամայականը երբեմն ստանալով *չի* մասնիկը՝ ունենում է յորդորական ու մեղմ նշանակութիւն, որ մօտենում է ռուս. *ка* մասնիկին՝ *иди-ка сюда* և նման դարձուածների մէջ. *ինչ. Հայդը էրթանք իդօր յարդըմ անի նք - չի. Արիցէք իդա բանը անի նք - չի. էյ վօ՛վ անօր սիրդ բիդ անէր՝ ասա - չի դուն. (Մա կամուրջէն անցնելու տեղ մղտէ սի), ձանձաղ դէղէն անցնի նք - չի*: Այսպիսի մի քերականական ձև երևան է հանում Այվազեան Գ. եպս., Առակք Քոիլովի, տպ. 1896, էջ 80 և իր երկերի մէջ էլ գործածում: Այսպէս՝ վերի օրինակներից առաջին երեքը քաղուած են իր «Խրիմու Հայոց լեզուովը շարադրուած Առակներ»-ից, էջ 11, 22, 31. իսկ վերջինը՝ «Քոիլովի առակներից», էջ 80: Այվազեան կարծում է թէ այս մասնիկը թուրք կամ թաթար լեզուից է մտած և գործածական է Խրիմի ու Նախիջևանի բարբառում: Սակայն Նոր-Նախիջևանի արդի բարբառը այսպիսի մասնիկ չունի. չեմ գտած նաև Պատկանեանի գործերում, որոնք ներկայացնում են Նոր-Նախիջևանի հնագոյն լեզուն: Ուստի հետևեցնում եմ թէ հրամայականի մի այսպիսի գործածութիւն Խրիմի հին լեզուի մէջ միայն կայ: Գալով մասնիկի ծագման, չեմ կարծում թէ թաթարական լինի. թուրքերենի մէջ արդէն այսպիսի մասնիկ ու գործածութիւն չկայ: Աւելի հաւանա-



կան եւմ համարում դնել հայերէն *չէ՞, չի՞* հարցականից համառոտուած և մասնիկի կերպարանք առած. այսպէս *Դէ՛հ*, երթանք դրան օգնենք.– *չէ՞, չի՞* լինիր, լաւ չի՞ լինիր նն:

Հրամայականի երկրորդ ձևը երբեմն գործածուում է իբրև յարակատար. օր. Հարցուփօրց գանիմ, գիմանամ վօր իդա խանջըիս էլմասին հէտ գնացիլ է քուլուր. քամօղիս մէջը աչքիս լուսին բէս բայաձ տասը մանէթ ստագ ունէ՛յի. ադօր վրայէն հինգ մանէթը *թօաննէ*, ան ալ թիփ-թեմիզթօ տարվի, վերջը էլմասէն փօխ *թօ ուզէնա*, ան խանջըիսն ալ «յէս ալ չունիմ» թօ ասէ (Մեր ձայնը 1908, № 47):

### Ժա) Դերբայներ

393. Դերբայները վեց են Նոր-Նախիջևանի բարբառում. ներկայ դերբայ, անցեալ դերբայի կրկին ձևերը, անորոշ դերբայ և ապառնի դերբայի կրկին ձևերը: Սրանց գործածութեան մէջ նկատելի են հետևեալ երևոյթները՝ որոնք ուրիշ բարբառներում սովորական չեն:

394. Ներկայ դերբայը գործածուելով էական բայի հետ՝ ստանում է սահմ. ներկայի նշանակութիւն. ինչ. Մենք չէ ասօղ չինք, աշլի խամչին ալ բադէն վար առնօղ ինք «մենք չէ՛ չենք ասում, բայց ծանօթ մտրակն էլ պատից ցած իջեցնում ենք». Յէս քշերը վախցօղ, դուռըս գօցօղ, գանուխ բառգօղ իմ «ես գիշերը վախենում եմ, դուռս կողպում և կանուխ պառկում»:

Ներկայ դերբայի վրայ դնելով *ս* մասնիկը և կցելով ըլալ «լինել» բային՝ ստացում է «կեդծել, ձևացնել» նշանակութիւնը. ինչ. *Յէս ալ բան հասկըցօղս գը լամ* «ես էլ իբր թէ բան հասկացօղ եմ ձևանում»: *Դուն ալ ի նչ չգիդցօղս գըլաս* «ինչու՞ դու էլ չգիտենալ ես ձևացնում». *Սուդ չտէսնօղս չլսօղս գըլա* «այնպէս է ձևացնում, որ իբր թէ չի տեսնում ու չի լսում»:

395. Անցեալ դերբայի -*ած* ձևը Նոր-Նախիջևանի բարբառում շատ յաճախ գործածուում է անցեալ անորոշի նշանակութեամբ: Ինչպէս յայտնի է, հայերէնի մէջ անորոշ դերբայը ժամանակ չունի և կարող է հաւասարապէս գործածուիլ ներկայի, անցեալի և

ապառնիի մտքով. օր. երբ ասում ենք «հայ լինելդ հասկացայ», կարող ենք իմանալ հաւասարապէս «հասկացայ թէ հայ էիր կամ հայ ես և կամ հայ պիտի լինիս»: Այս պակասութիւնը լրացնելով՝ Նոր-Նախիջևանի բարբառը անորոշ դերբայը յատկացրել է ներկայ ժամանակի համար, անցեալ դերբայը յատկացրել է անցեալ անորոշին, իսկ *-ած ըլալ* կամ *-ած գտնուիլ* ձևը յատկացրել է յարակատարին: Օր. *Յէս նորա խել էղաձը չօղտան գիղիմ* «ես նրա յիմար լինելը (անցեալ) վաղուց գիտեմ». *Նարա հօրը մէռաձը ժէգ տարի էղալ* «Նրա հօրը մեռնելը (անցեալ) 3 տարի եղաւ». *Գիղցօղը գիղէր էղիլ է ադ մաշթուն մէջը ինչ սօյ հրէշտագ նստաձը* (Պատկ. Գ. 940). *Աղբէս գրիլ ինք դէյին՝ ինչ խաբահաթ արաձ գոնվիլ ինք* «այդպէս գրելով ինչ չյանցանք գործել ենք» (յարակատար). *Մէռաձ էղաձը չիմացան*:

Այս նշանակութեամբ գործածուելով՝ դերբայը կարող է նաև ստանալ դիմորոշ յօդ՝ ենթական է նշանակում. ինչ. *խել էղաձս վղէխէն գիղիս* «ինչի՞ց գիտես թէ ես խենթ եմ». *Հայ էղաձդ ինչո՞ւ՞ քիղի ցուցունու* «ինչո՞ւ պիտի ցոյց տաս թէ հայ ես դու»:

Կարելի է նաև դերբայը հոլովել թէ՛ եզակի և թէ՛ յոգնակի, կցելով դիմորոշ յօդը. ինչ. *Հասաձնէրս չիմացա* «չիմացայ թէ ինչպէս հասանք մենք»: *Զարգաձէն իմացա* «զարնելուց, այսինքն զարնելու ձևից հասկացայ». *Մէ՛գ օր մալ բան գղաձնէրը էղաձ չէր* «ո՛չ մէկ օր բան չէին գտած» (գերակատար). *Հայ էղաձնէրէն գամը-չնան* «ամաչում են որ հայ են». *Ասաձնէրէն գա նը* (իբր՝ ասածներէն կայ նէ) «եթէ իրենց ասածը ճշմարիտ է». *Նարա չալաձի՛ն նայէ* «տես նա ի՛նչպէս է նուագում»:

Այս դէպքում բացառական հոլովը նշանակում է «պատճառաւ». ինչ. *Վախէցաձէն գիյնի* «վախենալու պատճառաւ ընկնում է». *Բան չու նէցաձնէրէն է* «այն պատճառաւ է՝ որ գործ չունին»:

Առանձին նկատողութեան արժանի է անցեալ դերբայի բացառական հոլովի մի այլ գործածութիւնը՝ «տեղ, փոխանակ» նշանակութեամբ. ինչ. *Հօն գէցաձէդ հօս արի* «փոխանակ ա՛յնտեղ կէնալու՝ աւելի լաւ է այստեղ գաս»:

Անցեալ դերբայը գործիական հոլովով կամ *ա՛յն է* դարձնուածով ցոյց է տալիս անմիջական գործողութիւն. ինչ. *Դէ՛սաձօլս*

«անմիջապես որ տեսայ».*Ա՛սաձօլը յէգալ* «հենց որ ասաց՝ եկաւ».*Զա՛րգաձօլդ* «անմիջապես որ զարնես».*Լը՛սաձնէրօվս* «անմիջապես որ լսեցինք».*Դէսաձն ալ ա՛ն է* «հենց որ տեսաւ».*Էգաձն ալ ա՛ն էր* «եկաւ թէ չէ, հենց որ եկաւ».*Իմացաձս ա՛ն է* «հենց որ իմացայ»: Այս դարձուածների մէջ, ինչպէս տեսնում ենք, գործիական հոլովը շեշտը առաջին վանկի վրայ է պահանջում:

396. Անցեալ դերբայը յօդ առնելով և միանալով թրք. *iken* *հքէն* մասնիկի հետ՝ ցոյց է տալիս գործողութեան կատարած ժամանակը. ամբողջի վրայ դրուում է *ս, դ, ք* դիմորոշ յօդերը՝ որոնք ցոյց են տալիս գործող անձը կամ ենթական. ինչ. *նայա՛ ձնհքէնս* «երբ ես նայում էի», *նայա՛ ձնհքէնդ* «երբ դու նայում էիր», *գարթացա՛ ձնհքէնը* «երբ նա կարդում էր»: Սրանք լինում են նաև յոգնակի. ինչ. *նայա՛ ձնհքէններս* «մեր նայած ժամանակը երբ մենք նայում էինք». *գնացա՛ ձնհքէններդ* «երբ դուք գնում էիք», *առա՛ ձնհքէնները* «երբ որ նրանք առնում էին»:

Այս բոլորը բարբառի հին ձևերն են. նորերի մէջ որոշեալ յօդը և միջին *ի* ձայնաւորը կրճատուելով (էջ 35)՝ վերի ձևերը լինում են *նայա՛ ձքէնս, նայա՛ ձքէնդ, գարթացա՛ ձքէնը, նայա՛ ձքէններս, գնացա՛ ձքէններդ, առա՛ ձքէնները* ևն:

397. Անցեալ դերբայի երկրորդ ձևը գործ է ածւում մի՛միայն բարդ ձևերի կազմութեան ժամանակ. գրեթէ ամէն տեղ էլ ունի *-իլ* ձևը. բայց քաղաքում կան սակաւաթիւ ընտանիքներ, որոնք *-իր* ձևն են գործածում, ինչպէս դերբայի, նոյնպէս նաև ներկայի կամ արգելականի մէջ: Այսպէս ենք գտնում նաև տեղ տեղ Պատկանեանի գործերում. օր.*լսիր իմ* Պատկ. Բ. 300. *ունեցիր իմ* 300. սօրվիր ին 297. *չէին անիր* 293. *չէին լմանիր* 291. *չէր մուղնուր* 303. *չի լսվիր* 307. *մի՛ ասիր* 331. *չին ասիր* 333. *չիմ առնուր* 374. *չիմ տեսնուր* 281. *չի դէսնուր* Матер 44 (Օրի գաւառականով). *չին ասիր* 69. *չիմ հասքընար* 72. *մի՛ ուղիր* 120. *մի՛ անիր* 121. 123:

398. Անորոշ դերբայը՝ որ ինչպէս տեսանք, Նոր-Նախիջևանի բարբառում գործածւում է միայն ներկայ անորոշի նշանակութեամբ, ունի *-էլ, -ալ* վերջաւորութիւնները: Սրանով երբեմն բարբառում ներգործական և չեզոք բայերը իրար հետ շփոթւում են. օր. վառ*էլ* նշանակում է թէ՛ «վառել» (ներգործական) և թէ՛ «վառիլ»

(չեզոք), որ Ում ճիւղում կրաւորական վառվել ձևն է ստացած: Նոյնպէս *ժաշքըթէլ*. նշանակում է թէ՛ «շարժել» և թէ՛ «շարժիլ». ինչ. *Ղէղէն ժաշքըթէ՛* «շարժի՛ր նրան տեղիցը». *Ղէղէղ ժաշքըթէ՛* «շարժուի՛ր տեղիցը»:

399. Անցեալ դերբայի նման անորոշ դերբայն էլ կարող է առնել *իքէն* մասնիկը (§ 396) և նշանակում է գործողութեան կատարուած ժամանակը. ինչ. *գարթա լինիքէնս, ասէ լինիքէնդ, բէրէ լինիքէնը* «կարդալու ժամանակս, ասելու ժամանակդ, բերելու ժամանակը» են: Երկուսի նշանակութեան տարբերութիւնն այն է՝ որ անցեալ դերբայով կազմուած ձևերը ցոյց են տալիս անցեալի մէջ կատարուած գործողութեան ժամանակը, իսկ անորոշ դերբայով կազմուած ձևերը ցոյց են տալիս ներկայի մէջ կատարուած գործողութեան ժամանակը:

400. *Ուզէլ, կրնալ* և այս վերջի նշանակութեամբ գործածուած *ըլլալ* բայերի մօտ անորոշ դերբայը դրւում է սեռ.-տր. հոլովաձևով. ինչ. *Գուզիմ ասէլու քի* «ուզում եմ ասել թէ». *Դուն գը գրնա՛ւ գօղնալու, հարամութի՛ն անէլու, խափէլու, մարթ մէոցունէլու, հազար դէղից այլազէրբութի՛ննէր անէլու* (Պատկ. Գ. 289). *Գըլա՛ տէսնէլու* «կարելի՛ է տեսնել»:

401. Ապառնի դերբայը ունի երկու ձև՝ *-լիք* և *-լու*. առաջինը սովորաբար գործ է ածւում ունիմ, *կայ* և *գալ* բայերի հետ. ինչ. *խալսէլիք չիքա* «ազատում չկայ, չպիտի ազատուի». *խալսէլիք ունի՛մ վօր. Բաքնէլիքդ գուքա* «կուզես համբուրել»:

Երկրորդը *-լու* շատ անելի սովորական ազատ գործածութիւն ունի քան նախորդը, հակառակ ուրիշ բարբառների, որոնց մէջ *-լու* ձևը հազուադիւս է, *-լիք* ձևը անելի տարածուած. ինչ. *Ասէլուս անէր քի* «ասելիքս ա՛յն էր որ». *ինչ գրէլուս միթք գանէի* «ինչ գրելիքս էի մտածում». *իմ գլխուս քալուն ալ աղ է* «իմ գլխի գալիքն էլ այդ է». *ի՛նչ ասէլուս գիդէյի, ի՛նչ անէլուս* «ո՛չ ասելիքս գիտէի, ո՛չ անելիքս». *Չիդէյի ի՛նչ անէլուս* «չգիտէի թէ ինչ անեմ, ինչ անելիքս չգիտէի». *Ձէոքի վերչի ուտէլուն ալ առիլ ին* «ձեռքի վերջին ուտելիքն էլ են առիլ». *Մէզի հէղ քալունէրուն ասէք վօր քան* «մէզ հետ գալիքներին ասացէք որ գան»:

Գործածում է նաև իբր անորոշ դերբայ՝ ապառնի ժամանակով (հմմտ. § 395), դիմորոշ յօդով և հոլովուած ձևով. ինչ. *Մէզի մալիւ էղիլ էր քու քալուդ* «գալդ մէզ յայտնի էր եղել, յայտնի էր եղել մէզ թէ գալու ես». *Մօռցաձ չիս խօս մասօր էշթալունէրը* «իհարկէ չէս մոռացել որ այսօր գնալու են». *Ինչի համար է իդա վարժադունի ստագ դալունէրս* «ինչո՞ համար դպրոցին փող պէտք է տանք»: *Դունին ձախվէլուն լսից նը* «երբ լսեց թէ տունը ծախուելու է». *Գիդէ՛յի վօ՛ր ձարը գայնէլունէրս* «գիտէի թէ որ՝ ծայրը պէտք է կանգնիմք»:

#### Ժբ) Նախադրութիւններ

402. Գլխաւոր նախադրութիւններն են.

*Առանց* «առանց». պահանջում է սեռական կամ հայցական հոլով խնդիր. ինչ. *առանց հացի* կամ *առանց հաց*.

*Առչէվը, առչովը* «առաջի»

*Բէս, բէսնագ, բէսնայիգ, բէսնարիգ* «պէս».

*Գադդուգ, գադդօդ* «գաղտ, գաղտնի».

*Գօրա* «համեմատ». որ և *գէրէ*. թրք. göre հոմանիշից. առնում է սեռական կամ հայցական խնդիր. ինչ. *դվաձին գօրա* «տուածի համեմատ», *ան գօրա* «նրա համեմատ».

*Դագը* «տակը».

*Դէքի* «դէպի».

*Դեղը* «տեղը, փոխարէն».

*Դէյին* «համար, իբր». թրք. deyi, deyu.

*Դիմացը* «դիմացը».

*Էդէվը* «ետևը».

*Ինչօքի* «մինչև».

*Խդար, խդարիգ, խդա, խտայիգ* «չափ». թրք. qadar

*Հագառագ* «հակառակ».

*Համար* «համար, վասն».

*Հէդ* «հետ, միասին».

*Հէռու* «հեռու».

*Մադդէ* «բացի». առնում է բացառական խնդիր. թրք. (իմա՝ արաբ.) *ما عدا* mā'ada

*Մէջը* «մէջ».

*Մինչէվ, մինչվաքի* (Խ.*մինչվա՛նքի*) «մինչև, մինչև որ».

*Մօտիգ* «մօտ, մէրձ».

*Նէպթի* «ի ներքս, ներսը» (-ներսի դի).

*Չախ* «մինչև». թրք. *çay* «ժամանակ».

*Չափ* «չափ».

*Ջօգ* «ջոկ, զատ, առանձին».

*Վէրը* «վերև».

*Վէրի, վէրիէ՛* «ի վեր, հետև». թրք. *beri*

*Վրա, վրան, վրայէն, վրայօք* «վրայ».

*Քովը* «առ երի, կողքին»:

#### ծգ) Մակբայներ

404. Գլխաւորներն են.

*Ադէն ադէն* «երբեմն, մերթ ընդ մերթ».

*Ադէնօվ, ադէնօվ ժամանագօվ* «կար ժամանակ որ».

*Ալայ-մալայ* «բոլորովին» թրք. *alay* գունդ խումբ, բազմութիւն, բոլոր:

*Ալա չիլա* «ուրիշ բան չգտնելուց, ակամայ».

*Ալլալէն, ալալէն, ալլէն* «կարծեմ». թրք.(իմա արաբ. *الله عالم* Allah ʿālim «Աստուած գիտէ, կարծեմ»:

*Ախըռ* «չէ՞ որ». իբր հաստատական է գործածուում. պրս. *آخر* axer «վերջապէս»:

*Ամէնէվիէն* «ամէնսին, բնաւ».

*Ամուր* «բարձրաձայն». օր.*ամուր գը գանչէ*:

*Ամսէ ամիս* «ամսէ ամիս».

*Անթաթռում* «անդադար».

*Անթի, անթին* «անդին», *անթինէրը* «այն կողմերը». *անթինօվ* «մի քիչ այն կողմ».

*Անիսէ, անիստէ* «մինչդէտ».— թարգմանաբար թրք. *o* (այն, նա) *ise* (մասնիկ ստորադասականի) «մինչդէտ»:

*Ան՛ սէիլղին* «նոր ժամանակ» (2. *ա՛ն սէիլին, սյասէիլին, սյա սէիլին*, ինս սէիլին, *իտա սէիլին*).

*Անջախ* (2. *անջա*) «միայն, միայն թէ» = թրք. anjaq.

*Անքրման, անքուման* «մերթ ընդ մերթ». *անքրման մէմը* «քիչ անգամ, հազարից մէկ».

*Անօրնէրը* «յաւուրսն յայնոսիկ».

*Աշըրըմ* «չափազանց». = թրք. Aşuri.

*Աշխատնա* «անօթի փորանց». = թրք. aş qarnəna.

*Աջափ* «արդեօք» = արաբ. عجا ʿajabā .

*Առաչ, առչէվէ, առչօվը, առչօվէ* «առաջի, առջև».

*Առաչ, առչէվէ, առաչվանէ* «առաջ, առաջուց, նախ».

*Առչիմէգուրթ* «նախ և առաջ».

*Առավդուն, առադուն* «առաւօտուն».

*Ասթի, ասթին, ասթինէրը, աստին* «այս կողմ, այս կողմերը». *ասթինօվ* «մի քիչ ասդին»:

*Ասլըբիր* «ի բնէ» = թրք. asle bir.

*Ա՛սիսալղը, ա՛սիսալթը* «քիչ մնաց որ» = թրք. az qaldə.

*Ասկից էդէվ* «այսուհետև».

*Ասպէս, ասպէսնագ* «այսպէս».

*Ասօր, ասօրէրը, աս օրէրս* «այսօր, այս օրերս».

*Ավէլի* «աւելի (Չալթը)», «շատ, յոյժ (քաղաքում)». օր. *ավէլի ուղէլը* աղէգ չէ «շատ ուտելը լաւ բան չէ».

*Ավէլօք, ավէլօքօվ* «առաւելօք». *Ավէլօքօվ գօքդէ* «բաւականից էլ աւելի է».

*Արալխտա* «այդ միջոցին, ի մէջ այլոց, երբեմն» = թրք. araləqda.

*Արթըի, աղթըի, աշտըի* «է՛լ, այլ ևս» = թրք. artəq.

*Ափաստան* «յանկարծ, մի գուցէ». = թրք. apansəz «յանկարծ» + dan մասնիկ բացառականի. ամբողջը իբր apansəzdan «յանկարծուստ».

*Բամալ* «մի քիչ առաջ» = պահ մի այլ.

*Բէդիհավա* «ծրի» = թրք. bad-i-hava.

*Բէթէր* «լիսիստ, յոյժ» = թրք. (իմա պրս.) بتر better.

*Բերեքեթ վերսին* «բարեբախտաբար» = թրք. bereket vorsin «օրհնութիւն տայ. 2. բարեբախտաբար».

*Բէքիմ* «թէրնս» = թրք. belki(m).

*Բըզդիգուց, բիզդիգուց* «փոքր հասակից, պստիկուց».

*Բիլէ*(գիւղերում *բիրէ*) «մինչև անգամ» = թրք. bile.

*Բօթէն դէղը* Զ. «ի գուր».

*Գաղղուգ, գաղղուգէն* (Զ. *գաղղօղ, գաղղօղէն*) «գաղտ, գաղտնի կերպով».

*Գամաց* «կամաց».

*Գամգար* «կամաց, դանդաղ» (<կամկար, կամակար).

*Գանօխ, գանօխգէգ* «կանուխ, կանուխկէկ».

*Գէթինգէրի* (Զ. *կօտընկէրի*) «յետս յետս» (դէպի վատը). օր. *ծին կօտընկէրի կնաց* «ծին հետզհետէ վատացաւ, փճացաւ» = թրք. göt «յետույք» + geri «յետ».

*Գէնէ* «նորէն, դարձեալ» = թրք. gine.

*Գօյա* «իբր թէ» = թրք. (իմա՛ պրս.) ګوڼا guya.

*Դադէգէնդէ* «իսկոյն» (Խրիմ) = օսմ. deyende ասիլու պէս (այլ բարբառներում կայ g ձայնով. ինչպէս digunja, diganja «հենց որ ասաց». հմմտ. Будаговъ, Сравн. словарь тур.-татар. наречий, էջ 580ր).

*Դահա* «սւ, դեռ, դեռ սւ». *Դահա գա* «էլի կայ». *Դահա չէգալ* «դեռ սւ չեկալ».= թրք. daha.

*Դառհալաթ* «դժուարաւ, հազիւ» = թրք. dar «հազիւ, նեղ» + halat «վիճակ».

*Դէգմէ* «դիւրաւ» (գործածում է միայն բացասականով. օր. *դէգմէ մաշթու չասիմ* «ամէն մարդու հեշտութեամբ չիմ ասիլ») = թրք. degme, deyme.

*Դէղօվ* «մանրամասն» (<տեղով).

*Դէրվար* «դարիվայր».

*Դէրվէր* «դարիվէր».

*Դիբինէջէս* (Խրիմ) «բոլորովին» = dibinejek «մինչև տակը».

*Դէմը, դիմաց դիմաց, դիմացը, դիմացէն*.

*Դիմաստէմ* «դէմ դէմի».

*Դուս, դուսը, դուսէն* «դուրս, դուրսը, դուսից».



*Դողրուսու* «շիտակը, ուղիղ խոսելով, ճշմարիտն այն է որ» = թրք. *doğrəsə* «արդարև».

*Զահիր* «ակներև է որ, ըստ երևույթին» = արաբ. *ظاهر* *zahir* «ակներև»:

*Չըխի* «արագ». օր. *զըխի զը վազէ.* = թրք. *səqə* «խիստ, պինդ, ամուր».

*Զոռաքի* «բռնի» = թրք. *zoraki*.

*Զոռով, գոռով-մոռով* «դժուարութեամբ, բռնի, հազիւ» = պրս. *زور* *zor*.

*Հդէվ* «իբրև» (թե՛ ժամանակի և թե՛ տեղի գաղափարով), իբր «ետևը, յետոյ»:

*Հդէվէն* «ետևից», *Հդէվ Հդէվի* «հետզհետե».

*Հդէվառանց* «յիստ յետս» (<իստոռանց).

*Հնգ* «բոլորովին, ճիշտ, իսկ». օր. *էնգ, թէփէն նստիլ է* «բոլորովին ծայրը, ամենից վերևը նստել է» *էնգ փլութիիս վրա գախիլ է* «շրջագգեստիս ճիշտ վրան է կախել» հմմտ. § 329.

*Հնգովմատըմ* (Խրիմ) «առնուազն» = թրք. *eng* «ամենա + olma-dəm չեղայ».

*Հնդի* (Թոփտի) «արդեն» = թրք. *imdi* «այժմ», ոմկ. *indi*, Կազանի թրք. «արդեն».

*Հնջամբ* (Չ. *ընջամը*) «վերջապես, ի մի բան» = պրս. *انجام* *enjam* «վերջ, վախճան».

*Հվէլքի* «նախկին, առաջուայ» = թրք. *evvelki*.

*Հրէգ* «երեկ».

*Հրէսանց* «երեսանց».

*Թէգարան* (Չ. *տէկարանկ*) «մի քիչ».

*Թէգով* «շուտով» = պրս. *تيز* *tez* «շուտ».

*Թէմէլդէն* «հիմնովին, հիմնապէս» = թրք. *temelden* «ի հիմանց».

*Թօ* «մերթ» = ռուս. *то* *թօ սս գասէ, թօ ան գասէ* «մէկ անգամ այսպէս է ասում, մէկ անգամ այնպէս».

*Իդբէս, իդիբէս, իսպէս, սպէս, սիբէս, ինբէս* «այդպէս, այսպէս, այնպէս».

*Իդդէդ, ինդէդ* «այդտեղ, այնտեղ».

*Բլլա-իլլաջ* (Չալթր), *լալլաջ* (Նոր-նախիջևան) «ակամայ» = արաբ. *جلا لا* *ilāj* «չիք դարման, անճար».

*Բլլայի, իլլէքի* «մանաւանդ, մանաւանդ որ» = թրք. *ille, ille ki*.

*Ի նչ* «ի նչ, ինչքան».

*Ինչի, ինչի համար, ինչի ղէշին* «ինչո՞ւ».

*Ինչէ՛ս* «ինչպէ՞ս».

*Ի նչ... ի նչ* «ո՛չ... ո՛չ». *ի նչ աս, ի նչ ան* «ո՛չ այս, ո՛չ այն. որ և ի նչ թէ աս, ի նչ թէ ան. ի նչ թէ լաս, ի նչ թէ խնդաս».— Չարմանալի ձևով կազմուած մի բառ է. թրք. *ne* նշանակում է «ի՞նչ, ի՞նչ բան», *պրս.* *ne* նշանակում է «ոչ». թուրքերէնում պարսկերէնից փոխառութեամբ սովորական է կրկնաբար *ne... ne՛* «ո՛չ... ո՛չ». այս երկու տարբեր բառերը իրար հետ շփոթելով հայերն էլ *ի նչ* հարցականին տուել են «ոչ» նշանակութիւնը.

*Ինչիդա, ինչդա, ինչխադա, ինչխադար* (Չալթրում նորագոյն սերունդի մէջ *ի շտա*), ի՛նչքան «ո՛րչափ, ի՛նչքան». թրք. *qadar* «չափ» բառից.

*Ի սգը* «ճիշտ ու ճիշտ, իսկ».

*Իփր թէ* «իբր թէ».

*Խաթի* «շատ, յոյժ» (Չալթր). *օր. խաթի քսիրիմ*. – թրք. *qatə*, որ թէն նշանակում է սովորաբար «թանձր», բայց նաև «յոյժ» (տե՛ս Արիկեան, Ընդարձակ բառարան տաճկ. հայ. Պօլիս 1892, էջ 446 ա).

*Խայխայդան* «շատ ուշ, վերջապէս». = թրք. *qay-qaydan* «ո՛ւր-ո՛ւր կից».

*Խըրթ* «հագուազիւտ կերպով, քիչ անգամ» *օր. խըրթ քուքա* «քիչ անգամ է գալիս». = թրք. *qəṭ*.

*Խիստ* «յոյժ, շատ». *խիստ քսիրիմ*.

*Խօշթ, խօշթ օր, խօշթ օր քի* «ճշմարիտ, իրօք, իրօք որ» < ուղ-դորդ բառից.

*Խօշթնուդէն* «արդարև, իսկապէս, լուրջ կերպով».

*Խօրսամ* «իբր թէ» = թրք. *qorsam* «դնեն թէ».

*Հա՛* «այո՛ւ». *հայա՛լ* «ի հարկէ այո՛ւ, բայց ...» (< հա ալ).

*Հաբա, հաբայի՛* «հապա՛, իրօք որ» (յաճախ ծաղրաբար).

*Հախընա* «իրաւամբ» - թրք. *haqqəna*.

*Հա ման, համան ալ*, հա՛ մանա «իսկոյն» = պրս. *همان* *hamān*.

Հա՛նա «ահաւասիկ».

Հասէլէթդէն «յատկապէս» = թրք. hasəlatdan «ի հասութից». ?

Հէբէթ, հէլբէթ, հէլբէթ օր «անշուշտ, հարկաւ» = արաբ. البتّ elbett.

Հէ՛ւր... հէ՛ւր, հէմալ «թէ՛ ... թէ՛» = պրս. هم hem.

Հէչ «բնաւ, ո՛չ մի ժամանակ» = պրս. هیچ hiç.

Հէջօլմասա, հօջօլմասա, հօյիմասա, հօյրմասա, հօյիմասըմ,  
հօյրմասըմ «զոնէ» = թրք. hiçolmazsa.

Հէռու, հէռույէն «հեռու, հեռութից».

Հէրու «անցեալ տարի, հերու».

Հօս, հօդ, հօն «այստեղ, այդտեղ, այնտեղ», սեռ. հօսի, հօդի,  
հօնի. բց. հօւէն, հօդէն, հօնէն. յգ. հօւէրը, հօդէրը, հօնէրը, բց. հօւէ-  
րէն, հօդէրէն, հօնէրէն: Կրկնութեամբ ասում են բէ՛րօսօս «բէ՛ր հօս,  
բէր այստեղ».

Զարէ ձար «ծայրէ ի ծայր, ամբողջովին».

Մանի մանի «շուտ շուտ, արագ» = նյն. μάνι μάνι.

Մէգէն, մէգէնիմէգ, մէգէնմէգ «յանկարծ (=մէկէն)».

Մէգդէդ «մեկտեղ, միասին».

Մէգքիչմէն «մի քիչ յետոյ».

Մէգթի (Չ. մէկտի) «մէկ կողմ, մէկուսի».

Մէգէր «իբր թէ» = պրս. مگر meger.

Մէդօմը «քիչ, մի քիչ». մէդօմէն «մի քիչ յետոյ» (=մէկ կտոր մը).

Մէձ «շատ, յոյժ». օր. մէձ ուրախ էր «շատ ուրախ էր». մէձ  
աչքպաց տղա է «շատ աչքաբաց տղայ է».

Մէմալ «դարձեալ, այլ ես». մէմա ի՛ ասիմ. մէմալ չա՛սիմ.

Մէմէգ ադէն «էրբէմն».

Մէչը, մէչէն, մէչէ մէչ.

Մըթլաի, մութլաի «անպատճառ» = արաբ. مطلق mutlaq «ան-  
պատճառ».

Մի՛ «մի՛» (մասնիկ արգելականի).

Միշտ, միշտ հանաբազ «միշտ».

Միջէրէթ «անպատճառ» = արաբ. مجرد müjjerred.

Մօղը, մօղիգ, մօղիգէն.

Յէփ «էրբ».

*Յէթքէն* (2. *յէտկէն*) «յետոյ».

*Յօ ըիթա, յօ ըթա, յօ շթա* «դիտմամբ».

*Նա՛, նա՛ ցէք* «ահա» (առաջինը եզակի, երկրորդը յոգնակի խօսակցի հետ).

*Նաքանէց* «վերջապէս» = ռուս. *наконецъ*.

*Նաֆիլէ* «գուր տեղը» = արաբ. *نافله* *nafile*.

*Նէ... նէ՛ «ո՛չ... ո՛չ».* *նէ՛ ինդայի, նէ՛ լայի.* հմմտ. *ի՛ նչ... ի՛ նչ.*

*Նէդէն սօրա* «շատ ուշ» = թրք. *neden sonra*.

*Նէս, նէսը, նէսէն* «նէրս, նէրսը, նէրսից».

*Նօրէն* «նորէն, դարձեալ».

*Նօր-նօրդէն* «նորից ծայրից, դէս նոր» (թրք. *den բացառա-կանի մասնիկով*).

*Շադ, շադգէք* «շատ, բաւական շատ».

*Շընդըիս, շինըիս, շընդըիսվանէ, շինդըիսվանէ* «այժմ, հիմայ, այժմուանից» = թրք. *şimdi*, աղաւ. *şimdiq*.

*Շինդըիսալդա* (Խրիմ) «առ այժմ» = թրք. *şimdiki halda* «այժմուայ վիճակում, առ այժմ».

*Շինէնգէրի* «այսուհետեւ» = թրք. *şimden geri*.

*Շուդ, շուդ մը թէզ* «շուտ, շուտով».

*Ուզէնամ-շուզէնամ, ուզէնաս-շուզէնաս* են «կամայ-ակամայ»:

*Ուշ, ուշգէզ* «ուշ, բաւական ուշ».

*Չալտ* (Չալթը) «շուտ, արագ».

*Չէ «ոչ».*

*Չէ՛ ըիլթէ, չէ՛ ըիլթի, չէ՛ ըիլթիմ* «ոչ միայն».

*Չիլա վօր* «մի՛ գուցէ».

*Չօխտան* «շատոնց, վաղուց» = թրք. *çokdan*.

*Ջէմը* «ընդ ամէնը» = թրք. (արաբ) *جمع* *jem<sup>c</sup>* «գումար».

*Ջօրօվ, ջօրօվ-մօրօվ* «դժուարաւ».

*Սաբէս, սաբէսնագ* «ա յսպէս».

*Սալթը* «միայն, մի՛ միայն» = թրք. *salt*.

*Սահըն* «մի՛ գուցէ» = թրք. *sağən*.

*Սամքի, սամքին* «կարծես թէ» = թրք. *sanki*, ժղվրդ. *sankim*.

*Սափսէմ* «բոլորովին» = ռուս. *совсемъ*.

*Սէզդէ* «իբր թէ» = թրք. *سوزده* *sözde*.

*Մըգդըռդի* «շարունակ» = անշուշտ թաթարերենից. հմմտ. քումուք. sidiryw «մի շարք».

*Մըխ սըխ* «յաճախակի» = թրք. səq səq.

*Մըրավարդի* «շարունակ = թրք. səravardi.

*Մըրդանց* «սրտանց».

*Միդէղը, պադէղը, սիդէղէն, պադէղէն* «այստեղ, այս տեղից».

*Սուլուլէն* «կամաց» = թրք. usul-layən «կամաց». Պլ. *ուսուլիզ* *մը* (§ 54).

*Վաղը* «վաղիւ».

*Վար, վարը, վարէն* «ներքեւ...».

*Վա րիսա* «թէթև» = թրք. vārise.

*Վէր, վէրը, վէրէն* «վերև, վերևը, վերևից».

*Վէրչը, վէրչէն, վէրչադէն* «յետոյ, վերջը».

*Վըդէ, վըդէյէ՛ն, վըդէ իս, վըդէյսէ՛ն* «ո՛ր, ո՛րտեղից».

*Վիրա* «միշտ, շարունակ» = թրք. vira.

*Վրա անցաճ* «չափազանց». ինչ. *վրա անցաճ համարցազ* *մաշթ էր*.

*Վրա գուլխու* «իսկոյն, յանկարծ».

*Փաթ մը դէյին* «յանկարծ» = թրք. pat deyu.

*Փանէվօ լէ* «ակամայ» = ռուս. поневолю.

*Փաշթի շթօ* «գրեթէ» = ռուս. почти что.

*Փօխփօխ* «փոփոխակի».

*Քանի՞* «քանի՞».

*Քանի՞ մէզ* «քանի՞ ցս, ի՛նչափ ժամանակ» (թրգմ. թրք. neçe bir *ձևից*).

*Քըշէրօվ* «գիշերանց».

*Քիչ, քիչ մը* «սակաւ ինչ». *քիչմէն* «քիչ յետոյ».

*Քօռքօռընա* «կոյրկուրայն» = թրք. körkörine.

*Քօվը, քօվէքօվ* «մօտը, մօտ մօտի».

*Քօվի վրա* «հարևանցի, առ երեսս».

Օրէ օր «օրից օր»:

403. Մակբայները շատ տեսակ են. այս ցանկը՝ որ դրինք վերևում, կազմուած է հինգ տարրերից՝ հետևեալ ձևով.

ա) Գոյականից կազմուած. ինչ. *քշէրով, օրէ օր, ամսէ ամիս, ձարէձար, դէղով, սրդանց* են:

բ) Ածականից կազմուած. ինչ. *ամուր, անթաթռում, գաղղուգ, մէձ, նորէն, խօշթուղէն* են:

գ) Բայերից կազմուած. ինչ. *ուզենամ-չուզենամ, չիլա վօր, վրա անցած, փօխփօխ* են. հետաքրքրական է *էղա՛վ արթըրի* «ա՛լ բաւական է»:

դ) Նախադրութիւններից կազմուած. ինչ. *դագէն, վրա, վրա-յէն, քօլէն, քօլէքօլ* են:

ե) Բուն մակբայներ. ինչ. *չէ, հա, մի՛, խիստ* են:

զ) Թուրքերէնից ու ռուսերէնից փոխառեալ բազմաթիւ մակբայներ:

405. Սրանից դուրս մակբայ կարելի է կազմել հետևեալ բառերով կամ մասնիկներով.

ա) *սօյէն* (թրք. soy «ցեղ, տեսակ»). կցում է ածականների վրայ. ինչ. *ռահաթ սօյէն* «հանգստութեամբ, հանդարտ կերպով», աղէգ սօյէն «մի լա՛ւ»:

բ) -*նագ*. մասնիկ՝ որ կցուելով զանազան ազգերի անուան՝ կազմում է լեզուներ. ինչ. *հայնագ* «հայերէն», *ռուսնագ* «ռուսերէն», *ձառանագ* «ձառաների լեզով (այն է ռուսերէն)», *խազախնագ* «ռուսերէն», *հոռօմնագ* «յունարէն», *թաթառնագ* «թաթարերէն, *դաջզընագ* «տաճկերէն», *նէմէցնագ* «գերմաներէն», *ֆրանցուզնագ* «ֆրանսերէն»: Սովորական նշանակութեամբ մակբայներ են *բէսնագ* «պէս, կերպով» . *ասպէսնագ* «այսպէս», *ամբէսնագ* «այնպէս»:

գ) -*էն*. բացառականի մասնիկն է՝ որ բայերի անորոշի վրայ դրուելով՝ կազմում է մակբայ. ինչ. *լալէն, վազէլէն, քսվէլէն* են:

դ) -*օվ*. գործիականին մասնիկն է՝ որ բայերի անցեալ դերբայի վրայ դրուելով՝ կազմում է մակբայ (§ 395). ինչ. *դէսաձօվս, դէսա-ձօվը* «հենց որ տեսայ, տեսաւ» են:

ե) Այս բոլորից դուրս կան նաև մի խումբ կրկնաւոր ձևեր՝ որոնք գործածուելով զանազան բայերի հետ՝ ներկայացնում են նրանց ձայնական պատկերը. ինչպէս *խիռ-խիռ* (եփել), *ժըվըր-ժըվըր* (կարդալ), *լըր-լըր* (խօսիլ, կարդալ), *փիւր-փիւր* (եփիլ), *ջափուլ-ջափուլ* (լալ, պոռալ, կանչել), *հըռընգ-հըռընգ* (սպասել),

*շաթըր-շութուր* (կոտրտել), *բլղըր-բլղըր* (արտասուել), *բառ-բառ* (պոռալ), *բըլթ-բըլթ* (նայիլ), *սըլընք-սըլընք* (թափառիլ), *քըսղըր-քըսղըր* (քայլել), *գօլթ-գօլթ* (խմել), *գառուլ-գառուլ* (զլորիլ կառքի), *ջըլթ-ջըլթ* (նայիլ) են:

## Ժդ) Շաղկապներ

406. Գլխաւոր շաղկապներն են.

*Ալ* (ձայնաւորի մօտ լինում է *յալ*, կրճատմամբ)՝ *ալ*. ինչ. *նա յալ* «նա էլ», յէս *ալ* «ես էլ» են.

*Ամա* «բայց» = արաբ. <sup>اُمّا</sup> amma.

*Ամբէս է նը* «ապա ուրեմն».

*Անիսէ* «մինչդեռ» = հյ. այն + թրք. ise մասնիկ ստորադասականի.

*Գամ* «կամ».

*Դէյին* «թէ» (վերջադաս) = թրք. deya, deyi

*Զէրէ* «քանզի» = պրս. <sup>زيرا</sup> zira

*Էգէր* «եթէ» = թրք. (պրս.) <sup>اگر</sup> eger

*Թէքօր* «միայն թէ» = թրք. tek «միայն» + որ.

*Հաբա* «այլ».

*Հէմ... հէմ, հէմը.. հէմը* «թէ'... թէ'» = պրս. <sup>هم</sup> hem.

*Յա* «կամ» = պրս. <sup>یا</sup> ya.

*Նը* «եթէ» (հմմտ. § 378 թեական եղանակի բոլոր ձևերը).

*Ու* «և» հմմտ. նաև § 307 (վերջում).

*Չէնէ* «ապա թէ ոչ».

*Չէքի* «ոչ թէ» = հյ. չէ + թրք. ki «թէ».

*Չինքիս, չունքի, չումքի* «որովհետև» = թրք. çünkü.

*Քի* «թէ, որ» = թրք. ki.

*Օր* «թէ, որ»:

## Ժե) Զայնարկութիւններ

407. Գլխաւորներն են.

*Աբրիս* *ու* «ապրե՛ս, կեցցե՛ս».

Ա՛դամ. նշան անփոյթ վերաբերմունքի. օր. *ա՛դամ, ախքատ մաշթ է, տո՛ւր թօ էշթա* = թրք. adam «մարդ», որ նաև այս գործածութիւնն ունի.

Ա՛յս, ա՛հ. նշան ցաւի, զարմանքի են.

*Բարեկ՛ ձէ՛զ (Չալթը՛ բարեկ՛ ծէ՛զ, ծէ՛ձի)* «բարև ձեզ». տարբերում է միւս բարբառներից նրանով՝ որ *ձէզ* բառի *է*-ի վրայ շատ երկար մի շեշտ ունի. մինչդեռ միւս բարբառներում շեշտւում է *բարեկ* բառը:

*Ղա՛*. գործածւում է նախադասութեան վերջը՝ ասածը հաստատելու և զարմանք յայտնելու համար՝ որ խօսակիցը չգիտէ կամ գիտենալ չի ուզում. օր. *Չլսէցի՞ր. «դեսիլ իմ» գասիմ դա՛... Սրա փոխարէն Խրիմում գործ է ածւում դահա. ինչ. Չահիր դուն աս դադէրուն* (լեռների) *Բսախ-Յուսուֆն իս դահա՛* (Խրիմու առակներ, էջ 7). նոյնպէս և Օրի մէջ. ինչ. *Մէզ փորձ բաշլայէլու եղա՞ր դահա՛... Ձէրէ չասիր դահա՛, վա՛յ քէզի* (Նոր-կեանք 1907, էջ 282ա): Այս կրկնակը ցույց է տալիս, որ բառը ծագում է թրք. daha «դեռ, տակալին» բառից և գործածութեամբ նոյնն է Երև. Ղրբ. *էլի՛, Դվ. է՛ ձների*, որոնք յիշեալ թրք. daha բառի հայ թարգմանութիւնն են. օր. *Ասում իմ էլի՛... ասում իմ է՛լ...*

*Է՛* «բաւական է».

*Է՛-յալ* «ինչ որ է». գործածւում է երբ մէկը խօսակցի պատճառաբանութիւնները բաւական համարելով լսել՝ չի ուզում ո՛չ հակառակիլ և ո՛չ էլ իր ասածից հրաժարիլ. և անորոշ թողնելով խնդիրը՝ փակում է.՝ կազմուած է *է* և *ալ* բառերից. այսինքն «այդպէս է, բայց իմ ասածս *ալ* ճիշտ է».

*Էրանի, էրնէզ*, էյնէզ «երանի».

*Թի՛ւ*. թքնելու, նախատելու, անարգելու նշան.

*Ի՞* «միթէ այդպէս է». զարմանք է յայտնում չիմացած բանը նոր միայն լսելով. ունի շատ երկար և առանձնայատուկ մի շեշտ, որի առաջին մասը կարող ենք համարել հարցականի շեշտ, երկրորդ մասը աստիճանաբար իջնող զարմացական շեշտ.

*Հա՛, հա՛, հա՛* «այո՛, այո՛».



Հաքա՛ «այո՛ւ՝ այդպէս է». գործածուում է՝ երբ խօսակիցը նախապէս տեղեակ չլինելով խնդրին՝ նո՛ր միայն է իմանում. մէկի հարցումը, տարակոյսը կամ զարմանքը հաստատելու նշան է.

Հաձէ՛ (քաղաքում), աձօ՛ (Չալթր, Սալա), ձօ՛ (Չալթր, Թոփ-տի). արական սեռի մի անձ կանչելու ընկերական բացագանչութիւն. յգ. հաձէնէ՛ր. օր. *հայդէցէք, հաձէնէ՛ր*. այնչափ յաճախ գործածական է, որ *հաձէ* բառը գրեթէ «նախիջևանցի հայ» նշանակութիւնն է ստացած. օր. ասում են *հաձէնէրը էգան* «նախիջևանցի հայ տղաները եկան», մինչև անգամ տեղացի ռուսները գործ են ածում այս ձևը՝ մի որևէ հայ կանչելու համար:– Հմմտ. Պլ. *ձօ՛*, Ռոդոսթօ *ձէ՛*.

Հա՛նա «ահա, ահաւասիկ». (Չալթրում կան նաև սրա միւս դէմքերը. *հա՛գա* «ահաւասիկ», *հա՛դա* «ահաւատիկ», որոնք քաղաքում չեն գործածուում).

Հա՛յդա, հա՛յդը «դեհ, օ՛ն, շարժուեցէք, գործք սկսեցէք». յորդորելու, գրգիռ տալու կամ դուրս վոնտելու համար է գործածուում. կրճատն է *հադ, հա*, որ գտնուում ենք *հադ էշթաք, հաշթանք* «դե՛հ գնանք» ձևերի մէջ. = թրք. haydi, ժղվրդ. hayde. ունի և բայաձև յգ. *հայդէցէք*, Չալթր՝ *հայդըցէք* (ինչպէս և Պլ. *հայդէցէք*), իբր թրգմ. թրք. háydein ձևի.

Հաքա՛ (գիւղերում *աքա՛*) գործածուում է իգական սեռից մեկին կանչելու համար. հմմտ. Պլ. *քա՛*.

Մէխք, մէխք *հազա՛ր* «ափսո՛ս».

Մեղա՛. նշան ապաշաւանքի և զարմանքի.

Մշքէ՛, հա՛յ մշքէ՛. մի երրորդի ասածի վրայ զարմանք կամ հեգնանք է արտայայտում. = թրք. imiş ki «իբր թէ» ձևից: Գործածական է հին բարբառում. այժմ գրեթէ բոլորովին խափանուած.

Նէսէդէ՛ «ո՛վ գիտէ, կարելի է այդպէս է». խօսակցի ասածի վրայ տարակոյս է յայտնում. = թրք. ne sende «դու էլ ի՛նչ (ես ասում)».

Օհ, օհ. ուրախութեան, հրճուանքի բացագանչութիւն.

Ու. Գործածուում է նախադասութեանց ծայրը՝ ճիշտ ա՛յս նշանակութեամբ՝ ինչ որ *դա*. օր. *գասիմ n ի...բէրիբ n ի...* Համապատասխանում է Պօլսի *նէ* կամ թրք. *ա՛* ձևին. ինչ. *ըսի նէ... բէրիբ*

նէ՛... տճկ. dedim a! getirdin a! Ձայնաւորից յետոյ պատահած ժամա-  
նակ քիչ անգամ դառնում է *վու*. ինչ. *ասի վո ի ... Ֆէշանին գնիքը  
քիաքնի վու ...*

*Վա յի, վա յ.* ափսոսանքի, ցաւի, կարեկցութեան նշան.

*Քեշգէւ* «երանի թե» = թրք. (պրս.) keşke.

*Օ վ տղա, օ վ մաշթ.* շատ անգամ ուղղում են խօսակցին՝ իբր  
կոչական.

*Օ ֆ.* ցաւի, գայրոյթի, անհամբերութեան նշան:

## ծգ) Շեշտ

408. Կը ճիւղին պատկանող բոլոր բարբառների նման՝ շեշտը  
Նոր-Նախիջևանի բարբառում գտնւում է միշտ վերջավանկի վրայ.  
ինչ. *հա ց, հաղէ ր, հաղէրո ի, հաղէրօ վ* նն:

409. Բայերի անկատար ժամանակում շեշտը դրւում է միշտ *է,*  
*ա, ու* ձայների վրայ, որով եզ. Ա, Բ և յգ. Ա, Բ, Գ դէմքերի մէջ շեշտը  
ընկնում է նախավերջին վանկի վրայ, իսկ եզ. Գ դէմքում՝ վերջին  
վանկի վրայ. օր.*գը բէրէ՛յի, գը բէրէ՛յիք, գը բէրէ՛ր, գը բէրէ՛յինք, գը  
բէրէ՛յիք, գը բէրէ՛յին,* քիսաղա յիր նն:

410. Գերադրական ածականների բոլոր տեսակների մէջ էլ  
շեշտը դրւում է բառի առաջին վանկի վրայ. ինչ. *յի ստ-դէսօք,*  
*է՛նգ-աղէգ, է՛նգէ-պածըս, գա՛ւ-գաբուդ, է՛րգան.* այս բոլոր տեսակ-  
ների վրայ տե՛ս վերը § 329-331:

411. Բացասական բայերի բոլոր այն ձևերի մէջ, որոնք կազմ-  
ւում են էական բայով (*էս, էի*) կամ *չի* մասնիկով, շեշտը դրւում է  
սրանց և ո՛չ թէ բուն բայի վրայ. այնպէս որ եթէ սրանք բառի սկիզբն  
են անցած շեշտը լինում է նախավանկի վրայ, ինչպէս է նաև  
արգելականում. իսկ եթէ վերջն են դրուած կամ բացասականը  
կազմուած է առանց էականի և *չի* մասնիկի, շեշտը մնում է սովոր-  
ական տեղը. ինչ. *չի՛ս լսիլ, չի՛ լսիւմ, չի՛ս լսի, չի՛ն լսիւմ, չի՛ս լսիւմ,*  
*չէ՛ր լսէյի, չի՛ լսէյի, չէ՛յի լսիլ, մի՛ լսիլ, մի՛ լսիք, չի՛ լսիլ,* Բայց *լսէլու*  
*չի՛ս,* լսաձ չէ՛յի, *չլսէ՛ցի* նն: Յատկապէս նկատելի է սահմանական  
ներկայի երկրորդ ձևը, որ շեշտով միայն է տարբերւում ստորադա-  
սական ներկայից (§ 384):

Անցեալ դերբայը գործիական հոլովով և «անմիջապէս» նշանակութեամբ գործածուելու ժամանակ շեշտն առնուում է առաջին վանկի վրայ. հմմտ. §395:

Անորոշ և անցեալ դերբայները ժամանակ նշանակութեամբ թրք. *իքէն* ձևի հետ միանալիս շեշտը անցնում է միջին վանկի վրայ. ինչ. *նայա՛նիքէն, նայա՛նիքէնէրը* են. հմմտ. § 396. կամ *գարթա լնիքէնս, բէրէ՛լնիքէնս* § 399:

412. *Ը* ձայնը իբրև յօդ գործածուելիս բառավերջում մնում է անշեշտ. բայց երբ արմատական է և կամ սղմամբ յառաջացած է *ի* ձայնից, պահանջուած շեշտը ստանում է անպատճառ. ինչ. *մը՛ լսիք <մի՛ լսիք, ք՛ մըսը <իմի՛նը, քուզը՝ դը < փի.քուզի՛ դը, փօրփը՛ իս* «gastro intérite» զը ող «գոեհիկ» են:

413. Թուրք-թաթարերէնից և ռուսերէնից փոխառեալ բառերը իրենց բնիկ շեշտը հայերէնի մէջ էլ պահում են: Թուրք-թաթարերէն բառերը արդէն իրենք էլ վերջավանկի վրայ շեշտուած լինելով՝ բարբառի մէջ շեշտի անկանոնութիւն չեն մտցնում. բայց ռուսերէն բառերը ունենալով իրենց տատանուող շեշտը՝ բարբառիս մէջ էլ անկանոնութիւն են յառաջացնում. հմմտ. *փաժա լուսթա, քանէ չնօ, քաքքո լթթօ* են: Սակայն նոյնիսկ ռուսերէն բառերը հոլովման մէջ իրենց բնիկ շեշտը ջնջելով՝ հպատակում են հայկական շեշտադրութեան օրէնքներին. ինչ. *սաքոանիէյէ՛ն* ջօգ. քլուբի *դիոէքցիի՛ն* են:

#### ԺԷ) Մասնիկներ

414. Բարբառիս մէջ ամենից աւելի գործածական մասնիկները՝ բնիկ հայ թէ թուրքերէնից փոխառեալ հետևեալներն են.

-*ազան*.– յատկապէս գործածուում է թուականների բաշխականը կազմելու համար. ինչ. *քսանազան*, եռսունազան, քառասունազան են. հմմտ. § 333. բայց նոյն մասնիկով ունինք նաև՝ *ավրագան* «ամենօրեայ», *անտիրական* «անտէր», *ամսագան* «ամսական», *բէթբագան* «պիտանի», *սիրագան* «սիրական», *գորագան*, *գորոդական* «կտրական», *սասանագան* «սարսափելի», *իշվագան* «նշանաւոր», *քալագան* «շրջուն»:

-ան (նախամասնիկ).- *անքորձ* «անգործ», *անհէսար* «անհաշիւ», *անհաւլէս* «չուզենալով», *անէգ* «անխմոր», *անէրէս* «աներես», *անլուգու* «անլեզու», *անխնդաց* «անմխիթար» են:

-ան (վերջամասնիկ. ցոյց է տալիս միշտ մի միևնոյն գործողութիւնը կատարող).- *հաչան* «շարունակ հաջող կամ շատ հաջող», *վագան* «միշտ կամ լաւ վագող», *փչան* «շարունակ ստեր փչող», *խման* «միշտ խմող», *լիռտան* «շարունակ լիռտող», *հարփան* «միշտ հարբեցող», *բոբոան* «շարունակ քրթմնջող», *աճան* (Չ. ասնուն) «շատ ձու ածող», *ուղան* «շատակեր», *դնան* «անյազ ի ցանկութիւն», բայց և կայ *դռան* «փքացող»:

-անք (լինում է գոյական).- *ցուցանք* «հրէշ», *աբսպրանք* «պատուէր», *սիրտցավանք* «սրտի ցաւ»:

-էղէն (իբրև հաւաքական է գործածւում).- *հալավէղէն* «հալաւներ», *ստագէղէն* «ղրամներ», *օսկիէղէն* «ոսկեայ բոլոր զարդերը», *էմասէղէն* «բոլորգոհարները», *բոխյանթէղէն* «շողակներ», *փթիցէղէն* «հաւի ընտանիքին պատկանող ամբողջ խումբը», *սչավուլէղէն* «առնետներ՝ իրենց բոլոր տեսակներով»:

-էք.- *ջուրօրհնէք*, *տունօրհնէք*:

-ի.- *աղի*, *ջիրի* «ջրալի», *անհարգի* «անվայել», *ձուռնի* «ծուռ»:

-լամիշ.- (թրք. lemiş անուանակերտ բայերի անցեալ դերբայի մասնիկն է, որ նաև հայերէն բառերի կցուելով կազմում է զանազան բայեր). - *քրափարլամիշ ըլալ* «խօսակցութեան մէջ գրական ձևեր գործածել», *գէղուձլամիշ ըլալ* «կնտածութիւն անել, հպարտանալ», *գօղօշլամիշ անել* «եղջիւրներով զարնել (կովի)», *շունլլամիշ ըլալ* «շնութիւն անել», *գալլլամիշ ըլալ* «գայլի պէս կատղիլ», *էշլլամիշ ըլալ* «էշի նման յիմարանալ», *քամիլլամիշ անել* «քամի փչիլ», *գագազլլամիշ ըլալ* «կակազել», *աբրամիշ ըլալ* «մի կերպ ապրիլ, ապրուիլ», *մատլլամիշ անել* «մատներով առնել ուտել», *գջէքլլամիշ անել* «կճիպը ստկել», նաև ռուսերէն բառերից ինչ. *ցէփլէմիշ արած* «շրջապած»:

-լը (թրք. -le մասնիկն է, որ համապատասխանում է հյ. -աւոր «ունեցող» մասնիկին).- *ուսուլը* «ուսումնական», *բամբազլը* «բամբակուն, մէջը բամբակ դրած», *վաստազլը* «շահաւէտ»:

-*գէգ*.– բաղդատական ածական շինող մասնիկի օրինակները տե՛ս § 328:

-*ձու* (այնպէս եղած).– *թափձու*, *շինձու*, *ձաշձու* «ծալ-ծալ մի խմորեղէն», *բահձու* «պահեստի»:

-*ման* (տալիս է կրաւորակերպ չեզոքի կամ պարզ չեզոքի անցեալ դերբայի նշանակութիւնը).– *գայնման* «կանգնած», *դնգրման* «տնկուած», *բառգրման* «պառկած», *գլօրման* «շրջանակաձև», *նըստրման* «նստած»:

-*մունք* (գործողութիւն ցոյց տուող).– *արարմունք*, *ասմունք*, *դադմունք* «շահ, վաստակ»:

-*նագ* (լեզու ցոյց տուող).– օրինակները տե՛ս §405.

-*նօց*.– ցոյց է տալիս նախ զանազան առարկաների բազմութեամբ գտնուած տեղը. ինչպէս՝ *ձառնօց* «ծառերշատ եղած տեղ», *խօղնօց* «խտտանոց», *խէվանօց* «յիմարանոց», 2. կազմում է թուականների չափական ձևերը. ինչ. *մէզնօց*, *էրզուսնօց* ևն, որ տե՛ս § 333, այստեղ աւելացնել պէտք է միայն՝ որ մէկ միութիւն ցոյց տուող առարկաների համար շատ անգամ մէկ բառը ջնջւում է. ինչ. *քափիքնօց* «մէկ կոպէկանոց», *մանէթնօց* «մէկ մանէթանոց», ընդհանուր նշանակութիւն ունին *աժաննօց* «էժանագին», *թանգնօց* «թանկ», կայ և *շուննօց-գալնօց* «շների և գայլերի բաժին», *շուննօց-գալնօց անէլ* «հարստութիւնը վատնել», *շուննօց-գալնօց ըլալ* «վատնուիլ»:

-*ուիթ* (ցոյցէ տալիս ժամանակ).– ինչ. *հինուիթ* «հին ժամանակ», *ձերուիթ* «ծերութեան ժամանակը, ծերացած միջոցին», *սաղուիթ* «ողջ (թրք. say) եղած ժամանակը, ի կենդանութեան» (*սաղուիթը փէշքէշ արիլ է*), *գէնջուիթ* «երիտասարդ (թրք. genj) եղած ժամանակը», *ասշիմէգուիթ* «նախ և առաջ»:

-*ուզ* (իբր ածական).– ինչպէս ձաձուզ «ծածուկ», գտրուզ «կտրուկ», գամացուզ «կամացուկ», գադտուզ «գադտուկ», անցուզ «անցած»:

-*ունք*.– (գործողութիւն ցոյց տուող). ինչ. *ձառզօտրունք* «ծաղկազարդի տօնը», *ձէձգվունք* «կռիւ, ծեծ», *շիրախվառունք* «ճրագվառոց» (2. *շիրախվառու* տուն եկաւ):

-*ոււ*.– (կազմում է դասական թուականներ, որոնց վրայ տե՛ս § 333). բայց ունինք նաև պարզ ածականներ. ինչ. *անգշտում* «անկուշտ», *անհատնում* «անսպառ», *անթաթոռում* «անդադար»: Երկու մասնիկները տարբեր ծագում ունին. առաջինը պարսկերեն է, երկրորդը հայերեն:

-*չէք*.– ցոյց է տալիս՝ 1. մի որոշ բանի յատկացում առարկայ. ինչ. *տօնչէք* «տօնի՝ յատկապէս Ծննդեան տօնին յատկացում», *գաղղնչէք* «նոր տարուն յատկացում», *խղռէկզչէք* «խտրելլէզի տօնին յատկացում». 2. աշխատանքի համար տրուած վարձատրութիւն. ինչ. *գարէլչէք* «հագուստ կարելու համար տրուած դրամը», *բէրէլչէք* «մի բեռ բերելու համար բեռնակրին տրուած դրամը», *շարէլչէք* «կղմինդրները տանիքի վրայ շարողին տրուած դրամը», *անէլչէք* «որոշ մի բան կատարելու համար աշխատաւորին տրուած դրամը», *ավուրչէք* «օրավարձ», *վարբէլչէք* «վարպետին տրուած դրամը», *խօշտէլչէք* «մի բան շինելու համար տրուած դրամը»:

-*ջա*.– թրք. յա մասնիկն է, որ կազմում է «կերպով, ձևով» նշանակութեամբ մակբայներ կամ նշանակութեան ուժը մեղմացնում է. ինչ. *մաշթավարիջա* «մարդավարի, քաղաքավար կերպով», *թէթէվջա* «բաւական թեթև, մի քիչ թեթև», *աղիջա* «մի քիչ աղի», *էրգանջա* «մի քիչ երկայն», *օշթաջա* «միջակ» (*օշթաջա բոյօլ* «բաւական միջահասակ»):

-*ջի*.– թրք. յի արհեստ նշանակող մասնիկն է, որ գտնւում է մի խումբ թուրքերէն բառերի վրայ, բայց կարող է նաև կցուել հայերէն բառերի վրայ. ինչ. *ցօրէնջի* «ցօրենի վաճառական», *օջխարջի* «ոչխարի վաճառական» (Լոյս 1910, № 34, էջ 9բ), *սուղստազջի* «դրամանենգ, կեղծ դրամ շինող» (Պատկ. Ա. 313, Գ. 36). մինչև իսկ գիւղերում ունինք *գուզնիջի* «դարբին», ուր թրք. մասնիկը կցուած է ռուս. (кузнецъ «դարբին») բառի վրայ:

-*սըզ*.– թրք. səz մասնիկն է որ համապատասխանում է հյ. -ան ժխտականին. ինչ. *բէդսըզ* «անպէտք», *գդագսըզ* «առանց գդակի, գլխաբաց», *ադէնսըզ* կամ *ժամանագսըզ* «անժամանակ», 2. արտայայտում է յոռի վիճակ. ինչ. *փունուսըզ* «վատ բնաւորութիւն ունեցող», 3. դրւում է մարդոց անունների վրայ՝ նախատական ձև

տալու համար. ինչ. *Մարթասը* «անպիտան Մարթա», *Իվանուշը* «անպիտան Իվանուշ», *Գադարը* «անպիտան Կատար»:

-*վացք* (շինում է գոյական).– ինչ. *քալվացք* «քայլուածք», *վայլվացք* «վայելչութիւն», *գէցվացք* «կանգնելու ձևը», *նէղվացք* «նեղ» (ածական), *քարվացք* «սալայատակ»:

-*ցի* (նշանակում է մի տեղի բնակիչ).– ինչ. *նախշվանցի* «նախիջևանցի», *նիսթացի* «Նիսվիթա գիւղացի», թօփցի «Թոփտի գիւղացի», *ստամբօլցի* «տաճկահայ», *հօւէցի* «այստեղացի», *դուսացի* «եկտր, դրսեցի, ո՛չ-նախիջևանցի»:

-*ցու*.– նշանակում է որոշ բանի յատկացումը մի առարկայ. ինչ. *շաբիքցու*, *վարտիքցու*, *գալուսթութցու* «շապիկ, վարտիք, փողպատ շինելու յարմար կտոր», տիրացու «տիրացու»:

-*ք* (շինում է գոյականներ).– ինչ. *դարիք* «տարիք», *ձալք* «ծալք», *փունուրք* «բնաւորութիւն», *տէսք* «գեղեցկութիւն», *էրզանք* «երկայնք», *վառք* «կրակը վառելը», *հնջարք* «հնարագիտութիւն», *առք* «ապրանքի բուն գինը», լվացք «լուացք» են:

-*օտ* (այն բանով լի, վրան դրանից քսում կամ դրանով կեղտոտում).– *աղդօղ* «աղտոտ, կեղտոտ», *յէղօղ* «իւղոտ, պարարտ կամ իւղով կեղտոտում», *ձուգօղ* «ձկան քսուելով ապականում», *հալգթօղ* «հալկթի՝ ձուի քսուելով կեղտոտում», *խլինթօղ* «խլնքով ապականում, խլնոտ», *մուրօղ* «մրոտ», *ամբօղ* «ամպերով լի, ամպամած», *սիրդօղ* «բարկացկոտ», *հօղօղ* «հոտաւէտ», բայց և կայ *վախգօղ* «վախկոտ»:

-*օցք*, *ուցք* (շինում է գոյական).– ինչ. *մաշուցք* «մտատանջութիւն», *փնտրուցք* «որոնում», *փոցք* «սփռոց»:

-*օք* (շինում է ածական).– ինչ. *դէսօք* «գեղեցիկ», *խօլօք* «խելոք, իմաստուն»:

## Դ ՄԱՍ Նմոյշներ

### 1. Նոր-Նախիջևանից

(Առնուած է Պատկանեանից. տե՛ս Материалы, էջ 71-72. ներկայացնում է քաղաքի հին լեզուն, այն է մաքուր *р* ձայնով. ես Նոր-Նախիջևանում վերստուգելով՝ վերածել եմ գիտական ուղղագրութեան):

*Ազիաթի* հայերուն դունը մեզ խուջուռ բան է. մեզի բէս *ազբար* (բակ) չունին. նացա դուներուն թէփէն գեղինի բէս դիւզ է. սիրդերը նեղանա նը՝ գերթան, *թօռդայ*ներու (ծիտ, ճնճղուկ) բէսնագ՝ դուներուն *թէփէն* գը նըստին:

Նացա հացի փուռն ալ – անունը գիդէ՛ի *ամա՛* մօռցիլ իմ – խուջուռ բան է. *ազբարին օրթան*, շադերուն ալ դուներուն մէչը, մեքամ գուլօր փօս քը փօրին, մէչը *սըվա* (ծեփ) գանին, *շդէ* (ահա՛) դացա փուռը: Հաց եփելու լան նը՝ իդա փօսին մէչը *նօմայ* չօր փադ, *խօռայ* (չոր խսիւ) գուլուն, դագէն գը բըրընգեցնուն, յեթգէն գառնուն խումօրը *աղլի* (յիշեալ) փուռին բադերուն գը ձէփին. *շտէ* իմացիր դացա հացին *ֆասօնը*.– *ադէթով* լաթ. մեղայասծու մեղա: Ադ *դահա հէչ*. Փուռին հացը գը ժօդօդին նը՝ քը հանին վրայի ադդօդ շաբիքները- վարդիքները, իդա փուռին մէչը քը թօթվին, օջիւները քը թափթփին մէչը, ուռելի (ուլոռն) բէսնագ *չըթըռչ ըթըռ* գը բօհըրվին. աւ ալ դացա լըվացքն է. թիւ ֆ ... շադ *մունդառ հալիս* ին իդա *ազիաթի* հայերը...

Քափքայի հայը *ա՛սլը ջիւնաբէթ* է. մերերէն շադ վար է. մերերը *բարէմ* մարթու *սըրա* մարթ ին. նաքա՛ ինա *մաջառ արաբայօվ* Խըրըմէն նօդայներ քուքան նը՝ *ադէթով* նաքա ին. երեսները խաչ չի հանին նը՝ հայ եղածները *բէլլի* յալ չէ ... *փամի լըյ*, հեղները *թէմիզ* հայնագ *զալաջի* գանիմ՝ չին հասքընալ. *վսէռափնօ* իսա բադը. գօռելի բէս երեսը գը նայէ «*խաբար չիւ*» *իմիշ*. *գօյա* գուգէ ասելու *քի* ասաձըդ չիմ հասքընար... գընա գըդիր նարա լիւզիւյօվ ինչ ասել է «էձը ձօրը ընգել ա, գելը եգել ա գերել ա». *գօյա* գուգէ ասելու *քի*



աձը *հենդէքը* ինզիլ է, գալը եզիլ է նարան գերիլ է... Էրէտլ խավարի. հայնագ ասա՝-*դա*. ածին ինչու՞ էձ գասիս-օր, թլվադ բերան. *փոյա՛ւը* աձ ասա-*դա*. ձորըս վո՞րն է. *հենդէք* ասիս նը չի՞լալ. «Էգել ա գերել ա». *Ֆոանցուզնա՞գ* գալաջի գանիս ի՞նչ է. եզիլ է գերիլ է ասիս նը՝ անգից աղեգ չէ՞ ինչ. *բարէւ՛ թէսիգ* հայնագ է խօսմ... *Շդէ* սիբէս խենթ ին... նաքա ֆօդ չին ասիլ՝ խօդ գասին. հավօդ չին ասիլ՝ խադօդ գասին. *խույի* չին ասիլ՝ ջըրհօր գասին. *չիչագ* չին ասիլ՝ ձադիգ գասին. *շա շիւրն*. *հէչ չիչագը* ձադեգ գըլա՞. ձադեգը ան է, վօր Էրաձ փադէն յա *թէգաքէն* գը մնա. ան՝ *բադջային* մէչի Էլլաձը *չիչագ* է. վօրի՛ն գուզիգ հարցուր.*թէսիգ* հայնագ է...

*Էնջամը, շդէ* ասալէս *փօռթիթ* արիլ ին իրէնց լիզիւն. ամբէս օր՝ ամիսներօվ հեդէրը բիդի գէնաս, լիզիւդ *ալայ-մալայ* բիդի ձըմընգըդիս, վօր գուդօր-մուդօր բան գըրնաս հասքընցնէլու...

Էրգու շաբաթ Էրեվան գէցա ասվաձային իր օրը հեդէրը *ջէնգ* գանէի, *թէսիգ* հայնագ քը սօրվէցնէի իդա *մունդառ ազիաթ*ներուն...

Ի՞նչբէս *ախըռ փաթլամիշ* չիլաս... իդա ալեվալէներուն նայէ. մարթ չին հավնիլ. մարթու վրա քը խնդան.*իլլէքի* մէր նաշչուվանցիներուս վրան՝ *դա՛յմա* քը խնդան. իմիշ՝ մէնք լիզիւներըս *փօռթիթ* արիլ ինք, մօռցիլ ինք *թէսիգ* հայնագը...

## 2. Խրիմից

(Տե՛ս S. Նաւասարդեանի Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. Է, էջ 70-73. ուղղագրութիւնը գիտական ճշդութեամբ չէ):

Ատենակով ժամանակով մէկ մ'կար, մէկ մ'չի կար՝ մէկ հատ թագաւոր կար: Ադ թագաւորը ունէր մէկ հատ տեսօք աղջիկ: Ադ աղջկանը *անխատար* մարդ կուգենայ եղիլ է, *ամա* մէկին տուած չէ:

Մէկ օր մը թագաւորը էլած ատենը *չէօլին* մէջ մէկ հատ ծեր մարդ կը տեսնէ նստիլ է՝ փատ կը ճղտէ եղիլ է: Թագաւորը կը մօտիկնայ քօլը ու կը հարցունէ.

-Հոս ի՞նչ կանիս:

-Ի՛նչ անիմ. ասից ծերը. *խսմէթ* կը պաժնիմ: Թագաւորը կը հարցունէ.

-*Խսմէթ* ի՞նչիս կը պաժնիս:

-Տեսօքը *չիրքինին* կուտամ, *ֆխարէն գէնկինի*: Թագաւորը կը հարցունէ.

-Իմիս աղջկանս *խսմէթը* վո՞ւ է:

-Քուկդ աղջկան *խսմէթը* քու տունիդ *խզմէթքէր* արաբն է:

Թագաւորին սիրտը կելլի. կուգայ տուն, միտք կանէ թէ՛ ի՞նչես արաբին հեռացունէ. *տէյին*: Վերջը մէկ գիր կը գրէ ու կուտայ արաբին ու կասէ. «Տա՛ր իսա Ասծուն տուր»: Նա եալ կառնէկելլէ կերթայ: Արաբը երթըցած ժամանակը մէկ հատ տուն կը տեսնէ. կը մտնէ նես, կը տեսնէ, որ մէկ հատ կինմարդ նստիլ է ու ադ տունին *թէփէէն ալ* դո՛ւս-դո՛ւս օսկիներ կը թափի: Կինմարդը արաբին կը հարցունէ.

-Վո՞ւր տեղ կերթաս, կասէ:

-Ասծու կերթամ, կասէ արաբը:

-*Ճա՛նքս*, կասէ կինմարդը արաբին. ասա՛ Ասծուն, կլայ ինձի *ասխատար* տուած օսկին. ամէն օր *արապա-արապա* մարդոց կը պաժնիմ, *կէնէ* շատ է:

-Աղէկ, կասէ արաբը ու կելլէ կերթայ: Գնացած ատենը կը տեսնէ ճամբին մէջ մէկ կուր մարդ նստած կեցիլ է: Կուրը կասէ արաբին.

-Վո՞ր տեղ կերթաս:

-Ասծու կերթամ, կասե՛ք արա՛րք:

-*Ճանճու*, կասե՛ք կուրք, ասա Ասծուն, մինչուանքի է՞րբ պիտի նստիմ *թոստըղանը* (պղնձե թաս) դիմացս:— Արա՛րք կելնե՛ք կերթայ ու գնացած ատենը կը տեսնե՛ք մեկ մարդ *թէք չամուռը պաթած* կեցիլ է ու կը հարցունե՛ք արա՛րքին:

-Վո՞ր տեղ կերթաս:

-Ասծու կերթամ, կասե՛ք արա՛րք:

-*Ճա՛նքս*, ա՛խպարս, կասե՛ք ադ մարդը. ասա՛ Ասծուն՝ մինչուանքի է՞րբ աս տեղը պիտ կենամ. *արդըխ* քառսուն տարի է հոս մնացիլ իմ. ի՛նչ էլնել կը կրնամ՝ ինչ մեջը մտնիլ:

-Աղէկ, կասե՛ք արա՛րք ու կելլե՛ք կերթայ: Մէյ մ՛ալ տեսնիս *տաղին* (անտառ) մեջը մեկ հատ ծէր մարդ *ռաստ* կուգայ:

-Վո՞ր տեղ կերթաս, կասե՛ք ծէրը:

-Ասծուն կերթամ, կասե՛ք արա՛րք:

-Ի՛նչ պիտի անիս Ասծուն, կասե՛ք ծէրը:

-Թագաւորս ինձի գիր տուից, պիտ նարա տանիմ, կասե՛ք արա՛րք:

-Թուղթը ինձի տուր, կասե՛ք ծէրը ու ծեռքէն կառնե՛ք:

Արա՛րք նարա կը պատմե՛ ճամբան *ռաստ* էկած կինմարդու, կուրի ու *չամուռի* մեջ *պաթած* մարդուն ասածները: Ծէրը կասե՛ք արա՛րքին. «Դարձած ատենդ կասիս կինմարդուն.— Երբ որ փառք Ասծու չասես նե՛ ան ատենը օսկին *թէփէէն* թափելէն կը դադրե՛: Կուրին ալ կասիս, որ նա եալ քովի կետինը թող փորե՛, մեջէն ջուր կելնե՛. ջուրը առնե՛ աչքերը թող լուանայ՝ ան *սհաթը* աչքերը կը պացուին. հապա ան մարդուն ալ կսիս, որ քառսուն տարի *տա՛հա* թող կենայ *չամուռին* մեջը:

Արա՛րք ետ կը դառնայ, կերթայ ան կինմարդու քովը ու կասե՛.

-Ասված ասից, որ երբ փառք Ասծու *չասե՛* նե, ան ատենը օսկիները պիտ դադրի թափելէն: Արա՛րք կելնե՛ք կերթայ կուրին քովը ու կասե՛.

-Ասված ասից, որ քովի գետինը թո՛ղ փորե, ջուր կելնե՛, աչքերը թո՛ղ լուանայ՝ կաղեկնայ: Կուրը դարձաւ ու արա՛րքին ասից.— դուն ինքդ փորե՛: Արա՛րք քիչ տեղ փորեց՝ էլած ջուրէն ձեռքերը ճերմակ եղան.

քիչ մ'ալ փորից՝ *ալա՛յ-մալա՛յ* ճեպ-ճերմակ եղաւ: Թէք մէկ հաստ կօտիին տեղը սև մնաց: Անկից արաբը շիտակ թագաւորին կերթայ:

Թագաւորը արաբին *հիչ* չի ճանչնայ, *ամա* նարա խիստ կը հաւնի, իրեն աղջկանը հետ կը պսակէ, քառսուն օր, քառսուն գիշեր հարսինք կանէ:– Ես ալ հոն էի, գինի խմեցի *պուլիսէս* վազեցաւ, պերանս չգնաց:

### 3. Օր քաղաքից (Խրիմից)

(Տե՛ս Փаткановъ, Матеріалы для изученія Арм. наречій, 1, էջ 43-44. ուղղագրութիւնը անփոփոխ պահած եմ):

Եփօր Օգէ-Մանուկը *ալլիուշէն* ետ քուքա ու իրեն *Տունէա-Կիւզէլին* տեղը ատ ալէվալէին կը տեսնէ նը՝ մարթը ուսուֆ կըլա: «Վի՛տէիս է Մայրամ-Տունէա-Կիւզէլըս» կասէ: Ատ չինկեանային թէքը կէլլէ ու «Ես իմ քու Մայրամ-Տունէա-Կիւզէլըս» կասէ: «Իմ նշանածիս երեսէն լուս կը կաթէր, թուշերուն ալ վարթ պացված էր, փեշերէն մենէմշէի ու զամպախի ֆօտ քուքար. տուն սէվ խառղա արապ-չինկեանա իս. երեսըտ եապանի մարթու պէս պուրթօտ է. վրայէտ կօզ կը ֆօտա. տուն ինծի քեօ՞ն , եա խէ՞վ, եա ծիծի տղա՞ կիտիս»:

–Տէ եղավ, եղավ, կասէ չիրքինը. արի, թէ՛գ արէ պառկինք-խալսինք. Ասօր հալըս աղէկ չէ, անօր համար երեսիս կունը փախիլ է. չէնէ, մէմը վաղը նայէ, մէմը զարթ ու զարթարանքըս հաքնիմ զըքվիմ, կըտեսնուս ինչպէս տեսօք կըլամ. արի թէգ կըրկըվինք, փաթթըվինք, մուրատներըս կատարինք:

–Սէվնա՛ ինծի ան օրը, ասաց Օգէ-Մանուկը, եփօր ես վարթ-մանիշակըս թապլիմ ու քեզի պէս ժահին ֆօտ անիմ. վի՛ր է իմ Տիւնէա-Կիւզէլ-Մայրամս. վու՛տէիս պարտըկիլ իք. ի՞նչ եղավ նարան. վա իս, հազա՛ր վախ: *Տէմիրճիին* երթամ, մէքամ երկըթէ *տանախ*, մէկ *ճիֆթ* ալ երկըթէ *չառըխ* խօրթել տամ, կօլօխըս առնում չէլ-չէլիս *տան* իյնիմ, օխտը սար, օխտը ծով, անցնիմ, *տէրէ* ու *տաղ* էլլիմ մուտնում, իմ սիրեկան Տունէա-Կիւզէլիս կուտնում:

#### 4. Նոր - Նախիջևանից

(Յաջորդ յոդուածը երգիծաբան հրապարակագիր Սահակ Մեսնիկեանի գրչիցն է. հեղինակը դիտմամբ պատրաստել է սոյն յոդուածը՝ ծաղրելու համար նոր-նախիջևանցոց օտարախօս լեզուն: Բնագիրը՝ որ հրատարակուած է Նոր-Նախիջևանի Գաղութ շաբաթաթերթի մէջ (թ. 1916, N-8, 121-2) արևմտեան տառադարձութեամբ է. հեղինակի հետ միասին վերածեցինք գիտական տառադարձութեան, 1918 թ. Նոր-Նախիջևանում, յատկապէս ներկայ աշխատութեանս համար):

Էրգու հայ ախչիգներ, հայ ձնօղներու զավագներ, հայի վարժատուն խալսաձ ու հայնուզ սօրվէցաձ ...

-Սուսաննա, դո՛ւ չքա, քաքբո՛ւ լթթօ նասթոյէնիդ վաժնը չէ:

-Յե՛շտօ՛՛ բը, Անիչքա, դուն ալ փադօբնը մամէնթներ փեռէժիվաթ անէ՛ յիր նը՝ նասթոյէնիդ աղբէս զըլար:

-Փոխի՛նը...

-Նէուժէ՛լի փոխինը քէզի իզվէսթնը չէ:

-Քանէ՛ չնօ:

-Ինձ առէ՛սօ՛վը գառդէոսփիս դէթոյթէ շօլքըվը փլաթիս գար նը՛ ... Ռասսոսվ փեռվօքլա՛սնը, փառիժանքա մաղիսթքային փեռէլէքայի դարիլ էի դա ...

-Նո՛ւ ...

-Սավսէմ փօթթիթ չանէ՛ ...

-Դա նէուժէ՛լի ...

-Ուրիթքանէրս քանէ՛չնօ թռէ՛բօվաթ արի, նասթոեզ աթքազ արավ:

-Դուն ալ ինձ չէ փասթուփիթ արա հէդը:

-Փաժա՛լուսթա, Ա՛նիչքա, սավէթ դուր, ինչէ՛ս փասթուփիթ անիմ:

-Վայու մինութու աբոաթիցցը եղի՛ր փավէռէննըլի, թօշ վթօշ իզլաժիթ արա փլաթիիդ իսթօռին ու փոսսիթ արա նմէղլեննօ սուդ փաղավաթ թօ անէ... չո՛ւղնէլ փոխայա՛ժնըլ փավէռէննըլ ունիմ օ՛ր ...

-Նախընթաց փռատիվաթ գանե...

-Ֆի Դոն ... Ռասսոլ ...

-Փաղոթոբնը ադոետը գիդի՞ս:

-Ա քա՞ք ժե ...:

Ու երգուսն ալ սահաթնետոլ դիգենները դալեն յեթքը հաքվաձ ու գօթ գըդոաձ դունեն դուս էլլան:

-----

Քլուբը ժողոդանք է. շաղ հայ դղաքներ, հայ ձնօղներու գավագներ...

-Գասփա՛դա. փա մօ՛ւմու փաղո՛բնը նախալներուն հեղ ինա՛չէ փասթուփիթ բեթք է անել...

-Թօյետք ...

-Փոյա՛մօ վըքինշթէ՛յն անել քլուբէն:

-Փոա՛վիյլնօ, փոա՛վիյլնօ, բոա՛վօ ...

-Ա փա մօ՛ւմու, աղ սեոյօգնը վափոսըռ ոեշիթ անելու փառուչիթ անինք քլուբի դիոեքցիին, թաք քաք ուսթաւօլ նա է քօմփեթէ՛նթնը օոգանը:

-Օբշիյ սաբոանիյէն ջօգ քօմփեթէ՛նթնը օոգան չունինք. փոեղլագաթ գանիմ օբշիյ սաբոանիին սչաս ժե ոեշիթ անել աղ վափոսըռ:

-Գասփա՛դա, աղ վափոսին փոինցիփիա՛յլնը ոեշենիյէն գավիսիթ գանե քլուբներուս դայլնէ՛յշիյ ու՛ չասթը. էգեր փաղո՛բնը ինցիդենթներուն վրան վնիմա՛նի արոաթիթ չանինք ու չասթը դափուսքաթ անելու լանք նը, ոա՛նօ իլի փօգդնօ, քլուբներս յօխ բիդ լա. գասփա՛դա, փոեղլագաթ գանիմ աղ վափոսին ոեշենին փառուչիթ անելու օ՛բշիյ սաբոանիին...

-Թէ՛գ արեք, թաք քաք սքաչքան գը վերչանայ. նեուժէ՛լի չիդիք օր ասօրվան սքաչքային ուչասթօվաթ բիդ անե Սուլթան-Գիսէյին ոխսաքը...

Ու մինութվան մէջ ժողովը վերչացալ:

-----

Էրգու հայ գինմարթիք, է՛փփէյի դարիքով, իրգուվան սեմթ  
Ժամ գերթա՛յին իրէնց հօքիին փրգութան համար աղօթք անելու ...

-Չո՛ւղնըյ հավայ է ասօր, Քա՛թյա, քիչ մը գուլյանիի էլլէ՛յինք  
աջէփ:

-Նէ մէշա՛լօ բը. համա Մառի Փա՛վլօվնան ասօր ժուռֆիքսի  
փռիգլաշաթ արիլ էր ինձի. աջէփ էրթա՛մ ...

-Քանէ՛չնօ բիթ էրթաս մաուս, բան, զայիր. անցաձները Նինա  
Ֆէօ՛ղօռօվնային դունը թռիժողը մա՛ուս. բացիլ իս. խօ՞րթ է ...

-Խօրթ է համա, ադ ժուռֆիքսին գուլխուս նէշչա՛սթի եգավ  
դա՛ ... անթռէին մէշէն սլանօ՛վըյ քօսթէ ռուչքայօվ զօնթիքըս  
գօղցան...

-Դա նէ մօ՛ժէթ բըթ...

Իդա արալը՛ խը. Դէր-Ագօփը ժամ գերթար. դացա տեսաձն ալ  
ա՛ն է, խնդալէն գուլօխ դուվից ու իրէքը մեգտեղ ժամ մդան...

## 5. Չալթըր գիւղից

### Ամառվան գալաջի

(Գրեց գիտական ուղղագրութեամբ՝ Չալթըր գիւղացի Գ. Զա-  
լաշեան, որի մասին տե՛ս այս աշխատութեանս մէջ, էջ 6. Երևան  
1926 յունիս 18):

-Պարեվ, տիրածին. ասօր վղէ՛խ կնածիլ էիր:

-Չօլ էլլիլ էյի՝ ցօրէն նայելու:

-Ինչէ՛ս ին աբրանքները:

-Մէգ խայէր չին. կէղին քօվինները շատ խայթի օնգ (ուռճա-  
ցած) ին. բօյերը մաշտաբօյ, հէմըսըխ, պոյամը օց չի չըխկի: Էգեր  
մէջ խաթէ մը չի կա նը՝ լուձէն քսան չուվալ ըռհաթ բիդ դա:

- Հէռունէրն ա՛լ նայեցար:

- Հա՛, սաղ չօլը վար դուվի: Հէռույի դէղերը արօդօդ ին. գօ-  
թերը (խոզան) տըպ-տէղին խըջի (վայրի բոյս) է. Խարախօռվանէրն

ալ (մի տարի մնացած՝ հանգստացած հող) մագրղտված քովի-գօշեր է (վայրի բոյս):

- Բօստանի դեղերը ինչէ՞ս ին:

- Մօրի յէ, մօրի ...*ալայ* աշխարքի չի դէսնըված, չի լսված խօսվան (վայրի խօս) փսնիլ է. մալաչա յը գուզիս, կօմէշի փո՞ւշը գուզիս, ալանգ ալանգ (տեղ տեղ խմբերով) օցի գաթ ալ գա: Մէգ *խօսկով՝* մէ՛քադ (միայն) սութալ ձառ (ուռի) չի կա մէչը: Ինչէ՞ս բիդ ընծըվի չիդիմ. ան պանին մէչը *մաշինօվ* չի՛ մըղնըվի:

- Աղերը (ցորենի հատիկի միջուկը) ինչէ՞ս է:

- Ըոհնդ է, *ամա դըհա* խմօր է. ամըրցած չէ: Կլօխները *խաթի* գուշտ է: Յէս դըհա մէքադգօթին վրան մէկքանի հադ կլօխ եղածը տէսած չէ՛յի. Ասօր մէքադ գօթին վրան հի՛նքադ կարիյի կլօխ դէսա: Դասը *չըռնէ* (հասկի վրայ ցորենի շարքը) ցօրէն դէսա: Սյա մէմը նայէ՛ ... *պոօրը* պերիլ իմ:

- Մարը լամ. *օռկաճօվ* (ուղտի սապատ) աբրանք բիդ լա աս դարի, գը նայի ս: Թօ լա, թօ լա. մէմը խօնդիր (ընտիր) ցօրէնի էրէս դէսնունք. աս ի՞նչ է աս. քանի դարի յէ հավի գեր գառնույինք ո՞ւ աբրանքի (հացահատիկ) դէդ:

- Ի՞նչ *ֆայդա*. *բօլլըխ* ա լա նը՝ կեղածիյին պանը պուշտ է: Մէր ձախէլու պանը կին չունի. գը դանինք *բէդիհավա* գուդանք. *ամա բազիրգյան*-պարին թանգ գըրագի կին է: Սյուն (50) կապիկ գազը *բասմա* վօ՞վ դէսիլ էր. մէգ *փութ ցօրէնի էնգ* էգածը էրգու գազ *բասմա* յէ. առաչ օխտը գազ կուգար:

- Ա՛խպար, մէմը *հալիւր* հացէ թօ քշտանան. ուզանա նը՝ աժան ալ թօ լա. յէս հօժար իմ: Չէ, կէշ պան է քախժաձութինը: Ան չէ *ամա, բօստանները* ինչէ՞ս ին:

- *Բօստանին* պանը ի՛նչ քսի՛ս... *տոնավուճով* (փոցիս) գդէլու յէ. մէ՛գ *տյօլ* մը (քալ) էղըլ է վօ ր, *համան* չաղալայ է (առատ). մէչն ալ վրձիների բէս *մուշայ* էլլիլ է:

- Կարիները յէ՞պ ընծէլու գըլան:

- *Ղըհա* շուդ չին ընծվի: Էյ օռհնաձը թաթավէ աչկ կըպանա՞՞ վօր հասնի:

- Ան օրվան թաթավը *ալա՛յ* դէղն ալ է – գիլ է:



- Չէ՛, դեղօց դեղ է. *ամա դըհա* անգից առաջվանն ալ չօրցած չէ. գանը (արտ) գը *մուղնուս* նը բալըիս է, վօտկըդ գը ճօղվէ:

- Ջամփան ձանդը՞ն է:

- *Մաբախտան* կընածած *քէ՛նըս* գագօղ էր. *ամա* էգած *քէնըս* Տայդանի ջամփան *տապտօլ* (կոխոտուելով պնդացած ու տափակած) էր: Հավգիթ գլօրելու գըլար:

- *Ջնաճիտ* աստարի մեղօմը մաշտու *սրայի* գը մուղնունք: Վօ կինա ինչէ՞ս ըռինդ է *շինը* (այժմ) *չօլը*. մեմը յես ա՛ գուզիմ էշթալ, *ա՛ սլաքիր սըրա* չի լալ:

